

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ՔՆԱՐ


ԾԱՂԿԱՔԱՂ ՀԵԼԼԷՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՆԷՆ



ՔԱՐԳՄԱՆԵՑ
ՎԱՋԳԷՆ Ա. ՇՄԱՅՇԱՆ



ԱԹԷՆՔ, 1949




ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի, ԱԹԷՆՔ — ԹԻԻ 1

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ՔՆԱՐ

(ԾԱՂԿԱՔԱՂ ՀԵԼԼԷՆ ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵՆԷՆ)

ՅԱՐԳՄԱՆԵՅ
ՎԱԶԳԷՆ Ա. ԵՍԱՅԵԱՆ



ՍՈՒՐԲ ՆՇՐԱԶՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
'ARMENIAN PRELACY

202

«ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ՔՆԱՐ»Ը ՅԱՐԳԱՆՔՈՎ
ՈՒ ԵՐԱՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԶՕՆԵՄ
ԵԳԻՊՏԱԲՆԱԿ ԳՐԱԱԷՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԻՍ՝
ՏԻԱՐ ՄԵԼՔԻ ԳԸԼԸՃԵԱՆԻՆ՝
ՈՐՈՒՆ ՆԻԻԹԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԸ
ՊԱՐՏԻՄ ԱՅՍ ՀԱՏՈՐԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹԻՒՆԸ:

ԽԱՐԳԱՆՈՒՄԸ



Նախաքանի Տեղ


Պատերազմեն անայ, հեղին ծանօթ ու սիրելի բանաստեղծ Բուշիս Աշեթիս, այս գրքի քարգնանիչին գործակցութեամբ, հայ գրականութիւնը հեղին ժողովուրդին ծանօթացնելու համար, հայ բանաստեղծներու գործերէն հասրնէսրներ քարգնանեց ու հրատարակեց «Արմենական Մուսս» անուն հասորով մը, որ ի'սկայեա անհատերից ընդունելութիւն մը գրասա հեղին մտաւորականութեամբ ու ժողովուրդին կողմէ, մեկ խնի աւետան ընթացքին արժանանալով երկրորդ տպագրութեան:

Այսօր, երբ փոխադարձաբար հեղին շաւագոյն բանաստեղծներու ստեղծագործութիւնները հայ ժողովուրդին ծանօթացրինքու նպատակով ի յոյս կ'ընծայեմ աւելի խն տարմնիւնց տարիներու վաստակիս արդիւնէ «Հեղինական Բնար»ը, անկեղծօրէն կը յուսամ թէ՛ լոյնխան ջերն ու արագին ընդունելութիւն մըն ալ ա'ն պիտի գտնէ, հայ մտաւորականութեան եւ ընթերցող հասարակութեան կողմէ, աւելի՛ եւս տարապրնդիւնով պատեական ու բախտակից այս երկու ազգերու միջեւ հիւնէն ի վեր գոյութիւն ունեցող քարեկանական կապերը:

Եթայն կը ցարիտ որ, եթերու սակաւութեան հետեւանքով տարիւրում եղայ հասորեա դուրս ձգել կարգ մը բանաստեղծներ՝ որով լոյնխան արժեքաւոր ու սիրելի են ինծի:

Այս առթիւ անկեղի չեմ նկատեր շեշտել՝ թէ բանաստեղծութեանց ընտրութիւնները կատարած եմ տաննակ մը հեղինակի մէ ծաղկաբաղներէ, շատ աննշան մաս մը միայն առնելով ուղղակի հեղինակներու հասորներէն: Թարգմանութիւններու մէջ, հասորէն յարգած եմ ընագրերուն ձեւերը եւ մեծագոյն մասին մէջ լոյնխակ պահած եմ չափերը (հասածները): Ընդհանրապէս ինասոր արուեստին զոնելու փորձութենէն խուսափած եմ, յուզելով արդարացնել՝ «ով քարգնանէ՛ դաւանանէ» նին տաւգուածքը: Հասորը տիւած եմ հեղին ժողովրդային բանահիւտութեան ա'յնխան հարուստ զանձներու մեկ խնի նունշներով, ու բանաստեղծներու դաստարոնմին մէջ նախընտրած ժամանակագրական կարգը՝ 18-րդ դարէն առթին հեղին բանաստեղծութեան տասնհինանխան զարգացումը ցոյց տալու մտահոգութեամբ:

ԹԱՐԴԻՄԱՆԻՉԸ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ

Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ե Ր Գ Ը

Վայելեցէք դուք զիրար, աղուո՞ր կոյսեր, պարմաննե՛ր,
Ձեր զաւակները դուք ալ՝ կորաքամա՛կ ծերուկներ:
Երէկ առտու լուսնալու մօտ իմ տեսած երազին
Նըմանակ է այս աշխարհն, ափսո՞ս, աշխարհը այս սին:
Մեզմէ առաջ, ուրիշնե՛ր կային այստեղ ու անցան.
Վաղը՝ մենք ալ պիտ' երթանք եւ ուրիշնե՛ր պիտի գան:
Լեռներն են լոկ բարեբախտ, որ երբեք չեն ծերանար.
Կաննաչաւէտ են ամառն ու ձմեռն ալ ծիւնափառ.
Ու կը սպասեն զտրուենին եւ զեղեցիկ ամառուան
Որ ծառերը կանաչին՝ ու բողբոջներ նոր քսման,
Հօտերն՝ ելլեն լեռները, հովուուհիներն ալ ելլեն,
Հովիւներն ալ անոնց հետ՝ անոյշ սըրինգ սուլելէն:

Կ Ա Ր Մ Ի Ր Շ Ր Թ Ն Ե Ր

Կարմրուկ շըրթներ համբուրեցի՝ իմիններս ալ ներկրեցան.
Թաշկինակով սըրբեմ ըսի՝ թաշկինակն ալ ներկրեցաւ.
Տարի գետին մէջ լըւալու՝ գետին ջո՛ւրն ալ ներկրեցաւ.
Դետը գնաց հասաւ ի ծով՝ ծովուն պորտն ալ ներկրեցաւ.
Արծիւն իջաւ ջուր խմելու՝ թեւերն անոր ներկրեցան.
Ներկրեցաւ արեւն՝ կիսով իսկ լուսընկան ամբողջութեամբ:

Կ Ա Խ Ա Ր Դ Շ Ա Յ ՈՒ Շ Ի Ն

Անապատի ծիծեռնակներ սեւորակ
 Ու ծովափի աղաւնիներ ռապիտակ,
 Որ հայրենի գէպի երկիրն իմ կ'երթար,
 Խոնձորենի կայ բակիս մէջ, հոն իջէ՛ր՝
 Եւ, իմ կրնոջն, իմ սիրածին դուք ըսէ՛ք,
 Կ'ուզէ՛ թող վա՛նք մտնէ, կ'ուզէ՛ կարգըի,
 Կ'ուզէ՛ ներկէ թող հագուստներն, սե՛ւ հագուի.
 Ա՛լ չըսպասէ ինձի, համբուս չընայի:
 Հայաստանի մէջ, այստեղ, զիս կ'արգեցին.
 Կախարդ աղջիկ մը, Հայուհի՛ մը տըւին.
 Որ, կը հրմայէ ամբողջ աստղերն ու երկին.
 Կը հրմայէ գետերն՝ եւ ա՛լ չեն հոսի,
 Կը հրմայէ թռչուններն ու չեն զար թիւ.
 Կը հրմայէ ծովն ալ՝ ու չի՛ վէտվէտիր:
 Կը հրմայէ նաւերն՝ ու չե՛ն նաւեր ալ,
 Կը հրմայէ զի՛ս ալ ու չե՛մ կըրնար զալ:
 Ճամբայ կ'ելլեմ՝ ծիւն ու անծրեւ կը տեղայ.
 Կը դառնամ ետ՝ պայծառ արեւ կը շողայ
 Կը թամբեմ ծիս՝ թամբը վըրան չի կենար.
 Կը կ'ապեմ սուրբս՝ կը քակուի՛ կ'իյնայ՝ վար,
 Դըրիչ կ'առնեմ գըրեյու՝ գրե՛լ չեմ կըրնար...:

Ե Ր Դ ՈՒ Մ

Աղջիկէն պագ մ'ուզեցի՝ ըսաւ իրեն երդուրննամ.
 Երկինքին վրայ երդուրնցայ՝ պատասխանեց թէ՛ «բա՛րձր է».
 Ծովուն վըրայ երդուրնցայ՝ պատասխանեց թէ՛ «խո՛ր է».
 Ժամուն վըրայ երդուրնցայ՝ ըսաւ թէ՛ «կի՛ր ու քա՛ր է».
 Պատկերին վրայ երդուրնցայ՝ ըսաւ՝ «տախտակ ու ներկ է».
 Ծաղիկ կեանքովս երդուրնցայ՝ «ստախօս ես» ըսաւ ան:

Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ի Գ Ո Վ Ք

Երկնի բոլոր աստղերին՝ մէկ հատն է լոկ քեզ նրման.
Այն որ կ'ելլէ ծագելու երբ մօտ է լոյսն առնողւան:

×

Հասակագիւղ իմ շոճի, ո՞ր ակէն ջուր կը խլմես
Որ ծաղկալի ու դալար ես դուն այդպէս մշտապէս:

×

Ի՞նչ պէտք ունի տան մէջ մայրդ լոյս ու ճրագի՝ իրիկուն,
Քանի այնտեղ է արդէն Օգոստոսեա՞ն լուսընկան:

Ս Ի Ր Ո Յ Տ Ա Ի Ե Ի Վ Ի Շ Տ

Կը տեսնե՞ս լեռն որ կըրակ առած կ'այրի՞, կը մըխայ.
Մէկուն սիրածն է կորեր ու հոն նրստեր է կուլայ:

×

Բուժիչ բոյսերն ու դեղերն մարմնին համար են միայն.
Աըրտին վէրքերը կ'ուզեն՝ ուրի՞շ բըժիշկ ու դարման:

×

Կարելի չէ որ խոցուած սիրտ մը բուժուի, աղէկնայ.
Չորցած ծառին պէս այլեւս պտուղ չի՞ տար անիկա:

Տ Ե Ն Չ Ե Ր

Թէ զիս սիրելդ երազ է՝ թող չարթննա՞մ յաւիտեան,
Որովհետեւ՝ քու սիրտ՞ով կ'ուզեմ մըտնել գերեզման:

×

Դաշտին մէջ ծա՞ռ ըլլայիր՝ լերան վըրայ ես ալ ծիւն,
Հալէի՞, ջուր տայի ես քու պապական ճիւղերուն:

×

Քու շըրթունքներդ են շաքար, այտերդ՝ խընձոր անուշակ,
Կուրծքդ՝ դըրա՞խտ լուսեղէն, մարմինդ՝ շուշա՞ն ըսպիտակ.
Համբուրէի՞ շաքարներն, խնձորներն ալ խածնէի՞,
Մէկէն դրախտը բացուէր՝ ու շուշանի՞ն փարէի:

Հ Ա Մ Բ Ո Յ Ր Ն Ե Ր

Հիւանդ մարդը բժիշկէն կը խնդրէ դեղ ու դարման.
Բեզմէ՛ պաչիկ մ'ուզեցի՛ ու նեղուեցար դուն այնքան:

×

Ով որ պաչիկ մը առնէ սիրականէն առտըւանց՝
Մարմինին մէջը կը զգայ Մայիսի զո՛ւն օրհնըւած:

×

Դերի եմ, մէկ պաչիկով զիս թաղիդ մէջ կը ծախեն.
Պաչիկը տո՛ւր սիրական եւ ազատէ՛ զիս նորէն:

×

Գարո՛ւն, շատ մի պարծենար ծաղիկներովդ անհամար,
Պիտի բոլորն ալ թոռմի՛ս՝ վաղը՝ երբոր գայ ամառ:

Հ Ա Մ Բ Ո Յ Ր

Պագտըւեցանք երբ, աղջի՛կ, գիշեր էր, ո՞վ տեսաւ մեզ:
— Տեսաւ աստղը գիշերուան ու՛ լուսընկա՞ն ալ տեսաւ.
Լուսինը՝ վա՛ր հակեցաւ ու ծովակին խօսեցաւ,
Ծովը՝ ըսաւ թեւեակին ու թեւեակն ալ՝ նաւազին
Ու նաւազը՝ զայն երգեց դրանը իր սիրածին:

ՏԷՐՏԷՐԻՆ ԱՂԶԻԿ

Կրտոր մ'ոսկի, կրտոր մ'արծաթ
Երկնէն փրորթաւ եւ ինկաւ վար:
Ոմանք ըսին՝ թէ ամպ է ան
Իսկ ուրիշներ՝ թէ մառախուղ:
Բայց, ամպ չէ՛ ան, ո՛չ ալ մրշուշ:
Ան՝ աղջընա՞կն է տէրտէրին,
Որ, այգիէն կը դառնայ տուն:
Դոգնոցին մէջ խընձոր ունի,
Թաշկինակին մէջ ունի նուռ:
Երկու խընձոր ուզեցի ես,
Ան՝ երեք հատ տըլաւ ինձի.
«Թոռմածներն ի՞նչ ընեմ, ըսի,
Մըշկահոտները ծոցիդ՝ տո՛ւր:

(ԿՈՄՍ) ՏԵՈՆԵՍԻՈՍ ՍՈԼՈՄՈՍ

Հելլեն բանաստեղծութեան հայրը եւ ազատութեան անմահ երգիչը: Ինձ է Ջաֆինթոս՝ 1793ին: Նախնական կրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ յետոյ, անցած է Իսալիա ուր բաւարանութիւն ուսանելով՝ իրաւագէտի վկայական ստացած է: Ծանօթացած է իսալացի գրագէտներու հետ եւ իր առաջին բանաստեղծութիւնները գրած իսպրեկեմով: 1818ին հայրենիք վերադառնալով, նուիրուած է գրականութեան, մեծմանալով Ն. Մանծարոսի հետ, որ եղանակաւորած է իր լաւագոյն գործը «Երգ Ազատութեան» բանաստեղծութիւնը՝ (58 տուն) որ Հելլեն Ազգային Երգն է, գրուած 1824 ին, հելլեն յեղափոխութեան աւրիւ: Իր սմէնէն սիրուած կտորներն են, վերոյիշեալէն զատ, Ազատ Պաշարուածները, Լամպրոսը, Պոքիւրասը, Փառք: Եւ Թունաւորուած Կոյրը:

Սոլոմոսի գործին մասին տառնեակներով գիրքեր եւ ուսումնասիրութիւններ գրուած են:

Մեռած է Վարժուի մէջ 1857ին: Մարմինը փոխադրուած է քաղուած է իր ծննդավայրին Ս. Մարկոսի հրապարակը, ուր եւ կը բարձրանայ իր անդրին:

ԵՐԳ ՍԶԱՏՈՒԹԵԱՆ

(ՀԱՏՈՒԱԾ)

... Դալու այդ օրը կ'ուշանար,
Եւ ամէն ինչ էր լռին,
Զի՛ ահռելի սարսափը կար,
Կը նընշէր լո՛ւծն օտարին:

Օ՛ր դուն դըժբա՛խտ: Իբր յետնագոյն
Մընաց ըստիւփ բեզ միայն,
Յիշել քու փառքն անցելամոյն
Ու լալագին պատմել զայն:

Կը սպասէիր, կը սպասէի՛ր
Ազատատենչ կանչին յար,
Եւ ձեռուըններդ կը զարնէիր
Դուն իրարու, յուսասպառ:

Եւ կ'ըսէիր. ա'հ, ե՞րբ արդեօք
 Վերցնեմ գըլո՛ւխս աւերէն,
 Շրդթա՞յ, կապանք, լաց ու մորմոք՝
 Ձայն կու տային քեզ վերէն:

Վերցուցիր ա'չքդ, այն ժամանակ,
 Պըղտո՞ր, աղօ՞տ՝ արցունքով,
 Եւ ներկուեցաւ հանդերձդ համակ՝
 Հեղինական արիւնով:

Արիւնամած հանդերձով քու
 Դիտո՞ւմ, ծածուկ կ'եղէիր,
 Օտար վայրի մէջ փընտռելու՝
 Ուրիշ ձեռքեր քաջ ու ժիր:

Մինա՞կ ելար ճամբայ, մինա՞կ
 Վերադարձար Դուն կըրկին.
 Դուռերը մի՛շտ են ամրափակ՝
 Կը բախէ ձեռքն երբ Հարկին:

Մէկը՝ կուրծքիդ վըրայ լացաւ.
 Ո՛չ մէկ շըշունչ մէկալէն.
 Մին՝ օգնութիւն քեզ խոստացաւ՝
 Ու քեզ խաբե՞ց վատօրէն:

ՓԱՌՔԸ

Փսարայի մըթին ժայռի կատարին
 Ման գայով Փառքը, մինա՞կ ու լըռին,
 Կը յիշէ ինկած կըտրիճներն ահեղ:
 Վարսերուն վըրայ դըրած է պըսակ
 Մ'հիւսուած այն քիչիկ խոտով որ այնտեղ
 Մընացեր է դեռ իբրեւ յիշատակ...:

ՀՈԳԵԱԿԸ

Ծաղկանոցին մէջ
Զով ու անուշիկ
Փըչող սիւքին պէս,
Տըղան այն պըզտիկ
Փըչեց մեղմագին՝
Իր շունչը վերջին:

Եւ հոգեական անոր
Սըլացաւ դէպ՝ վեր,
Յուշիկ ու անդորր
Դէպի ջինջ եթեր.
Փոքրիկ, դողդոջուն՝
Կայծի՛ մը հանգոյն:

Աստղերը բոլոր՝
Կը կանչէին Վայն.
Եւ շըփոթ, մոլոր,
Կ'երկարէր ծեռքն ան՝
Զի չէ՛ր գիտեր թէ՛
Որո՞ւն մէջ մըտնէ:

Բայց, հրեշտակ մ'ահա՛,
Տըւաւ ըղծագին
Համբոյրը անմահ
Անոր երեսին,
Որ շողաց յանկարծ՝
Որպէս այգաբա՛ց:

ԶԱՏԿԻ ՕՐԸ

Մաքրամաքուր արեգակ մը կ'աւետէր՝
Այն զովանոյշ յետնագոյն ա'ստղն առտըւան.
Ամա ու մըշուշ՝ ո'չ մէկ տեղ չէ՛ր երեւեր
Անդորրածուփ երկընքին մէջ անսահման
Ու մեղմահեւ, անկէ գալով կը փռչէր
Երեսներուն հովիկն ա'յնքան հեշտական՝
Որ, կարծես թէ, կ'ըսէր՝ սիրտի թերթերուն
Անո՛յշ է կեանքն, իսկ մահը՝ թո՛յն դառնագոյն:

«Քրիստոս Յարեա՛ւ»: Ծերե՛ր, տըղա՛ք, աղջիկնե՛ր,
Պատրաստուեցէ՛ք ամէնքդ, մեծ ու պրզտիկ,
Տաճարներուն մէջ դափնիով յորդաբեռ,
Հաւաքուեցէ՛ք խինդի լոյսով երջանիկ.
Խաղաղալիր բացէ՛ք անբիծ դուք գիրկեր,
Սուրբերուն դէմ համբուրուեցէ՛ք, ով մարդիկ,
Համբուրուեցէ՛ք բերան-բերնի՛, քաղցրահամ,
«Քրիստոս Յարեա՛ւ» ըսէ՛ք, ոսոխ-բարեկամ:

Դաւիթի՛ ունի գերեզմանի ամէն քար,
Եւ ամէն մայր՝ զըրկին մանո՛ւկ մը աղուոր.
Ու նայելով յատկերներուն ծեռանկար
Դպիրները կ'երգեն ծայնոյ քաղցրուր:
Կը շողշողայ արծաթն՝ ոսկին ալ փառփառ՝
Լոյսէն զոր վար կ'հեղուն լամբերը բոլոր,
Կը փալփըլայ ամէն մէկ դէմք քաղցրօրէն
Քրո՛խստոնեայ մարդոց ձեռքի մոմերէն:

ԱՆԴՈՐԲ

Զի լըսուիր ո'չ մէկ ալիք
Ծովափունքին վրայ ամայ,
Երկրի ծոցին մէջ, յուշի՛կ,
Կարծես, ծո՛ւփն ալ կը քնանայ:

ՅՈՒՆԱԻՈՐՈՒԱԾ ԿՈՅՍԸ

Դուն կը կարդայիր բոլոր իմ երգերս,
Սյս մէ՛կը միայն պիտի չըկարդաս,
Սյս ե՛րգը միայն պիտի չըլըսես.
Ա՛հ, վըրադ մահուան սեւ քարն է իջած:

Եթէ արտասուքն, ո՛վ կոյս, կարենար
Մեռեալին բաշխել իր կեանքը կըրկին,
Ա՛յնքան լաց եղայ ես քեզի համար,
Որ, ունենայիր պիտ՝ շունչըդ նախկին:

Վա՛յ ինձ, կը յիշեմ, նըստած էիր դուն
Քովս ի վեր այն օր, այնպէ՛ս դալկադէմ.
«Ի՞նչ ունիս» ըսի — եւ դուն դողդոջուն
Պատասխանեցիր, «Թո՛յն պիտի առնեմ»:

Անգութ ձեռքերով առիր թոյնն աղի՛,
Գեղանի՛ աղջիկ, եւ մարմինը այն՝
Որ հարսնազգեստի էր լոկ արժանի՛
Հիմա կը կրէ պատա՛նքը մահուան:

Արդ, այնտեղ, խորունկը գերեզմանին
Անըիծ կուսուլթիւնդ է զա՛րդը մարմնիդ —
Վատ մարդիկ ի զուր քեզ կ'անպատուէին
Խօսքերով այնքա՛ն դառն ու չարամիտ:

Այդ խօսքերն եթէ իմանայիր դուն,
Շըրթունքներդ արդեօք ի՞նչ պիտ' ըսէին,
«Ըմպած թոյնս, անոր ցաւերն անպատոււմ
Ինձ չըթլւեցան այսքան դառնազին»:

Սըտախօ՛ս աշխարհ, անբախտ աղջիկներն
 Իրենց ողջութեան դուն կը հալածես,
 Եւ անոնց պատի՛ւն իսկ չես խրնայեր՝
 Երբոր ալ մեկնա՛ծ են այս աշխարհէս:

Լըռէ՛ եւ յիշէ՛ թէ այլոց նըման
 Նաեւ դո՛ւն ունիս՝ աղջի՛կ, կին ու քոյր
 Լըռէ՛, դամբանին մէջ կը նիրհէ ան,
 Կը նիրհէ որպէս կոյս մաքրամաքուր:

Վերջին օրը, ան պիտի արթըննա՛ւ.
 Դատուելու համար աշխարհի առջեւ:
 Արարիչին դէմ համեստ պիտ՝ կենայ
 Եւ պայծառ ձեռքը շարժելով ըսէ,

«Հո՛ւս, աղիքներո՛ւս նայէ, ո՛վ իմ Տէր,
 Զի՛շտ է, ես զանոնք թունաւորեցի,
 Առանց խորհելու թէ այդ սխալ էր,
 Բանի որ զանոնք դուն շինած էիր,

«Սակայն, անգամ մը նայէ անոնց լաւ,
 Որ իրենց մեղքը կու լան, եւ ըսէ՛.
 Ըսէ՛ աշխարհին, որ ինչե՛ր չըսաւ,
 Թէ ատոնցմէ զատ կա՞ն ուրիշ խոցեր»:

Արարչին առջեւ ձեռքերը ծիւնէ
 Ծարձելով, այսպէ՛ս խօսի պիտի ան:
 Լըռէ՛ ով աշխարհ, հիմա կը նիրհէ,
 Կը նիրհէ իբրեւ կո՛յս ազնրւական:

ԱՆԾԱՆՈՔՈՒՀԻՆ

Արդեօք ո՞վ է սա
Որ կամաց-կամաց,
Սպիտակ հագած,
Սարն ի վար կու գայ:

Եւ հիմա որ այս
Աղջիկը կու գայ՝
Դալարը կ'ըլլայ
Ծաղիկ հեզանազ:

Ու լուսապայծառ
Դէմքն իր կը բանայ,
Ու գըլխիկն, ահա',
Կ'օրրէ հեզաբար:

Ու սիրահարեալ
Անոր կ'աղերսէ.
Որ, զինք չանտեսէ՞,
Կոխոտէ՞ զինքն ալ:

Կարմրուկ ու սիրուն
Շուրթեր ունի ան,
Տերեւի նըման
Նըռնենիներուն:

Կը բացուի երբոր
Այգն արեւողող
Զովանոյջ ջինջ ցօղ
Կ'ուղարկէ անոր:

Եւ իր ծամերուն
 Հեղե՛ղը դեղծան
 Կը շողայ վըրան՝
 Կըրծքին փափկասուն:

Ժրպտուն ու աղուոր
 Աչքերն ալ ջընջին,
 Ծիշտ գոյնը ունին՝
 Երկնին հեռաւոր:

Արդեօք ո՞վ է սա,
 Որ կամաց-կամաց
 Ըսպիտակ հագած,
 Սարն ի վար կու գայ:



ԵՌՈՒԱՆՆԻՍ ՎԻԼԱՐԱՍ

Ծնած է Եանինա՝ 1771ին: Իսալիսյ մէջ քժեկութիւն ուսած՝ եւ եղած է իր Երջանի քաւր փառային քժիւկը: Գրած է ճնարեղական բազմաթիւ բանաստեղծութիւններ եւ Եզաբասի աւ անոր հետեւադներու նմանազութեամբ՝ առականեր: Ունի նաեւ լեզուաբանական եւ գրական այլեւայլ բազմաթիւ գործեր, ինչպէս եւ քարգմանութիւններ՝ հեղին հին գրադներէ: Վիլարաս եղած է իր ժամանակաբայանի ամենէն լուսամիտ աւ յառաջադէմ գրագէտներէն մին: Մեռած է 1823ին:

ՀԱՌԱԶԵՑԷՔ, Ո՛Վ ՎԱՐԴԵՐ

Հառաչեցէ՛ք, ո՛վ վարդեր, արտասուեցէ՛ք մըրտենիք,
Ողբացէ՛ք դուք, սիրէննե՛ր ու պարտէզնե՛ր ծառախիտ.
Կորսընեցա՛ւ սիրականս, հանգեցաւ լո՛յսն իմ կեանքին,
Խաւարեցաւ արեգակն՝ ու մո՛լթ պատեց իմ չորս դին:

Սե՛ւ հագուեցէք, նարգիսնե՛ր, շուշաննե՛ր սե՛ւ հագէք դուք,
Ու թող ամէն մէկ ծաղիկ թափէ թունոտ արտասուք:
Բարբարոս մահն անօրէն, որ միշտ արիւն կը ծրծէ
Իր անողորմ մանգաղով հընծեց ծաղիկն իմ, բարէ՛:

Որբացած սէ՛ր իմ, աւա՛ղ, ո՛ւր էր աղեղը բուկին,
Նիզակդ ո՛ւր էր սայրասուր, քու նետերը ո՛ւր էին:
Ահաւոր օ՛ր անպատում, ո՛վ անիծեալ ու սեւ ժամ,

Սարսափելի՛ մահագոյժ, որ այս պահուս ինձ եկար:
Ո՛հոս՝ ուրեմն, ո՛վ հոգիս, գեղեցկութիւնդ մահացա՛ւ.
Թառամեցա՞ն հըմայքնեիդ: Ա՛հ, իմ կեա՛նքս ալ չըբացաւ:

ԿՐԱԿ, ԶՈՒՐ, ՊԱՏԻՒ

Ուխտ կընքեցին հին ժամանակ,
Պատիւը, ջուրն ու կըրակ՝
Որ իրարու ըլլան ընկեր՝
Ու միասին բախտ փընտոեն:

Իրենց ճամբան երբ կ'երթային,
Յանկարծ, կեցան հարց տըւին,
Թէ՛ երբ զիրար կորսընցընեն
Արդեօք ինչպէ՞ս պիտ' գըտնեն:

— Եթէ երբեք ես կորսընիմ՝
Կըրակն ըսաւ — ձեր չորս դին
Ուրտեղ որ ծուխ մը նըկատէք՝
Ես այնտե՛ղ եմ, իմացէք:

Զուրը յարեց իրեն կարգին.
— Տեղս որոշ է ամէնքին.
Ուր որ տեսնէք մարդ մը դալար՝
Ես այնտե՛ղ եմ անպատճառ:

Կարգը եկած էր պատիւին.
Դարձան անոր յարեցին,
— Մենք, մեր տեղերը յայտնեցինք,
Ըսէ՛ քու տեղն ալ նայինք:

Պատիւն ըսաւ, — Մէկ ըսկիզբէն
Սիրելիներ ձեզ ըսեմ,
Որ չըլլա՞յ թէ — լա՛ւ ուշ դըրէք —
Օր մը զիս կորսընցընէք:

Որովհետեւ, եթէ երբեք
Հեղ մը ձեռքէ զիս հանէք՝
Թէ թափառիք արար-աշխարհ,
Ա՛լ զիս գտնել չէ՞ք կըրնար:

ԱՅԱՆԱՍԻՈՍ ԽՐԻՍՏՈՐՈՒԼՈՍ

Ծնած է 1772ին, Վասպուրիայի մէջ: 19րդ դարու սկիզբը մեծ յարգ ու պատիւ վայելած՝ ու «Նոր Անակրէոն» կոչուած է: Ուսած է Պաւլերէի, Պաւսաբէտի եւ Բաւսուայի մէջ: Եաշի մէջ, դասաւորի պաշտօն վարած է երկար ատեն: Գրած է «Ափիլլեւս» անուն տրամ մը, լեզուաբանական գործեր ու քնարերգական բանաստեղծութիւններ:

Փ Ո Ւ Շ Ը

Պարտէզ իջած էրոսին հետ, շընորհները կ'ընտրէին վարդ,
Իրենց համար բուրուհաւէտ պատրաստելու պըսակ ու զարդ:
Էրոսն՝ ուրախ կը ցատկըւտէր, մէջ մը ասդին, մէջ մը անդին,
Ինք իր ձեռքով կը փըրցընէր, կը նըւիրէր՝ մէկին-միւսին:

Խենդ տըղու պէս անուշադիր, այսպէս, երբոր կը յօտէր ան՝
Յանկարծ, անոր մատը ծակեց՝ պըտըլիկ փուշ մը անպիտան:
Մէկդի նետեց վարդերն իսկոյն, ու յօտոցն ալ ձըգեց ձեռքէն,
Եւ ցոյց տըլաւ մատիկն անոնց՝ աղիողո՞րմ հեկեկալէն:

Օ՞հ, օ՞հ, տեսա՞ծ էք, շընորհներ՝, տեսա՞ծ էք դուք - անոնց ըսաւ -
Որ պըտըլիկ փուշ մը՝ ա՛յսքան պատճառէ խոր ու անհուն ցաւ:
Ինչո՞ւ այդքան կը զարմանաս — ըսին անոնք — չե՞ս գիտեր թէ
Քու պզտիկ նետն ալ երբ խոցէ՝ սաստիկ ցաւե՛ր կը պատճառէ:

ՁՈՒՐՆ ԱՆՄԱՀԱԿԱՆ

Կուսական շուրթէդ ջուրն անմահական
Կը հոսի վըճիտ՝ աղբիւրի՞ նըման.
Ու թող չըվախնայ մահուան սըլաքէն.
Ով որ զովացնէ շըրթունքն այդ ակէն,
Եթէ մահանայ իսկ մարմինն՝ հոգի՞ն՝
Պիտ՝ յաւէտ ըզգա՞յ քաղցրութիւնն այն հին:

ԱՆՏՐԷԱՍ ՔԱԼՎՈՍ

Ծնած է Զափնթաս 1792ին: Կեանքին մեծագոյն մասը ապրած է Իսալիա եւ Անգլիա՝ եւ եւ մեռած 1869ին: Եղած է մօտիմը՝ նմանապէս Զափնթաս ծնած Իսալացի նշանաւոր բանաստեղծ Ուկօ Փափալայի: Գրած է երկու ռոմանթիկներ (անէպ) եւ 20 ճաղեր՝ բոլորովին իմբիմասիկ սաղաշափութեամբ մը: Իր երգերու նիւթերը, ընդհանրապէս հայրենասիրութիւնը, ազատութիւնը, արդարութիւնը եւ առաքինութիւնը եղած են:

ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

(ՀԱՏՈՒԱԾ)

Ո՛վ Հայրենի՛ք սիրասուն,
Հըրաշագեղ ո՛վ կըղզի.
Ո՛վ Զաքինթոս, ինծի շունչ՝
Ու ոսկեղէն ընծաներն
Ապողոնի, Դո՛ւն տըւիր,

Այս երգն ալ՝ Դո՛ւն ընդունէ:
Կ'ատեն անմահ աստուածներն՝
Երախտամոռ զաւակաց
Հոգին. ու շանթ կը տեղան
Գլուխներուն վրայ անոնց:

Ես՝ քեզ երբե՛ք չըմոռցայ.
Երբե՛ք - նետեց բախտը զիս
Հեռո՛ւ քեզմէ. զիս տեսաւ,
Ազգերու մէջ այլանուն՝
Մէկ հինգերո՛րդը դարուն,

Այլ՝ երջանիկ թէ՛ անբախտ,
Կը պարուէր լոյսն երբոր
Լեռ ու ալիք համօրէն՝
Դե՛զ ունէի մշտապէս
Իմ աչքերուս առջեւ ես:

Դո՛ւն - երբ գիշերն իր մըռայլ
 Շըղարշներով կը սքողէ
 Վարդենիներն երկնային -
 Դո՛ւն ես բերկրանքը միակ
 Երազներուն իմ բոլոր:

.

Կըլիմադ մո՛ւշկ կը բուրէ,
 Սիրասուն ո՛վ Հայրենիք,
 Ու կ'ողողէ ծովերն ալ՝
 Բուրումներովն անանուն
 Կիտրոններուն ոսկեգոյն:

.

Բարեբա՛խտ ես, այլ՝ ըզբեզ
 Գերերջանի՛կ կ'անուանեմ՝
 Որովհետեւ, չըճանչցա՛ր
 Դուն խարազանն անողորմ՝
 Բըռնակալի՛ն, ոսոխին:

Նըսեհս՝ օտար հողի վրայ
 Թող մահանալ չըտայ ինձ.
 Մահն՝ անո՛յշ է, մի՛միայն,
 Երբ կը փակենք մեր աչքեր՝
 Հայրենիքի գըրկին մէջ:

ԵՈՐԿԻՈՍ ԶԱՆՔՈՍՔԱՍ

Ծնած է Սիրաբոյի մէջ (Եպիրոս) 1805ին: 1814ին Խալիս անցած եւ հոն մնացած է մինչեւ 1821, երբ Յունաստան վերադարձած եւ մասնակցած է Մեուլսնկիի կռիւներուն: Մեռած է Աթէնքի մէջ 1858ին:

Զալոբոսքաս գրած է բազմաթիւ հայրենասիրական ու քնարերգական բանաստեղծութիւններ, որոնցմէ մաս մը իւր ժամանակին արժանացած է գրական մրցանակներու:

ՀԱՄԲՈՅՐԸ

Հոյուուհի մը սիրեցի, աղջընակ մը դիւթական,
Եւ սիրեցի զայն անհո՞ւն —
Անխօս էի դեռ թըռչուն՝
Տըղեկ մը տա՞ս տարեկան:

Նըստած էինք օր մ'երբոր, խոտերուն վրայ այն դալար
— Մարօ', բան մը պիտ' ըսեմ,
Ըսի, քեզ շա՞տ կը սիրեմ
Կը խենթենամ քեզ համար:

Մէջքէս բրունց՝ ու բերնէս համբուրելով զիս ուժգին՝
Ըսաւ, «սիրոյ վիշտերուն,
Հառաչներուն համար, դո՛ւն,
Շա՞տ փոքրիկ ես տակաւին»:

Մեծցա՞յ եւ զայն կը ցանկամ, սիրտն ուրիշինն է հիմա,
Մոռցած է որքն այս թըշուառ:
Այլ՝ ես երբե՞ք չեմ մոռնար
Իր այն համբոյրն հընօրեայ:

ԱԼԵՔՍԱՆՏՐՈՍ ՌԻՆԿԱՎԻՍ

Ծնած է Պալիս 1809ին եւ մեռած՝ Աթէնքի մէջ, 1892ին: Գրագէտ, գիտնական ու դիւանագէտ միաժամանակ: Հելլէն նորահաստատ պետութեան կազմաւորման մէջ խաղացած է կարեւոր դեր, իբրեւ ուսուցչապետ, նախարար, դեսպան, պետական խորհուրդի անդամ եւն եւն: Գրած է անթիւ բանաստեղծութիւններ եւ քաւերական երկեր: Թարգմանած է հելլէն հին գրողներէն Էսքիլէսի, Սոփոկլէսի եւ Արիստոփանոսի տրամները, ինչպէս նաեւ Շէյքսպիրի, Լեսինկի, Կէօթէի եւ Շիլլէրի գործերէն ռմանք: Գրած է նաեւ պատմութիւններ, հնարարական գործեր, հելլէն գրականութեան պատմութիւն, բառարաններ եւն եւն:

ԽՆԴՐԱՆՔՆԵՐ

*Մազերուն մէջ ոսկեգունակ՝
Կարմիր ծաղիկ մ'ունէր աղջնակն.
— Ինծի՛, ինծի՛ - ըսի - տուր այդ,
Բա՛ն չեմ ուզեր ես ատկէ զատ:*

*Շիկնոտ՝ ինծի երկարեց ան,
Ձեռքով՝ ճերմակ որպէս շուշան.
— Ինծի՛, - ըսի - ինծի՛ տուր այդ՝
Բա՛ն չեմ ուզեր ես ատկէ զատ:*

*Տըլաւ ինծի ձեռքն ըսպիտակ
Ձրգելով վըրաս՝ անո՛յշ հայեացք.
— Նայուածք մը տուր - ըսի - միայն,
Եւ չեմ ուզեր ես ուրիշ բան:*

Ուղղեց նայուածք մ'ինձ հոգեգրաւ՝
 Ու շուրթին, ժպիտ մը ծաղկեցաւ.
 — Համբոյր մը տուր - ըսի - միայն,
 Եւ չեմ ուզեր ես ուրիշ բան:

Մեղրոտ շրթներն երբ տըլաւ ինձ՝
 Շողշողաց ծիւն կո'ւրծքը անբիծ,
 — Ա՛հ միայն կուրծքըդ տուր ինձի -
 Ա՛լ ուրիշ բան պէտք չէ, ըսի:

Ան՝ շոճիի պէս ճրկեցաւ
 Ու գըրկիս մէջ տապալեցաւ:
 — Հիմա՝ ի՛մս ես, քեզ բըռնեցի,
 Ա՛յ, ուրիշ բան պէտք չէ՛ - ըսի: -



ԱՆՏՐԷԱՍ ԼԱՍՔԱՐԱԹՈՍ

Ծնած է 1811ին Քեմալսնիա կղզիի Լիփսուրիի մէջ: Քորձուի եւ Բիգայի մէջ իրաւագիտութիւն ուսանելով փաստաբանութեան ասպարէզը ընդգրկած է: Գրած է գլխաւորաբար երգիծական բանաստեղծութիւններ: 1856ին հրատարակած է «Քեմալսնիայ գաղտնիքներ» խորագրով գիրք մը, աւելի ատենուան կղերականութեան կեղծպարիստիսն ու ամէն տեսակ այլասերածութիւնը նկարագրած է: Եկեղեցիին կողմէ բանադրուելով եւ հալածանքի ենթարկուելով, անցած է Զափնթաու եւ անկէ Անգլիա: 1886ին, հրատարակած է «Ահա՛ Մարդը» ընդհանուր խորագրով՝ նկարագիրներու շարք մը:

Լասֆարաթոս մինչեւ այսօր կը նկատուի Յունաստանի ամենէն նրբաբաւեւս եւ սրամիտ երգիծարանը:

Մեռած է Արկեսոքիի մէջ (Քեմալսնիա) 1901ին:

Տ Ի Կ Ի Ն Ս

Ամէն անգամ, երբ բըռնէ ցա՛ւը զըլխուն՝
Կինըս ճակտին քիչ մը քացա՛խ կը դընէ:
Ա՛հ, չափազանց փափկակենցաղ ըլլալուն,
Գըլխացաւը յաճախակի՛ կը բըռնէ:

Ամէն առտու, ան իր վարսերը յորդուն,
Մազերն իր ծով՝ ծիթախլո՛ղ կ'օծանէ.
Ու պահարանն ամէն բանալ-գոցելուն՝
Սոխ մը կ'առնէ եւ ախորժով կը խածնէ:

Սոխով աղցանն՝ իրաւ թէ, շա՛տ կը սիրեմ.
Այնպէս որ, երբ տիկինըս դէմըս կըլլայ՝
Բերնիս ջուրերը չեն կենար՝ կը վազեն,

Ու ներսիդիս բուրմունք մ'անճառ կը լենայ:
Իսկ երբ կուգայ ու կը նստի ան իմ դէմ
Կարծես թէ՛ ա՛լ պընա՛կն է որ կը լըզեմ:

ԻԼԻԱՍ ԹԱՆԹԱԼԻՏԻՍ

Ծնած է Կ. Պոլիս 1818ին, ուսումը ստացած է ծննդավայրին եւ Զմիւռնիոյ մէջ: 1840 ին Աթէնք գալով՝ մտած է Ազգային համալսարան եւ հետեւած գրականութեան ճիւղին: 1845ին վաղահասօրէն տեսողութիւնը կորսնցնելով հանդերձ, մինչեւ մահը՝ (1876) եղած է դասախօս Հալիքի Աստուածաբանական վարժարանին:

Գրած է բանաստեղծական երկու հատորներ, գրաբարով, եւ կարգ մը արձակներ:

ԱՆԱԿՐԷՈՆԵԱՆ

Աղուոր զինին երբ կ'ըմպեմ ես,
Հոգերս ամէ՛ն կը մոռնամ.
Վիշտի՛, ցաւի՛ համար այլեւս՝
Ձեմ յոգնեցներ միտքս անգամ:

Քանի որ դուն ուզես-չուզես,
Պիտի անցնի կեանքդ երթայ՝
Շիտակ ճամբան ի՞նչ պիտ' ընես.
Լըրջութենէն ի՞նչ շահ կայ:

Ե՛հ, Բագոսի ուրեմն, անուշ
Հեղուկն, եկուր, մենք կուլ տանք,
Զի՛ խեղճութիւն, ցա՛ւ, դա՛ռըն յուշ,
Կը ցընդին՝ երբ արբենանք:

ԱՐԻՍՏՈՐԵԼԻՍ ՎԱԼԱՕՐԻԹԻՍ

Ծնած է Լեվֆասա 1824ին: Ուսումը ստացած է Քորժուի մէջ եւ ապա Եւրոպա անցնելով, հետեւած բնական գիտութեանց, օրէնսգիտութեան եւ գրականութեան: Ասեմ վր ֆաղափականութեամբ զբաղած՝ ապա բոլորովին բանաստեղծութեան նուիրուելով, գրած է ազատագրական պայքարի դէմքերէն ու դէպքերէն ներշնչուած բազմաթիւ հայրենասիրական ֆերբւլածներ, դիւցազներգութիւններ, եւ ֆնարական բանաստեղծութիւններ: Իւր ամբողջական գործերը հրատարակուած են ստուարածաւալ երեք հատորներով: Մեռած է ծննդավայրին՝ Լեվֆասայի մէջ, 1879ին:

ԺԱՅՌՆ ՈՒ ԱԼԻՔԸ

«Ճամբայ բաց, ժա՛յռ, որ անցնիմ»: Ապառաժին ափուների
Կ'ըսէ Ալիքը պղտոր, ըմբոստացա՛ծ, ամենի:
Ճամբա՛յ տուր, այս կուրծքին տակ որ անկենդան էր ու սառ՝
Հիւսիսահո՛ղմն է նըստեր, սեւ փոթորի՛կն եկեր թառ:
Փըրփուր չունի՛մ որպէս զէնք, ո՛չ սին ժըխոր ահարեր,
Ունիմ արի՛ւն գետի պէս, զիս անէ՛ծքն է մեծցուցեր,
Աշխարհին՝ որ զգուեցաւ, աշխարհին՝ որ կ'ըսէ արդ
— Ո՛վ ժայռ, իյնա՛ս պիտի ալ, ահաւասիկ հասաւ ժամդ:
Առաջ, երբ որ կուգայի, դանդա՛ղ, երկչոտ ու վարան,
Լըզելով ո՛տքըդ լըւալ հէք ըստրուկի մը նըման՝
Կը դիտէիր զիս գոռոզ եւ կ'ըսէիր աշխարհին,
Որ նուաստանքը դիտէ իմ գետնասո՛ղ փրրփուրին.
Սակայն, այնտեղ, մինչ համբոյր կուտայի քեզ, ծածկաբար
Կը կրթէի՛ քու մարմինն, կը պեղէի՛ անդադար,
Եւ խոցն ու փոսը, զորս ես կը բանայի ապահով՝
Կը պահէի աւազին մէջ սէզներո՞վ ծածկելով:
Ծրոճէ՛, ծովու յաւակին դիտէ արմատդ արդ ու տես՝
Հիմերդ ամէն կերայ, քեզ՝ սընամէջ քա՛ր մ'ըրի ես:
Ճամբայ տուր ժա՛յռ, որ անցնիմ, ըստրուկին ո՛տքը հիմա՝
Պիտի չոքի՛ կոկորդիդ: Այլեւս առիւ՛ծ արթընցայ:

Կը քնանար ժայռն հանգիստ: Մըշուշին մէջ պահուած ան,
Զգայաթա՛փ էր կարծես, պատանքըւ՛ծ, անկենդան:
Կընճիռներով ակօսուած հակատն անոր կը շողար,

Տուրքերուն տակ նըւաղուն՝ լուսընկայի՜ն դալկահար:
 Երագնե՛ր, սե՛ւ անէծքներ կը թեւէին շուրջն անոր,
 Հողմապտոյտին մէջ ոգիք կը շրջէին ահաւոր,
 Գիշակներն ինչպէս որ թեւերն իրենց կը զարնեն՝
 Երբ այերին մէջ յանկարծ՝ դիակներո՛ւ հոտ առնեն:
 Գոռ մըռընչիւնն Ալիբին, անոր սարսափն հոգեցունց՝
 Որ կ'որոտար զայրագին, ժայռն, Եթերին մէջ վաղո՛ւց,
 Հագա՛ր անգամ էր լըսած, բայց, արթընցած չէր երբեք.
 Այլ՝ այս անգամ սարսըռա՛ց, պիտո՛ նըւաղէր ահաբեկ:
 — «Ալի՛ք, ինծմէ ի՞նչ կ'ուզես, կը վախցընես զիս ինչո՞ւ.
 Դուն ո՞վ ես որ, կը ժպրհիս՝ փոխանակ զիս թըրջելու,
 Փոխանակ բո՛ւնս օրրելու, քաղցրացնելո՛ւ բու երգով՝
 Եւ կըրունկներս լըւալու ջուրերովդ այդ սառնագով՝
 Փըրփրապսակ, ահատես, կանգնիլ իմ դէմ կը զօրես.
 Իմացի՛ր՝ ո՞վ ալ ըլլաս՝ թէ դիւրաւ չե՛մ մեռնիր ես...»
 — «Ժա՛յռ, իմ անունն է Վըրէժ: Նախատինքով ու մաղծով
 Զիս ժամանակն յագեցուց: Զիս դիեցուց Վիշտը ծով:
 Արցո՛ւնք էի ատենօք, սակայն, հիմա, տե՛ս արդէն
 Անհունածիր ծո՛վ եմ ալ, ծունկի՛ եկուր դուն իմ դէմ:
 Ընդերքներուս խոր նայէ՛ չունի՛մ այլեւրս սէգեր
 Գարշ կուտամ հետս հոյլ մ'հոգի, դատակընի՛ք ու աւեր:
 Զարթի՛ր, հիմա կը կանչեն քեզ երախներն անդունդիս:
 Դո՛ւն՝ զիս դագա՛ղ դարծուցիր: Դիակներո՞վ լըցիր զիս...
 Զիս տար ափեր նետեցիր: Հոգեվարքիս վրայ շատե՛ր
 Ծիծաղեցան: Իսկ իրենց ողորմութեամբ ուրիշներ
 Թո՛ոյն խառնեցին զաղտնօրէն տանջանքներուս իմ անբաւ:
 Ճամբայ բաց, ժա՛յռ, որ անցնիմ: Անդորրն այլեւրս անցա՛ւ:
 Յործանապտոյտ մըն եմ ես, բու թըշնամի՛ն քինախանձ՝
 Հըսկայ՝ դիմացդ եմ կանգնած:»
 Պապանծեցաւ Ապառաժն: Իր խոյանքին մէջ անսանձ,
 Ալիքն ընդհուպ տապալեց անոր մարմինը փրտած:
 Ընկյուզեցա՛ւ, հալեցաւ անդունդին մէջ անսահման՝
 Կարծես, ծիւնէ՛ ըլլար ան:
 Անոր վերեւ, մըռընչեց, պա՛հ մըն ալ ծովը փըրփրած
 Ու փակուեցաւ քիչ յետոյ: Այն վայրին վրայ ուր կանգնած
 էր ուրուականն՝ ոչի՛նչ կայ հիմա, ի բաց Ալիքէն՝
 Որ շիրմին վրայ կը ծրփա՛յ՝ Կապո՛յտ-Ճերմա՛կ, վեճօրէ՛ն:

ԵԱՔՈՎՈՍ ԲՈՒԼԼԱՍ

Ծնած է Քեբիրա 1826ին եւ մեռած 1896ին: Սոլովոսի աշակերտներէն եւ մտեր մտերէն: Եղած է հրապարակագիր ու երեսփոխան: Մեծ դեր ունեցած է Եօրր կղզիներու միացման մէջ:

Քուլիաս կը նկատուի՝ հիմնադիրը հելլէն ճորագոյն բնագաւթեան: Քաջածանօթ Եւրոպական գլխաւոր լեզուներուն՝ յունարէնի քարգմանած է հին հելլէն գրականութեան եւ Եւրոպական ճորագոյն գրականութեանց, զլուի գործոցները: Իր ինքնագիր գործերն են «Մճածում եր», «Մեր Դրական Լեզուն» «Պատմութեան» եւն:

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ ՄԸ

Աղուաքընքուշ ու սիրասուն դէմքիդ վրայ՝
Կախարդական տըժգունութիւն մ'է իջեր,
Եւ յօնրերուդ ու շըրթներուդ վրայ գծուեր՝
Ջինջ կոստութեան համեատութիւնն հոգեհմայ:

Խոկումներէն՝ գըլուխդ հակա՞ծ կը մընայ.
Հոգիդ՝ քեզ հե՛տ լոկ կը խօսի սիրաջեր,
Երբ աչուրներդ բարձրացընես պահ մը վեր՝
Հոն՝ անբիծ սէ՞ր, երկէ՛ի անդո՞րր կը ցուայ:

Երբոր քալես՝ սիրապատար աչուրներ.
Քու անուշի՞կ շարժումներուդ մէջ ամէն՝
Հոգւոյդ ժպի՞տը թովջական կը տեսնեն:

Իսկ, երբ սըրտիդ ձայնով խօսին բու շըրթներ՝
Ըսիտիանքի անոնր շիթե՞ր կը տեղան
Տառապակոծ սըրտերու մէջ տըրտմական:

ԵՐԱՍԻՍՏՍ ՄԱՐՔՈՐԱՍ

Ինձած է Քեճալոնիա 1826ին: Հրատարակած է «Ուխտ» խորագրով դիւցազներգա-ֆնարական բանաստեղծութիւն մի՝ ներշնչուած Կրէսէի ազատագրական արիւնոտ պայքարներէն. ինչպէս նաեւ բանաստեղծական ուրիշ երկու հատորներ, «Բանաստեղծական Գործեր» եւ «Պզ-իկ ճամբորդութիւններ» մակագրութեամբ:

Մարտարաս եղած է Գերագոյն Ասեանի նախագահ եւ Գործուի երեսփոխան: Մեռած է 1891ին, Գործուի մէջ:

ԵՐԶՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱԿԱՆ

Իրիկուան ո'ւշ ժամուն, լեռնուտ վայրերէն,
Աղամ կու գար դանդաղաքա՞յլ, յոգնասպառ.
Աչքն՝ առաջին յառած աստղին, տրտմօրէն,
Որ իր դիմաց ականակի՞տ կը շողար:

Հայեացքն ինչո՞ւ չէր հեռացներ այդ կողմէն. —
Հրեշտակներու յիշած էր զե՛ղը պայծառ
Եւ իրիկուան հովուն կ'ըսէր մեղմօրէն,
— Ե՞րբ վերըստին պիտ' տեսնեմ ցո՛ւքն անոնց վառ:

Սակայն, յանկարծ, երբոր կ'իջնէր, դառնութեան
Անհետացան սրբտէն հետքե՛րը խորին.
Հայեացքը պիշ՝ մընաց կէտի՞ մը վըրա՛ն:

Եւա՛ն էր հոն, նըստած խորէ անկողնին,
Որ, առաջին անգամ իրեն կը ցուցնէր՝
Անթեւ հրեշտակ մ'որ հանգիստ՝ կա՞թ կը ծըծէր:

ՅԵՈՐԱԿ ՍԻՐՈՒՆԻ ՄԸ

Թռալս է թէեւ քու դիմագիծ՝
 Բայց, գեղեցիկ նոյնատես,
 Զի՛ կորսնցներ ան, հաւտա՛ ինձ,
 Ոչի՛նչ՝ իր վա՛ռ հըմայքէն:

Շուշա՛ն հս, բայց, քեզ բընութիւնն
 Ըստեղծելու ժամանակ,
 Զետեղեր է ճերմակութիւնն՝
 Հոգիիդ մէջ ո՛վ հրեշտակ:



ԱՆԻԼԼԵՒՍ ԲԱՐԱՍԽՈՍ

Ծնած է Նաւրիիւն 1838 ճ: Եղած է Էպարքոս, հիւպատոս եւ Եղեւմրտական նախարարութեան պատօտնայ: Իր ժամանակաւերջանի ամենէն շատ սիրուած ու փնտռուած բանաստեղծը եղած է: Ամբողջական գործերը հրատարակած է Էրեբ հասօրնետով: Մահէն յետոյ, իր անխալները հրատարակուած են առանձին հասօրով: Մեռած է Արեւնք, 1895ին:

Կ՝ ՈՒ Զ Ե Մ

Կ'ուզեմ որ՝ ան՝ շընչաւոր ու անշունչ բա՛ն չըսիրէ.
Ո՛չ իսկ թըռչուն ու ծաղիկ եւ կամ ալ ա'ստղ մը հըրէ:
Ինչ որ ես չեմ՝ չըցանկա՛յ եւ չըսիրէ երբեք ան:
Իր գիշերններն ու օրերն՝ համօրէն ի'մըս ըլլան:
Եւ քաղցրանոյշ քունն երբոր փակէ աչքերն յամրագին
Սիրատարփիկ երագր մէջ՝ զի՛ս տեսնէ իր հոգին:

Կ'ուզեմ՝ աշխա'րհը մէկ կողմ ու զիս՝ մի'ւս կողմը դնէ՝
Եւ ընտրութիւնն իր ընէ...:

Տ Ա Ղ Ի Կ

Փակուեցէք, աչքեր իմին փակուեցէ՛ք,
Մութին մէջ անհուն.
Ո՛վ ձեռքերս, կուրծքիս վըրայ խաչուեցէք,
Ա՛լ հանգրստացէք.
Հասա՛ւ իրիկունն...

Կանգ առէք դուք ալ, ոտքե՛ր պարտասած
Աւասի'կ դամբանն.
Հանգիստ պառկեցէք հիմա պատանքուած,
Խեղճո՛ւկ ու լըքուած.
Ա՛լ բաւ է համբան:

Քընացի'ր, ո՛վ սիրտ, քընացի'ր լըռին
Երկրի ծոցին մէջ.
Կոծերդ ու տրտիւներդ՝ ա՛յ պիտի դադրին
Հոգին մէջ ցըրտին:
Հանգչէ՛ դուն: անվերջ:

ՄԻՔԵԼԻՍ ԱԻԼԻՆՈՍ

Ծնած է Լիֆուրիի մէջ, 1844ին: Ուսումը Պերմի մէջ ստանալէ յետոյ, շրջած է Եւրոպական բազմաթիւ երկիրներ, անոնց գրականաւթիւնները ռւսումնասիրելու համար: Եղած է հայրենասէր լոկալաբանական մը: Գրած է բազմաթիւ բնութագրական եւ երգիծական բանաստեղծութիւններ, ցուած հոս ու հոն:

Մեռած է 1917ին:

ՍԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿ

Դեզ հետ ունեցած կըռիւս երէկուան,
Զիս ա'յն աստիճան ծանծրացուց կեանքէն՝
Որ մըտածեցի ըլլալ ինքնասպան,
Առաջնց վախճալու սրբոտիս խորունկէն:

Ըսի՝ հողին մէջ ա'լ ցաւեր չըկան.
Առի ածելին՝ որ խորհածս ընեմ.
Ու պիտի մըխէի կոկորդիս մէջ զայն,
Որպէսզի դադրին ա'լ հոգերն ամէն:

Սակայն, չեմ գիտեր ի'նչպէսն ու ինչո'ւն.
Քաջագործութիւնն այս ընելու տեղ՝
Նըստայ՝ եւ սկսայ ածիլուի՛լ իսկոյն.

Եւ անդորրեցաւ փոթորիկն ահեղ:
Ու զիս փոխանակ տեսնելու մեռած՝
Պիտ՝ գամ՝ որ պաչեա՝ ղեռ նո՞ր ածիլուած:

Վ Ա Ր Դ Ե Ն Ի Ն

Վարդենիի մ'որ իմ ծաղկուն
 Պարտէզիս զա'րդն է սիրական՝
 Բու անուշիկ տըւի անունն:
 Եւ, ինչպէս այս չի՞ գիտեր ան,
 Դո'ւն ալ իմ սէ՛րըս չես գիտեր.
 Դո'ւն՝ որ ունիս ոսկուն մագեր:

Ո՛վ իմ դշխոս: Փոքր ու չրնչին
 Այս երգս՝ համբո՞յր մ'է վեհերոտ.
 Որ թիթեռնիկն ինչպէս ծաղկին՝
 Բեզի՞ կու գայ սիրակարօտ,
 Ըսելու քեզ՝ իմ սէ՛րը վառ
 Թէ՛ կը մեռնի՞մ քեզի համար:



ԵՈՐԿԻՈՍ ՎԻՋԻՆՈՍ

Ծնած է Թրակիա 1852ին: Գերմանիոյ մէջ փիլիսոփայութեան դասընթացքներու հետեւելէ յետոյ Աթէնք հաստատուած է: Գրած է բնութեագական նուրբ ու զգայուն բանաստեղծութիւններ, որոք զինք մինչեւ այսօր, հեղին բանաստեղծութեան մէջ բարձր դիրքի մը վրայ կը պահեն: Եղած է հեղին պատմաւածի հիմնադիրներէն: Փարիզի մէջ գրած է «Մ'օրս Մեղքը» խորագրով պատմաւածք մը, յունարէն եւ ժրանսերէն, ինչպէս նաեւ ուրիշ պատմաւածքներ: Վիգիինոս ուղեգային խանգարում ունենալով դրուած է հագեքութաւան մը, ուր մեքի լանկարծական պայծառութեան պահերուն գրած է մէկ քանի գեղեցիկ երթումներ:

Մեռած է 1892ին:

Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր Ը

*Ծաղիկներն որ տըւիր ինծի՝
Զըթօշնեցան տակաւին.
Անոնք՝ բեզմէ շա՛ռ աւելի
Հաւատարիմ մընացին:*

*Զանոնք դալսոր պահեցի ես
Համբոյրներովս անհատնում,
Լուռ արցունքներս, ցօղերու պէս,
Կ'ըմպեն անոնք անդադրում:*

*Երբոր անոնք ալ ըսպառին՝
Ա՛հ, այն ատեն միմիայն,
Վարդ ու շուշան պիտի թողմին՝
Մըտնեն ինձ հետ գերեզման:*

ՕՐԻՆԱԿՆԵՐ

Տե՛ս, ջուրերուն վրայ ինչպե՛ս
Կ'իյնայ արծաթ լուսրնկան,
Ու կը ցանկայ տենչակէզ՝
Առնել համբո՞յր մը միայն:

Տե՛ս, թէ ալիքը ի՞նչպէս
Ափունքն յուշի՞կ կը զըզուէ,
Եւ կը ցանկայ խենթի՞ պէս՝
Առնել համբո՞յր մը անկէ:

Աւագութիւն, տե՛ս, ինչպե՛ս
Հեռացաւ հո՛վը թեթեւ,
Եւ կ'օրօրէ ճիւղերն հեզ,
Տալով համբո՞յր մ'ըղծահեւ:

Տե՛ս, տերեւները ճիւղին
Զիրար ինչպե՛ս կը զըրկեն,
Այսինքն՝ կը սիրուըտի՞ն
Կը համբուրուի՞ն քնքշօրէ՛ն:

Տե՛ս, սա բոյնին մէջ փափուկ
Տերեւուտքին տակ ըստուար՝
Կ'երգէ զոյգ մը ճրնճըղուկ,
Կը համբուրուի տենչավառ:

Տե՛ս, սիրակա՞ն իմ սիրուն,
Տե՛ս՝ ու գըթա՛ վերջապէս.
Եւ, անոնց պէ՛ս ըրէ դուն.
Տո՛ւր ինձ համբոյր մ'անոնց պէս:

ԱՐԿԻՐԻՍ ԷՅԹԱԼԻԹԻՍ

Ի՞նչ անունով՝ Քլեմքիս Միխայիլիսիս: Ծնած է Միսիլլի 1849ին: Եղած է քունդ աշխարհաբարեան մը: Գրած է պատմաւածքներ, բանաստեղծութիւններ եւ պատմական ու գրական բազմաթիւ յօդուածներ: Հեղինակն է նաեւ «Ուրուականներ» անունով քատրերգութեան մը: Իր «Պանդուխտի երգեր»ը արժանացած են գրական մրցանակի: Թարգմանա՝ է Հովերոսի «Ոդիսական»ը:

Էմթալիօթիս մեռած է Վրանսայի մէջ 1923ին:

ԶԱՆՐԱԿԻՆ ԵՐԳԸ

Անցիր արա՛գ, ի՛մ մագոգ, նուրբ թելերով մետաքսեայ,
Որ սիրականս Զատիկին գալուն փոխնորդ ունենայ:

Թա՛քու, թա՛քու ջահրակ իմ.

Թա՛քու, կու գա՛յ իմ սիրելին:

Թաշկինակ չէ՛ մընացեր օտարու թեան մէջ, լալէն,
Հարուստ կոյսեր կ'ուզեն զայն, զի՛ս կը տենչայ ան նորէն,

Թա՛քու, թա՛քու մինչեւ տուն

Գայ իմ թըռչո՛ւնը սիրուն:

Ես հէնքն ըլլամ, թող ան ալ թեթեւ իլի՛կը ըլլայ՝

Որ կըտաւին մէջ մըտնէ՛ ու դուրս ելլել չըկըրնայ:

Թա՛քու — պագ ու՛ պըսակի

Համար շուտո՛վ կը հասնի:

Թըռի՛ր, մագոգս իմ արա՛գ, գա՛րկ, ո՛վ իմ սանտր ոսկեղէն,
Թող անհատնու՛մ Մեծ Պահքը՝ հատնի, երթա՛յ մէկ օրէն:

Թա՛քու, թա՛քու ի՛մ ջահրակ

Կու գայ սիրածս անուշակ:

ԳԻՆԵՏԱՆ ԵՐԳԸ

Դանա՜կ առ դուն, կըտորտէ՛ զիս, եւ կըտորենք իմ միսերուն՝
 Ո՛վ իմ սիրուն,
 Եւտէ ծովո՛ւն մէջ փրփրաբեր.
 Այն օրէն՝ երբ լրբեցիր զիս, այս աշխարհէն ես գանեցա՛յ
 Կործանեցա՛յ,
 եւ, ա՛լ բարիք չե՛մ ըսպասեր:

Ա՛, ճերմակնե՛րդ կը հագնիս այժմ, ոսկի՛ զարդերդ կը շարես,
 Որբա՛ն չար ես,
 Օր պիտի գայ որ պիտ' զղջաս,
 Ու շիրմիս քով պիտ գաս, տըրտունջդ ըսել անձկաւ.
 Այլ՝ զիս անցա՛ւ
 Պիտի գըտնես, ո՛րքան ալ լաս:

Կըրա՜կ առ դուն ու վառէ զիս, եւ ամիւնիս հետ ծովերուն
 Տուր իմ անհուն
 Ատելութիւնս ալ հըրակէ՛զ.
 Մեղքըս քեզի թող չըհասնի, ո՛վ նազելիս, ես հարցուցի՛
 Ըսի՛ն ինծի
 Թէ՛ դուն ուրի՛շ մը կը սիրես:

ԱՐԻՍՏՈՍԵՆԻՍ ԲՐՈՎԵԼԵՆԿԻՆՍ

Ծնած է 1850 ին, Սիմեոյի մէջ: Ուսումը կատարելագործած է Գերմանիա: Եղած է գրականութեան դասախօս, երեսփոխան եւ համալսարանի քաղաքագետ: Հետաքրքրուած է բնաբերգական, դիւցազներգական եւ ողբերգական բաղմաթիւ գործեր, ինչպէս՝ «Փիլոսէսը» «Կռաւախն ձոր», «Աղամ ու Եւան», «Լիմնոսի Աղջիկը», «Աւետն», «Անառակին Վերադարձը» եւ «Նիմփեոս» ժախար: Թարգմանած է Կէօթէի «Նաուսը» եւ Լեսոյի «Լաօֆոն»:

Բրովելեկիոս մեռաւ 1936 ին:

ՍԷ՛՛ ՓՐԿԱՐԱՐ

Շատ անգամներ, այգուն-այգուն, ամպամած,
 Խրոտ՝ մարտով անկողինէս կ'ելլեմ վեր:
 Կուրծքիս ներքեւ ո՛չ մէկ շառայլ չի թեւեր,
 Ո՛չ մէկ հրրնուանք, կարծես վաղուց է ցամքած:

Ինձ կը թըւի՝ թէ արտորի մէջ եմ ես —
 Անիծապարտ մէկ անկիւնը աշխարհի,
 Ուր ամէն դէմք անհարազատ է ինծի,
 Եւ ամէն սիրտ՝ պա՛ղ, լերան ծի՛ւնը ինչպէս:

Այն ժամանակ, առանց երբեք գիտնալու,
 Իանդադարալ կ'առնեմ ճամբան քու տունին,
 Եւ անոր դէմ ես կը նքստիմ առանծին,
 Սղբատն ինչպէս՝ պալատին դէ՛մ լոյսերու:

Պատուհաններդ, արեւուն դէմ կը շողա՛ն,
 Երդ՛դ վերայ՝ կը դայլայլե՛ն թրոչուններ,
 Եւ այգային մեղմ հոգիկէն, ցօղաբո
 Ծաղիկներդ յուշիկ-յուշի՛կ կը դողան:

Իւրաքանչիւր գիծը ծիծողուն նրկարին,
 Որ հայեացքիս մէջ կը սուզի, դիւթական,
 Զիս կը յուզէ, շեշտին նըման դաշնութեան,
 Պայծառ լոյսով կ'ողողէ սի'րտն իմ մըթին:

Ու կ'երեւի երբոր քու դէմքը խընդուն
 Լուսամուտին մէջ, հո'ն, պահի՛կ մը միայն,
 Տիեզերքի հորիզոննե'րը համայն,
 Լուսապըսակ կը տեսնեմ դէմս յանկարծոյն:

Օ՛, ի'նչ հըրճիւ, անդորրութի՛ւն. օրհնութի՛ւն,
 Այդ սըրբաբոյր մըթնոլորտին մէջ աղու:
 Քանի՛ ա՛նգամ, այդպէս, առա՛նց զիտնալու,
 Աստուածային ինծ պահեր ես բաշխած դուն:

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հո'ն, հեռակայ դաշտի սըրտին,
 Դալարաւէտ լեռան դիմաց,
 Ուր կը խաղայ լոյսի ոսկին
 Բընութեան մէջ շրքեղապանծ,

Ուր լըռո՛յթը կ'իշխէ չորս դին,
 Եւ կ'երագէ հողը կարծես,
 Վարդեղ Մայիս, համբո՛յրն հովին,
 Ու կը սարսռայ ընդերքին մէջ,

Երիտասարդ մըշակ մ'այնտեղ
Կը հերկէ ա՛րտն իր հայրենի,
Բրոնած արօրն ափով ու՛եղ,
Թեքած՝ հասակն ալ սըլացնկ:

Կը հետեւի անոր ժըպտուն,
Յորեանն աջ-ձախ սերմանելէն,
Շընորհագարդ կի՛ն մը զարուն,
Տիմիթրայի դուստր ոսկեհեր:

Որպէս խորհո՛ւրդ մը երկնային,
Յուր մը կ'իջնէ ծիրանեթոյր,
Այդ լոյսին մէջ կը հանդիպին՝
Անոնց սիրող նայուածքներն հուր:

Եւ աւելի՛, արօրն ուժգին
Կը մըխըրճէ հողին մըշակն.
Ու կը ցանէ՛, կը ցանէ՛ կիինն՝
Ամառուան յոյս, զարնան հրըճուանք:

ԱԼԵՔՍԱՆՏՐՈՍ ԲԱԼԼԻՍ

Ծնած է Բիրեա՝ 1851ին: Ասեմ մը գրականութեան դասախօսութեանց հետեւելէ յետոյ, մնայուն կերպով հաստատուած է Ամզլիւս, ուր եւ մեռած 1935 ին Գրած է «Երգեր՝ Տղոց Համար» եւ «Փուն Բնկոյզներ» խորագրով բանաստեղծական հասոր մը: Գլուխ գործաց մը կը նկատուի Հովեռուի «Խլիական»ի իւր չափածոյ թարգմանութիւնը, տեխարհաբարի: Թարգմանած է նաեւ Եւրիպիտէի «Կնկլոպսան», Թալիսիտէի առաջին զիւրք եւ Շէյ-քսպիրի «Վեներիկի վաճառականը»:

ՄԵՍՈԼՈՆԿԵՑԻՆ

Անկրկալ գէ՛նք մ'ունէի, խորոխտապանծ ծիռ նըման,
Որ ամիսներ անընդհատ չինկաւ ձեռքէս մըտաթափ,
Եւ մօղերուս չափ աչքեր ոտտաներու կերաւ ան —
Բաւական էս: Նետեցի՛, առի դանա՞կս հապըշտապ:

Պապնակա՞ն դանակ մ'էր, հաւատարի՛մ որպէս շուն,
Որ, սովոր էր հալդուկեան տարիներէն անցեալի,
Դրուժան սիրտերն հարուածել: Տեսայ խուժանն երբ անհուն՝
Զայն մըխեցի սրբաին մէջ՝ իմ Տեսքոյի՞ն անծկալի:

Տեսքոյի՞ն՝ որ ինծի հետ մընաց ծարաւ ու նօթի,
Որ, սար ու ձոր կը վառէ՞ր գեղեցկութեամբն իր անրաւ:
Բայց ի՞նչ: Զէնքերն ու Տեսքո՞ն հիմա ողբամ ես պիտի:
Անոնց համար չէ՞ իմ լաց: Մեսոլոնկի՞ն կորսուեցաւ:

Ք Ա Ն Ա Ր Ի Ս

Աւագներու խորհուրդն ողջ, ամբարտաշին բոլորուն՝
Ըսաւ թէ՛ հո՛ն, ցամաքի՛ն պիտ' ըսպասէ թուրքերուն:
Ֆէ՛սս հանեցի այն ատեն,

Եւ երկու խօսք ըսելու ելայ մէջտեղ խրոխտօրէն:
«Անօգուտ է, իշխաննե՛ր, փըրկութիւնն նա՛ւն է միայն»:
Երբոր խօսքերըս լըսեց մեծ զուհիներէն մէկը այն՝
Բորբորած թո՛յնն իր թափեց.

«Ի՞նչ է անունն այդ մարդուն, որ խըրատներ կուտայ մեզ»:
Փսարան՝ այդպէս կորսուեցաւ: Կըրակը ձեռքս առի ես՝
Եւ Բիտսի ուղղութեամբ արշաւեցի՛ վրիժակէզ,
Եւ ալնտեղէն մոնչեցի՛ — չըդի՛մացայ — դառնայոյզ,
«Ահա՛՛ թէ ի՞նչ է անունս»:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ

Դրրան մէջ մայրս էր կանգնած եւ իր շրթները գունատ,
Տերեւի պէս, ծուկի՛ պէս, կը սարսռայի՛ն տներդհատ:
«Երթա՛ս բարով», կ'ըսէր ինձ, թաշկինակով, բայրս անգին,
Մերթ շարժելով ու մերթ ալ՝ զայն տանելո՞ւմ իր աչքին:

Իսկ եղբայրս հե՛տըս եկաւ մինչեւ անկիւնը համբուն,
Ուրախ դէմքով, անխրո՞ւմ, աչքերով ջինջ ու ժրպտուն,
Բայց, ըզգացի թէ կըռո՞ւր-կըտո՞ւր ի՛ր սի՛րտը կ'ըլլար՝
Երբոր թեւերն իր բացաւ ու զիս զըրկեց խօլարար:

ԵՈՐԿԻՈՍ ՍՐԻՐԻՍ

Ծագումով Քիոսցի, ծնած է Սիրա 1853ին։ Աթենքի մէջ հետեւած է գրականութեան։ Իր բանաստեղծական առաջին գործերը հրատարակուած են «Արիստոքանիա» երգիծաբերթին եւ հետագային՝ ուրիշ քերթերու մէջ։ 1884-ին հիմնած է «Խոմիոս» չափածոյ երգիծաբերթը, որ երեսուն տարի անընդհատ հրատարակուած է խինդ ու ծիծաղ սփռելով։ Իր լաւագոյն գործերը ի լոյս յանայւած է Ն հաստննրով։ Սաւրիս գրած է նաեւ տամաքիք գործեր։ Թարգմանած է Արիստոքանիսի «Նեմեկոս»-ը որ գլուխ գործոց կը նկատուի իբր բարգմանութիւն։ Մեռած է Աթենքի մէջ, 1919ին։

ՏԻԿԻՆ ՄԸ

*Տիկին մը շատ էր վըշտահար՝
Իր բացակայ էրկանն համար։*

*Դրացուհիներ անո՛ր բոլին՝
Ինչո՞ւ կու լաս դուն առանձին,
— Դո՛ւն որ ունիս խրնձոր այտեր —
Ու բարեկամ մը չես հարեր
Որուն պատմես քուկին ցաւեր։*

*Յաւն ուրիշին երբ ըսուի՝
Կը թեթեւնա՞յ, կը կիտուի։*

*Ոնտաց, եւ շատ չանցած ատեն,
Դըտաւ ընկեր ցաւին իրեն
Հիմա՛ կու լան միասնաբար,
Խեղճ, բացակայ էրկանն համար։*

ՄԱՅԻՍԻՆ

Երբ կուգայի՜ր ժամանակին,
Ծաղիկներո՞վ, բուրմունքներո՞վ,
Անմիտներու գունդ մ'ահագին
Քեզ կ'ընդունէր ի՞նչ երգերով:

Սակայն, հիմա այլեւս անցան
Փառքի օրերդ երազային,
Ու քեզ՝ երգիչ գեղգեղածայն
Աւանակները մընացին:

ԾՈՒԼՈՒՅԻՆ

Դործի՛ չունի՜մ ախորժակ
Ու՛լ ծո՞յլ եղած եմ շիտակ.
Մահճիս վըրայ երկարած,
Կը զգամ մարմինս ծանրացած.
Ու տիեզերքն իսկ անծայր,
Արդ նե՛ղ կու գայ ինձ համար:

Գէշը՝ աղէ՛կ կը կարծեմ.
Աչքերըս վար կը դարձնեմ,
Կը նայիմ հեղ մ'ալ անդին,
Այս աշխարհի երեսին
Կարենայի չապրիլ, ո՛ւհ,
Սակայն, — առա՛նց մեռնելու:

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Ը

Ղըրացուհի մը կ'ըսէ ալն միւսին՝
 — «Ահ, ինչպէ՞ս կ'ըլլայ որ քու ամուսինն
 Առանց պաշտօնի երբեք չի մընար,
 Իսկ իմըս՝ գործէ զրոկըւած է յար.

Տիկի'ն, ինծի ալ ցոյց տուր միջոցներ»:
 Եւ ան՝ որ մարդոց մէջ դիրք մը ունէր,
 Կը փսփսայ զաղտնիք մ'անո՞ր ականջին՝
 Սրուն: անգործ էր անբա՛խտ ամուսինն:

Ի՞նչ ըսաւ արդեօք: Այդ մարդ չի գիտեր:
 Բայց, անոր էրիկն ալ անկէ ի վեր,
 Ամէնուն նրման պաշտօն մը գրտաւ՝
 Ու խեղճին բախտը քի՛չ մը բացուեցաւ:



ԱՆՏՈՆԻՈՍ ՄԱՆՈՒՍՈՍ

Ծնած է Քութու 1828ին եւ մեռած վեներիկ՝ 1903ին: Գրած է բազմաթիւ բանաստեղծութիւններ՝ որոնց մէջ ակնբախ է զգացումի անկեղծութիւնն ու արտայայտութեան ազնուութիւնը: Մանուսս գրած է նաեւ իսալերէն:

ԲԱՐԻԼՈՅՍ ՄԸ

Գեղեցկացա՛ւ մէկէն աշխարհը այսօր,
եւ ամէն ինչ՝ կը շողշողա՛յ իմ չորս չիւն.
Երկինքները վա՛ր կը հակին սիրաւոր
եւ տարերքին հետ ըղծակաթ կը գըրկուին:

Միտքըս, այսօր, ըստացաւ թա՛փ մ'անսովոր,
Ու մարմինս ալ՝ տուգութիւնն իր նախկին.
Ո՛չ ոքի չե՛մ նըման այլեւրս այսօր.
Դրախտի՛ մը մէջ կը ծրփծրփայ իմ հոգին:

Այսօր, ոսոխս նայիլ ինծի չի՛ կըրնար,
Հոգիէս ղուրս ճառագայթներ կը ժայթքին
եւ շըրթներէս՝ կ'ելլեն սիւքեր քուրավառ:

Այսօր, լեզուս կը դայլայլէ դաշնագին,
Այսօր, ա՛ն՝ որ տարիներով զիս տանջեց,
Ինծի՛ քաղցրիկ «Բարի լո՛յս» մը շնորհեց:

ԱՔԵՖԱՆՈՍ ՄԱՐԾՈՔԻՍ

Ծնած է Զաֆլմքոս՝ 1858ին: Հայրը՝ Իսալացի, ուսուցիչ եւ բանասէղծ, նմանապէս եղբայրը՝ Աճերէաս:

Մարծոֆիս իբրեւ բանասէղծ առաջին անգամ հրապարակ եկած է Խալիբէն եւկու ֆերթղագրեւով: Հետագային է որ հրատարակած է «Գեղօցներ», «Նոր Բանասեղծութիւններ» եւ «Հնչեակներ» հատորներ, յունարէնով:

Մարծոֆիս մեռած է Աթէնք 1910ին:

ԵՐԲՈՐ ՄԵՌՆԻՄ

*Մի՛ մոռնար զիս, երբոր մեռնիմ, սիրակա՛ն
Օր մը այցի եկուր շիրմիս հեռակայ,
Հողակոյտիս տալու համբոյր մը, նախ քան
Որ զայն հովերը տարածեն երկրի վրայ:*

*Ա՛լ չըլլես ալիտ՝ հառաչներս տրրտմածայն,
Ոչ ալ հոգիս ալիտ՝ եթե՛ ին մէջ ըլլայ,
Պիտի տեսնես՝ դուն սրտիս լո՛յսը միայն
Որ, ալիտի հոն զերթ ուրուական երեւայ:*

*Տատաճ ու խո՛տ ալիտի իմ սէրը ըլլայ,
Ու բրնձիւնն ա՛լ ծայն չըտայ ալիտի քեզ,
Շիրմիս մէջ, ա՛ն ալ ալիտի մահանայ:*

*Միայն, ըզգա՛ս ալիտի թաւշեայ ձեռք մ'սրպէս,
Քու աչքերուն, շրթունքներուն, մազերո՞ւն
Վարայ, շունչն որ՝ յանձնեցի՛ ես հովերուն:*

ԼՈՒՍ ԱԾԱԳ

Կը փախչըտի դալկատեսիլ Լուսընկան,
Շապիկով մը միայն մարմինն ըսքողած,
Քընատ աչքերն իր պըղտորած են այնքան,
Եւ շրթունքներն՝ համբոյրներէն բորբոքած:

Գիշերն ի բուն աչքերը չէ՛ փակած ան
Մահիճին մէջ — ամբողջ կրակով ողողուած —
Մահկանացու սիրականին կ'երեւա՛ն,
Հետքերը դեռ, դէմքի՛ն, մարմնի՛ն դրոշմըւած:

Աչքերն հոս-հո՛ն կը դարձընէ սարսափով,
Երբ դալկահար, եղբա՛յր միտքը կու գայ
Ամպերուն տակ կը պահուըտի ըշտապով.

Բայց, զայրոյթէն շիկնած՝ Արեւը ահա՛
Արագ-արագ դէպի բարձունք կը վազէ
Որպէսզի՛ բրոջ անլուր ամօ՛թը ծածկէ:

ՃԵՐՄԱԿ ՄԱԶԵՐ

Ճերմա՛կ մազեր — ծիծաղելէն
Ըսաւ աղջիկը ինծի —
Տըրտմութիւնով կը նկատեմ
Քու սեւահե՛ր գըլուխին:
Ա՛լ ծերացար դուն, գոչեց ան,
Համբուրելով շրթունքներս,
Միշտ սիրեցի որպէս պարման՝
Բայց, իբրեւ ծեր՝ կ'ատե՛մ քեզ:

Տարիներն չե՛ն — զայն իմ զըրկին
 Խորն բանտելով, րսի ես —
 Որ զիս այսպէս ծերացուցին,
 Հապա՛ վիշտերս ու ցաւերս:
 Ու թէ՛ զը. խուս վըրայ մերմակ
 Քանի մը թել կը տեսնես.
 Այդ՝ տարիներն են. ա՛նառակ,
 Որ դո՛ւն ինծմէ խըլեր ես:

ՀՆԱՄԵՆԻ ՀՈՎՈՒԵՐԳ

Բարա՛կ, բարա՛կ, ծիւնն ամէն դի ահա կու գայ,
 Ծածկելով խո՛տը դաշտերուն.
 Կը նըմանին, ծիւնոտ ծառերը, ո՛վ Աննա,
 Ծաղկածիծաղ նըշիներուն:

Զի՛ երեւիր այլեւս հիմա արահետն այն,
 Որ տո՛ւնըդ զիս կ'առաջնորդէր,
 Այլեւս ոչի՛նչ կը տեսնեմ ես, սէ՛րը սակայն,
 Քայլերս դէպ՛ քե՛զ կը բերէ դեռ:

Ոչինչ այլեւս կը տեսնեմ ես: Յանկարծօրէն
 Թէեւ երդիքդ է ծիւնածածկ
 Բայց, վերը, հո՛ն, կը սաւառնին թեւթափելէն՝
 Զուխտ մ'աղաւնի մաքրամերմակ:

Անդորրանքին մէջ սառնաշունչ, համամերմակ՝
 Ճեւճա՛կ հագած, յայտնուէ՛ դուն,
 Ո՛վ բաղդը Աննա, տեսնել արեւն, որ ըսպիտակ
 Ամպերէն դո՛ւրս կու գայ ժըպտուն:

Համատարած մերմակութեան մէջ այս անծիր
 Զիւնասպիտակ կարապ որպէս,
 Կու գամ երգել քու զիրգ զըրկին մէջ հեշտ ուլի՛ր՝
 Ամենաջինջ իմ երգը ես:

ՔՈՆՍԹԱՆԹԻՆՍ ՍՔՈՔՈՍ

Ծնած է Աթէնք 1856ին: Գրած է բանաստեղծութիւններ, ֆրանկներ, համբողջական սպաւառութիւններ եւն, եւն. մեծ մասը՝ Սասանայ կեղծաւունով: Հրատարակած է «Կադիին եւ Լեւոնին» խորագրով այլաբանական չափածոյ մը, եւ «Գաբուն», «Ճառագայթներ ու Բոյրեր» լեռնագրերը եւ ուրիշ հասար մը՝ որ, բանաստեղծական մրցման մը մէջ առաջին գնահատանքի արժանացած է, ունի նաեւ՝ «Ինչո՞ւ Երջանիկ Չենք» խորագրով քննկերային ուսումնասիրութիւն մը:

Բայց, ամենէն աւելի Սոֆաս ուսումնական գրաւ է, իր սրամիտ էքսիկլամներով:

ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ

Ծանօթացան երբ անոնք նոր,
— Սիրոյ այն ի՞նչ կըրակ էր վառ —
Ան՝ կը խօսէր մեղմ ու անդորր.
Նէ՛ հըմայտուած ականջ կու տար:

Յետոյ, երբոր նըշանուեցան՝
— Ամէն մէկ խօսքն ի՞նչ անուշ էր —
Նէ՛ կը խօսէր հըրաշածայն,
Ան՝ հիացիկ մըտիկ կ'ընէր:

Բայց, այն օրէն որ կարգուեցան,
— Օ՛, տանջանքներ, ցաւե՛ր ամէն —
Երկո՞ւքը մէկ կը պոռպըռան՝
Ու դըրկիցնե՛րն մըտիկ կ'ընեն...:

ԳԵՂԱԴԷՄ ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻ ՄԸ

Այս վիրաւոր մարդոց մէջ
Ի՞նչ կը փընտռես, ա՛նաստուած:
Դարմանելու տեղ մէկ վէրք՝
Հազար վէրքե՛ր կը բանաս:

ԲԱՆԱՍՏԵՂԾ - ԱԿՆԱԲՈՅԺԻ ՄԸ

Իբրեւ քերթող մը քրնքո՞յշ՝
Աչքե՛ր, աչքե՛ր երգեցիր,
Սակայն, իբրեւ ակնաբոյժ՝
Անթիւ աչքե՛ր կուրցուցիր:

ԿԱՐԳՈՒԱԾԻ ՄԸ

Վաթսուն տարի ապրեցաւ
Լըմա՛ն, խեղճուկն աւ չըւեա՞ց.
Յըսան տարի իբրեւ մարդ,
Քառսուն տարի՛... կարգըւա՞ծ...:

ԶԱԽԱԻԵՐ ԴԱՇՆԱԿԱՉԱՐԻ ՄԸ

Քու ծեռուըները ա՛յնքան
Քրիստոնէաբար կը գործեն՝
Որ, լուր չունի՛, բարեկա՛մ,
Աջը՝ ծախին ըրածէն:

ՀՕՐ ԱՆՈՒՆՈՎ ՍՈՆՔԱՅՈՂԻՆ

Ինչո՞ւ այդքան կը սոնքաս՝ իրաւ որ չե՛մ հասկընար
Արդեօք անոր համար որ՝ կը կըրեա բե՞ռ մ՛ուսիդ ծանր,
Կըրածդ օտար փա՛ռք մըն է, մի՛ կասկածիր այս մասին,
Բեռնակի՛րն ես, պարզապէս, հօրենակա՞ն անունին:

Շ Ո Ւ Ք Ի Մ Է Ջ

Տապարն անգութ՝ լայնաշուք
Կաղնին հըսկայ կը զգետնէ,
Եւ այսպէս, թո՛ւփը խեղճուկ՝
Արեւու լո՛յս կը տեսնէ:

ՆԻՔՈՍ ՔԱՄՍԱՍ

Ծնած է Միսիլի 1858ին: Աթենքի համալսարանի իրաւագիտութեան ճիւղը աւարտելէ յետոյ, աւելն մը լրագրութեամբ եւ գրականութեամբ զբաղած ու գրած է բաւական զօղօրիկ գեքրուածներ: Շատնց է որ գրական ասպարէզէն հեռացած է եւ փաստաբանութեամբ կը զբաղի:

Կ Ե Ց Ի Ր

— Այո՛, քեզի՛ հետ, ա՛լ չունիմ ես կապ,
Ըսաւ բարկութեամբ,
Ու պահանջեց որ, ես ե՛տ տամ իրեն՝
Նըւէրներն ամէն:

— Ահա՛ նամակներդ, ահա՛ եւ վագերդ,
Կեցի՛ր, մի՛ վագեր,
Կեցիր որ առնես, նըշենի՛ ծաղկեալ՝
Ե՛տ՝ համբոյրներդ ալ:

Յ Ո Գ Ն Ե Յ Ա Յ

Ամէն տեղ ու միշտ՝ ա՛հ, նո՛յնն յաւիտեան:
Դընացած ըլլամ՝ թէ ըլլամ արթուն՝
Խաղի՛ մէջ՝ եւ կամ թէ սերտողութեան,
Միտքըս կը վազէ, քեզի ի՛մ սիրուն:

Նըման եմ, երկո՛ւ տարեկան մանկան,
Որ, ո՛ւր որ երթայ՝ եւ ի՞նչ որ ընէ,
Մի՛շտ, շրջազգեստին ծայրէն իր մօրկան՝
Պըտըլիկ ձեռքով ամո՛ւր կը բըռնէ:

Բայց, ես յոգնեցա՞յ քովդ ի վեր ա՛յսքան
Ատեն վագելէ, անդուլ, անդադար:
Մայրի՛կ, ոտքերըս փըրթա՞ն, լըմընցա՞ն,
Ա՛հ, քըչիկ մըն ալ զիս զի՛րկըդ դուն առ:

ՔՈՍՏԻՍ ԲԱԼԱՄԱՍ

Նոր ժամանակներու հեղին մեծագոյն բանաստեղծը: Նոճած է Բաթրան՝ 1859 ին: Գրած է բանաստեղծութիւններ, պատմութիւններ, քառերգութիւններ, քննադատական ուսումնասիրութիւններ, գրական ու հասարակագիտական յօդուածներ եւ այլ աւանդներ: Իր գրական վաստակը ամփոփուած է աւելի քան 40 հատորներու մէջ: Լաւագոյն գործերը կը նկատուին՝ «Անճարժ կեանքը», «Քաղաքն ու Ս'ենութիւնը», «Դամբանք», (գրուած իր զակին մահուան առթիւ), «Քաջօրուայն Մահը», եւն.: Այս վերջիները ինչպէս եւ բանաստեղծութիւններէն մաս մը, քարգմ ճուած են եւրոպական լեզուներու:

Բալամաս եղած է ամենամտերիւ բարեկամը Տիգրան Երկաթին, որուն նուիրած է «Հայրենիքներ» ընդհանուր խորագիրը կրող հնչեակներու շարքը եւ ուրիշ տեքստեր մը՝ գրուած Երկաթի մահէն յետոյ:

Բալամաս մեռաւ Աթէնքի մէջ, 1943 Փետրուար 27-ին:

ԱՅՍՊԷՍ ԱՆՁԱՐԴ...

Այսպէս անգա՛րդ, ըշտապո՛ւվ,
Ըզքեզ՝ մահուն չե՛մ տար ես:
Կեցի՛ր, ծաղկի ջուրերով
Լըւամ աղուո՛ր քու երես:

Ոսկեղբորուազ սանտրերով,
Յարդարանքը յետնագոյն
Թող տան ձեռքերը ձեր մօր,
Մեռաքս մազե՛ր ծրիծրիուն:

Գուցէ, մահուն, սիրելի՛ս,
Երբ ծըռի դէմքըդ դիտէ,
Դուն անշընո՛րհ երեւիս՝
Ու քեզ անկի՛ւն մը նետէ:

ՀԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՈՐ...

Ճամբորդութեանն որ, հիմա,
Սեւ հեծնորդին հետ կ'երթաս,
Նայէ՛, ձեռքէն իր չըլլա՛յ
Դուն բան մ'առնես, ո՛վ տըղաս:

Մի՛ խրմեր, թէ ծարաւիս,
Դուն այն մէկալ աշխարհի
Ջո՛ւրն ուրացման, սիրելիս,
Պոկուած աննուխս աղածրի:

Մի՛ խրմեր դուն, որ չըլլա՛յ
Ըզմեզ մոռնաս մըշտապէս:
Նըշաննե՛ր դիր անցքիդ վրայ՝
Որ ետ-դարձիդ՝ շո՛ւտ գըտնես:

Եւ ինչպէս որ թեթեւ ես,
Ու պըտըլի՛կ՝ զերթ ծիծառ,
Մէջքիդ շուրջ ալ, քաջի պէս,
Զէնուզարդ չի՛ պըսպըզար,

Մոլորեցո՛ւր կամացուկ
Մը դուն սուլթա՛նը ցայգուն,
Ու թրոխր վար, ու գաղտուկ՝
Եկուր մեր քով, ո՛վ սիրուն:

Ու տընակին մէջ թափուր
Թափառելով, սիրակա՛ն,
Եզիբ հովիկ՝ ու մեզ տո՛ւր
Քու համբոյրներդ ըղծական:

Մ Ե Ռ Ե Լ Ը

Մեռելի մ'հոգի՛ն կը շընչեմ այստեղ,
 Եւ շէ՛կ է մեռելն, անմօրո՛ւս կըտրիճ,
 Տան մէջ ալ, նո՛ր շէկ շողիւն կը շարժի
 Ու կ'անցնին՝ ժամե՛ր օրե՛ր, տարիներ,
 Ու տան մէջ է դեռ հոգին մեռելին.
 Ձերթ դառն անդորրանքը շուրջն այն նաւուն
 Որ համբա՛յ երթալ՝ փոթորի՛կ կ'ըղծայ:
 Դէմքերն ամէնուն, կարծես, մոմերէ՛ն
 Աղօտած դէմքեր են, աչուրներն ալ՝
 Դագաղի՛ վըրայ սեւեռուն աչքեր:
 Կը թրթռան շըրթներն վերջի՛ն համբոյրին
 Թորելով, կարծես, դառնութի՛ւնը դեռ:
 Ձեռքերն՝ աղօթքի՛ համար կ'ելլեն վեր,
 Կարծես, ոտքերն ալ՝ յուղարկի՛ կ'երթան,
 Եւ մերկութի՛ւնը, պատերուն, հերմակ,
 Ու ճոխութի՛ւնը սեւ ըզգեստներուն՝
 Նըւա՛գն է անջատ նըւա՛գարաններու:
 Թեթե՛ւ կը քալեն տըղաքն ալ, կարծես,
 Չուզելո՛վ յուզել նի՛նջը մեռելին,
 Ծերերն՝ զերթ փոսի մ'ափին վըրայ հակ՝
 Կը յենուն ուսին կոյսերուն, Բախտե՛ր
 Դողցես, ըսփոփի՛չ, հաճոյակատար:
 Իսկ պարմանիննէն, կարծես, ընթերցմա՛ն
 Մէջ կ'որոնեն հա՛րը մոռացումին.
 Եւ թաղարներու ծաղկունքն ալ մահուան
 Չարդեր են կ'ըսես, փակ փեղկերուն մօտ.
 Ճեղքէն ներս ինկած հաճանչն ալ՝ այստեղ,
 Մեռելոցի մո՛մ ըլլալ կը թըւի:
 Կ'առկայծի կանթեղը պատկերին քով,
 Եւ հոգեվա՛րք է հըռինչն իր կարծես,
 Եւ երբեմն-երբեմն, նաշխո՛ւն թիթեռնիկ,
 Իյնալով, թեթե՛ւ, մարմինին վըրայ

Կու տայ ողջո՞յնը թրոած հոգիին:
 Մեռելապաշտ տունն ալ, սակայն, որքա՞ն
 Կը սիրէ, կ'ըղծա՞յ մեռե՞լը իրեն
 Այն շիկագանգուր ու կտրիճ տըղան:
 Եւ կարենալու համար զայն պատրել,
 Զայն ընդմիջտ, անգի՞ղջ իրեն մօտ պահել՝
 Այլակերպութեցաւ ու եղաւ դամբան:

ՎԱՐԴԻ ԲՈՒՐՄՈՒՆՔ

Այս տարի զիս անգթօրէն ծեծեց ծըմե՞ռը ցըրտին,
 Որ զիս գըտաւ անկրրա՞կ ու ծերացած, զառամած,
 Ու, ժամէ ժամ, ակընդէ՞տ, կը սպասէի որ փրոուիմ՝
 Ճամբուն վըրայ ծիւնամած:

Սակայն, երէկ, խրախուսեց երբ զիս ժրպի՞տը Մարտին,
 Ու գընացի թափառկիչ արահետներն հընօրեայ,
 Արտասուեցի՞ն աչուքներս՝ աղու ըոյրէ՞ն առաջին՝
 Իրնքուշ վարդի՝ մ'հեռակայ:

ՀԱՐԻՒՐ ԶԱՅՆԵՐ

Վեշտասնամեայ էի դեռ՝
 Եւ սիրեցի ես Արքուհի՛ն, մանկուհի՛ն,
 Նըւիրեցի օր մը անոր, իմ պատկերն՝
 Ոսկեղըրուազ սըրտի մը մէջ թանկագին:
 Նըւէրս առաւ իմ մանկուհի՛ն, Արքուհի՛ն,
 Ու դալուկ գե՛ղն իր վարդացաւ հրրճուանքէն:
 Յետո՞յ: Պատռե՛ց, տըւաւ պատկե՛րըս հովին.
 Եւ իբրեւ զարդ՝ կախեց սըրտիկն իր կուրծքէն:



Ճամբան՝ լրացա՛ւ, ա՛լ հասանք: Կողզեալն աղուոր՝ աւասի՛կ:
 Կըրկնա՛կ ափեր: Ահա՛ մին՝ լայնատարա՛ծ, լուսալիք,
 Փլատակներով նըրբագիծ, տարմհաւերո՛վ լիալի:
 Մի՛ւսն՝ անտառնե՛ր մըրտենի եւ պարտէզներ սըմբուլի:
 Եւ ճիւղերուն տակ ծաղկած նախնիքնեւոյն, ո՛վ շուքեր.
 Սէրերն անոյշ կը զրուցեն, կը դէմխօսեն՝ սոխակներ:
 Մէկ ափունքն՝ հո՛ս՝, միւսն ալ հո՛ս եմ կը կանչէ անդադար.
 Նաւա՛կ, ո՞ւրտեղ խարըսխենք, ո՞ր դին երթանք, նաւավա՛ր:



Մի՛ ըսպասիր, մեր տան բակի՛ աղբերա՛կ,
 Որ. ա՛լ շըրթունքըս շըրթունքին կը մատչին.
 Ինչպէ՛ս խըմեմ ջրրիկդ: Բիւրե՛ղ իմ բաժակն
 Եղաւ կըտո՞ր-կըտոր, բաժակ ա՛լ չունիմ:
 Ջըրիկդ ինչպէ՛ս խըմեմ, ձեռքերս են աղտոտ,
 Ու շըրթունքնե՛րըս կ'այրէ տե՛նդ մ'այնտեսակ՝
 Որ կը վախնամ՝ թէ՛ երբոր գան շուրթիդ մօտ՝
 Քու զոփութիւնն ալ չորցընին, աղբերա՛կ:

Մ Է Կ

Աշխարհի մէջ, մէկ հատ ես, բիւրերու մէջ՝ մէկ հատիկ,
Երբոր կ'անցնիս՝ սըրտերու մէջ կը հանես փոթորիկ,
Եւ հոգւոյս մէջ — անդորրին խորն ընկըղմած ովկէան —
Կ'արթընցընէ երազներս՝ ա'նցքըդ ո՛հեքի՛ մը նըման:

Երկրի վըրայ միւս բոլոր աղուորները քու դիմաց
Բո՛յր կ'արծակեն զերթ ծաղիկ՝ հողերո՞ւն մէջ մոխրործած.
Եւ կը կապուի՛ն, քա՛ռջկու գան երբ յայտնըւին քու առջեւ,
Մինչ՝ քու ամէն մէկ շարժումդ՝ է սաւառնո՞ւմ լուսաթեւ:

Կը նըստիս, վե՛ր կը կանգնիս՝ հւս առաւել թեւաւոր
Կը մաշի՞ լամբն, աւելի՛ կ'ըլլայ բոցն իր մեծագօր,
Տարրերուն հետ կը սուրա՛ս, այերային ո'վ ոգի,
Երջանկութեա՛ն, հովի՛ն պէս եւ դեո՛ նըմա՛ն փայլակի:

Չըլլա՞յ թէ՛ դուն բարեմիտ դիցուհի մ'ես, որ անհուն
Քաղցր երազներ կը սըփռէ՛ արշալոյսի՛ պահերուն,
Երբ՝ նինջը մեզ կը պահէ անկողինին հետ կապած
Դալար վարդի թերթերէն ա՛լ աւելի փափկայած:

Անցողակի նայեա՞տ մ'ես որ այստեղէն կը մեկնիս
Դէպի շրքեղ մոլորակ մ'եւ կամ աշխարհ մը ուրիշ.
Թէ՛ ըզքեզ մի՛տքն ըստեղծեց լոկ վայրկեանի մը համար,
Դոլորշիէն կորսըւող եւ փըրփուրէն լուծուող յար:

Թէ՞ արծան մ'ես հընամի, եւ կամեցաւ Աստուած մ'որ
Կեանքի հեւքով խռովէ քու այդ լանջերը անդորր.
Եւ կամ՝ ժայռի Կարիատեսն՝ որ փախ տըւաւ այնտեղէն,
Եւ ետ եկաւ վերըստին օտարական ափերէն:

Փառերգելու համար քեզ՝ կը զգամ իմ մէջ տենչ մ'անմար
Եւ սըփռելու ճամբուդ վրայ՝ շո՛ւրջդ ու առջեւդ, անդադա՛ր
Ծունկի եկած եւ անտես, ձեռուրներովրս, խունկե՛ր,
Բոյրե՛ր, հալուէ՛, պըսակնե՛ր եւ լուսաթե՛ւ տատրակներ:

ԱՐՔԱՅԻՆ ՍՐԻՆԳԸ

(ՀԱՏՈՒԱԾ)

... Ձանի տեսան, ըզգացի՞ն եւ չե՛ն մոռնար զայն այլեւս,
 Ձի ամէն տեղ ձրգեց հետք՝ կայծակնային անցքն իրէն:

.

Արմենական լեռներէն մինչեւ սփերն Իտալեան,
 Անմահ անո՛ւնը անոր փառքը առած կը սուրայ,
 Դանուբի մէջ կը նաւէ այգուն, կ'երթա՞յ իրիկուան,
 Ջուրերո՛ւն մէջ եփրատի՛ կը յայտնուի՞, լի՞ւղ կու գայ:

Տ Ա Ղ Ի Կ

Սիրոյ տան մէջ հանդիպեցանք օր մը մենք,
 Ու միասին եզանք խաղի՛ ընկերներ.
 Եզա՛նք ընկեր: Տըւի ես սի՛րտորս աննենգ,
 Իսկ դուն՝ միայն վարդանմա՞նք քու շրթներ:

Երբ կրողելով օր մ՞իրարմէ զատուեցանք՝
 Մենք ուզեցինք մեր դրրածներն առնել ետ,
 Բայց, գիտե՞ս որ, խաղերու մէջ այս տեսակ,
 Ինչ որ դրրուի՛ կ'առնէ զայն սէ՞րն առ յաւէտ:

Կորսընցուցինք երկուքս ալ, բայց — երնէ՛կ քեզ —
 Դուն՝ լոկ համբոյր, երջանկութի՞ւնս ամբողջ, ես:

Տ ՈՒՆ Ս

Կ'ուզեմ տընա՜կ մը շինել ես,
Մենու թեան մէջ եւ լըոռութեան,
Գիտեմ բըլուր մը դալարուն՝
Այնտեղ պիտի չը շինեմ զայն:

Մեծ քաղաքին մէջտեղ գիտեմ՝
Պերճափարթամ պողոտան լայն,
Պալատներո՞վ, պարտէզներո՞վ,
Այնտեղ պիտի չը շինե՞մ զայն:

Գիտեմ ծովափն ալ ցընծալի,
Զոր կը պաչէ ալիքն անծայն,
Աւազս՜ւտքն է շուշանազարդ,
Այնտեղ պիտի չը շինե՞մ զայն:

Ճեղքած՝ խոպան դաշտ մ'ընդարձակ
Կերթայ ճամբայ մը անովախճան,
Զոր կը ծեծէ բամին վայրագ,
Ու կը խանձէ արեւն ալ զայն,

Ճամբայ մ'հազար անգամ կոխուած,
Որ՝ հեծնորդը խոնջ ու նօթի,
Եւ ուղեւորը ծարաւած,
Կը խեղդէ մէ՛ջը փոշիի:

Այնտե՛ղ շինեմ պիտ' տունն իմ ես,
Բակին՝ աղբի՛ւր մը սա՛ռ, պարզկայ,
Պիտի ծըխա՛յ օճախն անպերջ՝
Դըռնաւին ալ մի՛շտ՝ բա՛ց պիտ' ըլլայ:

ՏՈՒՆՆ ՈՒՐ ԾՆՍՅ

Տո'ւնն ուր ծընայ՝ — թող հիմա հոն օտարնե՛ր բընակին —
Ոգի՛ է, զիս կը կանչէ ու կը սպասէ՛ ինձ կըրկին:

Տո'ւնն ուր ծընայ՝ — միեւնո՞յնը միեւնոյն ճամբուն վրայ —
Աչքերուս դէմ կը յառնէ, իր թարմութեա՛մբ հընօրեայ:

Տո'ւնն՝ ի՛նչ փոյթ թէ փոխեր են անոր հին ծենն ու գոյնն ալ—
Առաջուա՛ն պէս անվըթար՝ ի՛նձ կը սպասէ հոն դարձեալ:

Հնամի պսակն իր դըրան, օ՛, բայց կամա՛րն ալ ահա՛:
Միայն լարե՛րն են պակաս՝ որ ան կիթա՛ռ մը դառնայ՝

Ու ծայնակցի, տընակին ցընծուն երգին, տղուն համար:
Ե՛տ կը դառնամ ահա՛ ես մատողաշ ծաղիկն իր դալար,

Կ'երթամ բոյնի՛ս, թաղարի՛ս, արշալոյսի՛ս, մագնիսի՛ն,
Իմ մայրիկի ջերմութեան, հայրենական սուրբ յարկին:

Ծերոյթն եկած՝ ու սահա՛ծ թող տարիները ըլլան,
Աւերումէն փոփոխման ու փոշիէն կորըստեան՝

Դա՛րձեալ աննդծ ու անհուպ ա՛ն՝ ըախտին դէմ կը կանգնի՛
Ու պարտէզէն ինձ հա՛մար թարմ պտուկնե՛ր կը բանի:

Զո՛ւր ժամանակն ու հոգերը եւ սրբութեամբ առթած խոց,
Աչքերս ուրիշ՝ եւ ուրի՛շ են աչուըններն ալ մարդոց:

Մուտքի դուռէն ըստուերոտ, դէպի դահլի՛ճը լուսեղ,
Թանկ ժամացոյցն ոսկեղէն, ապակիի՛ն մէջ բլերեղ.

Դըրուած ամէնն համաչափ, տօնավայել յարդարուած,
Դէմքե՛րն, իրե՛րն համօրէն, ի՛նծ կը սպասեն կարօտած:

Հաւատարիմ աղախնին քով արքունի իմ հանին,
Աշխատանքի դըշխունի՛ մայրս, ո՛վ խընծիղն իմ սըրտին,

Վերջնածիլ պտո՛ւղը գըրկին: Ու թող[թերու մէջ անդին՝
Բիւր հոգերով կըլանուած՝ ուրուակա՛նն իմ հայրիկին.

Ու բոյրերուն մէջ անոյշ, վարդենիի՛ն, աննուխին,
Եղբա՛յրս, բանուորն ու մըշակն՝ հայրենակա՛ն պարտէզին:

Աւելի խո՛րը, հեռո՛ւն, իբր ա՛յլ երկրի արարած՝
Ահա՛, ծածո՛ւկ, պարտէզին մէջ աղջընակ մ'է կանգնած,

Առջի իղծիս գուշակումը սըրբաբո՛յր ու մարուր,
Արջալոյսիս մէջ ծիծա՛ղ, վերջալոյսի՛ս մէջ՝ սարսուռ:

Տո՛ւնն ուր ծընայ՝ թող հիմա օտարնե՛րը բընակին,—
Ոգի՛ է, կեա՛նք կու տայ ինծ ու կը սպասէ ինծ կըրկին:

Ո Ի Ր Ո Ի Ա Կ Ա Ն Ը

Այդուո՛ր մհոեալ, դուն մենակալն աստեղածին իմ երկինքին
Խորհըրդաւոր, եկա՛ր դարծեալ.

Յայգը բերաւ ըզբեզ, ո՛վ սուրբ ուրուականն իմ պաշտելիին,
Թըշուառ գըրկիս մէջ որբացեալ:

Եւ սեղմեցի քեզ կուրծքիս դէմ, ինչպէս զաւակն իր առաջին
Դեռ փայլալայած չէ ո՛չ մէկ մայր,

Եւ տարերկրիկ ցաւի մը շունչն իր տըրտմաւէտ փալփըլումին
Մէջ սըրբացուց դէմքըդ պայծառ:

Եւ գեղեցի՛կ էիր, ինչպէս՝ չեղա՛ն սէրերս պարմանական
Անցելասոյգ տարիներուն,

Եւ էիր լո՛ւռ, ինչպէս երբեք իմ սըրտին մէջ չըխօսեցան՝
Սոխակները բերթողներուն:

ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ

Երկուքըս, տո'ւնն էինք նըստած իրիկուան,
 Ինչպէս ամէն ատեն, եւ ես՝ իր զիմաց,
 Լըռիկ հակած էի գըրքի՛ մը վըրան,
 Իսկ ան ալ՝ ի՛ր գործին վըրայ էր կըքած:

Եւ այդ գիրքը, երգամատեան մըն էր պերճ,
 Հոգի՛ համակ ներդաշնութի՛ւն ու փաղփղում,
 Եւ, էջին վրայ, զոր ըստ բախտի բացի ես,
 Դըրուած գըտայ սա՛ բառը՝ «Երջանկութիւն»:

Ո՞ր երկրին մէջ կը բողբոջիս, ո՛վ ծաղիկ,
 Ո՞վ մարգարիտ, ո՞ր ծովերու ափունքին,
 Ո՞ր կողմերուն լոյս կու տաս դուն, ո՛վ աստղիկ,
 Ո՞ր սըրտերուն, ո՛վ դուն շընո՛րհ երկնային:

Քու թեւերն ո՞ւր կը ծալլես, ո՛վ Քերովբէ,
 Ո՞վ Նայեատ, ո՞ւր կ'առնես լոգանք արդեօք դուն,
 Ա՛հ, չը հալող աղամա՞նդ ես դուն միթէ,
 Թէ՛ մառախուղ՝ ու կը ցըրուի՞ս դուն խկոյն:

Դըժոխքի՞ն մէջ թէ՛ Իրրախտի՛ն կը մընաս,
 Ժողովուրդի՞ն թէ՛ ամայքին մէջ հեռուն,
 Ապարանքի՞՞ թէ՛ խըրճիթի՛ մը մէջ պարզ,
 Ըսէ՛ ինծի, Երջանկութի՛ւն, ո՞ւր ես դուն:

Առանց աչքերը իր գործին վըրայէն
 Վեր առնելու. հանդա՛րտ, «Այստե՛ղ» երբ ըսաւ,
 Նըւագ մ'անճառ, բաղցրաթըրթիռ իր ծայնէն՝
 Ամբողջ տան մէջ յանկարծօրէն լեցուեցաւ:

Եւ տըրտփել ըսկըսաւ սի՛րտրս սաստիկ,
 Ու համակեց հոգիս՝ յուզո՞ւմ մը անբաւ,
 Որովհետեւ, ինձ թըւեցաւ՝ թէ՛ ի՛նչինքն
 Երջանկութիւնն էր որ մէկէն խօսեցաւ:

ԵՈՐԿՈՍ ՏՐՈՍԻՆՍ

Ինչպէս ի մեզ, 1859-ին: Մէկը՝ Յունաստանի ամենասիրուած ու վաւերական բանաստեղծներէն: Հրատարակած է բազմաթիւ բանաստեղծական հատորներ. ինչպէս «Անդորր», «Լուսեղ Մթուրիւններ», «Փակ Արեւ-ւանուկներ», «Գաղթող Իրիւարներ», եւն. եւն.: Գրած է նաեւ պատմա-ւածներ, սպառնութիւններ, յուշեր եւ ուրիշ շատ մօ գործեր: «Ամսօրիլիս» եւ «Սիրոյ Բաժնաւոր» պատմութիւնները քաղցմանուած են օտար լեզուներու: Տրոսինս հրատարակած է գրական պարբերականներ, տարեգիրքեր, օրաթերթեր, եւն.: Եղած է կրթական նախաւարութեան գլխաւոր: Եւն. եւն.:

Տրոսինս եւս, Բալամասի պէս, եղած է Տիգրան Երկաթի եւ ընդհանրապէս հայութեան սնկեղծ բարեկամը: Համիտեան բռնակալութեան շրջանին, Յունաստան ապաստանած յեղափոխականներուն օգնելու համար կազմակերպած է յանձնախումբեր, միջիններ եւ գրած է հայանպաս յօդուածներ:

ԿԵԱՆՔԻ ՀԷՔԵԱԹԸ

*Մանկութեանըս՝ կ'օրօրէիր՝ հէքեաթներով
Զիս ծռնկերո՞ւղ վըրայ, ով մա՞յր իմ սիրական,
Եւ կ'աւարտէր երբոր հէքեաթը հոգեթով՝
Կը ծըզէիր՝ որ քովդ ի վեր ես քընանամ:*

*Հո՛ն ուր հիմա կը քընանա՞ս յաւերժապէս,
Մա՞յր, քարշ կու տամ ես իմ ծռնկերը յոգնասպառ,
Բու քովն ի վեր քընանալո՞ւ առաջուան պէս:
Կեանքի հէքեաթն՝ ա՛լ վերջացա՞ւ ինծի համար:*

ԻՆՉ ՈՐ ԶԸՍԱԻ ՏԱՆԹԷ

(«Դժոխք»ի 5-րդ գլուխի 138-րդ տողէն ետք)

Ֆրրանչեսքա, մեծագոյն ցա'ւն իսկապէս,
Վերյիշումն է երջանկութեան օրերուն,
Երբ՝ ա'լ ամէն երջանկոյթէ զրկուած ես:

Բայց, աւելի՛ պիտի ըլլար ցաւն անհուն,
Թէ ըլլայիր, մինակ, զատուա'ծ ընկերէդ,
Ան փրնտոէր բեզ՝ ու փրնտոէի՛ր զայն ալ դուն,

Եւ հանդիպման չունենայի՛ր յոյսն յաւէտ:
Անբաժան էք արդ: Ըստիտիուէ՛ այսքանով,
Յաւերժական դժոխքին մէջ տըրտմաւէտ՝

Դրախտի կըտո՞ր մը կ'ըմբռնէնէք երկուքով:

ԵՐԿՈՒ ԶԵՌԲԵՐՍ

Հաւատարիմ ու սիրելի
Ձեռքերուդ մէջ ձեռքերն իմին՝
Զոյգ հիւղերու պէս բաղեղի՛
Միացան. մահուա՛մբ պիտի զատուին

Եւ եթէ օր մը բաժնուին՝
Պիտի մընան տարածուած յար,
Որպէսզի բե՛զ օրհնեն լրռին,
Եւ՝ աղօթե՛ն բեզի համար:

ԱՄԱՆՈՐԻ ՆՈՒԷՐ

Կը հարցընեն թէ ի՞նչ կ'ուզեմ որ ինձ տաս՝
 Ո՛վ իմ պըզտիկս: Բայց, ա՛յնքան բան կ'ուզեմ որ,
 Կը վախնամ թէ՛ յանկարծօրէն սնանկանա՛ս
 Եթէ ինծի տաս ուզածներն իմ բոլոր:

Կ'ուզեմ անոյշ կասկենագոյն աչուկներդ,
 Կ'ուզեմ՝ մազերդ քու այդ անսանձ ու արծակ,
 Կ'ուզեմ՝ նըրբին, մըշտաժըպիտ շըրթունքներդ,
 Փափկաքընքուշ կ'ուզեմ քու գի՛րկը այդ տաք,

Կ'ուզեմ...: Բայց ի՞նչ...: Կը նեղանա՞ս: Բոպասէ՛
 Ի՛նչ կ'արտասուե՞ս: Ա՛հ ո՛չ, կատա՛կ էր այնպէս:
 Խընդա՛ նորէն, խընդա՛ սըրտա՛նց, ա՛հ՝ ժըպտէ՛,
 Լոկ այս նուէրը կը խընդրեմ քեզմէ ես:

ԳԻՇԵՐԸ, ԽՈՐՈՒՆԿ ԿԷՍ ԳԻՇԵՐԷՆ ԱՆԴ...

Գիշերը, խորո՛ւնկ կէս գիշերէն անդ,
 Երազին ազատ, հո՛ւր թըռիչներով
 Կը սուրայ հոգիս, ըստրո՛ւկ անկաշկանդ՝
 Դէպի անհունին փփերն անխըռով:

Եւ հոն կը տեսնէ այն աներեւոյթ
 Իրերն, որ խարդախ օ՛րը կը ծածկէր,
 Գիշերուան օդին մէջ վըճիտ, անքո՛յթ,
 Կը լըսէ չըսուա՛ծ, չըլըսուա՛ծ բաներ:

Կը տեսնէ ցոլքերն գերեզմաններուն,
 Աշտարակներուն ոգիներն ալ լոյս,
 Կը լըսէ՛ աճո՛ւմն անդուլ, ծառերուն,
 Պըտո՛յտն աստղերուն՝ պայծառ ու քընքուշ:

ԱՂ, ՄՆԱՍ ԲԱՐՈՎ

Մեր այս կեանքը ա՛հ, շա՛տ գէշ է ըստեղծուած,
 Վարդերուն քոպ՝ կը ծըլի փո՛ւշը դըժնեայ
 Եւ սիրտն ինչ որ կ'ակընկալէ կարօտած՝
 Գալէ առաջ, կը մարմըրի՞ ու կ'երթայ:

Աչքերուդ մէջ տեսեր էի խի՛նդ մ'անմար
 Եւ ես ինծի հիւսեր աղու երազներ,
 Ա՛հ, մնաս բարով, լա՛ւ պիտ' ըլլար թէ ըլլար՝
 Ա՛հ, մնաս բարով, մեզ՝ այդ բա՛խտը տըրուած չէր:

Կը շըրջէի, նըժդեհ, երկրէ երկիր ցարդ,
 Եւ իմ սիրտը միայն ատել էր սորված.
 Երջանիկ պահ մը յուսացի լուսագուարթ
 Յանկարծօրէն երբ երեւցար իմ դիմաց:

Քաղցր ու տաքուկ գրրկի մը մէջ սիրավառ,
 Պիտի սիրտն իմ տառապակոծ, կազդուրուէր,
 Ա՛հ, մնաս բարով — լա՛ւ պիտ' ըլլար՝ թէ ըլլա՛ր,
 Ա՛հ, մնաս բարով — մեզ՝ ա՛յդ բա՛խտը տըրուած չէ՛ր:

Կ'երթան ամպերն ու կը սուլէ չար քամին,
 Անծրեն՝ հովիտ ու լեռ ամէն կը խեղդէ,
 Սե՛ւ կը թըլի, յար հւ նըման երկինքին՝
 Այս պահն, երբոր աշխարհ ըզմեզ կը զատէ:

Ինծի ի՛նչ ալ ըլլայ, բարի եւ կամ չար,
 Ո՛ւր ալ երթամ՝ պիտի սիրեմ ըզքեզ դեռ.
 Ա՛հ, մնաս բարով — թէ ըլլար՝ լա՛ւ պիտ' ըլլար,
 Ա՛հ, մնաս բարո՞վ — մեզ՝ այդ բա՛խտը տըրուած չէր:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

— Ըսէ՛ ինծի, ո՛վ նժդեհ, որ կը շրջիս առանծին
Այս ցրտաշունչ երկիրներն, հայրենիքդ ո՞ւր է քուկին:

— Իմ հայրենիքն հեռուն է, զայն կը տենչա՛մ հոգեւին.
Այնտեղ՝ օրերը կեանքին օրհնութիւնով կը սահին.
Հո՛ն, քա՛ղցր է մահն, ու երբոր մեռնի մարդ օ՛ր մը այնտեղ,
Շիրմին վերեւ կ'ունենայ՝ խա՛չ մը, կնդրո՞ւկ ու կանթեղ:

Իմ սիրելի գիւղիս մէջ, կայ միշտ ժպիտ ու բերկրանք,
Երգի ծայներ՝ կալին մէջ, այգիին մէջ՝ բըրբըջանք,
Ու, Զատիկի օրը, երբոր հոն կտրիճները պարեն՝
Կը թրթռայ սրի՛նգն՝ ու թմբուկը թո՛ւնդ կ'ելլէ քաղցրօրէն:

Հայրենիքիս մէջ աղուոր, շնորհագե՛ղ ու բուրեան
Է ամենէն խոնարհ ծա՛ռն, դալկահար խո՛ւտը անգամ,
Նշենիի ճիւղերը ծաղիկներով կը յորդին
Շո՛ւտ կը բերեն ծիծառներն՝ այնտեղ գարունը անգին:

Լանջերուն վրա՛յ մարմարեայ, իր լեռներուն մոզական
Կը գեղգեղեն կաքաւնե՛ր, կու լան բուերը գոժկան,
Փրփուրներով կը պատէ արծաթացոլ ծովը զայն,
Կ'ըլլայ երկինքն աստղազարդ՝ անոր պոսա՛կ հրաշագան:

Իմ հայրենիքս, երբոր դեռ, բարբարոսէն չէր գերուած՝
Կը պանծար իր քաջութեամբ, իմաստութեա՛մբ գերազանց:
Սակայն, կրկին արիւնով ոռոգուած սե՛ւ իր հողէն
Ազատութիւնը ծընա՛ւ, առաջուայ պէս, վեհօրէն:

— Բաւական է: Ա՛լ տեսա՛յ, հանչցա՛յ երկիրն այդ աղուոր,
Ո՛վ նժդեհ, ի՞մա ալ է արդ քո՛ւ հայրենիքդ հեռաւոր:

Ն Շ Ե Ն Ի Ն

Ցընցե՛ց պըտըլիկ իր ձեռուըներով
 Ծաղկած նրշին ան,
 Եւ, կըռնա՛կը, ծո՛ցն ու մազե՛րն ալ ծո՛վ
 Ծաղկով լեցուեցան:

Ա՛հ, խենթուկն երբոր տեսայ ծիւնամած՝
 Տըլի պազ մ'անոյշ,
 Ու զըլխէն ծաղկունքն ես թափ տալով ցած՝
 Ըսի սըրտայոյզ,

— Ինչո՞ւ կը շտապես, խենթո՛ւկ, այդքան շուտ
 Դըլխուդ բերել ծիւն.
 Օր մ'արդէն պիտ' գայ ա՛հ, ծըմե՛ռը ցուրտ,
 Այդ չե՞ս խորհիր դուն.

Ի զուր պիտ' յիշես դուն այն ժամանակ
 Խաղերդ, անիրաւ.
 Ակնոցներ հագած, մազերով ճերմակ
 Կարճըլի՛կ պառաւ...:

ԵՐԿՈՒ ՊԱՐՄԱՆՆԵՐ

Երկու պարմաններ կըռիւի կ'երթան,
 Մէկուն բոցավառ երեսին վըրայ՝
 Կը տեսնեմ թովչանքը պարմանութեան.
 Յաղթանակն անոր դիւրին պիտ' ըլլայ:

Միւսին աչքերուն մէջ անլո՛յս, մըթին,
 Եւ դալուկ դէմքին վըրայ առնական,
 Արհամարհանքը կը տեսնեմ ահին՝
 Եւ անագորոյն վե՛հ՝որ մահուան:

ԼՈՐԵՆՇՈՍ ՄԱԻԼԻՍ

Ծնած է Իրակէ 1860-ին, Սպանական ծագում ունեցող հօրմէ: Կարճ ատեն մը Աթէնքի համալսարանը յաճախելէ յետոյ, անցած է Պաւարիա ուր եղած է փիլիսոփայութեան դասախօս, միաժամանակ նախնական լեզուաբանական ուսումնասիրութեանց եւ սանսկրիտերէնի սերտումի, որմէ բարգմանած է «Տալաս եւ Տամայանթի» հնդկական դիւցազնավէպը: Ըլ լալով քաջամուտ լեզուագէտ բարգմանութիւններ կատարած է նաեւ՝ Շիլլէյէն, Շիլլերէն, Կէօքէէն, Թենիսթընէն, Տանթէէն եւ Կոստոյոյէն: Լասիներէնէ բարգմանած է Վլադիլիոսի Ենէականի առաջին եւ երկրորդ գիրքը:

Մալիլիսի ստեղծագործութիւնները կը ներկայացնեն 50 նրբաբանական հնչեակներ, որոնց մէջ դրած է իւր մելամաղձութիւնը եւ աւելի գեղեցիկ ու ազնիւ կեանքի մը գաղափարականին հանդէպ իւր սերը:

Մալիլիս ինկած է պատուոյ դատին վրայ 1912 Նոյեմբեր 28 ին, հեղինկոթուրք պատերազմի քննադատին, Կարիպալսեաններու գումղի իբրեւ հարիւրապետ կռուելով:

Մ Ո Ռ Ա Յ Օ Ն Ք

*Բարեբախտ են մեռելները որ կը մոռնան
Դառնութիւնները այս կեանքին. մայրամբուրի
Արեւն երբոր ու գայ իրկո՛ւնն անդորրալի՝
Մի՛ լար զանոնք, ցաւերդ ինչքա՛ն ալ խոր ըլլան:*

*Հոգիները՝ այդ պահերուն կը ծարաւնան
Ու բիւրեղեայ կ'երթան աղբիւրն մոռացումի
Բայց, տիղմը ջուրն կը մ'թագնէ՝ թէ հոն կաթի
Անոնց համար, արցունքի շիթ մը տըրտմական.*

Ու պղտոր ջուրն եթէ խըմեն՝ կը վերյիշեն
Շըրէզնեբու ծործորներէն երբոր դառնան,
Հին-հին ցաւեր՝ որ իրենց մէջ դեռ կը նիրհեն:

Թէ ըստիպուած ես արտասուել երեկոյեան՝
Թող ողջերուն համար աչքերդ լան տրտմաբար,
Անոնք այնքա՞ն կ'ուզեն մոռնալ, թայց, չե՞ն կըրնար:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Դա՛րձեալ կ'արթընցնէ հովիկը գարնան
Բնութեան մէջ թաքուն սիրոյ բաղցրութիւն,
Երկիրն՝ որպէս հարս բի՛ւր ծաղկով օժտուն,
Կը փայլի՞, մինչ ա՛ստղն կը մարի առտուան:

Թիթեռնիկները՝ ջուխտ-ջուխտ թի՛ռ կու գան,
Հո՛ս՝ պիծակն, անդին՝ կը բըզզա՞յ մեղուն,
Բնութիւնը գըտայ իր քա՛ղցըր պահուն,
Կեանքը՝ կը խայտա՞յ չորս դին դիւթական:

Ամէն մէկ բուրմունք եւ ամէն մէկ թոյր,
Թրռնակի ամէն դայլայլանք անոյ՜՝
Կ'աշխարհն սըրտիս մէջ բաղձանք ու յոյս

Վերհամբուրելու՝ հո՞ղըդ սըրբաբոյր,
Եւ տեսնելու՝ քո՛ւ Մայիսդ ալ կըրկին,
Աղուոր ու անոյ՜ հայրենի՞ք անգին:

Կ Ո Ւ Ռ Ք Ե Ր

Իմ անխինդ խընդում, խեղճո՛ւկ իմ երգեր,
Կեանքիս՝ սիրական պարծա՛նքը ծածուկ,
Ազնիւ խըմորէ շաղուուած էք դուք,
Եւ ո՛չ թէ բախտի բերումով ծըներ:

Անհամ ու անմիտ ծայներ չէք հաներ
Երգերուն նըման սիրողին խենթուկ,
Բայց, գըզըոցէ՛ն ալ դուրս չէք ելեր դուք
Կանգունն այսքանի՝ փընտռելու գնորդներ:

Ձի՛ դուք մարմիններն, հոգեակներն էք իմ
Ցաւ ու տենչերուս, որոնք միշտ ու միշտ
Ա՛յնքան դառն թոյներ ինծի խըմցուցին.

Խինդերը՝ կո՛ւռք են, ճըշմարիտը՝ վի՛շտ
Կեա՛նքն է ճըշմարիտ, բայց ի՛նչ փոյթ ինձ ա՛հ,
Կը նայիմ ձեզ ու՝ վիշտըս, մե՛ղր կ'ըլլայ:



ԵՌԻԱՆՆԻՍ ԲՈԼԵՄԻՍ

Ծնած է՝ 1862-ին: Հրահարակած է «Ձիւնձաղիկներ», «Այապաս-
րներ», «Նեխարներ», «Ձնաշխարհիկներ», «Ծեր Ջուրակ», «Փռուած Մար-
մարներ», «Իրիկնային» ֆերթագրֆերը եւ Տասի մօտ ողբերգութիւններ:
Եղած է գեղարուեստից վարժարանի բարձուդար:

Բոլեմիս եղած է նախնորդ սերունդի ամենէն ժողովրդական բանաս-
տեղծներէն մէկը: Իւ բանաստեղծութիւններէն շատերը՝ եղանակաւորուած
են եւ մինչեւ այսօր կ'երգուին:

Մեռած է 1925-ին:

Ջ Ր Ո Տ Ա Մ Գ Ի Ն Ի Ն

*Կորսընցուց ի'նչ որ ունէր, կի՛ն, զաւակնե՛ր, ըստացուա՛ծք,
Իբրեւ փերջին ըսփոփանք բան չը մընա՛ց ալ իրեն:
Հեռացաւ ցաւը մըտքէն՝ յոյսն ա, սըրտէն աւերակ,
Ու բարացաւ կըրծքին տակ համբերանքը ծանրօրէն:*

*Թափօրներու պէս դանդաղ, կ'անցնի՛ն օրերն յամբընթաց,
Ու կ'ապրի խեղճը այսպէս, առանց «ինչո՞ւ»ն զիտնալու:
Գինեւտան մէջ օրն ի բուն իր բաժակին դէմ նըստած՝
Ի զուր այնտեղ կը փընտոէ մոռացօնքն իր ցաւերուն:*

*«Անիծապալ՛րտ խանութպան, գո՛ղ, աւագա՛կ գինեպան,
Գինին ինչո՞ւ կը ջրոտես, որ, կը խմեմ դեղձանէն,
Կարմրագոյնէն կը խըմեմ ու տակառէն ալ լըման.
Եւ չե՛մ հարբիր երբ նո՛յնիսկ՝ կը խըմեմ բա՛րկ մըրուրէն:*

*«Ո՛չ խըրախի եւ ո՛չ ալ տօնի համար եկեր եմ,
Մոռացօնքը գըտնելու՝ եկայ քովի՛կը մահուան...»:
Գինեպանն ալ, լեցնելով անոր բաժակը նորէն,
Քըմծիծաղով մը թախծոտ, կու տայ անոր պատասխան,*

— *«Իմ մեղքս ի՞նչ է, երբ թափած արտասուքներըդ անյոյս
Բաժակիդ մէջ կը հոսին կաթիլ-կաթիլ՝ ու պըղտոր,
Եւ կը ջրոտեն քու գինին ու կը խըմես զայն անհոյգ,
Թէ չես հարբիր, թէ կու լաս, ե՞ս եմ միթէ յանցաւոր»:*

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Երջանկութեանն, ես յաճախ կը հանդիպիմ ճամբուս վրայ,
 Կը բարեւեմ ազնուօրէն եւ ինծի մօտ ան կու գայ՝
 Կ'երկարէ ձեռքն իր ինծի, կ'ըսէ՝ թէ զիս կը սիրէ՝,
 Թէ՛ կը խորհի՛ իմ մասին, ու դեռ՝ կ'ըսէ՛ ու կ'ըսէ՛:

Խըրախուսուած օր մ'անոյշ իր խօսքերէն, ես այսպէս
 Տըւի հարցում մը իրեն.— Եթէ ձանձրոյթ չըլլար ձեզ,
 Կ'ուզէ՞ք զալ հետս ու ըլլալ ինծի ընկեր անբաժան:

Երջանկութիւնն՝ որ սակայն, չի՛ կենար տեղ մ'յաւիտեան,
 Ըսաւ ինծի.— Ա՛հ, ե՛ս ալ կը փափաքիմ, բայց, զիտէ՞ք,
 Չե՛մ ուզեր որ զիս տեսնեն մարդիկ՝ երգչի՛ մը հետ հէք:

ԿԱՂԱՄԱԽԻՒՆ ՏԱԿ

Հիւրրնկալեց մեզ՝ թըրթրոուն
 Իր շուքին տակ կաղամախին,
 Էւ ծայնով մեղմ ու բաղցրագոյն
 Մեզ շոճիներն օրօրեցին.
 Ո՛չ մէկ անցորդ, ո՛չ մէկ թռչուն,
 Ամէն դի լո՛ւռ, ամայութիւն:

Դալարն եղաւ մեզ անկողին,
 Մենք՝ պառկեցանք զգուանքներով
 Ու քնացանք քո՛ւն մ'այգային
 Բերան-բերնի ու բովէ բով.
 Կը դալարէր հեռուն այգին,
 Ու կ'երազէ՛ր լեռը անդին:

Մետաքսաթել մագերուդ հետ
 Կը խաղար հո՜վը խենթօրէն,
 Կ'առնէր համբոյր անուշաւէտ
 Ու կը փախէր հեռուն նորէն.
 Ես ալ մեղմիւ՝ ինչպէս հիմակ
 Բռնած էի ձե՛ռքըդ ճերմակ:

Եւ արթնցանք երբոր կրկին՝
 Դուն քու երազն ինծի ըսիր.
 «Դահլիճի մէջ էի, անգին,
 Հայնածաւա՛լ ու լուսալիր.
 Եւ ունէի ես գե՛ղ, գոհա՛ր,
 Եւ ամէն ոք՝ զի՛ս կը ցանկար»:

Աչուրներով արտասուածոր,
 Ե՛ս ալ երազս ըսի այժպէս.
 «Հիւղի մը մէջ էի, բոլոր
 Շուրջս էր պարապ ու միայն բե՛զ
 Ունէի ես. բայց՝ փառք, գոհա՛ր,
 Լոկ մէկ համբոյրդ ինծի կուտար»:

Խնդացինք՝ ու շուքն օրրելով՝
 Լոկի խնդաց կաղամախին.
 Շոճիներն ալ անոյշ ծայնով
 Մեր բոլորտիքը խնդացին.
 Ո՛չ մէկ անցորդ, ո՛չ մէկ թռչուն,
 Ամէն դի լո՛ւռ, ամայութիւն:

ԲԱՒԼՈՍ ՆԻՐՎԱՆԱՍ

Բռն անունով Բերթա Արոսթոլիսիս: Ծնած է 1866-ին Ռուսիոյ Մարիանուբոլ քաղաքին մէջ: Գրած է բանաստեղծութիւններ, պատմածներ, թատերգութիւններ, քննիկներ, համբարական տալուարութիւններ, զբոսայգիական ու գեղագիտական ուսումնասիրութիւններ եւ ուրիշ բազմաթիւ յօդուածներ թերթերու եւ հանդէսներու մէջ:

Հրատարակած է «Երգող Աղբիւր» անունով բանաստեղծութեանց հատար մը, եւ «Ճարտարապետ Մարքան», «Ծիծեռնակը», «Երբ Կապանները Փերէ», «Մարիա Բենեատեքիսա» եւ այլ ռոմանթիկներ: Ասանցմէ զատ Նիրվանաս ունի ուրիշ բազմաթիւ հատարներ, պատմածներու, քննիկներու, գիտական նիւթերու շուրջ:

Նիրվանաս հեղինակ պատերազմի մաւաթում. ընդհ. բժշկապետ էր:

Մեռաւ 1937-ին:

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ը

Ապակիները՝ սառած
Օճախը՝ մոռլթ ու մարած
Ապակիները՝ սառած:

Կը կաթկըթի պատն ի վար՝
Զովուծիւն մը թռնաւառ.
Կը կաթկըթի պատն ի վար:

Կ'ոգեվարի յամրագին
Համբ մը վըրան սեղանին...
Կ'ոգեվարի յամրագին:

Անկերպարան մահճին վրայ՝
Կատուն մինակ կը խաղայ,
Անկերպարան մահճին վրայ:

Փայտին խորո՞ւնկ սըրտին մէջ
 Կը բանի ո՛րդը անվերջ
 Փայտին խորո՞ւնկ սըրտին մէջ:

Եւ երդիքին վրայ հիմա՝
 Զարագուշակ բուն կու լայ,
 Երդիքին տակն ալ հիմա

Զոյգ մ'աչուրներ կ'արթննան
 — Կ'երգէ ծղրիթ մ'աղուական —
 Այդ աչքերուն յանդիման՝

Գարուն մը լի՞ վարդերով
 Կը բողբոջի հոգեթով,
 Գարուն մը լի՞ վարդերով:

Հ Ո Վ Ը Կ Ը Փ Ը Զ Է Ր . . .

Նուրբ մազերուդ մէջ հովը կը փրչէր՝
 Ու կը խառնակէր գանոնք շոյելէն,
 Ու կըրակի՞ պէս էին քու թուշեր՝
 Վառ համբոյրներուն անոր՝ հետքերէն:

Հո՞վը կը փրչէր, հո՞վը կը խօսէր,
 — Ո՛վ գիտէ, ինչե՞ր կ'ըսէր քեզի ան —
 Սառնաշունչ հովը, որ միշտ կը փրչէր,
 Ու քեզ կը գրգուէր ձեռքի՞ մը նըման:

Եւ սողոսկեցաւ ծոծրակէդ ներս, ան,
 Տարփատենչական սարսուռով մը խոր,
 Ու քու զըրկին մէջ առլըցուց աշնան
 Ազազո՞ւն, դալուկ տերեւներն բոլոր:

Եւ ծըմբան, ըզքեզ կորսընցուցի՞ ես,
 Իրիկնամուտի պահերուն օրուան,
 Ու դեռ կը փրչէ՞ հովը մրշտապէս,
 Եղէգնուտին խորն, երկա՞ր, տըրտմածայն:

ՄԱՀՈՒԱՆ ԲԵՐԿՐԱՆՔ

Առաջաստիճանները շուտով պարզեմ պիտի, շո՛ւտ պիտի՝ զամ
Քեզ համբուրել քաղցրօրէն, ծովափունքին վրայ մահուան:
Տարաշխարհիկ ո՛վ հովիկ, փրչէ՛, փրչէ՛ ա՛հ այսպէս.
Պիտի այգուն պըսակուիմ, այգուն՝ մեռնիմ պիտի ես:

ԿԵԱՆՔԻՆ ՍՏՐՈՒԿԸ

Ո՞ր նաւակով փախար դուն, այգուն-այգուն, վաղ այսքան:
Տունս անտէրունջ եւ օճախոս թողուցիր անկըրակ:
Հոգիս կ'ուզէ թըռի՛լ գալ քու ետեւէն, հովի՛ նման,
Բայց կապկըպեր են կեանքի զայն շրջթանե՛րը հիմակ:

ԿԵԱՆՔԻ ԵՐԱԶ

- Հայրենիքդ ո՞ւր է թրռչուն, որ օռնին մէջ կը նաւես.
- Իբրեւ մայր՝ ծովը ունիմ եւ հայր՝ երկի՛նքն անսահման.
- Ուրկէ՞ կուգաս եւ կ'երթաս ալիքէն շուտ՝ ո՞ւր այսպէս.
- Զով ու դալար բոյնէ մը դէպի շիրիմ մ'աղուական:

Տ Ր Տ Ո Ւ Ն Ջ

Տարիներով մինակ էր դաշտին մէջ ծա՛ռը կեանքիս,
Եւ իմ դիմաց, ըսպիտա՛կ ծաղիկ, աշնա՞ն բացուեցար:
Ինչ փոյթ եթէ դուն գարուն կ'աւետես մոռթ հոգիիս,
Աւա՛ղ, գալու ուշացար եւ ծանր է շուքս հիմա, ծանր:

ՔՈՆՍԹԱՆԹԻՆՈՍ ԽՐԻՍՏՈՍԱՆՈՍ

Ծնած է Աթէնք 1867: Պատմագիտութիւն ուսած է Վիեննայի մէջ ուր եւ դասախօս եղած է: Գերմաներէնով հրատարակած է բանաստեղծութիւններու հատոր մը եւ գեղագիտական ուսումնասիրութիւններ: Յունաստանի մէջ տրամաքիք բանաստեղծութեան վերածնունդը երազելով՝ 1901-ին հիմնած է «Նօր Բեմ»ը: Եղած է Յունաւորէի դասատուն Աւստրիոյ Էլիզապէթ քաղաքին ռումբ մասին հրատարակած է «Էլիզապէթ Թագուհին Գիրք» անուն հատոր մը, Գերմաներէն, Ֆրանսերէն եւ Յունաւորէն լեզուներով: Գերմաներէնով գրած է նաեւ ուրիշ վէպ մը եւ պատմական գիրքեր: Իր «Մամէ Պալարիկը» Յունական նօր վեպագրութեան զլուխ գործոցներէն մէկը կը համարուի:

Մեռած է 1911-ին:

Լ Ո Ւ Ս Ն Ա Կ Ը

Ծաղիկները՝ կը նընջեն...
 Խոտերն՝ ամէն կը քնանան...
 Շափրակներուն վրայ թաւշէ, սաղարթներո՞ւն մետաքսէ՝
 Առա՛նց հեւքի
 Հովիկները կը նիրհեն...
 ... Ու լուսընկան կը նայի
 Վերէն՝ քնացած պարտէզին...
 Բարձրէն դալուկ լուսընկան
 Թախծատըխուր կը նայի
 Խո՞ր քընացող պարտէզին
 Ի՛կանք տալով լըռութեան...
 Ու չի՞ կըրնար
 Հեռացընել աչուրներն...
 ... Ու յամրաբայլ կը մեկնի
 — Բայց, չի՞ կըրնար
 Հեռացընել աչուրներն
 Անդորրանինք պարտէզէն...
 (Լուսնա՞կ, լուսնա՞կ —
 Դուն առկա՞խ եւ արծաթէ արտասուք...):

ՆԱԻԱԿԸ

— Ծովուն մէջ ահա', կարմիր առագաստ. —
 Իրիկնային ծովուն մէջ, ա'հ, կարմրաւուն առագաստ...
 Ալիքներուն վըրայ յոգնա՛ծ, քընացած...
 Նաւա՛կ, նաւա՛կ —
 Տե՛ս, առագաստն ինչպէ՛ս կ'ուռի...
 Ի՛նչպէս արագ կը հեռանայ...
 Նաւա՛կ, նաւա՛կ,
 Վա՛յ ինձ, հեռուն ո՞ւր կ'երթաս
 Ու չե՛ս նայիր ետ
 Եւ չե՛ս դառնար ա'լ...
 Ոհա՛, ալ գընաց
 Գընա՛ց, գընա՛ց, գընա՛ց...
 Արեւ արքային կարմիր համբոյրներն
 Խինդի ծիծաղն ալ
 Հետն առաւ ամէն — եւ առագաստները իրեն ներկեց...



ՔՈՍՔԱՍ ՔՐԻՍՏԱԼԼԻՍ

Ծնած է Եպիբասի Սիրաբանի մէջ 1868-ին: Իր ուսանողական տարիները ապրած է Եանիսայի մէջ եւ խան սարեկան եկած Աթէնք, ուր երկու տարիի չափ աշխատած է իբրեւ գրաւար, յետոյ եղած է պարբերաբերքի փառաւոր ու երկաթուղային պաշտօնեայ: Իր ապրած զգալից կեանքին պատճառով, բոլորեալ հիւանդութեան ենթարկուած ու 1894-ին մեռած է Արթայի մէջ: Հրատարակած է «Գեների Ստուերներ», «Գեղըկական» ու «Գիւղի եւ Գամի Նրգիչը» բանաստեղծական հատորներն ու պատմութեան:

ՔԱՐԱՅԱԾ ԱՐՔԱՅԱԶՈՒՆԸ

Ապարանքի մը մէջ փակ, անքրննելի, կործանած՝
Արքայազուն մը սիրուն՝ քա՛ր՝ է դարձած, քրնացած:
Մէզն ու ծրմեռն կը ծեծեն անդուլ պալատն այդ ամայ,
Այլ՝ մարմարն ո՛չ կը խօսի՝ ոչ ալ աչուի՛ն կը բանայ:
Կը շողշողայ արեգակն, կը դայլայլեն սոխակներ,
Սակայն, այսպէս ան քանի՛ տարի անշա՛րժ, մո՛ւնջ է դեռ:
Ամայութեան հուրի մը, կախարդ աղջի՛կ մը վայրի՛
Զայն ա՛նգթօրէն անիծեց, ու փոխուեցաւ ան քարի՛:
Կործանեցաւ ապարանքն, անտառը զայն ըսքօղեց,
Անցնիլ անկէ՛ մարդկային դեռ ոչ մէկ ոտք չըզօրեց:
Լոկ ժամանակն որ դրոնէն անոր կ'անցնի օրն ի բուն
Մարմարին վրայ քանդակեց քանի մը բառ հւ անունն.
«Երնէ՛կ աղուոր այն աղջկան, որ բախտին մէկ ժրպիտով՝
Պիտի գրտնէ՛ երկաթխոտն՝ ու քանայ դուռն այս շուտով.
Ու գրրկելով մարմարիտն՝ պիտի անոր քով մընայ
Քառասուն-երկու օր-գիշեր, մինչեւ քնացողն արթննայ»:
Թափո՛ւր, փակուած ամբօրէն, պալատ մըն է իմ սիրտս ալ՝
Ուր կը մընայ բանտարկուած՝ իմ սէրս քրնա՛ծ, քարացեալ:
Երնէ՛կ աղուոր այն կոյսին՝ որ պիտի սիրտն իմ քանայ՝
Ու, մարմարին հետ շրթուներ շուրթի՛ գրրկուի՛, միանայ:

Բ Ա Ղ Զ Ա Ն Ք

Հովիւ մ'ըլլալ կ'ուզէի, վահանակիր մը ըլլալ՝
 Երթալ զոմին մէջ ապրիլ, անտառին մէջ, ամայքի'ն.
 Ունենալ հօ'տ մը ոչխար, հօտ մ'ալ այծեր ունենալ,
 Եւ զամբողջութեամբ մ'ամբողջ, արօտավաճար մ'ահագին.
 Ամառն, ապրիլ լերան վրայ իսկ ծըմեռը՝ հովիտին,
 Մացառապատ ունենալ բակ ու փարախ ընդարձակ,
 Կաղնեփայտէ հիւղ մըն ալ, բարձրը լերան զագաթին,
 Աղջիկներուն հետ հովիւ ընել խըրա'խ ու կատակ,
 Ունենալ՝ սրիւնգ ու երգել, արծազանգ տան հովիտներ,
 Աղուոր աղջիկ մ'ունենալ, կեանքի ընկեր մ'ունենալ,
 Որ, ինձ օգնէ իրիկուան երբոր բերեմ իմ հօտեր.
 Ու երբ զանոնք շուքերուն տակ տարածենք մենք դարձեալ,
 Գետափունքի դալարին ան երկըննա'յ ինծի հետ
 Համբոյրներով օրրելով՝ զիս կուրծքին դէմ թարմաւէտ:



ՔՈՆՍՔԱՆՔԻՆՈՍ ՀԱՃՈՐՈՒԼՈՍ

Ծնած է Ադրբեյժանի մէջ 1868-ին, եւ մեռած՝ դէպի Իսալիա նամբողութեան լնթացքին, նաւուն մէջ, 1920-ին: Գրած է պատմութեան, գրադասականներ եւ բանաստեղծութիւններ: Հրատարակած է «Արուեստ» պարբերականը, որ ժամադրաւար էր եղած է այն ասեցի բոլոր երեսասարդ ու արժեքաւոր գրողներուն: Իր բանաստեղծութիւնները ամփոփուած են՝ «Մեծութեան Երգեր», «Ողբերգներ եւ Հովութեաններ», «Իրիկնային Հեքիաթներ» եւ «Պարզ Եղանակներ» հատորներուն մէջ: Գրած է «Առուն» անունով վէպ մը եւ պատմութեան մէկ փանի հատորներ: Թարգմանած է «Կէօթէի Ֆաուստը» եւալլն:

ՁԳԷ՝ ՆԱԻԱԿԴ...

Ձրգէ նաւակդ ալիքին, թող ո՛ւր կ'ուզէ քըշէ զայն,
 Թող որ հովերը վարեն առագաստն ու ղեկն անոր,
 Թեւերդ բա՛ց լայնածիր, չունի՜ աշխարհը սահման,
 Միշտ անծանօթ ափունքներն են աւելի՜ դիւթաւոր,
 Յօ՛ղ է կեանքը միմիայն, ալի՛ք մըն է, թող տանի,
 Ուրտեղ որ հովը գիտէ, ուր որ ալի՛քը կամի:

Թող հովիտները փոխուին, անտառներո՛վ, ժայռերո՛վ,
 Աշտարակնե՛ր, հիւղակի ծուխեր՝ քովէդ թող փախի՛ն,
 Թէ՛ բընութիւնն ըլլայ շուրջդ հովուերգութիւն հրաշաթով,
 Թէ՛ փոթորիկ ու մըրրիկ երկընքէն վա՛ր առկախուին՝
 Մի՛ կարծեր թէ պիտ' վարել առագաստներդ կարենաս,
 Ո՛ւր որ ալիքը կամի՝ դուն անոր հետ պիտ' երթաս:

Միթէ գիտե՞ս թէ դուն ի՞նչ կ'ուզես եւ ի՞նչ կը փընտոնես,
 Յանկացածներդ երբեւէ ձեռուընկերով բըռնա՞ծ ես.
 Միթէ չարիք չե՞ս հընծեր՝ հոն ուր բարի՛ք կը ցանես
 Հարցումներու չե՞ս բախիր, ինչ բանի որ կը հարցնես.
 Ինչ որ ըզբեզ հըմայած ու չարաչար է խաբած,
 Մինա՞կըդ ես շահած զայն. դուն ի՞նքդ ես լոկ պատրաստած:

Ձգէ՛ ուրեմն, որ ալիքն իր ուզած տեղը փըշրի,
 Արբեցումները թող որ կուրօրէն սիրտըդ տանին.
 Ու թէ մըռա՞յլ է երկինքն ու կ'ոռնայ ծովը վայրի,
 Տեղ մ'արեգակն, ափունքի մը պիտ' ժըպտի՞ հըրճուագին.
 Եւ դառնահամ արտասուք մ'եթէ հոգիդ կը կիզէ՛
 Տեղ մը, հըրճուանք մը պահուած՝ արդէն անո՞ր կը սպասէ:

ԿԸ ՅԻՇԵՄ ՈՐ, ՀԱՆԴԻՊԵՅԱՐ...

Կը յիշեմ որ, հանդիպեցար առաջին
 Անգամ ինծի՛ յուզելով սի՛րտն իմ հանդարտ.
 Ձէ՛ր բողբոջեր դէմքիդ գարո՞ւնը նախկին
 Ձէ՛ր փալիւրլար գեղեցկութիւնը հըպարտ.
 Այլ՝ թաքթաքուր աղուորութիւն մը ներքին՝
 Հայլիացած՝ հայեացքիդ խո՞րը կախարդ,
 Եւ ըզգացի, որ քեզ բա՞խտն էր ինձ ղըրկած
 Աստուածային որպէս Ապրի՛լ մ'ուշացած:

Շոպեցի՛ր զիս, բայց, ո՛չ ինչպէս խօլ քամին,
 Փոթորիկի ծարաւ հոգին մանկունակ,
 Ջովացուցի՞ր դուն զիս, որպէս գարնային
 Անծրեւն յուռթի կը ջըրէ հո՞ղը ցամաք.
 Պարզուկ ու հեզ, այլ՝ պերճալիւր դուն ինքնին,
 Եկար կեանքի՞ մը մէջ անլոյս ու տընանկ,
 Եւ արեւուն ու անդորրի՞ն բացիւր զայն,
 Ջորս սիրածին կու տայ Եւկի՞նք իր միայն:

ՍՈՒՐՔ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀՆԷ
 Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
 ST. NERSES SHNORHALL
 LIBRARY
 PRELACY

Ու քովդ ի վեր, անցան այնքա՛ն տարիներ
 Զորս հոս ինչպէ՛ս ես չ'անուանեմ հեշտալիբ,
 Թէ՛ անպղտոր են հաշտութիւնը եւ սէր
 Խորունկ իմաստն անոնց ինձ դո՛ւն ուսուցիր,
 Թէ՛ անվախճա՛ն, անըսպառ է կեանքը մեր՝
 Ամենագեղ պըտուղն անոր՝ դո՛ւն տըւիր,
 Օ՛, մէկ հայեացքդ անդորրաւէտ, մէջս ինչքա՛ն
 Հանդարտեցուց փոթորիկներ մոլեկան:

Օրհնեա՛լ ըլլայ թող այն վայրկեանը բարի
 Որ, բերաւ քեզ, շընորհազարդ ու շրքեղ,
 Ու բացիր դէմս անուշ խորհուրդն աշխարհի,
 Աստուածային խինդի ճաճանչ զերդ բիւրեղ.
 Հունտը՝ քո՛ւկդ է, ինչ որ իմ մէջ կը խլըրտի,
 Քո՛ւկդ է հըրճուանքն՝ կը փըթթի ի՛նչ որ այնտեղ,
 Օ՛, թող իմ քո՛ւ վ թողու քեզ բախտն յարաժամ
 Ինչպէս ղըրկած էր զերթ Ապրի՛լ անթառամ:

ՄԻԼՔԻԱՏԻՍ ՄԱԼՍՔԱՍԻՍ

Ծնած է Մեսոպոնի 1870-ին: Հրասարակած է «Լեկորներ», «Պահնր» «Երեկոյեան Կոչնակներ», «Շեղներ», «Սիրային» եւ այլ ֆերսդագրֆեր եւ «Ճակատագիր» անունով երազատում մը: Մալաֆասիս կը նկատուի Յու-նաստանի ամենէն տաղանդաւոր ու ինքնատիպ բանաստեղծ: Ասեմ մը Փա-րիզ բնակելով եղած է մտերիմներէն մէկը ժամ Մարեասի, որուն գործերէն թուրգմանութիւնն էր ունի: Մալաֆասիս բարեկամը եղած է նաեւ Տիգրան Երկաթին ու մեր ազգին՝ եւ հիւսցողներէն՝ մեր բանաստեղծութեան:

Մեռաւ 1943 Մայիսին:

Ե Ր Ա Ձ

Կիսախուփ աչքով, սօսիի մը տակ
Պիտ՝ ընկողմանիմ եւ այերային
Նրազին մէջէն պիտ՝ ըմպեմ անյագ՝
Հրրհուա՜նքը մահին:

Պիտի սաւառնի, սուրա՜յ իմ հոգին,
Որպէս թէ՛ ըլլար տըպազի վըրայ,
Երկնային տրոփներ զայն պիտ՝ հո՛ն տանին՝
Ուր՝ իրկուն չըկա՜յ:

Գ Ա Ր Ո Ի Ն

Հիմա, ծաղկունքն երբոր կըրկին
Զովօծուն են, բուրաւէտ,
Առաջուան պէս, դուն ինծի հետ
Վազէ՜ դաշտերն առանձին:

Առաջուան պէս եղիր նորէն,
Քաղէ ծաղիկ գոգերով,
Եւ զարդարէ՜ զիս անոնցմով՝
Խեղճն ինչպէս կը պըճնեն:

ԵՐԿՈՒ ԱԶՔԵՐՈՒ

Աչուրներ մե՛ծ, տարերկրիկ, բիւրեղի մէջ անալիք՝
 ծոյց չըտըւի՛ք դուք երբեք ուրախութիւն մ'երկրային,
 Մըշտօրէն ամպ մը միայն, անդորրասահ, անմըրրիկ,
 Երկինքներէն ձեր երկու կ'անցնի անծայն ու լըռին:

Աշնանային սարսուռներ կը հըպին ձեզ, աշխարհնե՛ր
 Յուզելով մերթ գեղեցիկ, սակայն մըռա՛յլ, տըրտմական,
 Եւ թարթիչները ձերին, տատասկածեւ ըստուերներ,
 Պըզտի՛կ, պըզտիկ շրէզներէ՛ պըսականերու են նըման:

Եւ ես որ ձեր վրա՛յ հակած՝ կը գուշակե՛մ սակաւիկ
 Մը գաղտնիքները ձերին, ո՛վ աչուրներ սըրբածին,
 Աքերուսեան ձեր լըծին մէջ կը տեսնեմ, աւասիկ,
 Արշալոյսի մ անծանօթ՝ վարդածագո՛ւհի առաջին:

ՊԱՐ ՄՈՒՍԱՆԵՐՈՒ

Քառեակներովը երգին ու կըշոյթին շընորհով
 Ըսպասեցի ձեզ այնքա՛ն,
 Որ ճիւղին վրայ դուք շերէք թանկագին վարդն հոգեթով
 Այլ, այնքան շա՛տ ուշացաք եւ եկաք ա՛յժըմ միայն:

Արդէն քիչ ետք. ո՛վ սէրեր, պիտի աքլորը ծա՛յն տայ
 Եւ լոյսին հետ այգային՝
 Արբեցութիւնն ըզգայնիկ պիտի նորէն վիշտ դառնայ
 Եւ հովիկն ալ խամրեցնէ՛ քընքուշ ծաղիկն իմ ձեռքին:

ՊԶՏԻԿ ԵՐԳ

Կը յիշե՞ս, աղուո՞ր իրիկունն մըն էր,
 Իրիկունն մ'ամառ,
 Եւ ծաւի երկնին մէջ կը նըշուէր՝
 Մահի՞կն ոսկեպառ:

Եւ, սէրն հանդիպի թէ նոր լուսինին՝
 — Վա՛յ ինձ — չապրիր ան:
 Կը յիշե՞ս, աղուոր իրկունն մ'էր, լըռին՝
 Կը դիտէինք զայն:

“ ՓՈՓՈԽԱԿՆԵՐ „ ԷՆ

Ուրեմն այսպէս, ամէ՛նքն ալ ցընորական ճամբորդներ,
 Կ'անցնին այսպէս, ըշտապո՞ւմ,
 Կարծես թէ՛ ձե՛ռք մը անգութ անցած ու նո՞ր բերկրանքներ,
 Կը հալածէ՛ մըտորակով:

Դաշտե՞ր, լեռնե՞ր ու գետեր, նո՛յնիսկ ծառերն ալ կ'երթան
 Կարծես երա՛խն անդունդին,
 Բայց, միայն ի՛նձ կ'ողջերթեն երբ կը սուլէ մեքենան
 Ու, կանգ չառած՝ կը մեկնիմ....:

Տ Ա Ղ Ի Կ

Սարբինային մէջ կը խաղայ
 Լուսինն այնպէ՛ս՝
 Որ բաժակով մը բիւրեղեայ
 Ըմպե՛մ կ'ըսես:

Եւ ո՛չ այնքան սարբինային
 Մէջ խաղալուն՝
 Որքան սիրուած պատուհանին
 Մօ՛տ շողալուն:

ԱՆՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Այսպէս, երանգ մը իբրեւ վերջալուսեան ու տարտամ,
Որպէս ծաղիկ մահացող խաւարին մէջ, անբարբառ,
Առանց ճիշի, անձկութեան եւ տըրտունջի, քա՛րշ կու տամ
Ես ինքըս ինձ մոռացման դէպի անդունդն յամրաբար:

Արցունքս՝ իբրեւ անծրելի թըրթռուն կաթիլ մարգարտեայ,
Կը սըրսըփա՛յ անմըմունք, աղօտաշող լոյսին տակ.
(Տառապանքներն անշըշուկ լացող հոգւոյն ո՞վ կը զգայ)
Եւ կը մաշէ զիս այստեղ ծածուկ իմ ցաւն անյատակ:

Իրա՛ւ, ինչպէ՛ս փոխուեցան օրէնքներն ու կըշռոյթներ,
Աշխարհն ամբողջ օ՛ւ, ինչպէ՛ս յանկարծօրէն փոխուեցաւ.
Ուրիշ ոչի՛նչ կը մընայ այս սեւ ժամուն տըրտմաբեր՝
Բացի՝ շուրջիս ամայրի վրհատանքէն այս անբաւ:

Ինչպէս եկար անծանօթ, այնպէս գընա՛ւ, ո՛վ հոգի
Ճամբորդութեանը անդարծ, եղերական, տըրտմագին.
Շիջի՛ր վարդի տը հանգոյն պարտէզին մէջ ամայի,
Որպէս երանգ մը մոռցուած՝ երկընքի մը մէջ մըթին:

Լ ՈՒ Ս Ն Ա Կ Ի Ն

Զեմ համբուրած ես ընաւ
Քու նուրբ վարսերն ոսկեգոյն,
Ո՛չ ալ գըրգուած՝ հոգեգրաւ
Քու երեսները տըժգոյն:

Միայն, զըրկին մէջ հոփին
Երբոր կ'անցնիս յուլօրէն,
Ես կը ծըռիմ՝ եւ առուի՛ն
Մէջէն ըզբեզ կը ծըծե՛մ:

ԱՂԶԿԱՅ ՏԵՆՉԱՆՔ

Օր մը առաւ իր մօր ծեռքէն դողահար
 Եւ զայն անցուց իր մատին վրայ մանկական.
 «Նայէ ինծի, կը վայելէ՞, բարի մայր»
 Եւ այտերուն վրայ անոր ծիւնանման
 Վարդ կուսուծիւնը նրկարեց իր թաքուն
 Երազանքնէ՛րը, վըրծինի մը հանգոյն:

— Մի՛ ըշտապեր այժմէն, պզտի՛կ սիրական,
 Մատանի՛ օ՛ր մը պիտի դուն ալ կըրես.
 Եւ թող օրհնեալ ըլլայ, զաւա՛կս, ժամը այն:
 Բայց իբրեւ մայր քեզի վըշտո՞վ կ'ըսեմ ես՝
 Թէ մատանին այս շողշողուն չէ՛ այնքան
 Որքան որ քեզ կը թըլի, քաղցր իմ շուշան»

ԱՐՁԱԳԱՆԳ

Լըռասոյզ ջուրին ընդմէջէն կ'անցնին
 Հազա՛ր երկինքներ,
 Գոյներն՝ հո՛ն ձընունդ կ'առնեն, կը մեռնին՝
 Երբ ըլլայ գիշեր:

Ա՛լ չեմ ըսպասեր խըռովքներու նոր,
 Ո՞վ լիճ — պէտք չունի՛մ,
 Ծանօթ կըրկնոյթ մը, գիրք մըն ես այսօր,
 Սիրելի՛ եւ հին...

Ա Ղ Ջ Կ Ա Ն Ս

Շնորհալի՛ դէմք, զըրբին առջեւ, շողշողուն
Դուք աչուըններ յափըշտակմամբ խոնարհած:
Երազներու նաւուն մէջ, ո՞վ իմ սիրուն,
Կը ճամբորդես ահա բացերն ոսկեմած:

Երջանի՛կ ես: Զըխրոովէ՛ շունչս անգամ
Թող ուշը քու: Ի՞նչ, կը ժրպտի՞ս դուն արդէն.
Կը գուշակեմ թէ պիտի՞տենչդ անպայման
Հասնի խինդի հանգըրուան մը լուսեղէն:

Հասա՞ր: Վազէ՛ ալ վերջապէս, հոս եմ, տե՛ս.
Բարի գալուստն ինչպէ՞ս ըսեմ ես քեզի.
Պատմէ՛ ինչ որ կարդացիր դուն, եւ այնպէս
Ըրէ՛ որ կըրկի՞ն մենք ճամբորդենք միասին...:

Լ Ռ Օ Ր Է Ն

Լըռութիւնն ո՞րքան է մեծ. եւ ի՛նչքան քիչ բան կ'ըսեն՝
Անակընկալ կորուստին ըսփոփանքի բառերն յար:
Աչքերն ինչպէ՛ս կը խոցեն, երբոր լըռիկ կ'արտասուեն,
Եւ ո՞րքան ցաւ կը ծորեն անոնք սըրտի խորքն ի վար:
Քա՛ր իսկ կըրէր եթէ մարդ կուրծքին ներքեւ, ան նորէ՛ն
Արմատախիլ հէք իմ սէր, պիտի փըխրէ՞ր, մոխրանա՞ր:

ԼԱՄՊՐՈՍ ԲՈՐՖԻՐԱՍ

Պարիակեցիր ծովն ամբողջ, ի բաց առեալ զայրոյթէն
 Հոգիիդ մէջ վրշտահար,
 Որպէս անտուն թափառիկ, ծովափն էիր մըշտօրէն
 Հեծքովն երգիդ դաշնալար:

Հիմակ, անխօս, վեհանդորր — կը պահանջէ ինչպէս որ
 Մեծաշուք պահն այս անեղծ —
 Մարմարին մէջ կը կանգնի՞ս, արեւագօ՛ծ, փառաւոր,
 Արժա՛նապէս, բանաստեղծ:

Եւ, ըստուերներն ու հովիկն երեկոյեան, երբ ծովուն
 Վըրայ նետեն սեւ քօղեր՝
 Դա՛րձեալ, հեռո՛ւ պիտի քեզ պահէ ճաճանչն արեւուն՝
 Ժամանակէն մահաբեր:



ՄԼԵՔՈՍ ՊՈՅԻԱՏԻՍ

Ծնած է Ադեմանդրիա 1870 ին, երկար տարիներ ապրած Զմիւռնիա, ուրկէ Փոքրասիական աղէտէն յետոյ եկած է Աթէնք: Հրահարակած է «Բաց Գաղսնիքներ» խորագրով ֆերբուածներու հասօր մը, որմէ դուրս կը մնան բաւական երգեր, ցուած զանազան պարբերաթերքերու մէջ:

Պոքիասիս մեռաւ Աթէնք՝ 1940 ին:

Ո Ի Ք Ն Ե Ա Կ Ն Ե Ր

Երթա՛նք, ճամբէն սա պրզտիկ, դէպի այն ժա՛յոր կըրկին
— Ուր, առջի հեղ, կը յիշե՛ս, զացինք երկուքս առանձին —
Այժմ երբ միւրդէրը կ'իյնան ու տերեւներն կը թօշնին՝
Ոսկեծիծաղ աշունին սարսուռին հետ առաջին:

Երթա՛նք լսել ծորակի ջըրադացքին նըռընչիւնն,
Հարուածները՝ կացինին. զի՛լ ձայները՝ ճագո՛ւռներուն
Եւ ճամբուն վրայ, դիտենք մենք, արեւմուտքի պահերուն՝
Մեր քստուերներն քով-քովի, վերադարձին դէպի տուն:

×

Հոգմածըփուն ո՛վ հիւզակ, ինծի ինչե՛ր չի պատմեր
Իրիկուան ծուխդ յամբօրօր եւ այդ նրդիքդ ցածլիկ:
Ըզբեզ պատող ամայքին մէջ յաւիտեան անրնկեր,
Գաղտնածածուկ ցաւիդ հետ կ'ապրիս մոռցուա՛ծ, անորիկ:

Օր մ'երբոր բախտը կ'անցնէր, մըշտաթափուր քու ճամբէն
— Ափն ու գոգնոցն առլըցուն բարիքներով անսահման —
«Հի՛ւզ, քեզի բա՛ն չի պակսիր — մըրմընջեց ան մեղմօրէն.
Զի՛ աթոռա՛կ մ'իսկ չունիս՝ որ նըստի վի՛շտը վրրան:



Կախարդուհին՝ տեսայ իր պարտէզին մէջ ծաղկահմայ:
Կը թըրթռային կամարներն սաղարթներուն՝ ի՞ր վըրայ,
Միջօրէի տապերուն, երբ աղբիւրին քով ծաղկուն
Այծտերեւին մէջ կորած՝ կը բըզզար քա՛ղցըր մեղուն:

Իջաւ՝ լոգանք առնելու աւազանին մէջ մարմար,
Ջուրերն յըստակ յուզելով իր կըրտնկոպ ծիւնաւիառ.
Ու ջուրերն որ սարսռացին անոր գեղէն աննըման
Հիւսեցին բիւր պըսակներ անոր գըլխուն կուսական:

ԳԻՒՂԻՆ ԵՐԳԸ

Յուշիկ-յուշիկ մ:արեցան
Ցանցառ լոյսերը գիւղին,
Ա՛լ չի լըսուիր ոչ մէկ ծայն,
Միայն, հաչիւնն է շունին:

Կը քընանայ գիւղը՝ խո՛ր:
Ուրուականի մը նըման,
Կը հըսկէ լեռը խոժոռ
Անոր վըրայ լըռելեան:

Զինք է երկինքը անբաւ,
Մարեցաւ ա՛ստղ մը ահա՛,
Որո՞ւն հոգին էր թըռաւ
Այս գիշերին մէջ պարզկայ:

Գիւղի մէկ տո՛ւնը միայն
Զի քընանար, արթուն է:
Այնտեղ, լոյսին մէջ տարտամ
Ահ, այդ որո՞ւն ըստուերն է,

Որ կը շարժի անդադար:
Աղջի՞կ մըն է ան արդեօք
Որ սիրածին իր համար
Կար կը կարէ արտորնօք:

Թէ՞ ոչ՝ մըշակն է ելած
Ու կը նայի եզներուն
Որ, կ'որոճան, մակաղած
Արիշին տակ օրօրուն:

Աղջիկը չէ՛, մշակը չէ՛
Որ կ'երթայ իր եզներուն,
«Մէկ հատիկ» մը կը նընջէ՛
Ու, վըրան մա՛յրն է արթուն:

ՄԻՆԱՅԻԼ ԱՐԵՒՐՈՐՈՒԼՈՍ

Ծնած է Զմիւռնիա 1862-ին: Աթէնքի համալսարանի իրաւագիտութեան ճիւղին հետեւած ու փաստաբանի վկայական «տացած է: Մինչեւ 1922-ի Փոքրասիական աղէտը ապրած ու գործած է իր ծննդավայրին մէջ, իբրեւ փաստաբան ու փողաւազէ: Աղէտէն յետոյ Աթէնք ապաստանած եւ շարունակած է իբրեւ արհեստ ի գործ զնել փաստաբանութիւնը եւ զբաղիլ փաղականութեամբ ու գրականութեամբ: Եղած է, բազմիցս, երեսփոխան եւ խորհրդարանի փոխ նախագահ: Հրատարակած է բանաստեղծութիւններու մօտ 800ը հասորներ: Թարգմանած է Սաաօսի «Կիլիսիասանը» (չափածոյ):

Միխայիլ Արեւուրդուլոս եղած է Հայերու ամենալաւ ու անկեղծ բարեկամը իւր երիտասարդութեան օրերէն մինչեւ իր մահը, 4 Յունիս 1949:

Մ Ա Տ Ա Ն Ի Ն

*Մատնին այս՝ որ կու տամ քեզի,
Ձեռքի կապանք մը չէ՝ միայն.
Այն՝ ամենո՛ւր գըտնես պիտի,
Նո՛յնիսկ մատին վըրայ մանկան:*

*Մատնին այս, որ կու տամ քեզի,
Հոգիի կապ մըն է միայն.
Գոհարին մէջ գըտնես պիտի
Բոցավառ սէ՛րն իմ անսահման:*

*Ա՛ռ, քո՛ւկդ է ան, ո՛վ սիրական:
Դո՛ւկդ՝ այս սիրտն ալ, թըշուառ այնքան,
Բաժանման մէ՛ջ ալ անբաժան....*

*Թէ կորսընցնես պիտ՝ մատնին այս՝
Ամայքին մէջ նետէ մահուան,
Այն օրն՝ երբ զիս պիտի մոռնաս:*

ԳԵՂԱԿՈՒՂԻՆ

- Զոյգ յօնքերուդ հոգեզրրաւ,
Քանի՞ կ'արժեն աղեղներ.
- Ո՞վ է տեսեր, ծախեր բընաւ,
Զոյգ մը հատնող լուսիներ:

- Քանի՞ կ'արժեն քու այդ սիրուն
Վըզիդ ծիւներն աննրման.
- Հարցուր արծուին, որ լեռներուն
Կ'ապրի կատա՞րն յաւիտեան:

- Կուրծքիդ այդ զոյգ փրփրասպիտակ
Քանի՞ կու տաս կիտրոններ.
- Կըշիռն անոնց՝ է լոկ պըսակ,
Ժամն ալ՝ զանոնք ծախող տէր:

- Գեղեցկութեանդ՝ ու շուշանին
Պատիւիդ, զինն ո՞րքան է.
- Անոնք անգին են, գին չունին,
Միտքէդ այդ բանը հանէ՛:

- Ու քանի՞ կու տաս միթէ
Շուրթիդ շաքարը անոյշ.
- Ո՞վ անցորդ, չեմ ծախեր եթէ՛
Տա՞ս ինձ հազա՛ր իսկ զուրուշ:

- Աչուրներուդ քանի՞ կ'արժեն
Ադամանդներն աստղանման.
- Աստղերն հեռուէ՛ն լոկ կը դիտեն
Ու կը զմայլին անոնց վրան:

- Վարդերն հապա՞ թարմ ու բոսոր,
Քու կուսական այտերուն.
— Ժողովէ՛ երկրի վարդերն բոլոր՝
Ու կ'իմանա՞ս գինը դուն:

— Իսկ՝ մագերուդ երենոսն այդ
Դուն քանիի՞ կը ծախես.
— Գիշերն ո՞վ է գըներ, ո՞վ մարդ,
Որ զայն քեզի ծախեմ ես....:

Բ Ա Ն Տ Ս

Եթէ՛ տանջանք տըւիր ինձ, քա՛ղցր է տանջանքն այդ այ՛նքան
Եւ շողշողուն պալատէն՝ բանոտս աւելի՛ սիրելի,
Զի՛ ապարանքն է թափուր եւ հոն իժե՛ր ման կու գան,
Իսկ՝ բանոտս, անո՞յշ քու սիրոյդ արեգակո՛վն է առլի:

ՄԵՌԵԼԻ ԿԱՆԹԵՂ

Իրիկուրնէ, ո՞վ իմ սէր, աչուրներս քեզ կորուսին,
Ու խաւարը՝ կարծես թէ խաւարեցա՛ւ աւելի:
Եւ կապոյտին մէջ անծիր յայտնըեցաւ երբ լուսինն՝
Երկիրն՝ դամբան իսկ լուսնակն՝ եղաւ կանթե՛ղ մեռելի:



ԱՆԿԵԼՈՍ ՍԻՄԻՐԵՈՅԻՍ

Ծնած է Չմիւռնիա 1871 ին: Հրատարակած է «Մահացու», «Սեւ Շուշաններ», «Երազներու Ստուերներ», «Քանի Ձէ Մթնած» ֆերբուածներու հասօրները: Պարբերականներու եւ քերթերու մէջ գրած է գրական ու դաս տխարակչական յօդուածներ: Առանձին հասօրներով հրատարակած է նաեւ երեք քատերական երկեր եւ վէպ մը: Սիմիւրեոյի վարպետ քարգմանիչի իր կարողութիւնները ցոյց տուած է Ֆրանսացի բանաստեղծներէ կատարած իր գեղեցիկ քարգմանք թիւներով:

Մեռաւ Աթէնքի մէջ 1943-ին:

ԵՂՐԵՒԱՆԻՆ ԿԸ ԲՈՒՐԷ

Եղրեւանին կը բուրէ, եւ ծաղկայորդ նըշենին՝
Ջուրերուն մէջ լըճակին հարսի՛ նըման կը փայլի:
Գեղադալար լեռներուն ու մըթաստուեր անտառին
Մէջ, ամէ՛ն դի թարմութի՛ւն, կեանք ու բերկրանք է առլի:

Երկընքին ու երկիրին Ապրի՛լ է, մեր սըրտի՛ն ալ:
Յաւերժակա՛ն ըլլար, ա՛հ, գարնան այս տօ՛նը պայծառ,
Մեր հոգիները երնէ՛կ, կարենային թեւ բանալ՝
Այս տօնին մէջ թի՛ռ գալու համար անխո՛նջ, անդադար:

Ջըլըռէի՛ն սոխակնե՛րը Մայիսի, շա՛րունակ
Քաղցրօրէն սէ՛ր երգէին, սաղարթներուն ընդմէջէն,
Ջըմեռնէի՛ն թըռչուններն ու վարդերն ալ անուշակ
Եւ սիրելու համար սիրտն՝ ապրէ՛ր անվերջ, մըշտօրէն:

ԱՆՅՈՒՍՈՒԹԻՒՆ

Ա՛հ, երկրի վերայ ո՞վ կ'ապրի անյոյս:
 Օր մը, քեզի հետ, Գարնան աղուալոյս
 Պարտէզներուն մէջ, պիտի ո՞վ հոգիս,
 Երթանք հաւաքել՝ յասմի՛կ, գիրկերով.
 Ծաղիկներ ծանրը ու քաղցըր բոյրով,
 Յակինթ, այծտերեւ ու ոսկենարգիս:

Պիտ' վարդ ու շուշան ժողովներ, անհամա՛ր
 Մեխա՛կ, մանիշակ ու մուշկ եւ անփառ
 Մեր այս խուցին մէջ, ապա ես ու դուն
 Փակուելով, տեսներ պիտի լրոստոյզ,
 — Ա՛հ, այս երկրի վրայ, ո՞վ կ'ապրի անյոյս —
 Բացուի՛լը, հոգի՛ս, մեր թըռիչներուն:



ԵՌԻԱՆՆԻՍ ՂՐԻՓԱՐԻՍ

Ծնած է Սիմեայի մէջ 1872-ին: Ուսումը ստացած է Պոլսոյ եւ Աթէնքի մէջ: Եղած է կրթական նախաւարտութեան Գեղեցիկ Արուեստներու նիւղի դիւանապետ եւ Ազգային քաջութիւնի սնուէն: Պարբերականներու եւ այլ հրատարակութիւններու մէջ գրուած իր բանաստեղծութիւնները ի յայտ բնծայած է «Բզէզներ եւ Թերեակաթներ» անուն հասարակ: Թարգմանած է Էսկիլէսի եւ Սոփակլէսի ռդբերգութիւնները ինչպէս նաեւ հասրնսիր գործեր՝ Ֆրանսայի եւ մասնաւորաբար Գերման բանաստեղծներէ եւ գրողներէ:

Մեռաւ Աթէնքի մէջ 1939-ին:

ԸՆԿՈՒՁԵՆՒՒ ՍՏՈՒԵՐԻՆ ՏԱԿ

*Մանիշակագոյն երկընքին խորէն,
Վարդերանգ ամպեր կ'անցնին ու կ'երթան,
Հոգւոյս ըսպիտակ մառախուղներէն՝
Մո՛ւլթ ուրուականներ կ'անցնին ու կ'երթան:*

*Անոնք՝ հըրճուանքներն են որ չեն խընդար.
Ցաւե՛րն են անոնք՝ որ չեն գիտեր լալ,
Որ ճակատագրի զըրին նըման համր,
Անոնք չեն խընդար, չե՛ն լար ասոնք ալ:*

*Ո՞ր կախարդուհին պիտ' վարպետօրէն
Իմանայ անուէն անոնց երբ կ'երթան,
— Մանիշակաթոյր երկընքի խորէն՝
Վարդագոյն ամպեր կ'անցնին ու կ'երթան...:*

Մ Ա Ն Ը

Բարո՞ւմ թող զայ, երբոր զայ ժամն յետնագոյն
 Իմ աչուրներն յաւերժապէս փակելու.
 Եւ ե՛րբ ըլլայ, այսօր՝ կամ օ՞ր մը հեռու,
 Բաւ է, չըզա՞յ խօլ մըրըրիկի մը հանգոյն:

Անշուշտ, նորէն ըլլայ այժմո՛ւ պէս զարուն,
 Ու մայրամուտ մը՝ անուշիկ ու աղու,
 Յուշիկ ելլէ եղեմաշունչ հովիկ մ'ու՝
 Զիւնասպիտակ ծաղիկին պէս խընծորւոյն՝

Իյնայ հոգիս, եւ ո՞ւր ալ որ զայն հանէ
 Վըճիտ առուակն, որ կը հոսի յուլօրէն
 Թաւուտներո՞ւ, ածուներո՞ւ ընդմէջէն,

Ո՞ւր որ տանի, եւ դեռ ո՛ւր որ կանգ առնէ՝
 Հին ձայներէն թող ան լրսէ գլգլածայն
 Աղբերակին թովիչ ողջո՞յնը միայն...

Ն Ի Ն Զ

Եկուր, ո՞ւմ նինջ ու տար դուն զիս: Մահիճին
 Մէջ ուր քեզի կու տամ մարմին եւ հոգի.
 Ո՞ւմ մըխիթար, որէ՞ որ քիչ մ'ամսորի՞
 Կուրծքիս ներքեւ փըրփըրող ցաւը խորին:

Քեզմէ խընդրած իմ խորախոր անդորրին
 Մէջ, թող կարծեմ թէ զիս եղբա՞յրդ կը տանի.
 Ու թող ինծի մընայ կեանքէն ցանկալի,
 Ա՛յնքան՝ որքան կայ մէջն աղո՞ւ շուշանին:

Կարկուտի՞ աչս անապական շուշանին,
 Որ, նըշուլող նորոգ լոյսին մէջ՝ երբոր
 Երկինք-երկիր կը սարսըռան հըրճուագին,

Հոգի՞ մը գայ պիտի թերթերը անոր
 Համբոյրով մը արշալոյսին դէմ բանալ՝
 Ցօղի կայլակ մը ծոցին մէջ արփափայլ:



ՆԻՔՈԼԱՍ ԲԵՐՍԵՋԱՍ ԼԱԻՐԱՍ

Ծնած է 1873-ին Արեւմ: Հելլեն բանակի հանգստեան կաշուած հա-
զարապետ է: Եղած է նաեւ Աստիկէի նահանգապետ: Գրած է պատմութե-
ան, բանաստեղծութիւններ եւ քննիկներ: Հրատարակած է բանաստեղծու-
թիւններու երկու հատորներ:

Ա Պ Ա Ժ Ա Մ

Նորէ՛ն կը բերեմ քեզի ծաղիկներ,
Նորէ՛ն կը գըրեմ քեզի տաղիկներ,
Սեւ մազերդ, ի՞նչ փոյթ, թէ ճերմըկեցան
Եւ ինչ փոյթ թէ պա՛ղ է գի՛րկդ ալ այնքան:

Իմ ամէն մէկ երգըս կըսկի՛ծ մըն է
Որ քովդ ապրած կեա՛նքս կը յիշեցընէ.
Ամէն մէկ ծաղիկ ոտքերուդ ներքեւ
Կ'արթընցնէ անցեալ պահիկ մ'հեշտահեւ:

Երազով ապրէ՛ գարունդ առաջին,
Անցած պահերուն ըստուերն նս ինքնին.
Որ երազին հետ կ'երկըննա՛յ, կ'երթա՛յ,
Եւ կ'ըլլայ մորմոր ու լալի՛ւն կ'ըլլայ:

Ինքնամոռ՝ դեռեւս, կանգնած քու դիմաց
Զովութիւն կ'ըղձայ բերանս պապակած.
Աղբի՛ւր՝ որ այնքան զովացք կու տայիր.
Աղբի՛ւր՝ որ առա՛նց ջուրի մընացիր:

ԴԱՍՏԱՌԱԿԸ

Երեկոյեան, եկեղեցի ցա'ւդ ըսելու համար եկար,
Աղօտափայլ կանթեղէն լո'յս մը սակաւիկ, կը դողդողար
Շագանակի գոյն ծամերուդ՝ թաշկինակիդ ալ սեւածիր,
Ու փոքրիկին վրրայ, հէք կին, գոր կուրծքիդ դէմ սեղմած էիր:

Ու թըւեցաւ ինձ, մօտեցար երբ Տիրամօր՝ դանդաղաբա՞յլ
Թէ՛ Տիրութիւն հանեց զլիսէն իր այն պոս'կը լուսափայլ,
Ու զայն դըրսու տառապահար, չըւառական քու զըլուխին՝
Եւ, պատկերին մէջ անցուց քե'զ, քու որդեակին հետ միասին:

Ու քիչ չետոյ՝ եկեղեցւոյն լուսաստուերին մէջէն տարտամ,
Որպէս տեսիլ ու դաստառակ՝ ըզքե'զ տեսայ կրկին անգամ.
Եւ մերթ քեզի՝ կը նայէի, մերթ ալ Կոյսին, լո՛ւռ, ցաւաբեկ,
Մինչեւ որ դուն ու Տիրամա'յրը միացար ու եղար մէկ:

ԲԱՆ ՄՈՐ ԱՌԵՐ ԵՆ ԻՆՁՍԷ...

Այլեւս ամա՛ռը անցաւ: Եւ ուշանայ թող ծմնոն,
Մընացի'ր, մեղմ ո'վ աշուն, եւ դո'ւն, դալո՞ւկ Հոկտեմբեր.
Իրկուններուն մէջ մեղրէ՛, վերջալոյսին ձեր լըռին՝
Վերագըտնել կը ճըզնի՝ կորսուած բա'ն մ'իմ հոգին:

Բա՛ն մ' — անունն իր չե'մ զիտեր, կորսըւած է վաղուց ան —
Ճիւղին վրրայ, յասփիկի ճերմակ թերթի՛ է նրման,
Ու նրման է վարդ-ամպի: Բան մը — գոր ես կը սպասեմ
Որ վերըստին ինձ բերեն — բա՛ն մ'որ ինձմէ առե՛ր են:

Կ Ի Պ Ա Ր Ի Ս Ն Ե Ր Ը

Բակերո՞ւն մէջ, պատերուն կից, ճամբաներո՞ւն
Վերայ եւ շուրջը սրբաբոյր տաճարներուն՝
Կը բարձրանան կիպարիսներն հեզաճրկուն:

Եւ այգուն հետ, արեւծագէն քիչ մը առաջ,
Կը պարուրուին մարմինները անոնց կանաչ՝
Շրջարշներու մէջ նըրբահիւս, վարդահաճանչ:

Ու զիշերին, երբ յամրաբայլ կը դառնամ տուն,
Ես կը տեսնեմ, սեւ խաւարէն խաւարագո՞յն
Ձանոնք կանգնած՝ բովն հընամի՝ փլատակներուն:

Եւ հոպն անոնց երբ կը ճրկէ կատարը ցած՝
Հընամենի երդիքներուն հետ փոշեմած՝
Անոնք կը սկսին՝ իրենց զըրո՞յցը մոռցըւած:

ԵՈՐԿՈՍ ՏԵԼԻՍ

Ծնած է Ռուսանիոյ Պրայլա քաղաքին մէջ 1874-ին: Վիեննայի մէջ բժշկութիւն ուսած ու երկար տարիներ հոն բնակած է: Եղած է նաւաստմի բժիշկ: Հրասարակած է ֆերբուածներու երեք հասարակութիւն, որոնցմէ վերջինը՝ Ակադեմիի առաջին մրցանակը ստացաւ տարիներ առաջ: Տելիս ապրող հելլէն բանաստեղծներուն մէջ բացառիկ դիրք մը կը գրաւէ:

ՇՈՒՀԱՆԱԹՈՅՐ ՄԱՀԻՃԻ ՄԷՋ...

Շուշանաթոյր — երբոր հասնի ժամը Նինջին —
Մահիճի մէջ ընկողմանիմ թէ սուր քարի՝
Ճամբամիջին գլտնէ շընորհըդ զիս վերջին,
Թէ վիհափին Լըբոր իմ քա՛յլը դեգերի՝

Թաքուն ըսիտի մը այժմէն իսկ կ'ըսէ ինծի
Թէ աչուընե՛րս ալ, ո՛վ կեանք, դո՛ւն պիտի փակես,
Եւ զի՞ տանիս պիտ' առանց ցա՛ւ ու կըսկիծի
Յայգուն անդարձ ու հեռաւոր Լըկիրն անտես:

Ու ծայնդ ինծի պիտի հըծծէ՛ երազային
Անոյշ խօսքեր, խաւարն Լըբոր զիս համակէ.
Եւ ձեռքերուդ զրգուանքն յուշիկ, եթերայի՛ն,
Դէմքըս վարդի թերթերու պէ՛ս պիտի ծածկէ:

ՈՒՇ ԻՐԻԿՈՒԱՆ...

Ուշ իրիկուան, քընաթաթաւ, պատուհաններս երբ կը փակեմ,
Յետին հայեացք մը նետելով իրիկունին անդորրաւէտ,
Բաժանման պէս, թախիժ մը զիս կը համակէ, ու կը կարծեմ
Թէ կը լըքեմ համբուն վրոյսյ՝ բառ մ'որ կ'երթայ խաւարին հետ:

Բա՛ն մը, կարծես, խըլտած կեանքէ՛ս, յափըշտակուած իմ հոգիէս,
Որ կը մարի՛, կը կորսըւի, խաւարին մէջ դանդաղաքայլ,
Որ, կ'անհետի՛, կը հեռանա՛յ հոսկ անցորդին հետ յամշապէս,
Իբրեւ ըստուեր՝ բիւրեղին մէջ հայելիի մ'աղօտափայլ:

ԿԵԱՆՔԻ ՋՈՒՐԵՐՈՒՆ ՄԷՋ...

Կեանքի ջուրերուն մէջ արծաթաման,
Ըսպիտա՛կ նաւակ, թեւերով շուշան՝
Կը նաւեմ անվախ.
Ո՛ւր երթալս հովուն ես չեմ հարցըներ,
Կը սուրամ իր հետ, անդքելով ջուրեր,
Յընձուն եւ ուրախ:

Ճամբորդութենէն նըպատակաւոր
Գանած եմ այլեւս, ոչ ալ լիանդորր
Աւիեր ես կ'ըզձամ:
Թող մըշուշ ըլլայ իմ դէմ ու ետեւ,
Թող առագաստներն տանին զիս թեթեւ՝
Ո՛ւր որ կ'ամենան....

Կ Ե Ա Ն Ք Ի Ն

Երբեք, ո՛վ կեանք, չըդողացի բու առջեւ,
 Ոչ ալ փախայ: Կուրծք-կուրծքի դէմ քաջաբար
 Պայքարեցայ տարրերուդ դէմ բազմածեւ,
 Ես՝ առանձին, անոնք անթիւ, անհամար:

Բազմահամա՞ր անոնք եւ ա՛յնքան մեծղի
 Ու գերազօր եւ անուկով մեծափառ:
 Խոնարհեցայ մահուան առջեւ, բայց, քեզի
 Հետ, պայքարին մէջ դուրս եկայ հաւասար:

Եթէ ճակատըս դափնիներ չեն պըճներ,
 Ոչ ալ կըրնամ ցոյց տալ պսակներ յաղթութեան.
 Սակայն, կըրնա՞մ սեղմել ձեռքերդ. անվեհեր,
 Լնպարտելի ո՛վ կեանք, պահուն բաժանման



ՍՔԵԼԻՈՍ ՍԷՖԵՐԻԱՏԻՍ

Ծնած է Զմիւռնիա. 1873-ին: Իրաւագիտութիւն ուսած է Ֆրանսա, ուր բազմիցս օրէնսգիտական մրցումներու մէջ մրցանակներ շահած է: Յունաստանը ներկայացուցած է Միջազգային բազմաթիւ խօսհրդածողականներու մէջ: Եղած է Միջազգային իրաւանց դասախօս Ազգային համալսարանին մէջ: Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով հրատարակած է օրէնսգիտական բազմաթիւ գործեր: Պարբերականներու եւ տարեգիրքերու մէջ ունի բազմաթիւ բանաստեղծութիւններ:

ԿԱՂՆԻՆ ՈՒ ԵՂԷԳՈ

Լերան կատարին վրայ, հո'ն, կաղնի մը խրրոխտապանձ՝
Վիթխարահրսկայ ճիւղերն է բացեր այերին դիմաց:
Այնտեղ, անոր բով չըկայ ուրիշ ծառ, եւ ան, մի՞ս-մինակ,
Ճըղարծակելով՝ մեծցաւ տօթերուն ու ծիւներուն տակ:

Երկաթանրման մարմինն՝ որդերու երբեք չեղաւ կեր.
Սաղարթներուն մէջ գիշերեցին լոկ ճարպիկ բազէներ:
Նոխազները չե՞ն երթար իր շուքին, միայն վախն ի վախ
Իր թաքըստոցէն ելլելով կ'երթայ հոն երէն յաճախ:

Եւ հազարամեայ ծառին՝ որ կանգնած է հոն անտարբեր,
Վայրագ փոթորկին ու կայծակին դէմ անթիւ տարիներ,
Ճահճին ջուրերուն մէջէն, — տօթերէն եղած — գարշահոտ,
Դալկահար, անոք եղէզը այսպէս կ'ըսէ վեհերոտ.

— «Շնորհներդ անթիւ-անհամար են, ծա՛ռ, բարիքդ ալ անհուն.
Այնքա՛ն մօտ ես դուն երկնի աստղերո՛ւն,
Այգուն շոյանքներն ու յակինթները նախ դո՛ւն կ'ըմբռնեն,
Եւ կ'երկրրպագէ ոսկի՛ վերջալոյսն առջեւդ կարծես,
Շնորհներդ անթիւ-անհամար են ծա՛ռ, բարիքդ ալ անհուն»:

«Մեծաւիառ ես դուն ու վիթխարակերպ, կոյս ու քաղցրագոյն
Համբոյրները դո՛ւն կ'առնես արեւուն,
Քու բով՝ ես աղկա՛ղկ, կարճակեաց ծի՛լ մը կ'ըլլամ միայն ես».
Եւ կաղնին կ'ըսէ անոր. թախծադէմ արքայի մը պէս —
— «Այլ՝ անզուգական շընո՛րհ մը ունիս: Սրբի՛նգ կ'ըլլաս դուն...»

ՀԼԻԱՍ ՎՈՒԹԻԷՐԻՏԻՍ

Ինձ է Ռուսմանիայ Սուլինս Բազաֆին մէջ 1874-ին: Հրատարակած է պատմական «Պատերազմական Օրացոյց» հասոր, «Ամպեր», «Ուխտաւոր», «Գաղտնի Պատմութեան», եւ այլ բանաստեղծական հաւաքածոներ եւ «Մարտիս» ու «Երբ կը Սիրենք» վէպեր: Թարգմանութիւններ կատարած է հելլէն հին գրողներէ եւ եւրոպացի գրագէտներէ: «Մեր կեանքն ու Գրականութիւնը» քննադատական գործը եւ «Գիւրքեանց Յառաջդիմութիւններ» վերաբերիս զրօն է հասել «Հելլէն Նոր Գրականութեան Պատմութիւն» երկա իրութիւնը:

Ո Ղ Բ Ե Ր Գ

Ա.

Ո՞ր հեռաւոր համբորդութեան կ'երթաս դուն
Կեցի՛ր, անգամ մ'ալ աչուրներդ համբուրեմ,
Եւ այդ վերջին համբոյրին մէջ ես փակեմ՝
Մարած շողին յիշատա՛կը ոսկեգոյն:

Պարմանութեանդ զեղեցկութիւնը մեռած:
Թող զարդարեմ ծաղիկներով ձիւնագոյն,
Եւ անոնցմէ՛ փրռեմ վրա՛ն ալ համբուն,
Ուր դուն անգամ մըն ալ ահա՛ կ'աղուորնա՛ս:

Կեցի՛ր, ո՛վ իմ անոյշ մանկիկ, հաւաքեմ
Քեզի համար մուշկե՛ր, սըրտիս թերթերէն,
Ու ծաղկաջուր արտասուքներըս ընեմ:

Որ, քաղցրանօթդ ըլլայ լեցո՛ւն մըշտօրէն:
Ո՞ւր կ'երթաս դուն, որ կ'ողջերթեմ քեզի ես
Արցունքներո՞վս՝ յորդահոսուն գետի պէս:

Բ.

Նայուածքս հիմա կ'իյնայ որքա՞ն տըրտմաւէտ
 Իրերուն վրայ, տան մէջ, քեզմէ՞ մընացած:
 Ի՛նչ որ երբեմն հըմայուեցաւ ձեռքերէդ,
 Ի՛նչ որ կու տայ անուշիկ յո՛ւշդ անմոռաց,

Մենք մեր վըշտին հայելին ենք ըրած զայն:
 Դառն ցաւերու ինչ որ աղբիւր է եղած՝
 Զերթ պատկերի՝ կ'իյնայ մեր խոկը վըրան.
 Եւ կոծումներն են իր աղօթքն ամպասլաց:

Ամէն տեղ ուր՝ մըտածումով կ'ողջըննաս՝
 Արտասուազօծ մեր աչքերն քե՞զ կ'որոնեն.
 Ու տակաւին չե՞ն հաւատար թէ չըկաս:

Կը լըսենք, մեզ կ'ըսե՞ն իրերը ամէն
 Թէ՛ մեր կեանքէն կորսուած է բան մը, զոր մենք
 Հիմա տունին մէջ ապարդիւ՛ն կը փընտռենք:



ՔՈՆՍԱՆՔԻՆՈՍ ԳԱՎԱՅԻՍ

Ծնած է Կ. Պալիս 1876 ին: Ուսումը ստացած է Անգլիոյ մէջ: Գրեթէ ամբողջ կեանքը ապրած է Եգիպտոսի Աղեփանդոսիա քաղաքին մէջ: Աւելցած է Եգիպտոսի եւ Յունաստանի գրական կարեւոր հանդէսներուն՝ իր արուեստով ու խորքով ինքնատիպ բանաստեղծութիւններով, զորս ասերը հեղ մը պրակ-պրակ հրատարակելով ձրի բաժնած է բարեկամներու եւ հետազային այդ պրակները գրի վերածած: Իր շուրջ 40 տարուան գրական հունձքը կը կազմեն մօտ 120 բանաստեղծութիւններ:

Գալաթիս մեռաւ 1935-ին:

ԾԵՐՈՒՆԻ ՄԸ

Աղմըկալից սըրճարանի ներքնամասին
Մէջ սեղանի մը դէմ նըստած է առանձին,
Լըրաթերթ մը իր առաջին՝ մարդ մ'ալեհեր:

Արհամարհուած ծերոյթին մէջ թըշուառական,
Կը մըտածէ՝ թէ վայելեց, ահ, քի՛չ որքան
Տարիներն, երբ դեռ գեղեցիկ եւ ուժով էր:

Գիտէ՛, կը զգայ եւ կը տեսնէ թէ ծե՛ր է շատ.
Բայց, երէ՛կ էր կարծես ատենին, երիտասա՛րդ
էր երբոր ինք: Ի՛նչ կարճ միջոց, ի՛նչ կարճ շրջան:

Կը խորհի թէ՛ զինք խաբած է խոհեմութիւնն
Որուն ինք միշտ կը վըստահէր — ի՛նչ խենթութիւն—
Ու խաբեքան կ'ըսէր, «վա՛ղը, Շա՛տ օրեր կան»:

Զըսպուած կիրքեր միտքը կու գան. եւ ո՛րքան խինդ
Զոհուած երբեմն, Ձեռքէ հանուած ամէն առիթ՝
Խոհեմութիւնը իր անխելք կը հեզնէ արդ.

... Բայց խորհելէն ու յիշելէն ան չափազանց՝
Ա՛լ թըմեցաւ: Ու սեղանին վըրայ ինկած
Կը քընանայ հիմա քունով մը խո՛ր, հանդարտ:

ՍՌԱԶԻՆ ՍԱՆԴՈՒՂԸ

Օր մը Եւմենէս բերթողը պարման
 Թէոկրիտոսին մօտ կը տըրտընջար
 «Երկո՛ւ տարի է որ ես կը գրեմ՝
 Ու մէկ հոփուերգ եմ հիւսած տակաւին:
 Իմ առդիական միա՛կ երկս է ան:
 Աւա՛ղ, շա՛տ րարծր է, հիմա կը տեսնեմ,
 Շա՛տ բարծր է սանդուղը քերթողութեան.
 Եւ այն առաջին սանդուղէն, ուր եմ,
 Ա՛հ, դժբախտս երբեք վեր պիտի չելլեմ»:
 Ըսաւ Թէոկրիտոս. «Այդ խօսքերն ամէն՝
 Անպայել են քեզ ու նախատինք են ծանր,
 Թէ սանդղամատին ըլլաս առաջին՝
 Պէտք է քեզ հպարտ, երջանի՛կ զգաս.
 Զի՛ հոն ուր հասար՝ աներշան բան չէ,
 Այսքանն որ ըրիր, գիտցիր, մեծ փառք է.
 Նոյնիսկ սանդղամատը այս առաջին՝
 Հասարակ երկրէն րա՛րծըր է այնքան:
 Այս սանդղամատին կոխելու համար՝
 Պէտք է որ ըլլաս դուն քաղաքացի
 Գաղափարներու պայծառ ուսումնին:
 Եւ դժուար ու շատ հազուադէպ է որ,
 Բեզ այդ քաղաքին բընակիչ գրեմ:
 Օրէնսդիրներ կը գրունես շուկան
 Զորոս բախատրսը խաբել չի կրնար,
 Հոս՝ ուր որ հասար, գիտցիր, քիչ բան չէ,
 Այսքանն որ ըրիր, գիտցիր, մեծ փառք է»:

Մ Ո Մ Ե Ր Ը

Մեր ապագայի օրերն ըղձական
 Մոմերու նրման մեր դէմ են շարուեր.
 Շարք մը բոցավառ մոմերու նրման,
 Ոսկեթոյր, ջերմիկ ու կեանքոտ մոմեր:

Անցեալի օրերն՝ ետեւ կը մընան.
 Տըխրաշուք շարք մը՝ մոմերու շիջած.
 Մօտակաները դեռեւս կը մըխան.
 Մոմեր կորացած, սեւցած ու հալած:

Ձեմ ուզեր տեսնել, զիս կը յուզէ՞ տեսքն,
 Կը յուզէ զիս յուշն առաջին լոյսին:
 Կը նայիմ առաջ, վառած մոմերուս:

Ձեմ ուզեր դառնալ, տեսնել, սարսափիլ,
 Թէ մութ գիծն որքա՞ն կ'երկարի արագ,
 Ո՞րքան շուտ՝ մարած մոմերն կը շատնան:

Հ Ե Ռ Ո Ւ

Այս յիշատակը, ես պատմե՛լ պիտ' ուզէի...
 Բայց, մարած է... անկէ, զրեթէ, ալ ոչի՞նչ կայ.
 Քանզի՛ հեռո՞ւն, երիտասարդ տարիներուս մէջ կը հանգչի:

Մորթը կարծես թէ՛ յասմիկէ՞ շինուած ըլլար...
 Այն իրիկունն Օգոստոսի — Օգոստոս էր —
 Աչքերն՝ հազի՛ւ կը յիշեմ արդ: Կապո՞յտ էին,
 Այո՛, կապո՛յտ, շափիւղայի՞ նրման կապոյտ...:

Ա Ղ Օ Թ Ք

Ծովն իր խորքին մէջ նաւազ մը տարաւ —
Մայրն որ այս բանը չի՛ գիտեր բընաւ՝

Կը վառէ մեծ մոմ մը Տիրամօր դէմ
Որ, տըղան շո՛ւտ գայ, լաւ օղեր ընեն —

Եւ ականջն հովուն դէմ կը լարէ յար:
Բայց, մինչ կ'աղօթէ ան սըրբաբարբառ՝

Կը լըռէ՞ Պատկերն, խոհուն, տըրտմական,
Գիտնալով որ ա'լ պիտ չըգա՞յ տըղան:

«CHE FECE... IL GRAN RIFITUO»

Կարգ մը մարդոց համար, կու գա՞յ օրը երբոր
Պէտք է որ մեծ «Այո»ն կամ՝ մեծ «Ոչ»ը ըսեն:
Եւ երեւան կու գայ իսկոյն ան՝ որ արդէն
«Այո»ն իր մէջ ունի պատրաստ, եւ անմոլոր՝

Ըսելով տէր կ'ըլլայ պատուին եւ համոզման,
Փըխտողը՝ չի՛ զըղջար: Եթէ հարցընէին՝
Ան կըրկին «Ոչ» պիտի ըսէր: Բայց ողջ կեանքին
Մէջ կը տանջէ ալ զինք այդ «Ոչ»ը իրական:

ՊԱՐԻՍՊՆԵՐ

Անխորհրդաբար, առա՛նց կսկծալու, առա՛նց ամօթի
Շուրջըս պարիսպներ հիւսեցին բարձրը ու հըսկայական:
Եւ հիմա նըստած այստեղ իմ հոգին կը յուսահատի
Այլ շան չե՛մ խորհիր: Մ'ութքըս կը կրթէ այս բախտը դաժան:

Որովհետեւ դուրսն՝ ընելիք շա՛տ բան ունէի ես դեռ,

Ա՛հ, ի՛նչպէս ես ուշ չըդրի երբոր պարիսպն հիւսեցին:
Բայց, բանուորներու երբեք չիմացայ աղմուկ ու ծայներ.
Անըզգալաբա՛ր դուրսի աշխարհէն զիս անջատեցին:

ԳԻՇԵՐ ՄԸ

Սենեակը անշուք էր եւ անգեղեան,
Պահուած՝ վատանուն գինետան վըրայ.
Պատուհանէն կ'երեւէր փողոցն՝
Անմաքուր եւ նեղ: Մհրթ կը լսուէին
Ձայները քանի մը բանուորներու՝
Որոնք վարն. ուրա՛խ, թո՛ւղթ կը խաղային:

Եւ հոն անպաճոյճ, ուսմի՛կ մահճին մէջ
Ունէի սիրոյ մարմի՛նն հեշտաւէտ.
Եւ վարդ շրթունքները արբեցութեան —
Վարդեղէ՛ն շուրթերն արբեցումի մ'որ
Այժմ՝ երբոր քերթուածն այս տարիներ ետք այսքան կը գրեմ
Մենակեացի իմ խուցիս մէջ, կ'արբենա՛մ դարձեալ:

Ե Կ ՈՒՐ

Եկո՛ւր յաճախ, եւ համակէ զիս
 Ո՛վ զգալնութիւն՝ սիրելի, եկո՛ւր եւ համակէ զիս.
 Յիշատակներն երբ մարմինին մէջ կը զարթնուն
 Եւ հին տենչերը արիւնին մէջէն զ'անցնին.
 Երբոր շուրթերն ու մարմինը կը վերյիշեն
 Եւ կը սարսռան մատներն անոնց վերհրպելով:

Եկո՛ւր յաճախ, եւ համակէ զիս.
 Երբոր շուրթերն ու մարմինը կը վերյիշեն:

Ի Ն Ն Է Ն

Տասներկու եւ կէս: Ի՞նչ շուտ անցաւ ժամանակն,
 Իննէն ի վեր, երբ ճրագըս վառեցի՝
 Եւ նստայ հոս: Նստայ՝ առա՛նց կարդալու
 Եւ անխօսուն: Ես որո՞ւն հետ խօսիմ հո՛ս՝
 Այս միամիտա՛կ տանը մէջ:

Մարմնոյս կուռքը նոր,
 Իննէն՝ երբոր ես ճրագըս վառեցի՝
 Եկաւ եւ զիս գտաւ ու ինձ վերյիշեցուց՝
 Բուրումնաւէտ սենեակներ փակ.
 Եւ հաճոյքներ անցած: Ինչ խեղճ հաճոյքներ:
 Նորէն աչքիս առջեւ բերաւ՝
 Ճամբաներ, որ, հիմա դարձան անծանօթ
 Եւ կեդրոններ եռուզեռ, որ, վերջացան,
 Սրճարաններ եւ թատրոններ՝ որ կային
 Ժամանակին:

Կուռքը իմ սեւ մարմինիս՝
 Եկաւ եւ ինձ բերաւ ցաւոտ
 Դոյժն ընտանիքիս: Բաժանումներ,
 Ըզգացումներ անիրաւ, ըզգացումներ
 Մեռելներու, ա՛յնքան նուա՛գ յարգւած:
 Տասներկու եւ կէս: Ի՞նչ շուտ անցաւ ժամանակն:
 Տասներկու եւ կէս: Տարիներն՝ ի՞նչ շուտ անցան:

ԱՐՈՍՔՈՒՆՍ ՄԱՄԵԼԻՍ

Ծնած է Պրուսայի մօտակայք՝ 1876-ին: Միջնակարգ կրթութիւնը Պոլսոյ մէջ ստանալէ յետոյ տնցած է Գերմանիա՝ բժշկութեան հետեւելու համար: Գրած է գիտական ուսումնասիրութիւններ եւ «Խաւարէն Դէպի Լոյս» «Մաշդկայիներէն Անդին», «Շունչ եւ Արուեստ» «Ծովեղէն» (ծուկերու եւ ուսէներու մասին գրուած բանաստեղծութիւններ) բանաստեղծական հասորները: 1914 ին Մամեկիս դժբախտութիւնը ունեցած է տեսողութիւնը կորսնցնելու:

Մամեկիս մեռաւ Աքէնի մէջ 1935-ին:

ՀՈՎՈՒԵՐԳԱԿԱՆ

*Կեռասնիի մը վըրայ փոքրիկ,
'Ինդձանի կոյս մը նրստած հանդարտիկ՝
Թարմ ու ցօղաւէտ կեռաս կը քաղէ:*

*Իր դէմ, կեռասի մը վըրայ, թառած
է խառնիճ մը փոքր — կարծն'ս թէ զըծուած —
Որ կը շընչէ բոյրն ու լուռ կը դիտէ:*

*Կ'երկարէ աղջիկն իր ծեռն, ու զանի
Կը բրնձէ վախով, կը սեղմէ մեղմիս,
Եւ մատիկն իրեն կ'արիւնի՝ ահա:*

*Կու լայ աղջընական ու ա'լ չի քաղեր:
Փախ կու տայ խառնիճը եթերն ի վեր,
Մինչ՝ խայթուած մատին ցաւը կը շատնայ:*

Լալիւնին ծայնէն կու գա՛յ հեւ ի հեւ,
Հովիւ մը պարման,՝ վառվռուն ու թեթեւ,
Որ բուժել գիտէ վէրքեր անքընին:

Մոգական դեղեր կը դնէ իսկոյն
Մատին վրայ փոքրիկ եւ կոյսը սիրուն՝
Կը զգայ մեղմացումն ահաւոր ցաւին:

Կը նայի հոպուին սիրտ՝ առլըցուն,
Եւ կը հարցընէ թէ արդեօք բուրուն
Կ'ուզէ՞ ճաշակել կեռասներէն այն:

Կը ժրպտի՛ հովիւն անոյշ ժրպիտով,
Եւ կ'ըսէ, «Երբթնե՛րդ ամենէն համով
Կեռասներ են» ու հո՛ն՝ կը համբուրէ զայն:

Մ Ո Ւ Ր Ի Կ Ը

Մուրացկա՛ն եմ: Սըրտիդ դըռնակը գըտա՛յ.
Բախեցի մեղմ ու կը սպասեմ տըխրօրէն.
Բա՛ց եւ ինծի բաշխէ սիրոյդ հոգեհմայ
Ըմպելին, ո՛վ աղջիկ, այնքա՛ն ծարաւ եմ:

Գիշեր եղաւ: Ա՛լ ես կերթամ: Տէ՛ր ընդ բեզ՝
Բայց, չըմոռնաս, արշալոյսին. երբ հեռուէն
Կոչնակի մը շուն ղօղանջիւնը լըսես՝
Իմ մեռելին ողորմիլ՝ ջի՛նջ քու սըրտէն:

ԶԱԽԱՐԻԱ ԲԱԲԱՆՏՈՆՈՒ

Ծնած է Քարփենիսիի մէջ 1877-ին: Գրած է բանաստեղծութիւն, պատմութիւն, համբողջական նկարագրութիւններ, Արուեստի ֆինադասութիւն եւ վարած է ազգային բենամօթէի սնօրիմութիւնը: Իր հանրածանօթ վերջին գիրքերն են «Արեւածային Պարգեւներ», «Այլոն Օրօս», «Պատմութիւններ» եւ «Բնականական Լուսաբաց», որոնք կը կազմեն իր հասուն մտքին վերջին արգասիքը:

Իսթանբուլում, որպէս բնականական փառաբանութեան հիացող մը, շեմօրէն կը գնահատէ Հայ Մեփի տեղագործ կարողութիւնները:

Մեռաւ՝ 1940-ին:

ԲԱՐԵՍԱՆՈՒԹԻՒՆ

*Զաքինդոսի մէջ էր...: Գաղջ ու զըրզանոյշ՝ այն կէսօր:
Խոր ծմրան մէջ կը շընչէր դեղծան ամառն հեշտածոր:
Արեւն՝ ոսկի՝ սրփոռոցներ ծիծենեաց վրայ կը փրօէր,
Որթատունկերն՝ ծիրանի կը կախէին խաղողներ.
Յանկերուն՝ ուր կ'ելլէինք անեմոններ քաղելով
Կը խաղար կա'յծը լոյսին, թըռչնոց դայլայլն հոգեթով:*

*Եւ որսկանը նշան առաւ ու պայթիւնովն հրազէնին,
Որ գեղեցիկ օրուան մէջ կը դաշնուէր հովիկին
Հեշտանըւա՞ղ շունչին հետ, յանկարծօրէն իր առջեւ
Ինկան թըռչնոյ սեւաթոյր երկու թեւեր թըրածեւ:*

*Երանաւէտ մահ մը, վա՛ր, հողերուն վրայ նետեց այն
Սուրդ սարեակն անգիտակ, հի'շդ այն պահուն երբոր ան
Կը մըխըրծէր յամպարէ շողուն կըտուցն իր նըրբին՝
Հասուն մըրգի՛ մը մեղրին:*

ԿԻՆԸ ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

Անդորրաւէտ պարտէզէն անցաւ տիկինը հասուն,
Ուղղամբարծիկ ծառերուն մէջէն, հանդա՛րտ, վեհազնաց:
Ոսկեծիծաղ ծառուղին նետեց անոր ոտքերուն՝
Տերեւներ չոր, եւ մենք ալ — մեր խորհուրդները խամրած:

Կինն է որ շա՛տ է լացեր: Ազնուագոյն հատնումին՝
Թարթիչներուն վրայ անոր, իջեր է շո՛ւքն յամբօրէն:
Ալ յափրացեր են ցաւէն արցունքներն իր լիովին
եւ սափորն ան լիցուցեր է՝ փղծկումի աղբիւրէն:

Ժամանակին համբուրուած՝ շրթները փա՛կ ամբօրէն,
Տերեւներու վրայէն գօս, կ'անցնի տժգոյն, մարմրուն,
Մոռցըւելու՝ բոյրերուն մէջ. գորս յուշիկ կը սփռեն
Մայրամուտին, անծրեւէն խոցուած ճիւղերն ծառերուն:

Եւ ես, որ ա՛լ հրրաճեշտ կու տալի սի՛ն աշխարհին՝
Զայն տեսնելով հրծծեցի «դեռ կանուխ է, պիտ' կենամ»:
Կրրնամ յանձնել ես անոր իմաստութեան եւ ցաւին,
Անցնլամոյն եւ այժմեան իմ արցունքներս դառնահամ:

Պիտի սուգունք այն ատեն, անդորրանքի մը մէջ խո՛ր
Մենք որ յոգնած ենք, հասո՛ւկ եւ ամէն որ հրնօրեայ
Պիտի պատմէ դառնաւէտ ծախողանքներն իր բոլոր,
Ճաշակելով համրոյրներ՝ որ ալ խամրա՛ծ են հիմա:

Կեանքի աշո՛ւն քաղցրանոյշ, սլահ իմաստո՞ւն, անխրոտ,
Երջանկանալ գիտե՛ս դուն, ըմպելով թո՛յնը ցաւին.
Ճաշակելով սէրն՝ ինչպէս ոսկի պրտուղ մը համոյ,
Ծա՛նրը՝ մեղրէն հոյզերուն, սարսուռին տակ անծրելին:

Հասուն տիկինն ալ տենչաց միեւնոյն փա՛ռքն աշնային,
Տեսաւ երբ զիս. եւ իր սիրտն, այնպէս, վայրկեան մը միայն
նոցուած թեւերն իր խոռովեց, ապա՛ կըրկին ծանրագի՛ն,
Համբերութեան մէջ նախկին՝ զանոնք ծալեց լըռելեայն:

Եւ մենք անցանք իրարու քովէ երկչո՛ւտ, անբարբա՛ռ,
նոսքն որ արդէն ըսելու չէր սահմանուած, թառամած
Զերթ գօս տերեւ մը փայլուն ինկաւ ծովուն մէջ անծայր,
Սնհատոյցին՝ որ ինծմէ այնքան բաներ է պահած:

Ք Ո Ւ Յ Ա Կ Ը

Սորվեցաւ «բարի իրիկուն»ն երբոր՝
Թուլթակը, հրպարտ, ըսաւ ինքնիրեն,
«Իմաստուն եմ ես, զիտեմ Յունարէն,
Ինչո՞ւ տակաւին հոս կը մընամ կոր»:

Հագաւ իր բաճկոնը կանաչագոյն
Եւ թրոչուններու զընաց ժողովին՝
Յայտնելու համար կարծիքն իր անգին:
Դիրք մ'առաւ՝ սանկ քի՛չ մը լուրջ ու խոհուն
Զոր հազ մը հազաց, նայեցաւ հեռուն,
Եւ ըսաւ անոնց «բարի իրիկո՛ւն»:

նոսքն ընդունուեցաւ հիացմունքով խոր,
Ըսին՝ զարգացած է թուլթակն ո՛րքան,
Շա՛տ մեծ իմաստուն մ'ըլլալու է ան
Դանի որ մարդու պէս կը խօսի կոր:

Հընդկաստանէն է, ո՞վ գիտէ որքա՞ն,
 Որքա՞ն գիրքեր է իր հետ բերեր ան.
 Ի՞նչ գիտուններու հետ խօսած՝ ու դեռ՝
 Գրողներու լեզուով գիտէ ի՞նչ բաներ:

«Պիտ՝ բախտն ունենա՞նք մենք, պարո՛ն թուժակ
 Լըսելու խօսքիդ շարունակութիւնն»:
 Թուժակը հազաջ նորէն չոր-ցա՛մաք՝
 Ուրիշ ի՞նչ, կըրկնեց՝ «բարձ՝ իրիկուն»:

ՔԻՄՈՆ ՔԱՐՔԷՈՍ

Ծնած է Աթէնք 1878 ին: Բուն անունն է Քլէանտաս Լաֆան: Սպայից վարժարանը աւարտելէ յետոյ, ուսած է նաեւ Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ: Տարիներով եղած է հելլէն բանակի լեդի: Սպայականի անդամ: Ներկայիս հանգստեան կոչուած է:

Հրատարակած է «Կղզիիս Երգերը» եւ «Յած Զայնով» քերթականերու հատորներ: Թարգմանած է Սերվանթէսի «Տան Բիւսթը», Օսքր Ուայլսի «Ռիսինկի Բանարկետալը», «Տուրաւ Կրէյլ» եւ Շէյնսփիլի ողբերգութիւններէն շատեր: Պարբերաբերքերու մէջ գրած է լեզուաբանական բազմաթիւ յօդուածներ:

ԳԻՆՈՎԻՆ ԵՐԳԸ

Երազներն որ մեծցուցինք մեր սրտերուն արիւնով՝
Այլեւս գացին, կորսուեցա՞ն, կեանքի յորձքին մէջ խռով.
Բայց, միթէ մենք յաւիտեան պիտի ա՛նհա՞սը ուզենք.
— Լեցուցէ՛ք խըմենք.

Սնցեալն արդէն շիջեցաւ եւ չըմընա՞յ պիտ՝ ներկան.
Մեր շուշաններն ամենէն ճերմակ, խոզի՞ կեր եղան.
Բայց, յաւիտեան մեռելնե՞րն ողբուկոծենք պիտի մենք —
— Լեցուցէ՛ք խըմենք:

Նաւակը մեր, եղբայրնե՞ր, մեզ կը սպասէ ծովափին.
Ուղեւորներըս բոլոր, եկէք խըմենք միասին՝
Ահունքին քով հըրճուագին զըւարճանանք ու երգենք —
— Լեցուցէ՛ք խըմենք:

Արդեօք, ա'ն որ չի հարբիր ու չի՞ երգեր, կամ, ո'վ որ
 փռչերու վրա'յ կը քալէ, ան չըլըքէ՞ պիտի օր
 Մ'այս մեր կղզին սիրելի, որուն հողը կը կոխենք,
 — Լեցուցէ՛ք խումենք:

Ըսէ՛ ինձ, մարդն ո՞ւր կ'երթայ երբ՝ աշխարհէն կը մեկնի,
 Ծուխն ո՞ւր կ'երթայ. ըսէ՛ ինձ, ո՞ւր հո'ւրն՝ երբոր կը մարի.
 Երագներու ըստուերներ, մենք անցաւո՞ր ամպեր ենք,
 — Լեցուցէ՛ք խումենք:

Բաժակին մէջ մեր յորդուն, հո'ն է գրուա՞ծ ամէն բան.
 Ծո՞ւխ են օրերը գալիք, փըրփո՞ւր՝ անցեալը միայն,
 Ծո՞ւխ է, փըրփո՞ւր մեր ժըպիտն մեզի պէս, որ արդէ կ'երգենք
 — Լեցուցէ՛ք խումենք:

Ո'վ նաւավար, լսէ՛, մենք մեկնելու փոյթ չենք ընել.
 Սակայն, թէ ժա'մն է, ըսէ՛, քեզմէ շնորհ չենք հայցել.
 Մինչեւ երթալդ թէ կ'ուզես, քե'զ ալ գինի հրամցընենք՝ —
 — Լեցուցէ՛ք խումենք:

ՄԱՐԹԱՅԻ ԱՄՈՒՍԻՆԸ

Գընդակ մը զայն տապալեց.
 Կ'ոգեվարի՞ յամրաբար,
 Զառանցելով — ծիւնին մէջ —
 Իբր երազի մէջ ըլլար,

Կրնոջ անունը կու տայ.
 «Դո՞ւն ես, Մարթա, ա՛հ, վէ՛րքըս...
 Մի՛ լար, շատ էր ցաւեցայ...
 Ա՛հ, Մա՛րթա, սիրունիկըս...»:

Քրնացա՛ւ: Գիշերը հասաւ
 Փաթթեց գինուորը մօր պէս.
 Ջայն պատանքի մէջ դրաւ,
 Անհունարաւ ծիւնին մէջ:

«Քրնացի՛ր, քաջ իմ տըղայ,
 Պիտի մարմինըդ պահեմ
 Փետուրի՛մ մէջ, որ չըլլա՛յ
 Գան ու այստեղ քեզ ղըտենն:

Ձգըտենն՝ որ չաղէկնա՛ս
 Եւ չըսես սիրելիս,
 Թէ Մարթադ ո՞վ էր գըրկած՝
 Ու յուզումէդ դուն մեռնիս»:



ԼԱՍՊՐՈՍ ԲՈՐՅԻՐԱՍ

Հիլլէն քանասեղծներէն ամենէն ճաղանդաւորներէն եւ սիրաւոյններէն: Բուն անունով Տիմիթրիոս Սիփսոսմա: Ծնած է Քիասի մէջ 1879-ին: Ուսումը ստացած է Աթէնք: Հրատարակած է «Սեւերներ» խորագրով ֆերբուածներու հասար: Իր մահէն յետոյ եղբայրը հրատարակեց հանդէսներու մէջ հոս ու հոն ցիրաւցան մնացած իր ֆերբուածները, «Ծովու Ձայներ» հաստատ: Բարձիրաւ մեռաւ 1932-ին:

ՄԱՐՈՂ ԻՐԵՐՈՒՆ

Շուշաններուն կը խորհիմ, դեղնադալու՜ւկ, թարշամա՜ծ,
Արտասուքովն ողողուած՝
Արշալոյսին կարեկից.
Վարդերուն՝ որ թափեցին խորը խորշի մը անտես,
Երկրի ծոցին մէջ, իրենց
Ծաղկի արիւնը անբիծ:

Տերեւներո՞ւն, ամպերո՞ւն, որ կը մեռնին ու կ'երթան,
Ծառերուն՝ որ կը տոկան
Ճակատագրին իրենց սին.
Անշարժ մնացող իրերուն, ամէն ինչի որ կ'իյնայ,
Նուֆարներուն վաղամահ՝
Հայելիին մէջ լըճին:

Եւ տակաւին, կը խորհիմ ես խորհուրդով մը դըժնէ
Ձեռուրներո՞ւն կերոնէ,
— Ո՞վ թաթթաքուր կրսկըծանք —
Եւ աչքեր ծե՛ղ, որ հանդարտ, թարթիչներուն տակ ձերին,
Ջուրերուն մէջ ձեր մըթին՝
Հանգեցաւ լո՛յսն անուշակ,

ԲԱՐԵՒ, ԵԿԱՐ ԸՍԵԼՈՒ...

Բարե՛ւ: Անծրեւ աշնային, նորէ՛ն եկար ըսելու
Երդիս վըրայ քու փութկոտ ու միալար մեղեդին:
Հոս, այս խորշին մէջ հիւսեմ ու երազեմ պիտ' աղու
Հընօրեայ սէ՛ր մը որպէս, ես քու ցընորքը կըրկին:

Տեսնեմ պիտի քու մըթին, տամուկ աչքերդ վըհուկի
Եւ ամպերէն պատրաստուած քու հանդերձանքը տըմոյն.
Եւ ունկընդրեմ պիտի ես. — ո՞վ գընչուհի երկընքի —
Թախծատըխուր դաւիը քու՝ պատուհանի՞ս ապակւոյն:

Պ Ա Ր Տ Է Ձ Ը

Բերկրածիծաղ պարտէզն առած էր այն օր,
Երանաւէտ այն առտըւան մէջ անցեալ,
Աղուորութիւն մը տօնական, եւ շընո՛րհ
Մը՝ զոր երբեք պիտ' չունենայ ան դարձեալ:

Ամէն կողմերն, աղուաքընքոյշ լոյսին մէջ,
Կը ծըփային սաղարթներու ըստուերներն:
Կ'անցնէինք մենք եւ անոնք մեղմ ու անվերջ՝
Կը պաչէին ծոծրակը քու որ մերկ էր:

Ի՞նչ տօն էր այն. Կ'օրօրուէին յուլաբար,
Ճիւղերն, ու այն թըռչնիկները սիրասուն,
Մեր խօսքերը կը խըլէին ու խելառ՝
Ե՛րգ կ'ընէին ու կ'երգէին անդադրում:

ՅՆՈՐԱԿԱՆ ԶԵՐՔ ԱՅՈՒԵՐ...

Յընորական զերթ բստուեր հայլին մէջ լըճակին,
Իբր հեռամոյն, կորսըւա՛ծ եւ գեղեցիկ ամէն բան,
Վերասըլաց ծուխի՛ն պէս, ինկող ցօղին պէս անգին
Օ՛, կը սիրեմ քեզ, ինչպէս՝ վախճանաւոր ամէն բան:

Բայց, երբ երկուքս ալ իջնենք Եղիւսին մէջ Հոմերի,
Աննիւթական կրդգեակներն, հոգիներու հանգրբուան,
Շուշաններն որ Մայիսի պարտէզէն քեզ չըբերի՝
Պիտ՝ հաւաքեմ՝ երազի՛ սփռւնքներէն հոտեւան:

ԽԸՍԷ՛ ԳԻՆԻԴ...

Խըմէ՛ գինիդ ծովափսեայ մութ գինետան մէկ անկիւնն,
Այժմ, ըսկըսան աշնային երբ անծրեւները նորէն,
Նաւորդներու հետ խըմէ, ծկնորսներո՛ւ դէմ կըբուռն,
Մարդերու հետ՝ տանջըւած խեղճութենէն ու ծովէն:

Խըմէ՛ գինիդ, եւ ըլլայ հոգիդ անփոյթ թող այնքան,
Որ եթէ գայ բախտը չար՝ անոր ժըպտի՛ս անայլայլ.
Նո՛ր վիշտեր ալ գան եթէ՛ թող անո՛նք ալ արբեւան.
Եթէ գայ Մահն իսկ, անխռով՝ մատըռուակէ անո՛ր ալ:

ԾՈՎՈՒ ԶԱՅՆԵՐ

Այսօր նորէն արեւոտ է ծովափունքն ու ամայ՝
 Ճանապարհն որ կ'երկարի ծովեզերքի քովն ի վեր:
 Անճրեւները վանեցին այլեւս ամառը հիմա
 Որթին աշունը սակայն, կարծես հոս չէ՝ հասեր դեռ:

Այնքան անդորր եւ այնքա՛ն խաղաղութիւն մը կայ որ՝
 Նաւերն անգամ հեռամոյն, առաքատները պարզած,
 Կա՛նգ են առեր — նայէ՛ հեղ մ՝ — ու զզջացեր որ աղուոր,
 Այսպիսի լոյս մը թողած՝ կ'երթան ափեր մըթամած:

Սեւ ծովներն իսկ նաւերուն, կը կուտակուին այերին
 Մէջ աներեր եւ անշարժ, հիմա նման ամպերու,
 Կը հանգչին շուրջըս ամէնքն խոնջէնքներէն այս կեանքին,
 Ամէ՛նքն՝ ու լոկ ծովափի աւազուտքին վրայ հեռու՝

Միայն այնտե՛ղ, ո՛վ Անդորր, սարսուռն ալիքմը հըծծել
 Կ'ուզէ տաղիկ մ'այսօրուայ տօնիդ ի փառ լուսավառ,
 Բայց, չի՛ բսեր, կարծես մե՛ղք կը համարէ խրոտվել
 Բերկրանքն որ դուն հեշտանոյշ այս լոռութեան մէջ զըտար:

ՅՈԳՆԱՎԱՍՏԱԿ ԷՐՈՍԸ

Յոգնավաստակ էրօսը ուռին ի վեր մազըլցեր՝
 Ու պահուեր էր գարնաւին սաղարթներուն մէջ արծաթ,
 Բայց, թրռչիկներն անշուշտ, զայն տեսե՛ր էին, ըզգացե՛ր՝
 Որ կ'երգէին այնպէս քաղցր, այնպէս յըստա՛կ, խանդակաթ:

Եւ թրռչիկ մը խենթեցած, սէրէն անհզուն, անսովոր,
 Ամենաբարձր կատարին, փոքրիկ ճիւղի մը ծայրին,
 Դայլայլելէն կը ճօճուէր, կ'իյնա՛ր կ'ելլէ՛ր, մինչեւ որ,
 Կեցաւ հոն՝ ուր կը մընայ հազի՛ւ արցունքը ցօղին:

ՍԷՐ ԻՄ ՅՇՈՒԱՌ

Սէ՛ր իմ թըշուառ, անբախտ կին, ահ, բիւրիցըս եղո՞ւկ քեզ,
Յաւերժական, սու՛րբ ու բա՛րձր էիր դու միշտ ինձ համար.
Սակայն, յանկարծ, երկինքէդ վար սահեցար գահավէժ
Եւ ինկար խորն ամօթին, բամահրանքի՛ն մէջ ինկար:

Օ՛, արդ գիտեմ քեզ հեռուն պիտի տանի այդ ճամբան,
Ըստոր, սակայն ցընծունակ եւ զարշ տիղմով ըսքողուած.
Ըսէ՛ սակայն, ի՞նչ ըլլամ պիտի ե՛ս՝ որ Աւետման
Տեսայ շուշանն ըսպիտակ՝ պիղծ տիղմին մէջ գըլորած:

ՀՆՕՐԵԱՅ ԲԱԿ

Կը յորդէին գերեվարուած քու մագեր
— Հէք աղջընակ, գըլխալաթէդ սեւափայլ —
Զորըս ծըմրան արեւացուքը կ'ուզէր
Գըգուել դալուկ իր շողերովը մըռայլ:

Սարբինային ներքեւ մերին թարշամած,
Իմ ձեռքերուն կը հըպէր ձե՛ռքըդ նըրբին,
Միա՛կ թիթե՛ռը ծըմեռէն ազատուած,
Որ արեւուն ներքեւ կ'ապրէր տակաւին,

Զէի՛ն ելլեր լաց ու խօսքեր դառնահամ
Ըսելու մեր բաժանումը տըրտմաթոր,
Մընջօրէն զիս կը դիտէիր, եւ թարշա՛մ
Ճիւղերը լոկ կ'ըսէին ցաւը մեր խոր:

Կորաքամա՛կ, զառամած մա՛յրդ ալ մեր քով,
Սեւ հանդերձներ հագած, դըրան մէջ այնպէս,
Ա՛հ, կը կենար երբ համր, աչքերն արցունքո՛վ՝
Մեր բաժանման ճակատագի՛րն էր կարծես:

ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Արեւափառ օրն՝ երա՛զ անպատում: Քանի մ'հնօրեայ
Ընկերներու հետ եւ աղջիկներու, ն'ս եւ Աննուլան՝
Մըտանք կապտաթոյր, գինո՛ւ նաւակի մը մէջ եւ ահա՛
Կը թիավարենք դէպի ռեռակայ կըղզին Յընծութեան:

Ոչ ամպ կայ, ո'չ ալ սեւ ծուխ օդին մէջ, երկի՛նքն է պայծառ,
Մեր մօտ սիրահեւ կուրծքե՛ր ու ճերմակ վիզեր ծիւնաւէտ,
Լո՛յս շէկ մազերուն, լո՛յս՝ ծովուն վըրայ եւ լո՛յս ծայրէծայր
Յընծութեան կըղզին, բայց ո՞վ է կըրցեր երթալ, օ՛ր մը գէթ:

Օ՛, ինծի ի՞նչ փոյթ թէ կը հասնի՞նք հոն: Ի՞նչ փոյթ: Կը
[խընդա՛ն
Բոլոր սիրելի ընկերներս, տըխուր կեանքն ալ կը խընդայ-
Անհունին մէջ մենք կը սահինք — կ'երգէ՛ անոյշ Աննուլան՝
Եւ պիտ' երեւի, Յընծութեան կըղզին՝ ո՛ւր որ ալ ըլլայ...:

ԾՈՎՈՒ ԶԱՅՆԵՐ

Հո'ս են ժայռերը թախծասուզ՝ որոնց վըրայ կը թողբողին
Լոկ շրէզներ: Ու այստեղ է ծովափունքն ալ, ահաւասիկ,
Ուր ճնճղուկները միմիայն կը թեւածեն ու կը շըրջին
Զրմեռնային արեւուն մէջ, դանդաղօրէն, յուշիկ-յուշիկ:

Հո'ս են նաեւ, պատըշգամները խարխըլած ու փայտաշէն
Պսակներովը Մայիսի՛ որ վար կախուած են թարշամած,
Եւ երդիքները սեւաթոյր, բակերը՝ մո՛ւնջ յաւերժօրէն
Ու տնակներն ալ վայրահակ ու վըշտահար ու մըթամած:

Ալեւոր, հո'ս են նաւորդներն, որ՝ շատ տեսան փոթորիկներ,
Բայց, հալումաշ կապաներով՝ կորաքամա՛կ հիմա կ'երթան,
Հո'ս են նաեւ հին աղուորներն, պառաւացած ու ալեհեր,
Հո'ս, մեր կեանքերը պարմանի, հոս մեր սէրերն ալ ցիրուցան:

ԲԵՐՐՈՍ ՎԼԱՍԹՐՈՍ

Ծնած է Հնդկաստանի Կալիպա քաղաքին մէջ 1874-ին: Աթէնքի մէջ իրաւագիտութիւն ուսանելէ վերջ, կրկին անցած է Հնդկաստան, առեւտրական հաստատութեան մը վարիչի պաշտօնով: Հրասարակած է քերթուածներու երկու հատորներ «Կեանքի Երգերը» եւ «Արդօ», ինչպէս նաեւ «Թագնիի Շաւիին Տակ» պատկերածներու հաւաքածոն եւ ճամբորդական ճոխ նկարագրականներ: Վլասթրոս պաշտօնած ու հրասարակած է նաեւ հովանիւններու ստուար բողոքացան մը:

ՍԻՐՈՅ ԳԻՒՂԸ

Կը կամարուի մը թընշաղն՝ փողոցներուն վրայ գիւղին,
Ու կը մը թննն շարէ շար, ահա՛ սեմերն հիւղերուն:
Կենդանիներն կը լնան բակերն, ու շուրջն աղբիւրին՝
Իրենց կուժերը շարած, աղջիկները կը զբօսնուն:

Ցանկապատին վրայէն՝ թըզենիին կը ցըցուին
Ցանցառացած տերեւներն: Ոսկիափայլ որթերուն
Մէջ սեղմըւած բաղեղներն կը կարմրին: Խազմուղին
Խունկն օղին մէջ կը լեցուի՝ հընծաններէն հեռամոյն:

Հա՛ց կը հանեն փուռէն տեղ մը: Սալարկուած ճամբուն վրայ
Քօշ մը նըստած կ'որոճայ ու կը նայի քովընտի.
Հանդերուն ու հընծըւած հովիտներուն մէջ հիմա՛

Կը կուտակուին սրաներն ոսկիի՛ պէս ու սաթի:
Ու կը յիշէ անցորդին հոգին՝ ե՛րբ մը հընամեայ,
Ձի ախալիսի գիւղի մէջ կ'ապրէր սիրոյ իր բոյնն ալ:

Մ Օ Ր Ս

Կը հիւսէր մայրըս կըբաժ պատուհանին առընթեր,
Դուրսը՝ անձրեւ կը մաղէր, դաշտերուն վրայ թաւազեղ,
Յանկորմերո՞ւն ալ խոնաւ: Գարնան աչքերը բիւրեղ՝
Կ'արտասուէին ժրպտելով, մինչ՝ յուլօրէն կը հոսէր

Դաշարուտին վրայ հողին՝ արտասուքը կուսական:
Մեր պարտէզին քովն ի վեր, կաղամախի մը արծաթ
Սաղարթներն իր կը լարէր եւ կայլակները հատ-հատ
Տերեւներու սանդուղները սահելով, դիւթական,

Կ'իջնէին վար, երգելէն: Աղօտախայլ, սուգուելէն
Մայրամուտն ե՞տ կը նայէր ճաճանչումովն իր վերջին
Ժիւղերուն վրայ վառելով՝ կայծեր դողդոջ ու ջրնջին:

Կարծես չորս դին ըարութի՛ւն մը կը ծլփար քաղցրօրէն,
Ձեռագործն իր ծրգեց մայրս ու կանգնեցաւ լրսելու՝
Անձրեւաթու՛րմ, զով կեանքի դալալումները աղու:



Մ Ա Յ Ր Ի Ն

Մեր ծեր մայրին, կը յիշե՛մ, ամէն ամառ կ'ունենար
Տաղասացներ շատախօս: Խօլ ճըպուռներն, օրն ի բուն,
Կ'աղմըկէի՛ն ճիւղերուն վըրայ անոր արեւառ:
Կը բուրէի՛ն Թանձրախիտ խէժին շիթերը կիզուն:

Կ'երթեւեկէր կախօրրա՛նը կըշոռյթով մը խելառ,
Հափտ ճիւղերուն ընդմէջէն: Կատարէն՝ մէ՛կը Թաքուն,
Անծրելի պէս, անընդհատ, կոնգոմեեր վա՛ր կը տեղար:
Կը դարձնէինք մենք անդին, խորունկ հորին ճրոընչուն

Ճահարա՛կը՝ խըմելու համար ջրըի՛կ զովարար:
Սակայն, Ծաղի՛կ, ջրհորին հայելիին վրայ ծրոած
Այդպէս ինչո՞ւ կը դիտես անուշիկ դէմքըդ պայծառ:

Դէ՛հ, վազէ: Տե՛ս. գընդակը հո՛ն, մուրտերուն մէջ գընաց,
Վազէ՛, քեզի չըհասնին: Վազէ՛, տեսնեմ, հիանա՛մ՝
Քու անվըթ՝ար մարմինին գեղեցկութեան առնական:

ՍՈՔՐԻՒՍ ՍՔԻՖԻՍ

Բանաստեղծ, արձակագիր եւ քառերգիւր: Ծնած է Լարի ա 1881 ին: Հրատարակած է ռուս յիսուն հափոններ, որոնց մեծագոյն մասը քերթողութիւններ են: Սքիփիս մէկն է այն սակաւաթիւ հեղինակներէն՝ որոնք միջազգային հռչակ ունին եւ որոնց գործերը քարգմանուած են Եւրոպական մէկ քանի լեզուներու: Սքիփիս իր մայրենի լեզուին հաւասար չափով տիրացած ըլլալով հաշիւ ժողովներէն՝ այդ լեզուով գրած է մէկ քանի հիպոթեզական եւ ուսումնասիրական գործեր: Յունարէնի քարգմանած է Օմար Խայամի «Ռուպայաթներ»ը:

Մէկ քանի տարիէ ի վեր Սքիփիս բնակուած է անգամ Աթէնք, Ակադեմիին:

ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ

*Դեղեցկութիւն, գեղեցկութիւն: Բիչ առ քիչ
Ի՞նչ փոյթ կեանքիս թէ շիջեցան տեսիլներ:
Դուն յաւիտեան պիտի գերթ ա՛ստղ ըսիտիիչ՝
Խաւարին մէջ հոգւոյս՝ շողա՛ս ոսկեհեր:*

*Ո՛վ դիցուհին իմ աշխարհիս: Պիտ՝ անմահ
Դաշնակութիւն ըլլայ խորհուրդդ յաւիտեան:
Ո՛ւր որ շքնէ՛ մարմարին կեանք պիտի տայ,
Եւ երգին ալ՝ տայ սոխակնե՛ր մոգական:*

*Ո՛վ դիցուհին իմ աշխարհին: Դասթաւեան
Աղբիւր է կրօնքդ, հետեւորդներդ՝ դարերու
Ընտրանիներն որ պիտ՝ ծառան իրենց գուն՝
Դեղեցկութիւն, միայն քեզմո՛վ մարեալու:*

*Ո՛վ դիցուհին իմ աշխարհին: Անհանդարտ
Զգացումն իմ սորվեցուր ինձ քաղցրացնել՝
Եւ հանդերձել ցաւս ըզգեստով ոսկեզարդ,
Եւ անթառամ քեզի երգե՛ր յօրինել:*

ԳԵՏԵՄ ՔԱՂԱՔ ՄԸ

Գիտեմ քաղաք մը կախարդուած
 Զոր տեսած չեն մարդու աչքեր:
 Գիտեմ քաղաք մը կախարդուած՝
 Պալատներով զըմրուխտայեռ:

Գիտեմ քաղաք մը ցընորքի
 Ուր թըռչուններ կ'երգեն կապոյտ,
 Կը փրչէ հով մ'հոն գարնայնի,
 Զուենի՜ վիշտեր ու ցաւեր մուծ:

Գիտեմ քաղաք մ'երջանկալի
 — Ոչ որ գիտէ թէ ո՞ւր է ան —
 Անժառանգնե՛րն այս աշխարհի
 Կը բռնակին այնտեղ միայն:

Անվերջ համբոյր մ'է առաջին
 Սիրոյ, անոնք ջինջ կեանքն համայն,
 Երազագեղ այդ քաղաքին
 Մէ՛րն է Աստուած եւ պահապան:

Գիտեմ քաղաք մ'անդրերկրական:
 Զոր հիմնեց միտքն իմ խորագէտ,
 Եւ պիտի օր մ'ալ թաղուի ան՝
 Գերեզմանիս մէջ, ինծի՛ հետ:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԱՐԵՒԱՄՈՒՅ

Օրուան գործերէն յոգնած ու նրկուն,
 Իրենց սեմերուն վըրայ նըստեր են՝
 Գաղթակա՛ն կիներ — ըստուերնե՛ր տըժգոյն —
 Բերուած՝ ո՞վ գիտէ ո՞ր տըխուր երկրէն:

Կը խօսին յուշերն անցած օրերուն,
 Օրընլով գլուխներն իրենց ցաւակոծ,
 Յետոյ՝ կը լըռե՛ն արցունքն աչքերնուն:
 Ա՛հ, ո՛րքան է խոր լըռութիւնն անոնց՝

Կը մայրամրտի աշնային օրուան
 Արեգակն երբոր, ծո՛ւլ եւ անվըրդով,
 Եւ Սարոնիկի խորերէն, բուրեա՛ն
 Կը փըչէ հովիկն՝ անհո՛ւն կարօտով:

Ի Ն Ծ Ի Ը Ս Ի Ր

Ինծի ըսիր, թէ՛ հայրենիքդ ամենա՛յն.
 Ամենայն տեղ է, ե՛ւ Հարաւ եւ Հիւսիս,
 Եւ Արեւելք ու Արեւմուտք: Մի՛միայն
 Բաւ է, որ դուն բընութեան մօ՛տ զըտնըւիս:

Բաւ է, որ դէմդ ըլլան ծառեր զալարուն,
 Եւ թըռչուններ քեզի երգե՛ր մընջերգեն.
 Եւ հովիկներ քաղցրաքընքուշ ու բուրուն՝
 Պարմանութեանդ օնոու, ողջո՞յնը բերեն:

Բաւա՛կան է, որ գերթ կանթեղ, մէջդ անմար
 Սըրտիդ տրտիները ունենաս միայն դուն:
 Ինծի ըսիր թէ՛ հայրենի՛քդ՝ արփափառ
 Են պարտէզնե՛րն, են պարտէզնե՛րը համբուն:

ԱՆՅՈՒՍՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԵԱՆՔԻ ՀՈ՛ԳԸ ԵՐԲՈՐ...

Անյուսուծիւնն ու կեանքի հո՛գը երբոր
Կը կաշկանդեն յամառօրէն յաճախ զիս՝
Ո՛վ Քերթուծիւն քեզի՛ կու գամ անմոլոր,
Դուն անոյշ բոցն ու զովուծիւնն հոգիիս:

Բայց, չեմ ուզեր, որ ասկէ վերջ տաս ինծի
Ոչ մէկ խոստում, արվոր էիր ինչպէս դուն
Երիտասարդ իմ օրերուն, որ մոմի՛
Պէս հալեցան պաշտամունքիս մէջ անհուն:

Քեզ կը սիրեմ, ի՛նչպէս որ ես, դաւաճա՛ն
Այլ մըշտապէս շրքեղագեղ ճակտի գիր.
Դո՛ւն ակնաղբիւրն իմ ցաւերուն տեւական,
Եւ հըրճուանքին իմ վաղանցիկ ու պատիր:

Դուն՝ եթէ ծո՛վն ես որ տարիր քու վայրագ
Ալիքներուդ յորձանքին մէջ իմ հոգին,
Անդորրածուփ եղիր ափո՛ւնքը հիմակ.
Ուր նաւաբեկ՝ բերեմ քեզ շո՛ւնչս ալ յետին:

Գ Ր Ո Ւ Ա Մ Է

Գիտե՛մ: Գըրուա՛ծ է որ քաղաքն իյնայ:
Ոսոխներն անոր այնքա՛ն են հըզօր՝
Որ, ^{այ} ոչի՛նչ անոնց այլեւրս կըրնայ
Կասեցնել խըրոխտ խոյանքն ահաւոր:

Բայց, հաւատարիմ իմ փոքր ուժերով,
— Ճակատագրորուած արքա՛ն իր վերջին —
Պիտի իմ սըրտին ամբո՛ղջ կորուվով
Ես պաշտպանեմ զայն հարուածէն վատին:

Վասընզի՛ հա՛րկ է, որ մահովն իմին
 Հիւսուի վիպերգը պերճ ու գեղեցիկ,
 Որ երգը դառնայ գալոց սերունդին
 Եւ մեկնակէտը՝ արշաւին գալիք:

Այսպէս. ունենամ պիտի սփռիք ես,
 Մինչեւ շունչս յետին, թէ՛ գաղափարիս
 Քաղաքն անձկալի, պիտ՝ առաջուան պէս,
 Կանգնի վերըստին, շրթե՛ղ, հըմայի՛չ:

Ճ Ա Մ Բ Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն

Մտածումս է թախծատրխուր՝ շոգենաւի սոււոցին պէս,
 Եւ տենչերս ալ՝ ճիչերուն պէս կառաշարին վիթխարհակայ.
 Ռունգերուն մէջ քարափունքի ունիմ խըռի՛ւ բոյրերը ես
 Եւ աչքերուս մէջ յար օտա՛ր կայարանի պատկերը կայ:

Ես ո՛րքան կեանք ըսպառեցի անծայն անտե՛ղ ըսպասելով,
 Սակայն, կ'ըղծամ որ շոգեկառք եւ կամ ալ նա՛ւ մը գայ նորէն
 Եւ զիս առնէ, ու տանի զիս դէպի քաղաք մը հեռաթով
 Որ դէմս իբրեւ գիրք մ'անծանօթ պիտի բացուի՝ յանկարծօրէն:

Պիտի շրջիմ ես միայնակ փողոցներուն մէջ հընամեայ,
 Նայուածքներըս լողան պիտի պատկերներու մէջ նորանոր,
 Հրապարակին վըրայ երգիչ մ'երգէ պիտի հոգեհրմայ
 Եղանակներ եւ ունկընդրեն գայն պիտ՝ կիներ գեղաշընորհ:

Եւ իրիկուան, զըտնել երթամ պիտ՝ զինետան մէջ, բարեկամ
 Նաւազներն որ ճանչցայ ուրիշ երկիրներու մէջ ատենով.
 Ու կուլ տալով զինին՝ ես հոն պիտի անոնց կախարդական
 Ճամբորդութեանց մըտիկ ընեմ, պատմութիւնները ժամերով:

ՄԵՐ ՀԻՆ ԽՈՐՇԻՆ ՄԷՋ

Հին օրերու մեր սիրելի խորշին մէջ՝
Նոյեմբերեան յետ-միջօրէ մը ցըրտին,
Ապակիէն կը դիտէինք դուն ու ես
Լոյսը դալուկ ու տերեւնե՛րը դեղին:

Կը յառէիր աւելի՛ ա՛յքրդ սակայն,
Մագերուս՝ որ, կը սկսէին ճերմըկնալ.
Եւ առաջին հեղ ըլլալով միմիայն,
Կը տեսնէի ճակտիդ կընճիւրը ես ալ:

Դուն չուզեցիր որ խորհուրդներըս թաքուն
Յայտնեմ քեզի, եւ ո՛չ ալ ե՛ս ժպտահեցայ
Լըսել պատճա՛ռը թախիծին քու անհուն
Որ, յանկարծոյն տարածուեցաւ դէմքիդ վրայ:

Մինչեւ որ մո՛ւլթը մեզ պատեց վերջապէս
Ու չըկրցանք տեսնել այլեւս մենք իրար
Արցունքներն, որ կը հոսէին դառնակէզ՝
Մեր վաղամեռ պարմանութեանը համար:

Թ Ի Թ Ե Ռ Ն Ե Ր

Կը վերյիշեն, ձիւնանման
Հոգիները մեռելոց,
Երկիրն՝ ուր մերթ ապրեցան՝
Բուրումնաւէտ զերթ ծաղկոց:

Եւ գարունին, վերերէն
Երբ կը տեսնեն զայն ծաղկած,
Կ'առնեն թեւեր ու կ'իջնեն՝
Իրերուն վրայ պաշտըւած:

Ու կը թառի՞ն, կը թեւե՞ն,
Ծաղկէ ծաղիկ գունաթով,
Եւ անոնց հետ կը զրուցեն
Թաւազքընքուշ բարբառով:

Եւ կը վազեն, կը խաղա՞ն
Ձերթ խելագար աղջնակներ.
Մեռելներուն ծիւնանման
Հոգիները — թիթեռներն:

NEGATIO ET IN SOMNIO

Երէկ, եկա՞ր երազիս մէջ
Եւ ըսիր, մա՞յր,
Թէ ա՛լ օտար արիւնքներէն
Վերադարձար:

Վազեցի քեզ դիմաւորել
Ծովափունքին.
Եւ առաջուան պէս զըրկի՞դ մէջ
Իյնալ կըրկին:

Բայց, ամայի զըտայ արիւնքն
Ու ալիքն ալ,
Եւ բրնձի դամբաններո՞ւն
Տանող ճամբան:

Երէկ, եկա՞ր երազիս մէջ
Եւ ըսիր, մա՞յր,
Թէ դուն օտար արիւնքներէն
Ետ չըդարձա՞ր:

Գ Ի Ն Ե Տ Ո Ւ Ն

(ՀԱՏՈՒԱԾ)

Գինետունին մէջ հասարակ, տախտակաշէն,
Զոր Հայազգի մը կանգնեցուց, կը հաւաքուին
Ամէն իրկուն գաղթականներն ու կը խըմեն.
Որ սըրտերուն դառնութիւնները փարատին:

Ամէն մէկ խումբ, կարծես, թէ մէկ գիւղը կ'ըլլայ,
Արեւելքից ո'վ արեւելք կախարդական,
Ա՛հ, այս իրկուն նորէն անոյշ ո'վ պիտ' կըսկծայ
Սիրտ ծակծկող ծայնով՝ կարօտը անդարման:

.

Ո'վ ալ ըլլայ սակայն — այդ դո՛ւն ըլլաս պիտի
Սիրաթրթիռ ու հեռասոյգ ո՛վ արծազանգ,
Բընաջընջուած ու մոխրացած Փոքր-Ասիայի
Որ, չըմարի՞ս պիտ' երբեք ո'չ մէկ ժամանակ:

.

Ի՞նչ փոյթ ճիւղերը կայծակէն եթէ յանկարծ
Կրտորուեցան ու այրելով մոխի՞ր դարձան
Թէ՛ վըրայէդ փոթորիկներ անցան կատղած
Եւ աւելի՞ մեծ չարիքներ թէ քեզ հասան:

Յաւերժակեաց ո'վ ծառ, արմատը անսահման
Խորութեանց մէջ է մըխըրճուած ու պիտ' նորէն
Ծըլարծակուին ու տարածուին ճիւղերդ համայն
Առաջուրէն աւելի ե՛ւս ըմբոստօրէն:

.

ԵՐԱՆԻ՛ ԿՈՒ ՏԱՍ

Երանի՛ր կու տամ անոնց՝ որ կըրցան
 Շըրջելէ յետոյ երկիրներ օտար,
 Ողիսեւսի պէս, օր մ՞հայրենական
 Դառնալ տեղն իրենց ու կարօտավառ,

Հեռուէն տեսնել անո՞յշ ծրխանին
 Ծըխանքն՝ ու թափել վրճիտ արցունքներ.
 Կը սպասէր իրենց՝ հաւատարիմ կին,
 Մանչուկ մ՞ու նաեւ՝ հա՛յր մը ալիհներ:

Ո՛չ ոք կը սպասէ քու վերադարձին,
 Եւ տունըդ ալիւս թափո՞ւր է, անտէր:
 Ոմանք՝ մահացան, ուրիշներ՝ զացին,
 Եւ ուրիշներ ալ՝ դարձըդ չե՛ն ուզեր:

Բայց, ի՞նչ փոյթ: Մի՛շտ ալ, ալիտ՝ կըզգիիդ մէջ
 Դըտնըլի՛ տաճար մը Ապողոնի.
 Դընա եւ խընդրէ՛, եթէ կը կարծես
 Թէ քրնարահա՛յր մըն ես արժանի՛:

ՍՔԵՖԱՆՈՍ ՏԱՖՆԻՍ

Իձևն անուանով՝ Թրապիզուլոս Զոյեոբուլոս: Ծնած է 1882-ին Արդուսի մէջ: Երկուր տսեն եղած է մաթեմաթիկի ուսուցիչ եւ Ազգային Մասենա-դարանի գիւմնասպէս: Գրած է բանաստեղծութիւն, պատմութիւն, քաղաքա-թիւն եւ պատմական ուսումնասիրութիւն: Հրատարակած է հերթումներու երկու հատորներ «Ծաղկաւէ Ճամբան» ու «Բաց Պատահանք»: Այս երկու հատորներէն դուրս ունի բաւական անսխալ հերթումներ եւ բարգմանու-թիւններ՝ մասնաւորաբար Գեորգիան, Շուէս եւ Իսպանացի բանաստեղծներէ:

Մեռաւ՝ 1946-ին:

ՎԱՅՐԻ ՍԱՐԲԻՆԱՅ

*Ուռին ի վեր մագլեցար, ո՛վ սարբինայ ծաղկավառ,
Եւ կը խըմես լոյսն այգուն, գերեքջանի՞ր ու խելառ.
Մինչ՝ հիւսկէններդ կը կախուին դէպի գետին, շնորհագեղ,
Բուրումնաւէտ ու շրջեղ
Որպէս վարսեր կուտական:*

*Դրդեակին մէջ փրլատա՛կ՝ դուն կը մընաս միայնիկ
Որպէս նըշանը անցած ժամանակին երջանիկ.
Երբ՝ ըստուերիդ տակ խօսքեր կը լսէիր սիրաջնր
Եւ ուր, հիմակ՝ ա՛լ իջեր
Է լըռութի՛նը մահուան:*

*Ո՛վ սարբինայ, որ փարած ուռնիին կ'ելլես վեր՝
Ապրէ՛ եւ բոյրդ արծակէ հովիկին մէջ այգաբեր.
Եւ, հոս եղիր միշտ հոգի՛ն այն աղուորէն սիրական՝
Որ գերթ ծաղիկ մ'իբրտկան
Խամրած՝ իջա՛ւ գերեզման....:*

ՀՈՂՄԱՂԱՅՆԵՐ

Լեռնակատարի մը վըրայ՝ հըսկայ երեք հողմաղաց
Կը թափահարեն, օդին մէջ, թեւերն իրենց անդադար.
Կարծես, երկինքին անհունութեան մէջ են անոնք կեցած
Եւ ըստուերն իրենց՝ կը ծըփայ մինչեւ նաւակայքն ի վար:

Եւ երբոր կ'իջնէ անոյշ երեկոն հորիզոններէն՝
Մըրըրկահաւերն ալ կը թեւթափեն շուրջն անոնց թեթեւ,
Մըթընշաղին մէջ, մարմիններն անոնց գորշ գոյներ կ'առնեն,
Եւ կը նըմանին աշտարակներու՝ մոգուած, ծանրահեւ,

Ուր կ'երթեւեկեն ուրուականներու պէս ծիւնասպիտակ
Աղօրեականներն, փո'վը՝ կը փըչէ եւ անոնց թըրթոռն
Թեւերուն կու տայ սարսուռներ՝ որոնք կ'ահի՛ն շարունակ:

Կ'աղօթեն երբեմն, իբրեւ բազուկներ երկինք կարկառուն,
Հայցելով ըսփփի, հայցելով անդորր՝ խո'ր եւ ըարերար,
Եւ մերթ ալ, այնպէս անյոյս եւ անուժ՝ կ'իյնա՛ն դէպի վար:

Ե Ր Գ Ե Ր

Մարմինէդ վար սահեցաւ նըրբահիւս քօղը յանկարծ,
Ու դուն պահիկ մը այսպէս ժայռին եզերքը կեցար,
Ապա, ջուրերն յուզուեցան, ընդունեցին գնդապանծ
Երբ մերկ մարմինդ կուսական՝ իրենց ծոցին մէջ պայծառ:

Եւ արեգակն, որ կ'երթար դէպ մայրամուտ, տըրտմօրէն,
Երբ քեզ տե՛սաւ՝ ապշեցաւ եւ ըզգաց խինդ մ'այնքան խոր՝
Որ կանգ տռաւ, ետ վանեց թանձրը ամպերը ամէն
Եւ վարդերով իր վերջին՝ ներկեց ջուրե՛րը անդորր:

ԱՂԲԱՏԻՆ ՅՈՒՂԱՐԿԸ

Իրիկնաժամ՝ անծրեւէն վերջ: Տըրտմութիւնը աշնանային՝
Ամբողջ երկիրն է ոռոգած արցունքներովը երկինքին:
Եւ բարձրերէն կախուած ամպերն՝ շրդարշներու կը նըմանին:

Հեռակորոյս եւ փալփրլուն համբէն հիմա դէպ՝ գերեզման
Աղբատիկ կի՛ն մը կը տանին, դանդաղաբայլ ու տըրտմական:
Քունն անոր քաղցր ըլլայ պիտի՝ այս իրիկուն, առջի՛ անգամ:

Անպահոյճ է յուղարկն անոր, պարզ մէկ դագաղ սիպտակաւուն,
Քահանայ մը աւելի՛ ծեր՝ իր սըքեմին մէջ քըլքըլուն:
Սըգակիրներ երեք որոնք՝ կը զըսպեն ժա՛յթըր ցաւերնուն:

Իրիկունը, անծրեւէն վերջ. թա՛ց է, խոնա՛ւ, սըրտերն են մոայլ.
Ուղեւորները կը դիտեն յուղարկը, լո՛ւռ եւ անայլայլ.
Եւ ծառերու ճիւղերէն վար՝ կը սկսին շիթերը ծա՛նր իյնալ:

Եւ մինչ սուգով ու լըռութեամբ անոնք դագաղը կը տանին,
Վարը՝ շուքերն իրենց նըրբին, կը տատանին վըրան մայթին,
Հոգիներուն նըսան որոնք՝ մեռելներու լի՛ճը կ'անցնին:

ՆԱՄԱԿ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆԿԵՐՈՋ ՄԸ

Ընկե՛ր,
Երգերն կը զըրուին սակաւաթի՛ւ բաներով.
Սեղան մը, ճի՛ւղ մը դալար՝ երկու փոքրիկ թրոչունով,
Երկու մեխակ կարմրավառ՝ բաժակի մէջ ու նաեւ
Քաղցրութիւնը գարունին, անոր թովչանքն արփահեւ.
Ըսպիտակ թուղթ՝ լոյսին դէմ բացուած սըրտի մը նման,
Ժանգի բուրմունք արտածող սեւաթոյր քիչ մը մեխան,
Ուրկէ՛ կաթիլ առ կաթիլ ըմպէ թրոչունը ծայրին.
Ու բան մըն ալ, Սէ՛րը-Սէ՛րն՝ ամբողջ սանդո՛ւղը ցաւին:

ԱՐՈՍԹՈՒՆՍ ՄԵԼԱԽԻՆՈՍ

Ծնած է Ռուսանիոյ Պրայլա քաղաքին մէջ 1883-ին: Դեռ երիտասարդ տարիքին անցած Պոլիս՝ ուր ապրած է մինչեւ 1922: Հրասարակած է ֆերբուածներու երեք հասարակութիւններու եւ հեղինակ հիմնադրողներու գործերէն թարգմանաւթիւններ: Խմբագրած է նաեւ «Կեանք» ու «Շրջանակ» պարբերաբերքեր:

ԷՐԻՖԻԼԻՒՍՈՒԵՐԸ

Ճակատին վըրայ, ըստուերներն յուշիկ կը խաղան ամէն
Իրիկնաւերջին, երբ հոն կը խոկայ սէ՛րն իմ անծկալի.
Բուրաստաններէն զայն կը խընկարկեն ծաղկունքն յուլօրէն
Եւ մարմըրելով կը հըծծեն ամէնքը — Էրիֆիլի՛:

Ու կը ծրփծրփա՛ն՝ ու կը դողդըղայ դալարն հեզօրէն
Յանգ ու կըշոյթի կախարդանքներէն քաղցր ու լուսաւէտ.
Եւ սոսափիւնը. մըրմունջն ու ճողփիւնը կը դաշներգեն.
— Ո՛վ Էրիֆիլի՛, եկուր, ա՛հ, եկուր խաղա՛լ մեզի հետ:

Զ Ա Յ Ն Դ

Զիս կը խըռովէ ծայնիկդ հեշտալար՝
Որպէս թէ սիրոտ տատրակի ըլլար:

Յուզի՛ւ է որպէս ջուլթակ թըրթըռուն,
Հեշտալի՛ որպէս մերկ մարմին բուրուն:

Կը խըլէ խոկերս ու զիս հիացիկ
Կը տանի ուրի՛շ ատեր գեղեցիկ:

Կը լըսեմ ծայնիդ թըրթիւր հեշտին՝
Որպէս գանգիւնը կորսուա՛ծ դըրախտին,

Որ այս թըմբիրին մէջ երանական՝
Կու գա՛յ, կը թափի բոյրի մը նըման,

Արեւելքի ծանր բոյրին պէս թովիչ.
Ըսէ՛.— Դինո՞վ եմ թէ՛ դո՛ւն կը խօսիս:

ԵՈՐԿՈՍ ԲԵԼԼԵՐԷՆ

Իսկական անունով՝ Խոբկիոս Հանիս: Ծնած է Եպիրոսի մէջ 1883-ին: Բանաստեղծ, գրագէտ եւ հրապարակագիր: Ասեմ մը բժշկութեան հետեւած ապա բոլորովին նուիրուած է հրապարակագրութեան: Լոյս բնծայած է «Անիծուած Մանեակը» տաւր եւ «Մասանիներ», «Մեղր եւ Թոյն» եւ «Հրաբուխներ» ֆերթագրքերը, ինչպէս նաեւ «Տէլի Օրման» դիւցազներգական ֆաբլակայր:

Հրատարակած է մամուլայէս բազմաթիւ պատմաւածներ՝ ներշնչուած Եպիրոսի ժամանակակից կեանքէն:

Կ՝ Ո Ւ Զ Ե՞ Ս

Այս հէք երկրի վըրայ կու տայ ամէն ոք ի՛նչ որ ունի:
Արեւուն քաղցր ու շողուն ջերմոյթը՝ լո՛յս ու բերկրանք.
Աստղերն իրենց անմեկին գեղեցկութիւնն ու հըմայք,
Հովիկը՝ կեանք եւ երկինքն՝ իր բարութի՛ւնը ծաւի:

Թըռչնիկը՝ ե՛րգ աղուալուր, ծաղիկը՝ բո՛յր խընկենի,
Փափկաբընքուշ դալարիքն իրենց դաշտերն ընդարձակ,
Ծառն՝ իր պըտուղն, պսրմանի կեանքը ժըպի՛տ անուշակ.
Թիթեռնիկն ալ՝ մետաքսէ շիրիմ, երբոր վախճանի:

Միմիայն ես, ով իմ սէր, ես՝ տալիք բա՛ն մը չունիմ.
Բացի սըրտէն այս այնքան բոցավառուած, հըրակէզ,
Որ կը վառի՛ ու կ'այրի, կէս գիշերին, աստղի պէս:

Կը յանդգնի՞ս հըրեղէն ու բոցեղէն իր ցանցին
Մէջ ինծի հետ շրջթայել թարմատի սի՛րտորդ, դուն ալ,
Կ'ուզե՞ս.— քայց ո՛չ, մի՛ ուզեր դուն ալ ինձ հետ մոխրանալ:

ՄԻՐՔԵՐԻՍԱ

Ծնած է Պոլիս 1883-ին: Բուն անունով՝ Թեոֆի Տրաֆարուս: Հրասարակած է «Երգեր» «Գեղին Բոցեր» «Սիրոյ Երգեր» եւ «Ճիչեր» բանաստեղծական հասարակներ, ինչպէս նաեւ դպրոցական արտասանութեանց երկու հասարակներ եւ Կոմսուհի Տր Նոայի բանաստեղծութեանց ու Եւրիպիտի «Մէսէա»ի բարգմանութիւններ:

Միւրքեքիսա իրաւամբ կր նկատուի Գունաստանի ապրող բանաստեղծուհիներէն մեծագոյնը եւ ամենէն օժտեալներէ:

ԿԸ ՍԻՐԵՄ ՔԵԶ...

*Կը սիրեմ քեզ, ուրիշ բան
Ալ չեմ կըրնար ըսել ես,
Աւելի պա՛րզ, անսահման,
Ու դեռ մեծ:*

*Ոտքերուդ տակ սիրական
Ես կը ծըգեմ իմ կեանքին,
Բազմաթերթ վարդն հոտեւան,
Ու անգին:*

*Ո՛վ իմ մեղուս, ծըծէ՛ դուն
Անկէ անոյշ եւ անքիծ
Բուրմուռնքները, անկշտո՛ւմ,
Հոգիի՛ս:*

*Երկու ձեռքերըս, ահա՛,
Ես կ'երկարեմ ագուցուած
Որ հանգչեցնեն անոնց վրայ.
Գլո՛ւխդ յոգնած:*

Նախանձակէզ սիրտս ալ տե՛ս,
 Կը թըպըրտայ ու ի՛նք ալ
 Կ'ուզէ, քեզի՛, անոնց պէս
 Բա՛րձ ըլլալ:

Իսկ մահճի տեղ փետուրէ՛
 Ամբո՛ղջ զի՛ս առ, սէր իմ, ա՛հ,
 Կըրակիդ բոցը մարէ՛
 Իմ վըրայ:

Մինչ՝ քովդ ի վեր ես լըսեմ
 Պիտի հոսի՛լը կեանքին
 Կըշռոյթովը լուսեղէն
 Դու սըրտին...

Կը սիրեմ քեզ, ի՞նչ կըրնամ
 Ո՛վ սիրական, ըսել ես՝
 Աւելի պարզ, անսահման
 Ու դեռ մեծ:

ՍԷ՞ՐՆ Է ԱՐԴԵՕՔ

Սէ՞րն է արդեօք, որ այսպէս,
 Ձիս կը մըղէ մըշտապէս
 Մըտերմութիւնդ ըղձալու.
 Որ, երբ կ'ըլլայ իրիկուն,
 Կը թափառիմ՝ լուսօծուն
 Պատուհաններդ տեսնելու:

Սէ՞րն է արդեօք լըռութիւնն
 Որ, տեսնելուս քեզ, իսկո՞յն,
 Շըրթներս ամուր կը փակէ.
 Որ, երբ մինա՞կ իսկ կ'ըլլամ
 Ժամերով լո՞ւռ կը մընամ,
 Տարուած անոյշ հիացքէ:

Սէ՞րն է արդեօք՝ թէ՞ աղէտ
 Հըրեշտակի մ'արփաւէտ
 Որ անցուցեր թեւեր,
 Ու կու գայ հեղ մ'ալ կըրկին
 Ընծաներով ծանրագին
 Զիս կախարդել, հըմայել:

Բայց, կ'ըղծամ ինչ ալ ըլլայ,
 Թո՞ղ չարիքն ալ բարո՞ւմ գայ
 Եթէ քեզմէ պիտի գայ.
 Ոտքերուդ տակ սիրասուն
 Մեռնիլն՝ ըլլայ գերագո՞յն
 Պիտի բարիքն ինձ համար:

Կ Ա Տ Ո Ւ Ի Ս

Հանդիպեցայ քեզի, օր մը ցըրտաշունչ
 Ու տըրտմաւէտ, հաւբու մը վրայ լայնաբաց.
 Փողոցային կատու մ'էիր անտէրունջ
 Երկու ոսկոր, աղուամագով թափթըւիած:

Եւ ես, որ հոն կը շըրջէի միայնակ
 Սիրտով մը ծանրը ու վիշտով աուրցուն,
 Փայփայեցի գորովագին քու կըռնակ,
 Ու քայլերուս հետեւեցար դուն իսկոյն:

Քեզ պահեցի, ով խեղճ: Միտքս էր քեզի տալ
 Սընունդ եւ ուժ, քեզ խրնամել, տալ անո՞ւն:
 Սակայն, երբեք չէի կրրնար հաւատալ՝
 Թէ մեծ ընկերս պիտ' ըլլայիր օր մը դուն:

Շուտով նդար տընակիս զա՛րդն իրական.
 Շրքեղ մուշտակ հագար, ճերմակ ծիւնի պէս.
 Ճամբորդութեանս ամարնային անբաժան
 Հաւատարիմ ընկերն էիր մըշտապէս:

Կը տաքցնէիր սենեակըս ցուրտ, եւ երբոր
 Զիս տեսնէիր սեղանիս դէմ գըլխահակ՝
 Թուղթերուս վրայ կը բազմէիր վեհանդորր
 Կարծես շիրիմ մը փակէիր դուն քու տակ:

Ե՞ս արդեօք քեզ կը պահէի թէ՞ դո՛ւն զիս,
 Կուգայիր հետս երազանքիս ամերրուն:
 Մերթ ալ, քեզի ըսած եմ, ո՞վ սիրելիս,
 Ինչ որ երբեք դեռ չեմ ըսած մարդերուն:

Ով իմ ընկերն առանձնութեան եւ միակ
 Ով պերճանքը դուն աղքատիկ իմ կեանքիս.
 Կը ջընջըլի, կ'անհետանայ ալ հիմակ
 Դեղեցկութեանդ ալ լըբութիւնն աղուագիծ:

Քեզ ըսպաննեց, վայ ինծի, մարդ մ'անօրէն,
 Ու ձեռուրներն այն ուր առին քեզ նըշան.
 Հրրացանով, շինուած էին Արարչէն
 Քեզ փայփայող զոյգ ձեռքերուն այս նըման:

Բոյն է դրրեր խայթը խըղճի՝ խորն հոգւոյս,
 Զի՛ ըսպաննիչդ է իմ եղբայրը, ան ալ:
 Եւ սակայն դուն, ազնիւ, բարի ո՞վ կատուս,
 Ներէ՛, ներէ՛, անասունին՝ մարդացեալ:

Իմին ծունկերը կը պահեն տակաւին
 Քու մարմինին ջերմութիւնն ու շոյանքներ.
 Եւ այն թեթեւ քու թաթիկներն, իմ կեանքին
 Մէջ ըսպիտակ իրենց հետքերն են ծըգեր....:



ՆԻՔՈՍ ԽԱՆԾԱՐԱՍ

Ծնած է Բիրեա 1884-ին: Հրապարակագիր եւ բանասէղծ: Հանդէսներու եւ օրաթերթերու մէջ գրած է բազմաթիւ նուրբ ու շնորհալի բանասէղծութիւններ, զորս մէկ փանի տարի առաջ ամփոփեց «Հովուերգանքներ» խորագրով հատորի մը մէջ:

Մեռաւ 1949-ին:

ՅԻՇՈՂՈՒՅԵԱՆՍ ՄԷՋ

Յիշողութեանըս մէջ թարշա՛մ, յո՛ււօրէն,
Յօղի կաթիլ մը կաթեցաւ, Հե՛ղինէ:

Պըզտիկ էիր, դաշտերուն մէջ ծաղկատես՝
Կը վախցնէին սագերը քեզ, կը յիշե՞ս:

Շուշանաթոյր ոտքէդ խածուած, արցունքո՛ւտ,
Կը յիշե՞ս, օր մը վազեցիր դուն իմ մօտ:

Ու կը յիշե՞ս փսկեփետուր այն աքլոր՝
Որ, կը խրէր ձեռքէդ հացի՛կդ ամէն օր:

Հեղինէ՛, ծա՛յն կը հանէիր ծիծառի,
Ի՞նչ յիշատակ շքնորհալի՛, հրնամի:

Կ'ԱՆՑՆԻ ԱՂՋԻԿԸ ՔԵՔԵԻՈՏՆ...

Կ'անցնի աղջիկը թեթեւոտն
Այգուն, դալար դաշտին մէջէն,
Ուր՝ կ'արածէ հովուիկն իր հօտն
Սիւսաւակաբուրդ, սրի՛նգ ածելէն:

Հայեացքով մը բոցե՛ղ, անո՛յշ՝
Ռդջրկան անցքը կը դիտէ,
Ու մեղմօրէն, իր նորաբոյս
Պեխին թելե՛րը կ'ոլորէ....:

ՍՊՐԻԼԻ ՁԻՆՁ ԱՅՆ ԱՅԳՈՒՆ

Անցքիս՝ ծորէն աղուագեղ
Ապրիլի ջինջ այն այգուն՝
Ջրգեցի ծա՛յնըս բիւրեղ,
Այերին մէջ մըշկօծուն:

Դաշտի ծաղկո՛ւնքն երգեցի,
Եւ թըռչուննե՛րը նաշխուն,
Ես գնաա՛կը երգեցի.
Իր ջըրերով արծըթուն:

Ու քրչիկ մը իմ բիւրեղ
Ցածցրնելով ապա ծայնն՝
Երգեցի քե՛զ ալ, այնտեղ
Գարնան առտուն, սիրակա՛ն:

ԷՄԻԼԻԱ ՍՔ. ՏԱՖՆԻ

Կողակիցը՝ բանաստեղծ Սթեֆանոս Տաճնիսի: Ծնած է Մարտէլլ: Ուսումը ստացած է Աթէնի մէջ եւ երկար ատեն ուսուցչութեամբ զբաղած: Գրել սկսած է շատ կանուխէն, 1901-ին: 1903-ին հրատարակած է իր բանաստեղծական առաջին հատորը, «Ոսկեծաղիկներ» խորագրով: 1922-ին հրատարակած է «Ոսկէ Բաժակներ» երգերածնեան հատորը Քոստիս Բալամասի յառաջաբանով: Գրած է նաեւ «Զմայրոյի Տաղանդը» եւ «Օտար երկիր» վէպերը եւ թատերական գործեր, որոնցմէ «Փա՛ռֆ Պարտաւածներուն»ը մրցանակի արժանացած է: Թարգմանած է Լեւկոսլաւ բանաստեղծներու գործերէն գեղեցիկ նմայեմեր:

Մեռաւ 1942-ին:

ՓՐՓՈՒՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

*Լերան վրայէն ծագեցաւ
Անդորրանքը լուսնակին,
Եւ հեղեղեց ծովուն վրայ՝
Ոսկեգետնե՛րն իր կըրկին:*

*Ու մեր սէրին հետ, մենք ալ,
Լոյսին դիմաց հրկնային,
Զիւն թեւեակներն օրրելով
Վճռամանդին մէջ ծովին՝*

*Պայծառ իզծե՛ր կը ցանենք,
Ու կ'որոնենք, աւա՛ղ, դեռ,
Փըրփուրներուն վըրայ ճերմակ՝
Վաղո՛ւց կորսուած նրագլներ:*

ՀԱՍԿԵՐՆ ՈՒ ՀՈՂԸ

(ԱՒԱՆԴՈՒՅԻՒՆ)

Պտրախորհուրդ պահերուն, երբոր աստղե'րը կու լան,
 Եւ սիրազեղ ըղծանքներ կը ծաւալին արտերէն,
 Հասկերն ամէն հակելով դէպի հողը, ծայն կու տան,
 — Մընաս բարո՞ւ, ո'ւ՛ր Մայրիկ, պիտի մարդիկ մեզ ուտե՞ն:

Անդորրաւէտ պահերուն, հովիկն երբոր կը փըչէ,
 Եւ շո՞ւնչ կու տայ ծառերուն, բուրմունք կ'առնէ շուշանէն,
 — Երթաք քարո՞ւ — կը հրծծէ Մայր Երկիրը — եւ կ'ըսէ՝
 Մարդի՛կ ուտեն պիտի ձեզ՝ զանոնք ալ՝ Ե՛ս պիտ' ուտեմ:

ԼՈՅՍ ԳԱՐՆԱՅԻՆ

Ամպերէն վար ա'յնքան խաւար՝
 Ա'յնքան թախիժ կը թորայ՝
 Որ, կարծես թէ՛ ահա', իսպա՞ռ
 Պիտ' հեւքն երկրէն չըքանայ:

Նորարողքոջ տերեւներն իսկ
 Կը դողան ա'յնքան տըժգոյն,
 Ո'րքան՝ սըրտին մէջ անոքիկ,
 Նորածին յոյսը մարդուն:

Լո՞յս գարնային, ա'հ, ցաթէ՛ դուն
 Հոգիիս մէջ տըխրամած,
 Ի՞նչ փոյթ եթէ ծառին զըլխուն՝
 Կայծակին պէ՛ս դուն ըլլաս:

ՔՈՆՍՔԱՆԹԻՆՈՍ ԱՔ. ՔՈՆՍՔԱՆԹԻՆԻՏԻՍ

Ծնած է Նիկասիդիա (Փոֆր Ասիա) եւ ուսումը ստացած Հայքի առեւտրական վաճառականին մէջ: Հրաստաւած է հայրենասիրական, սիրային եւ այլ բազմաթիւ բանաստեղծութիւններ, զորս ամփոփած է երկու հաւաքներու մէջ. մէկը՝ լոյս տեսած 1921-ին եւ միւսը՝ 1937-ին: Թարգմանած է Վիքթոր Հիւկայի «Արեւելեան» բանաստեղծութիւնները եւ Օսքր Ուայլսի «Ռիսինկի Բանաստեղծութիւններ»:

Քոնսքանքինիսիս (Գսենափիս) հին աւանդոյթ Հայաստան մըն է, որ հայաչինջ ջարդերու շրջանին շատ մը հայերու կեանքը փրկած է: «Հայաստանի» նախընտրած իր հետագայ տերթուածը, գրուած՝ 1920-ին, բանաստեղծը իր ձեռագրով տրամադրած է բարձրանիչին:

ՖՐԻՆԻԻ ԱՆՊԱՐՏԱՑՈՒՄԸ

*Եւ հրոնտորն — տիմոսթենեան ո'վ շարժում —
Պարեգոտին ճարմանդն յանկարծ կը քակէ՝
Ու կ'իյնայ լաթն, ալիքի պէս, ոտքերո՞ւն,
Ու փըրփրածին՝ Ֆրըրինին մե՞րկ կը յառնէ:*

*(Դատաւորաց ողիմպոսեան լըրջութիւնն՝
Կայծակ մը — մե'ղք ալեւորաց — կ'ակօսէ:
Անաղմուկ կայծ՝ որ կը մարի յանկարծոյն,
Զինջ երկնին մէջ): Արդեօք որո՞ւն բերանն է*

*Որ ձեր վըճոյն դէմ բարբառիլ պիտ' կրընար,
Գեղեցկի զոհ դատաւորնե՞ր Աթէնքի:
Աստուածութի՞ւն է այս մարմինն հրաշափառ*

*Անոր տեսքէն՝ կը թարմանան ծերերն իսկ,
Արծակեցէ՛ք: Զի՛ ժամանակը արդէն
Գեղեցկութիւնը կը պատժէ խըստօրէն:*

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Քամբա՛խտ երկիր, կը մոռնամ չարչարանքներն իմ ազգին՝
Մի՛միայն քո՛ւ ցաւին դէմ եւ քու անհո՛ւն տանջանքին:
Ձըյոգնեցաւ տակաւին անօրէն ծեռքն ոճրագար,
Ձըյագեցա՛ւ արիւնի ծարաւն՝ որ դուլ չի՛ ճանչնար:

Բագի՛ն ես դուն եւ դո՛ւն զոհ: Կ'աշտարակուին, կը փըրփրի՛ն,
Բոցերն, ու զերթ ողջակէզ՝ որդիքդ ահա, կը հալին:
Իսկ անոնք՝ որ նախճիրէն ճողոպրեցան, ա՛յի մ'հողի
Համար հիմա կը կըռուին իբր առիւծնե՛ր կատաղի:

Եւ ո՛չ իսկ ձայն Մեծերէն: Յաղթականները ո՞ւր են:
Ձըլլա՞յ մէկէն չըբացան այս աշխարհի երեսէն:
Ձըլլա՞յ դըժոխքի ընդեւըքն ժայթքած հրէջն աւերման
Վըժժխընդրութեան կուլ տըւաւ յանկարծ, գետերն հրահոսան:

Աչքերս՝ այպէ՛ս կը խըփեմ, կըսկիծէս սի՛րտըս կ'այրի...
Ֆլանտրի՛, Մարնի՛, Ը՛Սքրայի չէ՛ մեռած կամբը տրի,
Լոկ զանիկա կալուկապ կը պահէ ուժ մ'որ արծա՛կ
Կ'ուզէ, կարծես, ծեռուըներն հորդաներուն շարունակ:

Օրուան հզօրնե՛ր, փըրկեցէ՛ք դուք Հայաստանն անօրիկ
Եղերաբախտն օրհասին՝ չունի՛ նըզովք, նախատինք,
Միայն, մաղթանք մը նըլաղ կ'արտաբերեն շըրթունքն հեզ,
«Աստուածային զայրոյթը՛ վատին սուրէն պահէ՛ ձեզ...»:

ԱՆԿԵԼՈՍ ՍԻԿԵԼԻԱՆՈՍ

Ծնած է Լէվֆասա 1834-ին: Կարճ ասեմ մը հետեւած է համալսարանի իրաւագիտութեան ճիւղին: Համբողջած է բազմաթիւ երկիրներ: Հրատարակած է «Թերեւասուներ» «Նախաբան Կեանքին» (4հատոր) «Երգեր», «Հէլլեններու Զատիկը», «Զօն» փերթղագրֆերը եւ երկու տրամներ:

Վ Ե Ր Ե Լ Ք

Թեւերըս բաց կ'ելլեմ վեր, ահա', այգուն լոյսին մէջ
 Երանելի, վարդագոյն,
 Ծովուն անդորրն երկնային, զիս կը կանչէ որ երթամ
 Դէպի եթերն ասմագուն:

Բայց, օ՛, շունչերը երկրի յանկարծ վրրաս կը խուժեն
 Ու զիս ամբողջ կը ցնցեն.
 Օ՛, Զեւս, հասիր, ծա՛նր է ծովն ու մազերս ալ բարերու
 Պէս զիս անդո՛ւնս կը բաշեն:

Կիւմաթօէ, ո'վ Կլաւքէ, հովե'ր, եկէ՛ք բրոնցէք
 Զիս ուժգնօրէն անութէս,
 Զէի յուսար ես այսպէս յանկարծ ինքզինքըս գտնել
 Արեգակի գրրկին մէջ:

ՏԱՂ ԿՈՐՍՈՒԱԾ ՍԻՐՈՅ

Տըժգոյն արեգակ մը թըւեցար դուն
 Ու արշալոյս մը սըփռեցիր աղու,
 Սմպերուն մէջէն այն մըշուշագոյն՝
 Ուրկէ՛ մարմինը յայտնուած էր քու:

Ըսպիտակ թեւերդ բարձրացուցիր վեր,
 Թափահարեցիր զանոնք մեղմօրէն,
 — Որպէս թէ երա՛զ մ'ուզէիր վա՛նել —
 Ասլա, անոնց վրայ մազերդ ոսկեղէն

Հանգչեցուցիր դուն քաղցրիկ, անխրոհով,
 Եւ սակայն, փրչել չըսկսա՛ծ տակաւին,
 Աչքերէդ — երբոր փակեցիր զանոնք —
 Արդէն կաթիլներն ինկան առաջին.

Եւ թանձր ամպերն պատեցին երբոր
 Լըռու թիւնով մը ծանրածանր ու համր,
 Կորսըւեցար դուն, թափահարումովդ՝
 Առաջին կայծակը ծըզելով վար:



ՔՈՍՔԱՍ ՎԱՌՆԱԼԻՍ

Ծնած է Պուլկարիայ Պուրկազ բաղաժին մէջ 1884-ին: Աթէնքի համալսարանին մէջ հետեւած է գրականութեան հիւղին: Հրատարակած է «Իջիցներ» «Այբող Լոյս» եւ «Պաշարուած Ստուկներ» փերուածներու ռասերներ:

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԶԱՒԱԿՆԵՐ

Դինետունին մէջ զետնաւոր,
Ծուխերո՞ւ մէջ, ղայհուչներո՞ւ,
(Լաթեռնան վե՛րը կ'ոռնար կոր)
Կը խրմէինք երէկ իրկու.
Ամէն օրուան պէս խըմբովին,
Որ թոյները վար երթային:

Մին միւսին քով կը սեղմուէր.
Ու կը թըքնէր, մերթ ալ գետին.
Օ՛, այս կեանքի տանջանքը մեր
Ո՞րքան է մեծ ու ահագին:
Միտքը ո՛րքան ալ տանջուի՝
Զի յիշեր օ՛ր մը արեւի:

(Ով արեգակ, ծով կապուտակ
Եւ երկինքի խորք անսահման.
Ով այգային քող դեղնորակ
Ու մեխակներ վերջալուսեան,
Դուք կը շողաք, կ'անցնի՞ք անդարծ
Մեր սըրտերուն չըմօտեցած:)

Անդամալոյժ է, տաս տարի,
 — Ճիշտ ուրուական — հայրը մէկուն.
 Միւսին կինը՝ լո՛ւռ կը ծիւրի,
 — Թորախտաւոր — տան մէջ լըքուն:
 Մէկուն տրդան բանտ է նետուած՝
 Միւսին աղջիկն՝ ըոզնոց ինկած:

— Մերին չար բա՛խտն է յանցաւոր,
 — Աստուած է լոկ մեր թըշնամին.
 — Յանցաւորը՝ զլո՛ւխն է մեր չոր,
 — Եւ ամենէն առաջ գինին.
 «Մեղաւորն ո՞վ է, ո՞վ»: Դեռ մարդ
 Չըհասկըցա՛ւ ու չըսա՛ւ այդ:

Այսպէս, մըթին գինետան մէջ
 Միշտ կը խումենք մենք գըլխահակ,
 Ամէն կըրունկ ճըճիի պէս՝
 Կը կոխտէ՛ մեզ շարունակ.
 Ճակատագրի զաւակներ մենք՝
 Դուցէ, հրաշքի՛ մը կը սպասենք:

ՑԻԿԱՆԱԿԱՆ

Դաւիդ ուժգնօրէն հընչեցուր, ո՛վ քաջ տըղայ սըրարեւած:
 Զուռնայիդ վրայ կատաղի կը կապեմ շա՛ռ երիզներ,
 Կուրծքիդ ոսկի՛ կը փակցնեմ, ո՛վ պարուհի ջըլբեաց.
 Պորտըդ կըլո՛ւր կը դառնայ ու կը նետէ լանջդ ալ վեր՝
 Պըղընծափայլ մանեակներդ, ապարանջներդ հաստակուռ:
 Կախարդօրէն կը խաղան սեւ ու խոշոր քու աչքեր,
 Կը բերէ պարդ ալ յայրատ ցանկութիւնը ցայգաբոյր...:
 Թող չըբաղդի՛ն ծորելէ գինի խըռի՛ւ մեր պեխեր:
 Հէ՛յ, դո՛ւն, հայրիկ, բարձիս վրայ պիտի աղջիկդ այս գիշեր՝
 Ինծի պատմէ ցիկանի սիրատարիկ հէքեաթներ:

ՎԵՐՁԻՆ ՆԱՄԱԿ

Վերջին նամակդ սիրագորով,
 Որ կը թըրթռայ ահա իմ դէմ,
 Մաշեցուցե՛ր եմ շըրթներով,
 Համբուրելէ՛ն, համբուրելէ՛ն,

Առանց երբեք վախնալու որ,
 Թուղթի կտորին այդ, ով լո՛յս իմ,
 Պիտ' նախանծիս, լըսես երբոր՝
 Թէ տեղդ անո՛ր հետ կը խօսիմ:



ՔՈՍԹԱՍ ԱՔԱՆԱՍԻԱՏԻՍ

Գրական ծածկանունն է՝ Լաէրթիս Լարմիս: Ծնած է 1878-ին, Աթենք: Հանգստեան կոչուած դեր ծովակալ: Հրատարակած է «Մթնշաղի երգեր» եւ «Սիրային երգեր» գերթումներու հատորները, ինչպէս նաեւ «Թատերական երկեր» անունով հատոր մը, ուր ամփոփած է 1917-էն ի վեր գրած իր քատերգութիւնները:

Պարբերաբերքերու մէջ ունի վերոյիշեալ հատորներէն վերջ գրուած նոր բանաստեղծութիւններ եւ ուսումնասիրութիւններ եւ հրատարակութեան պատրաստ վեպ մը:

S P L E E N

Ամպամած եւ կինք, ո՛չ մէկ հեւք հովի.
Ոչ վայրի ծաղիկ ու ճիւղ մը ծաղկեալ.
Ոչ թրռչնոյ գեղգեղ, ո՛չ սըրինգ հովուի
Ոչ ա՛յլ մը զուլալ:

Լոկ ճահճին անծիր փրտոյթը կանաչ.
Կըքած ու դեղին մէկ քանի եղէգ,
Ո՛չ փըրփուր եւ ոչ ալ սարսուռ, մեռած՝
Ջուրերուն մէջ հեղգ:

Միայն՝ ագռաւ մը անծիր երկնին մէջ
Կը թափահարէ թեւերը իր սեւ
Եւ աննրպաւտակ կը շըրջի անվերջ՝
Ճահճին վերեւ:

ԱՇՏԱՐԱԿՆԵՐԸ

Պըզտիկ աղջիկն, աշտարակնէ՛ր կը շինէր
 Աւագին վրայ. բայց, երբ ալիքը կու գար՝
 Աղջնակին աշտարակները կ'աւլէր
 Ու կը տանէր իր յորձքին մէջ խելագար:

Մեծցա՛ւ աղջնակն եւ աւագին վրայ կեանքի
 Դեռ կը շինէ ու կը շինէ՛ր երազներ.
 Բայց, կը քանդէ զանոնք ալիքը կեանքի
 — Ամառնային գիշերի մը երազներ:



ՖՈՐՈՍ ԵՐՏԻԼԼԻՍ

Բուն անունով՝ Սքիրոս Մուսուրիս: Ծնած է Քորժու 1887 ին: Հրատարակած է ապսի մօտ բանաստեղծական հատորներ, վեպ մը, ինչպէս նաեւ պատմածներ ու բաներական գործեր: Եռլիլիս զբաղած է նաեւ հրապարակագրութեամբ եւ վարած «Բոլիթիզմոս» պարբերաբերթի խմբագրութիւնը:

Յ Ի Ի Ե Ր

Գրտայ թուղթերուս մէջէն դեղնոտած՝
Հընչեակը գըրուած տիկինին համար,
Որ այն ժամանակ աղջընակ մ'էր վառ
Տասնո՛ւրբ տարին՝ հազի՛ւ բոլորած:

Քսաներեւ տարի է անկէ անցած:
Աւելի՛ այո՛, պակաս՝ անհրնա՛ր:
Քառասունմեկնոց է այժմ անպատճառ:
Բայց, տառապա՞ծ է ան ո՞ր մը օրանց:

Անշուշտ, հիմա թարմ ըլլալու չէ ան,
Ո՛չ ալ դեռատի եւ ո՛չ թըրվըռուն:
Գուցէ, ծանրացած, եղած է լեցուն:

Բայց, դեռ ունենայ պիտ' բան մ'աղուսկան
Եւ ըսէ, «Բսանի՛նս՝ լըրացուցի նո՞ր»
Սակայն, գութ չունին թիւերը, մեղք ուր:

Պ Ե Ն Ե Լ Ո Պ Է

Պարտէզին մէջ, ծառերն բողբոջ, կը փըրփըրի՞ն.
Քաղցրանոյշ է հոփկն՝ հալած մեղրի պէս.
Ինծմէ բացի, գարնան տօ՞ն է բոլորին,
Ահաւո՞ր բան, ի՛սկապէս:

Տոկա՛, մարմին, «ոչ» մի՛ ըսեր տակաւին.
Ու տըղամարդը պիտի գայ գըրկել քեզ.
Մոռցի՞ր հրրայրքը դուն յայրատ: Անծրեւին
Պէս պիտի գայ վերջապէս:

Հիւսածս ամբողջ ես կը քակեմ անդադար.
Սակայն ը գուր կը թառամին ջուրերուն
Մէջ իմ գուռին, շառ շուշաններն յամրաբար,
Ըսպասելէն ըսպառուն:

Այնքան մարդոց վառ տենչանքները կը զգամ
Հըրայրքիս ինչ որ հարկ ըլլայ պիտ՝ գրտնեմ.
Եւ սակայն, սէրն ինչե՞ր կըրնայ: Ու կը մնամ՝
Հաւատարի՛մ: Կը սպասե՛մ:

ԱՅԱՆԱՍԻՈՍ ՔԻՐԻԱԶԻՍ

Ծնած է Ադրիանոսի մէջ 1888 ին: Աթէնքի համալսարանին մէջ օրէնսգիտութիւն ուսանելէ յետոյ, եղած է ելեւմտական նախարարութեան բարձրաստիճան պատճօնեայ: Հրատարակած է բերքուածներու մէկ բանի հատորներ, որոնցմէ կարեւորագոյններն են, «Հազարագոն», «Ապրուած Պաներ» եւ «Արեք Օձերուն Հետ»:

Խ Ա Յ Տ Օ Ն

Դաշտին մէջ խրախ կայ եւ տօն.
Ու նրւագներ կան այնտեղ.
Կը դարձնէ պա՛րը հայտոն՝
Որ ունի յօ՛ւր նրորագեղ:

Բոլոր աչքերը, անո՛ր
Կը յառին բո՛ւռն ըղձանքով.
Դիւզին սըրտերը բոլոր՝
Կ'այրին անոր կրրակով:

Սրբընգահարն ուզելով
Զըսպել արցունքը աչքին՝
Կը ծռէ զգակը մէկ քով՝
Եւ արբեցման վայրկեանին՝

Երեք անգամ յուսահատ
Կը հառաչէ թախծալիր.
Եւ թողլով պա՛րը կիսատ՝
Կը ջախջախէ սրբինդն իր:

ՈՒՌԵՆԻԻ ԲՈՒՆԻՆ ՎՐԱՅ

Ուռենիի բունին զըրուած՝
 Մեր անունները կողք-կողքի.
 Տեսէ՛ք, աչքի՞ր իմ արտասուած,
 «Իրկուն՝ Մայիս տասներկուքի»:

Կ'անցնին մարդիկ՝ ու կը կ'սրդան,
 Զոյգեր կ'անցնին՝ ու կանգ կ'առնեն.
 Ու զըրոյցի դուռ կը բանան.
 — Արդեօք որո՞նք էին — կ'ըսեն:

Եւ պատասխան կու տայ ուռին
 Պըզտիկ թրոչնոյ մը բերանով.
 — Անոնք մեռած մարդիկ էին՝
 Որ սիրեցին անհո՞ւն սիրով:

ՔՈՍԱՍ ՈՒՐԱՆԻՍ

Ծնած է Պալիս 1890-ին: Երկար ասեմ գրադած է հրապարակագրութեամբ, Աթէնք եւ Փարիզ: Իդած է Լիզպոնի եւ Մասրիսի հելլէն հիւպատոս: Հրատարակած է քերականներու երեք հատորներ, «Spleen», «Երազի Պէս» եւ «Կարօսներ» խորագրերով: Ունի հրատարակելի հատոր մը՝ «Մեկնումներ» անունով: Ուրանիս լոյս րնծայած է նաեւ համաբողական նկարագրականներ եւ ուսումնափութիւններ, ու քաղցմանութիւններ՝ օտար քանաստեղծներէ:

Ուրանիս մեծ ազդեցութիւն գործած է իր ժամանակակից սերունդին վրայ եւ վայելած բացառիկ ժողովրդականութիւն: Իր գործերը քաղցմանուած են Եւրոպական բազմաթիւ լէզուներու:

ԱՂՈԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ՝ ԲՈԼՈՐ ԴԺԲԱԽՏՆԵՐԸ ՀԱՆԳՍՏԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տէ՛ր իմ, թախծոտ ծրմեռուան այս գիշերին մէջ. երբոր Մըշտապարուն վայրերէդ հըրեշտակներդ բոլոր Օթեակներէն իրենց վա՛ր հակած՝ երկիրն կը դիտեն, եւ զայն ճերմակ վարդերու թերթիկներով կ'ողողեն, Անհունութեան մէջ երբ ան կը թաւալի լռելիայն, Այս գիշեր, Տէր իմ, երբոր վայրագ հողմերը կ'ոռնան Դամբանավտար, մեղապարտ հոգիներուն պէս վըհատ, Խորհէ՛ ամէն անոնց՝ որ մահիճներու մէջ աղքատ կը բնանան որպէսզի վերկազդուրուին ու տոկան՝ Տակաւին վա՛ղն ալ, աւա՛ղ, իրենց ցաւին հրէկուան:

Տէ՛ր, մարդկային սի՛րտ առ պահ մ՞ու մըտածէ դուն առաջ՝ Քերթողներո՞ւն ալեւոր, որոնք կ'ապրին անտեսուած, Զի՛ փառքն երբեք չըբախեց անոնց դրոններն աւերակ. Խորհէ՛ անոնց՝ որ խոնաւ խուցերու մէջ ինքնաւիակ Կանգնեցընեւ կը ճըգնին կը տապալէ կեանքն ինչ որ.

Խորհէ անոնց՝ որ յոգնած են յուսալէ, լուսաւոր
 Վաղուան գալուն, որ գիտեն թէ ալ չգա՞յ, պիտ' չըգայ:
 Խորհէ անոնց՝ որ տրգեղ են, ծաղրանքի՞ ենթակայ.
 Մարդոցմէ միշտ ծանակուած՝ տըխմարներո՞ւն այն անչար,
 Հիւանդներուն՝ յար մեռնող, սակայն ապրող մըշտաբար.
 Աղջիկներուն՝ որ մեզի հաճոյ բաները չունին
 Անոնց՝ որ միշտ կը տանջուին՝ որ ուրիշները հանգչին.
 Բարիներուն, հեզերուն, հէք մարդերուն հալածուած
 Որ արտասուել չեն կորնար՝ զի՞ արդէն շա՞տ են լացած:
 Տէ՛ր իմ, խորհէ՛ անոնց որ, դատապարտուած են այստեղ
 Խոնարհելո՞ւ, սողալու եւ ցաւելու, յուսազեղ
 Տաճարներուդ մէջ առանց կարենալու թեթեւնալ.
 Զի՛ խեղճուկ ծայնը անոնց, Տէ՛ր իմ, այնքա՛ն է տըկար
 Եւ բա՛րձր է, բա՛րձր է այնքան՝ քու զահոյքդ ալ ոսկեփառ:
 Տէ՛ր իմ, խորհէ անոնց որ՝ կը տըլայտին անպատճա՛ռ,
 Եւ իբր հատոյց, դուն անոնց երջանկութիւնը մի՛ տար,
 Ահ, այդ բաւ չէ փոխարէն անոնց անհո՞ւն տանջանքին.
 Այլ՝ այս գիշեր քունին մէջ երբ աչուընին փակեցին
 Թոյլ տուր որ նե՛րս մըտնէ Մահն անոնց խեղճուկ տուններէն
 Այնպէս հանդարտ ու յուշիկ՝ որ չարթըննան քայլերէն:
 Եւ հակելով անոնց վրայ, քըրոջ նըման — ո՛չ մօր պէս.
 Զի՛ կը գըրկէ մայր մ' ուժգին, անյուսութեամբ աղեկէզ —
 Զանոնք իրենց թարշամած շըրթունքներէն համբուրէ
 Եւ համբոյրով այդ՝ անոնց Տէ՛ր. թող շունչերը խըլէ...:

Տէ՛ր իմ, թախծոտ ծրմնողան աս զիշերին մէջ, երբոր
 Մըշտագառուն վայրերէդ հըրեշտակներդ բոլոր
 Օթեակներէն իրենց վա՛ր հակած երկիրն կը դիտեն.
 Եւ զայն ներմակ վարդերու թերթիկներով կ'ողողեն՝
 Դըրախտիդ մէջ, ուր կ'երթան երջանիկները ամէն
 Մեռելներն այս մի՛ առներ, թո՛յլ տուր միայն որ թաղեն՝
 Զանոնք այնպէ՛ս մը խորունկ՝ որ երկրի թոճն ու մորմոք
 Ա՛լ չըխտովէ յունն անոնց, եւ հո՛ն՝ մոռցի՛ր դուն զանոնք:

ԽՈՇՈՐ, ՔԱՌԱԿԱՅՄ ՆԱԻ Մ'ԻՐԻԿՈՒԱՆ ԴԷՄ

Խոշոր, քառակայմ նաւ մ'իրիկուան դէմ
Կը լըքէ քարաւին յուշի՜կ, մեղմօրէն:

Երբ ան կը սահի, ջուրերն անխըռով
Կը լեցունին ճերմակ լաթերու ցոլքով:

Օտար նաւ մըն է. կողերուն վրան
Անունն իր, մարդիկ հագի՜ւ կը կարդան:

Ո՞ր հեռու երկրէն է եկած արդեօք
Եւ դէպ' ո՞ւր կ'երթայ, չի՛ գիտեր ոչ ոք:

Թաշկինակ մ'անգամ չողջերթեր զանի
Երբոր ափունքէն անաղմուկ կ'անցնի:

Պատըզգամներէն կը նային անոր
Կիները միայն, լըռի՜կ, ինքնամոռ:

Մինչ ան՝ լըքելով քարաւին հապըշտապ՝
Կը թողու հըսկա՜յ ու պաղ մէկ պարապ:

Եւ այդ, երբ ծովուն վըրայ կ'ընթանայ
Եւ արեւն անոր վըրայ կը ցոլայ՝

Կը փայլին անոր կայմերը ոսկուն,
Եւ ծիրանիներ ալ՝ պարաններուն:

Ափունքէն դիտող մարդիկն հիմակ
Քաղաքն աւելի նե՜ղ կը զգան, դատա՜րկ:

Եւ կեանքն իրենց մե՜րկ աւելի, տարա՜ծ
Ըլլար կարծես բան մ'իրենցմէ՜ առած:

Աբբայարանին մէջ Ուէսթմինսթրի, մունջ եւ անարեւ,
Տարածուած իր մեծ նախահայրերուն ոտքերուն առջեւ,
Եղուարդ Վեցերորդն հիմա կը նիրհէ քունով մարմարեայ,
Բոլորէն մոռցուած — տասնեւվեց տարու դեռատի՛ր արքայ:

Տըղայ մըն էր ան լո՛ւրջ, ազնւական եւ տրտումներս:
Իր գիրքերուն հետ ապրեցաւ անդորր, ցո՛ւրտ պալատին մէջ
Ընկերներն էին հպիսկոպոսներ, գիտուննե՛ր դաժան.
Եւ կեանքին միակ պատմութիւնն՝ իր մա՛հն էր արքայական:

Ան սէրեր չունէր եւ երբեք մըղած չէր պատերազմներ.
Եւ ատոր համար, դամբանին վրայ փորագրուած չէր՝
Նըշանն յաղթական՝ որ նախահայրերն իր թողած էին:

Բայց, արքայական իբրեւ տոհմանիշ՝ հոն փորագրեցին՝
Շուշաննե՛ր կաթնեայ եւ Թիւտորի լոյս վարդերն աննըման:
Եւ իբր հրական ըլլային անոնք՝ դամբա՛նն է բուրեան:

Կ Ե Ա Ն Ք Ս

Կեանքըս կարօտ մ'է անհուն եւ տենչանք մը հրրակէզ:
Կառուցանել ուզելով մերթ ցնորական պալատներ.
Թերթատելով երբեմն ալ. մրտածունքերս վարդի պէս,
Անցածներու շիրմին վրայ, ես՝ ապրի՛լն իսկ եմ մոռցեր:

Տարիները, երազկոտ մատուրներէս, սահեցա՞ն
 Աւազի պէս, յամրաբար, եւ իմ հոգին, ակամա՞յ,
 Կը հընչէին կոչնականերն երբ իրիկուն մը աշնան —
 Տեսաւ իյնալն անհրաւէր Իրիկունին, կեանքիս վրայ:

Նըման եմ արդ, ծովափնեայ նաւորդներու տընակին
 Որուն այրերը գացին եւ նաւերուն հետ կորան.
 Եւ իրիկուան մէջ մըրրիկն երբ Կը սուլէ մոլեգին՝
 Սեւահանդերծ մայրերը ու քոյրերն ալ լրռելեա՞յն
 Գըլուխնին վա՛ր կը կախեն, ահազարհո՛ւր, կը լըսեն՝

Կարծես, ձեռքի՞ հարուածներ դըրա՛նը՝ փա՛կ մըշտօրէն....:

ԵՈՐԿՈՍ ԱՅՆԱՍ

Բաւն անուանով Ե. Արամասիասիս, ծնած է Նաւթաբո 1893-ին: Հրասարակած է Բերթուածմներու չարս հասորներ եւ այլ աշխատութիւններ: Երկար աւելն զբաղած է նաեւ հրապարակագրութեամբ ու քաղաքականութեամբ եւ եղած երեսփոխան ու նախարար:

Պ Ա Ր

Այսօր, Մարիոն ալ պիտի պարատեղի գայ պարէ:

Որբութիւնէն ի վեր, ան՝ առջի անգամ կը պարէ:

— Ճերմակ հագուստ ու լաջակ

Հագած հարսի՛ նըմանակ:

Անոնք որ պա՛րն են տեսեր նայեաղներուն, թող տեսնեն՝

Նա՛խ պարելը Մարիոյին՝ եւ ապա գովք թող հիւսեն:

— Ճերմակ հագուստ ու լաջակ՝

Ըսէ՛, ո՞վ է քու տատրակ:

Պարի մոզանքն ո՞վ գիտէ, օծն հրմայել ո՞վ կըրնայ:

Մէյ մը կ'ըլլայ ժապաւէն, մէյ մը մատնի՛ կը դառնայ:

— Ճերմակ հագուստ ու լաջակ

Մէյ մ'եղած տեղն կ'առնէ կանգ:

Ինչպէս բոցը կ'ոլորուի սըլացքին մէջ դէպ' երկին,

Մարիոն այնպէս ցունց կու տայ ու կը ճըկէ իր մարմինն.

— Ճերմակ հագուստ ու լաջակ՝

Հո՛ս, հո՛ն իյնայ պիտ' հիմակ:

Թեթեւութեանն իր երնէկ: Առանց թեւի կու գայ թիւ.
Հողին վըրայ չի՛ կոխեր, ոտքը գետնին չի՛ դըպիր:

— Ճերմակ հագուստ ու լաջակ.

Ո՞վ է վարպետդ, անուշա՛կ:

Նուագածուները հիմա պիտ' ջութակները փըշըեն,
Մարիոյին բաւ է միայն, որ նոր պընակ մը բերեն.

— Ճերմակ հագուստ ու լաջակ

Ինչ որ կ'ուզե՞ս ոտքիդ տակ:

Մեր թանկագի՛ն արքունի, հազար-հազա՛ր երանի
Արքայորդւոյն այն արի՛ որ օր մը քեզ պիտ' տանի:

— Ճերմակ հագուստ ու լաջակ՝

Քեզ գովել ո՞վ է ատակ:

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆ, ԱՆԴՈՐՐԻԿ...

Գեղեցկութիւնն անդորրիկ խաղաղ կեանքի մը անգին,

Որ իբր առուակ կը հոսի, ու կը ծաղկի գերթ ռահան.

Կը ճըռուողէ՛ ճընճողուկի նման ծայրը երդիքին,

Եւ տընական ծուխի պէս կը բարձրանայ իրիկուան —

Հեշտանոյշ կեանքն այդ անշուք, պարզուկ այդ կեանքին աննըման

— Որուն անմա՛ր է հըրճուանքն, կանանչ արեւն ալ անանց —

Կ'ուզեմ առտու մը երգել՝ ես արտոյտի մը նման,

Գաւառացւոյ այս հոգին իմ մէջըս դեռ չըմեռած...:

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Ի՞նչպէս ըսիր, Ինծի հետ կ'ուզես ելլել լեռն ի վե՞ր:
Պրզտի՞կ ես դեռ: Շո՛ւտ յոգնիս պիտի աղջիկ շիկահեր:
Ու կէս ճամբան, եթէ դուն ուզես յենուլ իմ վըրաս՝
Ամայքին մէջ, կը վախնամ թէ՛ մէկէն մե՛ծ երեւաս...:



Հարց տըւի օր մը, յանկարծ, իմ խորամա՞նկ սիրածիս՝
Թէ՛ ան արդեօք աւելի կը սիրէ քո՞ւնը՝ թէ՛ զիս:
Առանց երկար խորհելու՝ պատասխանեց մեղմածայն,
— Կը սիրեմ քունը՝ ջերմիկ քու զըրկին մէջ մի՛միայն:



Պատըշգամին մէջ ծաղկուն ասեղնագործ կը բանի
Եւ քաղցրալուր դայլայլանք շրթունքներէն կը կաթի.
Ջեռագործն իր, սրնդուսին վըրայ կ'ըլլայ մեղեդի
Եւ մեղեդին ձեռագործ՝ սըրտին վըրայ պարմանի:



Գեղջկուհիներ՝ ջաղացքին մէջ աղալո՞ւ կը սպասեն,
Եւ ալեւոր ջաղցպանին հետ գիշերն հո՞ն կ'անցընեն:
Փործանաբեր է գիշերն: Ո՞վ գիտէ, ա'հ, ջաղացպան,
Թէեւ ծեր ես,բայց ի՞նչ փոյթ:Մերուկնե՞րն ալ շատ անգամ...:



Աղբերակէն կը դառնաս, քեզ կը տեսնեմ ճամբուս վրան.
Սափորն ուսիդ, ամօթխած ու գրխահա՞կ ու վարան.
Անննգ ամօթդ, ո՞վ աղուոր, ո՞ւրիկէ գիտնայ՝ թէ ե՞ս ալ
Քու սափորին սառնորակ կը խըմեմ ջո՞ւրը զուլալ:

ՆԱԲՈԼԷՈՆ ԼԱԲԱՅԵՈՅԻՍ

Ծնած է Ափէնք 1893 ին։ Երիտասարդ տարիքէն սկսած է աշխատակցիլ օրաթերթերու եւ հանդէսներու՝ բանաստեղծութիւններով, պատմածքներով, քննադատական յօդուածներով, գեղագիտական ուսումնասիրութիւններով, կեռութաւոր արձակներով եւ օտար բանաստեղծներէ քարգմանութիւններով։

Ունի «Բանաստեղծութիւններ» խորագրով հասար մը։
1943 ինքնասպանութեամբ վերջ տուաւ իր կեանքին։

ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

*Տունին մէջ բա՛ն մը չըկայ. Մա՛յր,
Որ, քեզ իմ միտքը չըբերէ.
— Ո՛չ ալ կեանքիս մէջ բան մը, Մա՛յր,
Որ քու նըշա՛նը չըկըրէ։*

*Ոչ ալ արդէ քայլ մը կ'առնեմ, Մա՛յր,
Առանց որ զիս պատեն յուշերդ,
Քանի բըռնեմ կամ տեսնեմ, Մայր,
Քու գործածած առարկաներդ...։*

*Եւ ոչ միայն անգին է Մա՛յր,
Ինծի համար ինչ որ քուկդ էր,
Այլ՝ սըրբացած կը սեպեմ, Մայր,
Նոյնիսկ՝ անցած քու ճամբաներ*

*Եւ ոչ միայն բան մ'առնին, Մա՛յր,
Դըրախտային այդ տեղուանքներ,
Այլ՝ կը սիրեմ զի՛ս անգամ, Մա՛յր,
Որովհետեւ՝ քո՛ւ տըղան էր...։*

Ի Խ Ո Ր Ո Ց

Խըղճա՛ւ ինձ, Աստո՛ւած, այս ճամբուն համար,
 Ուր ինկայ առա՛նց ինչո՞ւն գիտնալու.
 Առանց գիտնալու՝ թէ բախտին այս չար՝
 Ի՞նչ մեղք կը կապէ զիս, արդեօք ինչո՞ւ:

Խըղճա՛ւ օրերուս որ կ'անցնին իբր հով,
 Դեռ ծանրը գիշերը չիջած չորս ղի.
 Փընտռելով միւսներն, զի՛ս ալ փընտռելով,
 Փընտռելով ինչ որ՝ պիտ' չըզըտնուի՛:

Խըղճա՛ւ բոլորին, որ կ'անցնին ի զուր,
 Զի՛ անոնց այսպէ՛ս է գըրուած. ըսին,
 Որ, կը դառնան հող՝ փոսի մը մէջ լուռ,
 Առանց հարց տալու երբեք այս մասին:

Անո՛նց ալ խըղճա, խըղճա՛ւ ինծի՛ ալ
 — Ինծի՛՜ որ կ'անցնիմ սիրտով մը նուաստ,
 Զանալով, Աստուած իմ, լուծո՛ւմ մը տալ՝
 Բաներու օտար՝ որ չունի՛ն իմաստ....

Հազի՛ւ թէ սիրտըս բանի մը կապած՝
 Լոյս մ'հազիւ փայլած խորունկը մութին,
 Կը խըլէ զանի բախտըս չարախանձ,
 Եւ գիշերն յանկարծ, կ'իջնէ՛ վերըստին....

Խըղճա՛ւ ինձ, Աստուա՛ծ, վրհատանքիս մէջ,
 Խըղճա՛ւ բոցին՝ զոր կը սփռեմ դատարկ,
 Խըղճա՛ւ ինձ, ո՛վ Տէր, իմ զայրոյթիս մէջ՝
 Որ կ'ապրիմ անմիտ եւ աննըպատակ....

ՀԱՆՆԻՆ ՄԵՌԱԻ

... Հանդիպակաց տունին մէջ, մեռա՛ւ հանին այս գիշեր:
Ապակիին վրայ մեղմիւ կը դողայ մո'մ մ'աղօտով.
Անկիւն մ'իկեմ կ'արտասուէ իլիկը դա'ռն տրտունջով,
Թաա՛ւ հոգեակը անոր Արուսեակին բովը վեր...
Հանդիպակաց տունին մէջ, մեռա՛ւ հանին այս գիշեր:

Քնացա՛ւ... ո՛րքան քնքշօրէն կը ննջէ ո'վ որ մեռնի...
Յանկարծօրէն համրացան բոլո'րն, ու՛ սե՛ւ հազուեցան.
Կէս գիշերին մօտ թեւեց շուք մը՝ սիւքին մէջ անծայն...
Ջրլա՛յ հանւոյն տրտունջոտ, անոյշ հոգին էր անի.
Քնացա՛ւ... որքա՛ն քնքշօրէն կը ննջէ ո'վ որ մեռնի...

Տարածեց հո'վն ամէն դի յետնագոյն շո'ւնչը հանւոյն.
Թարմ ծաղիկներն օրն ի բուն փռուած մնացին իր չորս դին.
Յուշիկ եկան հրեշտակներն ու քաղցրօրէն զայն պագին...
Այսպէս է մահը միայն՝ մանուկներուն, ծերերուն.
Տարածեց հո'վն ամէն դի յետնագոյն շո'ւնչը հանւոյն...

Մանուկներո՛ւ, ծերերո՛ւ լո'յս հոգիներ, ո՞ւր կ'երթաք
Խաղաղօրէն բընացող հանիին հետ առանձին,
Ինչպէ՛ս կ'շողայ, կը դողա՛յ, կը շնչէ մո'մը լոին,
Կը սարսըռայ արհաւրս՛ծ, աղօտաշո՛ղ, դեղնորակ...
Մանուկներո՛ւ, ծերերո՛ւ լո'յս հոգիներ, ո՞ւր կ'երթաք:

ՎԵՐԱԴԱՐՁ

Երբոր զայ պահր կրրկին
Դէպի անհո՛ւնն իջնելու,
Առա՛նց այլոց հաւատքին՝
Բայց եւ առա՛նց վախնալու,

Հոգւոյս հետ, որ, այդ պահո՛ւն
Սիրածի՛ պէս կը սպասէ.
Բանզի՛ տանջուա՛ծ է անհուն,
Եւ այնքան շա՛տ յոգնած է.

Պիտ՝ չունենամ ես կոծումս
Ձայնի մ'որ ինձ ըսփոփ տայ.
Այլ՝ — մեռցնելով մըտածումն՝
Որ կը սպաննէ՛ զիս հիմա —

Պիտի իջնեմ վի՛հը խոր,
Որպէս դազա՛ղ մը փակուած.
Լոկ՝ փրնտոելո՛վ անդորրն որ,
Ունէի՛ դեռ չըծընա՛ծ:



ՔԼԷՈՆ ԲԱՐԱՍԽՈՍ

Ինձած է 1894-ին: Հրատարակած է բանաստեղծութեանց հատորիկ մը եւ Պոսլերի բանաստեղծութիւններէն բարգմանութիւններ, ինչպէս նաեւ քննադատական ուսումնասիրութիւններ: Քլէոն Բարասխոս, երկար տսեն է առ, կը զբաղի միայն քննադատութեամբ, իր աշխատակցութիւնը բերելով գրական ամենէն լուրջ հանդէսներուն:

ՈՒՐԻՇ ՈՋԻՆՉ

Ուրիշ ոչի՛նչ կ'ուզեմ, ոչի՛նչ այս իրիկուն:
 Ծառերուն տակ լոկ այս հատնումը յամրագին.
 Անոնց անկամ, երանելի՛ այս երերումն.
 Դէմքիս վրայէն՝ լոկ թեթեւ ա'նցքն այս հովիկին:

Մուծը դանդա՛ղ իջնէ հեռու ճամբու վրրան,
 Եւ բարձրանան ուրախ ծայներն աղջիկներուն.
 Եւ յամենա՛ն ամէնն, աղօ՛տ, ամէնն ըլլան,
 Երգ մ'իրիկուան ըստուերներուն մէջ մարմրորուն.

Ուրիշ ոչի՛նչ կ'ուզեմ, ոչի՛նչ այս իրիկուն,
 Կ'ըզձամ լըսել լոկ քու շրշունչը աղուահեզ,
 Եւ հեւքի՛ որ արդ կ'անցնի մէջէն սա ծառերուն,
 Ամա՛ռ. որ վաղն երթա՛ս պիտի, որ՝ գացի՛ր հս:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՕՐԸ ԱՆՑԱԻ

Աղմուկներով ցրնծաթինդ անցաւ օրը այսօրուան.
 Թաղիս տողաքը խաղեր ըրին ուրախ ճիւղերով,
 Եւ իրիկուան դէմ, լեռնէն՝ իջաւ խումբ մը, որ ճամբան
 Երկար ժամեր ողողեց ծիծաղներով, ծայներով,
 Իմ սենեակըս ջերմացուց աշնան արեւն հեշտանոյշ
 Իրերուն եւ գիրքերուն տարածուելով վրա՛յ լըռին:
 Տաղտկացուցիչ, սեւաթո՛յր եւ անփարա՛ւ, դառնացող
 Այսօր ազատ թողուցին զիս վիշտերն իմ նոր եւ հին:
 Եւ, լոկ խինդեր, խենթ խինդեր հոգիիս խորն արթնցան
 Ու ցրնծացին, ճրչացին, ամէնուն հետ երգեցին՝
 Օրուան մէջ՝ որ ա՛հ, անցաւ գանգիւններով քաղցրածայն:

ՆԻՆՁՆ ԱՂՈՒԱՆՈՅՇ

Նինջն աղուանոյշ թարթիչներդ ծանրացրնէ՛ պիտի դեռ:
 Եւ ցրնծուրախ լոյսն այգուն՝ սենեակին մէջ ըսպիտակ,
 Եւ անկողնին մէջ մեր խոր, մերկ կուրծքերուն վըրայ մեր՝
 Պիտի սահի՛, սեւաթոյր վարսերուդ վրա՛յ այ արծակ:

Նի՛նջն աղուանոյշ թարթիչներդ ծանրացրնէ՛ պիտի դեռ,
 Անշարժ մընայ պիտի մերկ, թըմրած մարմինդ տակաւին.
 Եւ ես՝ հակած լուսազեղ դէմքիդ վըրայ, անհամբեր
 Պիտ՝ ըսպասեմ ժրպիտիդ եւ նայուածքի՛դ տռաջին:

ՌՈՍՏՈՍ ՖԻԼԻՐԱՍ

Իսկական անունով Եուաննիս Իֆոնտոբուլոս: Ծնած է Կերքասի Քիաթո գիւղին մէջ 1888 ին: Հրասարակած է «Վարդ եր Փրփուրին Վարայ», «Գալոցները» «Վերադարձ», «Զոհաբերում» ֆերբուածներու հասարակները եւ «Կեանքի Դերասանը» արձակը: Ֆիլիբաո սարիներով զբաղած է նաեւ հրապարակագրութեամբ եւ փաղափականութեամբ:

Կեանքի վերջին տարիներուն մային խանգարում ունենալով՝ դրւած էր հագեթութեամբ, ուր եւս կը շարունակէր լսեղծագործել:

Մեռաւ 1939-ին:

MADONA MIA

Թեթեւ, փափկիկ, թիթեռնիկի նըմանակ,
Շուշաններուն վըրայ ինկող ցօղին պէս,
Թաւիշներու բըսուող զերթ շո՛ւնչ անուշակ
Իբրեւ, այգուն անդրանիկ շողն ոսկեգէտ՝

Եկար դանդա՜ղ, եկեղեցւոյն մէջ ինչպէս
Պիտի մըտնէր Աստուածամայրը թախժուն,
— Մայրամուտին մէջ լուռ ըստուեր մը որպէս —
Թեթեւ հառաչ մ'ալ շրթներո՞ւդ վրայ թրթռուն:

Եկա՜ր... եւ ես կը զգամ գալուստդ աղուահոտ՝
Զերթ բա՛ն՝ մ'որուն տենչով հասնիլ չեմ կրնար,
Իբր յայտնուեթի՛ւնը աշխարհի մ'անծանօթ՝
Որ իմ լոյսին առջեւ շողա՜ց հրաշափառ:

Վ Ա Ր Դ Ե Ր

Վարդերն, այսօր, պարտէզին մէջ բնա՛ւ լոյս չըմպեցին.
 Արշալոյսէն՝ քամիներն ուղինհրուն վրա՛յ ինկան.
 Ու բուրսուէտ, ու պայծառ ամենայն ինչ խեղդեցին.
 Եւ օրն ունէր վայրութիւնն ու սարսափներն գիշերուան:

Կը բարձրացնեն սրբազան ազերս մ՛ամէնն ալ, լոյսի՛ն,
 Իրիկնային կը փչէ մինչդեռ հովիկը հեզիկ.
 Ահա՛, թափօր են կազմեր բոլոր վարդերն ածուին.
 «Վազն ըլլայ լո՛յսն յաղթական, եւ չըլլայ ամպ մ՛իսկ պտտիկ»:



ԵՈՍԻՑ ՌԻՏՈՐԲՈՒԼՈՍ

Ծնած է Արեւելեան Թրակիոյ մէջ 1890-ին: Ուսումը ստացած է Հալիքի եւ Աթէնքի համալսարանին մէջ: Հրատարակած է «Սիրոյ Գիրքը» խորագրով վերքուածներու հատուկ մը:

Մեռած է Աթէնք 1923-ին:

Կ Ո Ջ Ն Ա Կ Մ Շ

Կոչնակ մը հեռուն կու լայ մահալուր,
Եւ դազաղ մը յար կ'ընթանայ անծայն,
Ոչ որ անոր հետ կը քալէ տրխուր,
Ո՛չ որ գերեզման կ'առաջնորդէ զայն:

Անոր մէջ հոգիս է փակուած, բաբէ՛,
Որ, որրումաթաթաւ կը մարի՛, կ'երթայ,
Կը հնչէ կոչնակն երբ ամէն բուպէ
Ու դազաղն ալ յա՛մր՝ առաջ կ'ընթանայ:

Ս Տ Ո Ւ Ն Ր

Ըստուերի պէս կը շրջիմ պաշտօններուն դէմ մահուան
Ա՛հ, քիչ յետոյ զիս խեղդէ պիտի անդունդը խաւար:
Իմ հիացիկ աչքերուն, վերջին պահուն, իրական
Եղեմ մը դուն կը թրւիս, ո՛վ կեանք, ցրնծուն ու փառփառ:

Արծազանգնե՛ր, կրշողթնե՛ր, շեշտեր աղո՛ւ, արբեցում,
Անակընկալ բայց, ո՛վ մահ, եւ երիցըս սեւ մորմոր,
Տակաւին չե՛մ ապրած ես կեանքի խորհուրդը խորուն,
Ու դուն, ահա՛, կը պատես զիս պատանքովդ արտորիօք.. :

Ի Յ Ա

Իցա, ո՞ւր ես, ո՞վ իմ սէր, վայ ինձ, ո՞ւր ես դուն նորէն.
 Իցա', պահի՛կ մը միայն դարձիր օտար ավերէն.
 Այսպէս, պահի՛կ մը միայն, յետոյ գընա՛ դուն դարձեալ՝
 Յետոյ գընա', եւ ուրի՛շ, ուրի՛շ անգամ մի՛ գար ալ:

Բայց, շո՛ւտ եկուր, թռչնիկին նըման եթերն ճեղքէ դուն.
 Եւ հասիր ո՛ւր որ ալ ես, օրը չեղած իրիկուն.
 Ո՛ւր որ ըլլաս, ա՛հ եկուր. չիջած գիշերն արհաւիրտ,
 Զի՛ սէր իմ, ալ չըծագի՛ պիտ' ինձ համար առաւօտ:

ՅՐՏԱՇՈՒՆԶ ԶՄԵՌ

Սառնաշունչ ծըմեռ մ'է զիս պարուրած:
 Ամէն ծառ՝ չորցած ճիւղե՛ր է պարզած,
 Ոչ մէկ թրռչնոյ երգ կը լրսուի այլեւս
 Մեռա՛ծ են բոլոր տենչերս, երազներս:
 Ձեզի՛ նոր գարուն պիտ' գայ, ո՞վ ծառեր,
 Հեղեղի՛ն նորէն պիտ' թռչնոց երգեր:
 Սակայն, մահուան շո՛ւնչն է ինձի հրպած,
 Սառնաշունչ ծըմե՛ռ մ'է զիս պարուրած:

Վ Ա Ր Դ Ե Ր Ը

Կարմիր վարդերն առաւօտ մը բացուեցան.
 Տեսան ա՛յգը, տեսան՝ արե՛ւն ալ աղուոր,
 Տեսան երկինքն՝ աչուրներով լողձական,
 Սոխակներու լրսեցին ե՛րգն հնչոտօրօր:

Քընքուշ աղջնա՛կ մ'անցաւ իրենց բովիկէն,
 Մայրամուտի տեսան բռնկո՛ւմը լրոին,
 Մուծ գիշերին՝ աստղերու շո՛ղքն երկինքէն.
 Եւ փակեցին աչքերն՝ ու ա՛լ չըբացին:

ԼԷՈՆ ՔՈՒՔՈՒԼՍՍ

Ծնած է Էրմուպոլիսի մէջ 1894 ին։ Նախնական կրթութիւնը իր ծննդավայրին մէջ ստանալէ յետոյ Եւրոպա մեկնած է ֆիմիազի-ութիւն ուսանելու։ Սակայն, քիչ յետոյ բոլորովին նախընտրած է գրականութեան։ Երեք տարիի շտափ Գերմանիա ապրած՝ ու ապա վերադարձած է իր հայ բեմիս։

Քուկուլսս հրատարակած է «Կեանքի եւ Մահուան» եւ «Առաւօտ Մը» խոշորագուծ ֆերթումներու հաւաքածոները։ 1921 էն ի վեր կ'աշխատէր թուրք կառելու ազգայնական պարբերաբերքերուն եւ լրաբերքերուն։ Թարգմանած է գերման երիտաւարդ գրողներէ զանազան գործեր։ Լէոն Քուկուլսս աշխատած է նաեւ քաւաքի համար։

ՄԵՆԱԻՈՐ ԿԱՂՆԻ

*Մենաւոր կաղնի՛, որ կը բարձրանաս որպէս ճիգ մը զուր
Վերը հասնելու, այս ծրմեռնային պարտէզին մէջ դուն,
Կոտրած ու մե՞րկ է քու ամէն մէկ ճիւղն, որ անդորր ու լուռ
Բնութեան մէջ, հիմա կ'երգէ օրն ի բուն ուրախ ու խընդուն։*

*Ո՞ր տենչանքը քեզ կ'օրրէ լրոնելեայն կամ ո՞ր ցընծութիւնն
Այս աղօտափայլ իրիկունին մէջ, մահո՞ւ նրման ցուրտ.
Ականջ կուտամ քեզ ու կ'երգես իբրեւ տաւի՞ղ մը թըրթոռն
Ջոր կը համբուրէ զարնան սիւքը ջերմ գերթ սիրածի շուրթ։*

*Երբք չըվախցայ, քեզի պէս ե՛ս ալ, մենաւոր կաղնի,
Փոթորիկին դէմ կանգնելէ հըպարտ ու բարձրաճակատ.
Քեզի՞ ալ, անշուշտ, պիտ' ժըպտի տեսիլ մը վառ զարնայնի
Քանի որ ըզմեզ կը խեղդէ ծրմեռն ու կ'երգենք մինչ այդ...:*

Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ի Մ

Ցընորական, տեսլանքման իրիկուն
Մը, քաղմամբոխ համբուն վերայ տեսայ քեզ,
Արշալոյս մը կար՝ շրթններուդ վարդագոյն,
Եւ յոյս՝ անոյշ նայուածքիդ մէջ հըրակէզ:

Նայեցար ինձ, մրտերմուհի մը որպէս,
Ժրպիտդ անդո՛րր էր, արեւո՛ւ ճառագայթ,
Ճակատագի՛րն ըզքեզ զրկած էր կարծես
Իբրեւ հոգի՛ հայրենիքէ մը անյայտ:

Եւ եթէ ես համբանելուն վրայ երկրի,
Ա՛լ չըտեսայ քեզի, սակայն, իմ տրժգոյն:
Մոտածումը միշտ դէպի քե՛զ կը թըռի,

Մոշտադալար, լուսեղ գարնան մը հանգոյն:
Դուն եղար իմ միակ հրըճուանքն, որ բրնա՛ւ
Բընա՛ւ ինձի հալուէի համ չըտըւա՛ւ:

ՄԲԻՐՈՍ ԲԱՆԱԵՍՈՐՈՒԼՈՍ

Ծնած է Ս. Դոս (Կոմբոս) 1895 յին: Հրասարակած է բանաստեղծական երկու հասարակներ, պատմաբաններու ժողովածու մը, եւ ուրիշ գործեր: Հելլեն պարբերաբերքերու մէջ ունի նաեւ զեղազիսական բազմաթիւ յոդուածներ:

Ո Ր Ս Ո Ր Դ Ն Ե Ր

Եկքանիկներ անհամար ուռնելի ճիւղերուն
Թառած՝ զանոնք կ'օրօրե՛ն բերկրանքի խօ՛ւ խաղերով:
Ծիւղերէն վար մարգարտի նըման ցօղեր սարսըռուն
Ճակատներուն կ'իյնան մեր՝ ծանրացած՝ քա՛ղցըր նիրհով:

Մեր դէմ, տառարակ մը թառած է անխրոով ու անդոյր
Ու բարձրերէն հոգիի մ'հանգոյն արծի՛ւ մը կ'երթայ —
— Ընկե՛ր, նետէ՛ հըրացանդ խոտին վըրայ, ու եկուր
Ըսենք մէկտեղ այգայի՛ն մերին աղօթքը հիմա:

Շ Ա Տ Ե Ր ՈՒ Ն Ե Ր Գ Ը

Գիշերն, երբոր կը դնեմ գրչուխըս բարձին
Զիս կ'օրօրեն աղուոր յոյսեր ոսկեվառ,
Պիտի ըլլամ ես զօրաւոր՝ ու ջընջին
Ակերու մէջ պիտի մարեմ այն անմար
Վիշտերն որ զիս կը մրրըրկեն: Ես պիտի
Ըստեղծեմ բան մ'որ հասցընէ զիս փառքի:

Երբ բացուի լոյսն՝ իսկոյն կ'ելլեմ անկողնէս,
 Ծըրագիրներս փութով կարգի կը դնեմ:
 Պիտ' ընեմ սա', պիտ' ճամբորդեմ այնտեղ ես,
 Նըպատակըս պիտի գործքով յաջողցնեմ:
 Կամաց-կամաց, ըսկսելով փոքրերէն՝
 Պիտի հասնիմ ես մեծերուն յամբօրէն:

Ու կը սկսիմ: Բայց, ճամբաները կեանքին՝
 Նեղ են ա'յնքան ու խռթերով առլըցուն,
 Եւ հըմայիչ ա'յնքան զեղեր ալ ունին՝
 Որ մեր քայլերը կը կեցնեն, ըզմայլուն:
 Մերթ աշխատանքը ծանր, հաճո՞յքը երբեմն՝
 Պարմանութեան մեր օրերը կը խրլեն:

Ու ժամանակը կը սահի՞ գետի պէս.
 Եւ երազներս դարձեալ երա՞զ կը մընան.
 Տըկա՞ր, վըտիտ, անտէր եղէ՞զ մը ուրպէս՝
 Կը թողում որ, հովերն ո'ւր որ կամենան՝
 Առնեն տանին զիս ու նետեն այնտեղ որ՝
 Մարդուն կամքը կ'իյնայ ըեկոր առ բեկոր:



ԱՐԿԻՍ ՔՈՐԱՔԱՍ

Ծնած է Քոստանթնուպոլիս 1888-ին: Հրասարակած է «Գիտերներ», «Երգեր», «Բասոր Վարդեր» հեքիաթներով: Բազմաթիվ հաճախակի է հանդիպում հայ հասարակությանը: 1936-ին լույս է տեսնում նրա «Բազմաթիվ հեքիաթներ» գիրքը: 1940-ին:

Մեռել է 1940-ին:

Ն Ա Խ Ա Ն Ձ

Օր մը, երկուքըս մէկտեղ կը թերթէինք զիրք մ'որուն
Մէկ էջին վրայ երբ տեսայ աղջրկան դէմք մը սիրուն՝
«Ի՞նչ աղուոր կին» գոչեցի, անմեղօրէն, մեղմածայն:
Ձըխօսեցաւ ան բընաւ: Ուրիշ անգամ մը սակայն,
Երբ նոյն այդ գիրքը կըրկին կը թերթէինք մենք ղողղող,
Տեսայ թէ նկարն այն չըկար, փրփրուած էր է՛ջը ամբողջ:

Ք Ո Յ Ր Ը

Կոկոն մըն էր մըշկածոր,
Վեշտասնամեա՞յ տակաւին:
Եկաւ մըրրիկ մ'ահաւոր՝
Առաւ, նետեց զայն գետին:

Անցան՝ անթի՛ւ տարիներ,
Այլ՝ բոյրն անոր կը մընայ՝
Անցան անթի՛ւ տարիներ՝
Բայց, ցաւն է լե՛ռ մը հըսկայ:

Ե թ Է Գ Ա Ս

Թէ Դարունին հետ գաս դուն՝ պիտ' վարդերո՞վ զարդարեմ
 Շագանակի զոյն մազերդ, քեզ համբուրեմ քաղցրօրէն.
 Թէ Ամրան հետ երեսիս՝ քե՛զի պահեմ պիտի ես
 Մեկոններսով լիագիրկ, հասուն հասկեր ոսկեգէս:

Թէ Աշունին յայտնըիս՝ պիտ' մեր այգին երթանք մենք
 Եւ կարմրողկոյզ խաղողներ, թուզեր անուշ ճաշակներ,
 Իսկ Ջրմեռին եթէ գաս, կը խոստանամ զաղտնօրէն,
 Փըռել կապերոր իսկոյն ու քրնանա՞լ քեզի հետ:

ԵՈՐԿՈՍ ՑՈՒՔԱԼԱՍ

Բանաստեղծ ու քարգմանիչ: Հրատարակած է «Սիրոյ երգեր» եւ «Էլիսուս» ֆերուածներու հատորներ: Տարեգիրքերու եւ գրական հանդէսներու մէջ ունի բազմաթիւ քարգմանութիւններ օտար գրողներէ եւ մասնաւորաբար Ֆրանսացի եւ Ռուս բանաստեղծներէ:

Կ Ն Ո Ջ Ս

Ձերթ ուխտաւոր, յիշատակը կ'ելլէ վեր
Դէպի սիրոյ մեր երեկոն առաջին:
Կը վերյիշե՞ս դուն ճիւղերուն մէջ լուսինն
Ու լրոտութիւնն ու մոգակա՞ն այն գիշեր:

Տարաշխարհիկ որպէս կանթեղ, սիրտը մեր,
Հըրավառուած՝ կը բոցկըլտա՞ր անծկագին,
Ծա'նըս էին բոյրերն ազու գարունին,
Սէրի՞ն էինք մեր հոգիները յանձներ:

Կասեցընել տարիներն, ա'հ, ո՞վ կըրնայ,
Տենչը թըռչուն մ'է, կը գաղթէ անպատճառ,
Բայց, չմարի՞ պիտի հո'ւրն՝ որ կը մընայ:

Մեզ իրարու դեռ կը կապէ՝ մեր խոնարհ
Տընակին կեանքն եւ անկէ եւս աւելի՝
Թիզ մ'հող՝ զամբանը մեր գաւկի՞ն սիրելի:

ԵՈՐԿԻՈՍ ՏՈՒՐԱՍ

Ծնած է 1895 ին, Աղեփաճղի: Աթենքի ռամպարանին մէջ հետեւած է իրաւագիտութեան ճիւղին: Հրատարակած է կրօնաշունչ ֆերմաւաններու երեք հատորներ, «Սուրբ Գեորգ», «Հաւատարմօրէն, Տէրը Կուգայ» եւ «Փառք»:

ՏԷՐ, ԶՕՐՈՒԹԵԱՆ, ԳՈՒԹԻ ԱՂԲԻՒՐ

Տէ՛ր, զօրութեա՛ն, գութի՛ աղբիւր մըշտակայ,
Ա՛լ մինչեւ ե՞րբ յաղթանակէ թըշնամին
եւ կոխոտուի ճըշմարտութիւնն երկրի վրայ.
Ու ժողովուրդդ՝ ըլլայ ծանա՛կը չարին:

Ա՛լ ժամն հասաւ: Բաւական է: Զուշանա՛յ
Թող զայրալից իջնել բազուկըդ ուժգին
Ու բանալ վէրքն անբուժելի անող վրայ՝
Որ դարերէ ի վեր կ'իշխէ՛ աշխարհին:

Ելի՛ր ու թող լեռներն հալի՛ն մօմի պէս,
Քեզ ատողները թող յանկարծ սարսափին,
Մէկէն զանոնք թող գըտնէ նե՛ող հրրակէզ,

Երբ կը ճրգնին խրլել բաժի՛նն աղքատին:
Ու թող դատէ՛դ ցրնծայ Սիոնն ով Աստուած
Եւ արդարներն՝ աղաղակե՛ն բու դիմաց:

ՔՈՍՏԱՍ ՔԱՐԵՍԹԱՔԻՍ

Ծնած է Թբիլիսիի մէջ 1896-ին եւ անճնասպան եղած Բրեվեզայի մէջ, 1928-ին:

Աթէնքի համալսարանի իրաւագիտութեան նիւղը աւարտելէ յետոյ, տարիներով եղած է պե-ակոմ պատճօնեայ: Ճամբորդած է Եւրոպական քաղմարիա երկրներ: 1919-ին հրատարակած է «Մարդուն եւ իրերուն Յաւը», 1921-ին, «Մանկութիւն» եւ 1927-ին «Եղբերեղներ ու Ծաղրեղներ»:

Խ Ա Մ Ա Ճ Ի Կ Ն Ե Ր

*Որպէս թէ մենք բրնաւ չըկանք երկրի վրայ.
Իբրեւ թէ մենք անեղուծեան մէջ ենք դեռ:
Մեր շուրջ, առանց ցոլքի խաւա՞ր գիշերեայ.
Ուրիշներու կարծիքով ենք լոկ մարդեր:*

*Վարանմունքէ եւ թուղթերէ ըստեղծուած՝
Խամանիկեն՞ք ենք կոյր ծեռքին մէջ բախտին.
Պա՞ր կը դառնանք, կ'ընդունինք աշպ ու հարուած՝
Աստղղներուն յառած անզօ՞ր մեր աչուին:*

*Հեռու աշխարհի մ'է մեզ ամէն մէկ հրրճուանք:
Ցընորք են լոկ՝ յո՛յսն ու տարի՞ք պարմանի:
Ուրիշ ո՛չ որ չի գիտեր թէ մենք ալ կանք,
Բացի անկէ՝ որ կ'ոխելով մեզ կ'անցնի՞:*

*Օրերն անցա՞ն՝ ու ժամանակն ալ անցաւ:
Օ՞, մարմնին մէջ թէ չըլլար վիշտն այս անտէր.
Օ՞, թէ չըլլար հոգւոյն մէջ ցա՛ւն այս անբաւ՝
Չըզիտնայի՞նք պիտի թէ կանք, կ'ապրի՞նք դեռ....*

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՆԵՐ

Կը դարձնե՛ն զբրան բանալին, եւ հին
 Նսմակներն փրենց մէջտեղ կը հանեն.
 Կը կարդան հանդարտ, եւ ապա՝ վերջին
 Անգամ քա՛րշ կու տան քայլերն յամբօրէն:

Կ'ըսեն՝ թէ իրենց կեանքն ողբերգ մըն էր.
 Ո՛վ Տէր մարգերու քրքիչն ահադու.
 Բի՛ւտր, արցունքներն, երկրնքի անմեռ
 Կարօտն, ամայքն ալ՝ տըխո՛ւր վայրերու:

Պատուհանին քով կանգնած կը դիտեն
 Ծառե՛րը, տըղա՛քն, բնութի՛ւնը շուրջի,
 Մարմարագործներն՝ որ մուրճ կը շարժեն,
 Արեւն՝ որ ընդ:մի՛շտ ալ պիտի շիջի:

Լրացա՛ւ ամէն ինչ: Թըղթիկ մը միայն.
 Հարկ հղածին պէս, կրտորո՛ւկ, պա՛րզ, խորո՛ւնկ,
 Անտարքերութիւն, ներո՛ւմ դէպի այն՝
 Որ պիտի կարդայ եւ թափէ արցունք:

Ժամը կը նային եւ հայելիին,
 Յիմարութի՞ւն է՝ թէ սըխալ-կ'ըսեն,
 «Վերջացաւ ամէն ինչ» կ'հծծեն, խորքին
 Մէջ անկասկած թէ՛ պիտ' յետածըգեն:

Ա Թ Է Ն Ք

Քաղցրանո՞յշ պահ: Աթէնքն՝ աղի՞ճ գեղանի,
 Յանձնըւած է Ապրիլի խօլ թուերուն:
 Բոյրերն՝ հեշտա՞նք են եթերին մէջ ձրփուն,
 Եւ չի՛ սպասեր հոգին ալ ո՛չ մէկ բանի:

Տուներուն վրայ երեկոն յոյլ կը հակի
 Ու կը ճընշէ արծաթովն իր կռպերուն:
 Ակրողովիսն ալ արքունի, հոս հեռուն,
 Վերջալո՞յսն է հագած՝ որպէս ծիրանի:

Լոյսի՛ համբոյր, կը ցաթի աստղն ասաջին:
 Վարդերես հարս դափնիներուն կը փոփսայ՝
 Իլիսոյի մէջ խօլ հովիկը հիմա:

Ուրախութեան եւ սիրոյ պա՞հ երկնային,
 Կը հալածեն ուր թրոջնիկները զիրար
 Հովխրփելով Չեւսի սիւնին յաւաքար:

Մ Ի Ա Յ Ն

Ա՛հ, ըլլալո՞ւ էին ամէնն՝ ինչպէս եղան:
 Պէ՛տք է յոյսերն ու վարդերը թառամէին.
 Նաւակներու պէս, պէ՛տք է որ, երազահամ
 Իմ տարիները անցնէին:

Կը բաժնուէինք ինչպէս ամէն երեկոյեան՝
 Պէտք է ընդմիջտ բաժնուէի՞ն բարեկամներ.
 Պէտք է իրկուն մը լըքէի այլեւս վայրն այն՝
 Ուր մտնկուծեանս անցա՞ն օրեր:

Պէտք է կեանքը — ինչպէս պարի մէջ — իմ ձեռքէն,
 Առնէ՞ր աղուոր աղջիկներն ալ — ո՛վ սիրուններ —
 Նո՛յնիսկ ցաւը, որ կ'արբեցնէր զիս տարօրէն՝
 Պէտք է ամուլ այսպէս ճնշէր:

Պէտք է ամէ՞նը ըլլային: Միայն այսպէս
 Անոյշ պէտք է որ այս զիշերն հիմա ըլլար.
 Պէտք է աստղեր հոն շողային աչքերու պէս
 Ու ժրպտէին ինձ սիրավառ:

ՂԼԱԻՔՈՍ ԱԼԻԹԵՐՍԻՍ

Թուն անունով՝ Միխայիլ Հանիսիմիբրիու: Ծնած է Կիպրոս 1897 ին: Հետեւած է Աթէնքի համալսարանի իրաւագիտութեան ճիւղին: Տարիներէ ի վեր հաստատուած է Եգիպտոս ուր կը զբաղի ուսուցչութեամբ: Հրատարակած է «Ծովափունքի Շուէաններ», «Պարզ Մատուցում» ֆերբուածներու հաւաքածոները, «Անգլիական Ծաղկաւաղ» մը, անգլիացի բանաստեղծ Սուպեր Պրուէի ամբողջական գործը (քարգմանութիւններ) եւ «Մերկ Մարդը» պատմութեան հատորը:

ՂԼԱԻՔԻԻՆ

*Զաւա՛կս, երբոր քեզ ծունկերուս իմ վրան
կը խաղցընեմ մերթ, հա՛րց կու տամ ինծի ես՝
Թէ՛ արդեօք ո՞ղջ՝ կամ ա՛լ մեռա՞ծ պիտ՝ ըլլամ,
Այն օրն՝ որ դուն պիտ՝ այս քերթուածս ըմբռնես:*

*Պիտի ամբողջ պարմանութեանդ ընթացքին
Երգս ըլլայ պա՛րզ, անուշ հէքեա՛թ մը միայն,
Եւ հետագայ մըթութեան մէջ քու կեանքին՝
Քեզ պիտ՝ վարէ բեւեռային աստղի նման:*

*Բերկրանքներուդ մէջ, պիտ՝ կոչնա՛կ մը ըլլայ,
Որ՝ պիտ՝ հրնչէ հանդիսաւոր, հրրճուագին.
Եւ երբ ցաւիս՝ պիտ՝ մայր մ'իբրեւ քեզի գայ
Ու քաղցրօրէն ըսիտի՛ք խոտ'վ քու հոգին:*

Ծաղկուն ճիւղի պիտ' ունենայ բոյրն հեշտին,
 Ու թարմութիւնը զովանուշ առտուան.
 Ու գերագոյն ազնուութիւնը վըշտին.
 Եւ, քեզ օրհնէ պիտ' որպէս ձեռք մ'աստուածեան:

Դո՛ւն հոն գըտնես պիտի իմաստը յըստակ
 Շուքերուն որ կը շարժին մէջըդ տարուամ,
 Աննիւթական ըզգայնութեանց բովանդակ,
 Որոնցմէ զուրկ են երկինքները աշգամ:

Եթէ ապրիմ՝ ականջդ ի վա՛ր ըսեմ ես՝
 Պիտ' զայն մեղմիւ, իբր հա՛յր, ընկեր ու եղբայր.
 Իմաստն հոգւոյդ մէջ պիտ' մընայ այլապէս՝
 Քաղցրիկ յոյսի՛ ու լոյսի՛ պէս երկնավառ:



ԹԵԼԼՈՍ ԱՂՐԱՍ

Եւ, կեցած քանի կը դիտէի քեզ,
Հոգիս կը ճըզնէր զօդել այդ ամէնն
Այն բաներուն հետ՝ որ ա՛լ ինկեր են
Անցեալ օրերու խորունկը դէզ դէզ...

Քրնքշանո՛ւշ, անսիրոյթ եւ անվիշտ տըղեկ,
Տիեզերք մ'իմ մէջ տեսար բովանդակ
Զոր եօթ կրնիքով փակեր են, կողպանք
Խալ դըրեր որ ալ, չըրացուի՞ երբեք:

Եւ՝ ինծի յուսա՛լ տըւիր տակաւին,
Թէ իմ մանկական արցունքն աղաւէտ
Որ չէ ցամբած դեռ, պիտի իմ նամէտ
Աչուքներէն ես ճաշակեմ կըրկին:

ԿԱՌՔՆ ԱՆՁՐԵԻՒՆ ՏԱԿ

Կը սպասէ կառքն անծրելին
Տակ ժամերով առանձին,
Եւ փոյթ չի՛ր ըներ.
Կարծես թէ՛ ա՛լ աւելի
Զայն կը նեղէ ատելի
Թա՛ղն՝ որ զինք չուզեր:

Զիուկներն իր քովէ քով,
Նո՛յն ծածկոյթին տակ կարգով.
Ու լո՛ւռ կը սպասեն.
Այօ վայրին մէջ տըրտմահմայ
Շատունց է որ ոչի՛նչ կայ՝
Որ ընկե՛ր ընեն:

Փեղկեր չէկա՛ն, ո՛չ բակեր,
 Ո՛չ ալ սարսռուն բաղեղներ.
 Մէ՛կ հատ չըմբնաց՝
 Լապտերներէն այն կարգով,
 — Պըղինձէ զոյգ թեւերով —
 Քաջածեւ բացուած:

Վերնասեն՛ն ու ոռքն ինկան,
 Եւ, հովանցի՛կ. նեղ ա՛յնքան
 Միջնասենեակն ալ —
 Եւ ահաբեկ փախ տըւին
 Յիշատակներն, որպէս հին
 Կինե՛րն հեզափայլ:

Դատարկ ո՛վ կառք, խեղճ ու հին,
 Ա՛ռ քեզի հետ իմ հոգին
 Մէկտե՛ղ առ, զի՛ս ալ,
 Որպէս ճամբորդ, եւ իսկոյն,
 Երթա՛նք, ուրկէ եկար դուն՝
 — Դէպ՛ օրե՛րն անցեալ:

ՄԻՅՈՍ ԲԱԲԱՆԻՔՈՒԼՈՒ

Ծնած է 1900-ին Հիսրա կղզիին մէջ: Փոքր տարիքէն հաստատուած է Բիրէա՝ ուր գիմնադրոնի օրջանը աւարտելէ յետոյ մտած է համալսարան իրաւաբանութիւն ուսանելու: Ինքնագիր եւ թարգմանածայ բանաստեղծութիւններով աշխատակցած է թագմաթիւ զրական հրատարակութիւններու:

Ժ Ա Մ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

*Ըսպասեցի՛, ըսպասեցի՛, չեկա՛ր սակայն,
Բայց, սըրտէս ալ չըհեռացա՛ւ յոյսը իսպառ —
Ըսպասեցի՛ որ քեզ յանկարծ քերէր ճամբա՛ն,
Եկան ամէնքն՛ ու միայն դո՛ւն չերեւցար:*

*Եւ մընացի սըրճարանին մէջ միայնակ,
Այնպէ՛ս մինակ՝ ինչպէս մարդ չէ՛ մընացած դեռ,
Ձեռուըններուս մէջ ամփոփած գլուխս իբրեւ զանկ
Մը, զոր կեանքի եւ մահուան ցուրտ ցա՛ւն է կընքեր:*

*Ու, փակեցի այնտեղ, աչքերըս յոգնալիր.
Ու կոպերուս ետին յանկարծ տեսայ ըզքեզ.
Ձբխոտտացուած ժամադրութեա՛նն եկած էիր՝*

*Որ, այդպէսով, քեզ աւելի՛ շատ սիրեմ ես:
Ու քեզի սի՛րտս բացի զերթ դուռ, որ վերէն վար
Ծածկուած էր մահուան բողով մըթախաւար:*

ՔԵԻՔՐՈՍ ԱՆՔԻԱՍ

Դճած է Կիպրոս: 1929-ին հրատարակեց իր բանաստեղծութեանց առաջին հատորը, «Սեահակի Սալացներ» եւ 1930 ին, «Սուրբ Սաւանայ, Ողորմեա Ինձ», առանձին լաւ րեզոլուցիւթեան արժանացան հելլէն գրադարութեան կազմէ: Տարիներէ ի վեր վերադարձած է իր ծննդավայրը՝ եւ կը պաշտօնավարէ Մելեանեան հաստատութեան մէջ, իբրեւ Յունարէնի դասակ:

ՍՏԱՀԱ՛Կ, ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆՆ Է... (ՎԵՐՋԱԲԱՆ)

*Ստահա՛կ: Այս իրիկունն է ա՛յնքան աղուոր, ա՛յնքան աղուոր.
Կրնաս երթալ ու քնանալ նստարանի մը վրա՛յ, Ստահա՛կ.
Միտքը այս կեանքն ընդարձակեց, ա՛հ այնքա՛ն շատ, ա՛հ
այնքան շա՛տ՝
Որ՝ մարդ տունի փոխեց երկիրն ու տիեզերքը բովանդակ:*

*Արցունք չունիս որ արտասուես, ոչ ալ կորով որ տանջուիս դուն,
Ո՛չ ալ ճիչեր ջղազալա՛ր, կրնաս հանել յուսատուութեան.
Դուն լուռ ալիքն ես փոթորկի մը ահաւոր ու յարատեւ
Որ կ'անդորրի միշտ անհանգիստ, իրիկուան մէջ խաղաղական:*

*Ու երբ գտնես ազատութիւնն նստարանի մը երկարած,
Եւ ա՛լ լռէ մոլեգնաշունչ փոթորիկը քու այս կեանքին՝
Երբեք չըսես պիտի թէ՛ դուն յոգնած էիր, ո՛վ Ստահա՛կ
Դաժան ու խո՛ւլ պայքարներէն քու դաշնագուրկ, խո՛ւլ հոգիին:*

*Ստահա՛կ, Այս իրիկունն է այնքա՛ն աղուոր, այնքա՛ն աղուոր.
Կրնաս երթալ ու քնանալ նստարանի մը վրայ, Ստահա՛կ,
Միտքը այս կեանքն ընդարձակեց ա՛հ, այնքան շատ, ահ,
այնքան շա՛տ
Որ՝ մարդ տունի փոխեց երկիրն ու տիեզերքը բովանդակ:*

ՔԼԵԱՐԷԹԻ ՏԻՔԼԱ ՄԱԼԱՄՈՒ

Ծնած է Բրեվեզա: Հրասարակած է ֆերբուածներու հաճոք մը, «Անց-
փիս վշրայ» խորագրով (1922): Հրասարակած է նաեւ «Քիչ Մը Սիրոյ
Համար» եւ «Կանացի Հոգիներ» խորագրերով պատմութեան հատորները՝
որոնցմէ առաջինը արժանացած է Աթէնքի Ակադեմիի մրցանակին: Տիկին
Մալամա ի յայ» րնձայած է «Փոքրերու Համար» պատմութիւններու հա-
ւաքածոյ մը եւ աշխատակցած զանազան հանդէսներու՝ բանաստեղծական
թարգմանութիւններով եւ ժեսնիսական ու նկարագրական յօդուածներով:

Օ Ր Ն Ա Ղ Ո Ւ Ո Ր Է

*Օրն է աղուոր եւ այգն՝ անո՞յշ աւելի.
Կը թօթուըռուն ծառերն՝ որպէս լայնաբաց
Կանանչ թեւեր արեւազօծ — սիրալի
Ե՛րգ կը հրծծէ ակն անտառին սըրարբած:*

*Օղին սըրտին մէջ գերթ նաւակ, յուլաբար
Կը նաւարկէ թրուռն մը մեծ — ճիւղերուն
Մէջ կը սահի, վերէն, երկինքն հոյափառ,
Լոյսն իր ծաւի թորելով խո՞րն իմ հոգւոյն:*

*Հեռո՞ւ եմ նս կապանքներէն մահաբեր,
Մինակ այնպէս, այս տաճարին մէջ ազատ.
Ազատութիւնն իմ տօնելու համար, Տէ՛ր,
Թըռչուններուն նըման երգե՛լ կ'ուզեմ արդ:*

*Ու կը սկսիմ: Նորէ՛ն, նորէ՛ն...: Ի՛նչ կեղծ ծայն:
Սըրտիս խորքը, կաշոնս թէ մո՞ւնջ է, օտա՛ր:
Սակայն, ինչպէ՞ս, միթէ տըխո՞ւր եմ այդքան,
Ա՛յդքան մեռած որ տակաւին չե՛մ ըզգար:*

ԵՌԻԱՆՈՒՄ ԲԱՆԱԵԾՈՒՄՈՒԼՈՍ

Ծնած է Էքոլիֆո 1901-ին: Աթէնքի համալսարանին մէջ ծնած է զր-
բականութիւն: Հրատարակած է «Միջանայի Գիրքը» եւ «Քննարկան
Ուրուագծեր» քերականութեան հասօրենքեր, վէպեր, պատմականներ, ուսում-
նասիրութիւններ եւ քաղականական այլեւայլ գործեր:

Եռանկիս Խանութոթոբուլոս հեղին ժամանակակից գրականութեան
մէջ կը գրաւէ կարեւոր դիրք մը՝ թէ իբրեւ բանաստեղծ-գրագէտ եւ թէ իբ-
րեւ ներհուն քննադատ:

Ա Ղ Օ Յ Ք Ս Ի Ր Ա Յ Ի Ն

*Ոչի՛նչ այլեւս, որ վիշտըս քաղցրացրնել կարենար:
Քեզմէ՛ զատ քա՛ն չըմընաց, ո՛վ անյագուրդ իմին սէրս
Որ զերթ հրակ մ'առլըցուն կը տըրտիես սըրտէս ներս
Եւ արեցման մ'ես նըման, մըթախաւար, անդադար:*

*Իշխանատիպ սատանայ. հե՛ւք որ իմ մէջ կը հեծես
Կախարդական զերթ սըրինգ եւ սուլակի մը հանգոյն.
Ով հեռասոյգ ու չըքնաղ երկրի գանգիւն հեշտագոյն,
Խո՛ւրժ հըրեղէ՛ն նետերու, կ'ախորժիմ որ ցաւցընես՝*

*Զիս առաւել յարաժամ, եւ աւելի՛ զաս միշտ դուն
Խորո՛ւնկ: Պատրաստ ու անքուն ես կը սպասեմ օտանծին
Եւ սիրտս անքիծ է ինչպէս՝ կոյսն հարսնութեան վայրկեանին.
Ու մըտածումս ալ թըռչուն մըն է ծովու ափունքին,*

*Այիքի՛ն, խո՛ր այերին, երկինքին դէմ ասմագուն.
Այնպէս մինակ, անընկեր, պայծառութեան մէջ զըւարթ
Որ կը ծալէ թեւերն իր անդորրանքին դէմ անթարթ
Ու կը խոկայ պանդըխտութիւնն իր հեռուն:*

Խ Ո Ն Ձ Է Ն Ք

Գիշերն, գիշե'յն իր յոգնած թեւերը ծա'նր, յամբօրէն
Ցամաքներուն ու աննինջ ծովերուն վրայ կը պարզէ:
Աստղացոյթին մէջ լազուր, նաւերն ուրա՛խ կեցեր են,
Չարանճի սիւքը մինչ առագաստներն կ'ակօսէ:

Երբ դիմացի լեռներէն բացուի վաղն ա'յգը գերթ վարդ,
Երբ ցանկորմի պէս գարնան' ծիծաղի ծո՛վն համբօրէն.
Նաւաստիները կապեն պիտի թիերը զըւարթ՝
Ու հեռանա՛ն թախծալից ու հրնամի ափերէն:

Լոկ դուն, նե'ղ սիրտ, որ ոչ մէկ հոպ ու քամի չի կրնար
Երկչոտ թեւերըդ շարժել դէպ նորանոր ափունքներ,
Կը խեղդըւի՛ս քու մըռայլ խորհուրդներուն մէջ յիմար,
Ու նըման ես բաց վէրքի մը որ գոցուիլ չի՞ զօրեր:

ԶԳԱՅՆԻԿ ՎԵՅ ՏՈՂԵՐ

Այս գիշերը՝ իմ թախիծն հեշտացուցած է այնպէս՝
Որ, ես կեցած եմ թաքուն քու մահիճին դէմ կարծես,

Ու կը շընչեմ հոգեւին քու սիրոյն վարդն հոտեւան
Որ ըլլամ ե'ս ալ ազնիւ գեղեցկութեանըդ նըման,

Եւ մարմինիդ անմեկին ծաղկին վըրայ դիւթական՝
Հակիմ, նընջեմ, մահանա՛մ:

ՔՈՒԼԻՍ ԱՆԵՔԻՍ

Հայ բանաստեղծութեան անկեղծ ու բանկազին բարեկամը: Նրան է Լալոնիոյ Արեւաբոյիս հաղափին մէջ 1903-ին: Արեւի համալսարանին մէջ գրականութիւն եւ օրէնագիտութիւն ուսում է եւ ներկայիս, Ելեմսական նախադասութեան պատճառով: Գրել սկսած է շատ կանուխէն, աշխատակցելով երիտասարդ գրողներու պարբերականներուն, ինքնագիր քերթումներով եւ ժրմուսացի: Գերմանացի եւ Իսպանացի բանաստեղծներէ քարգմանութիւններով: Հրատարակած է «Մենաւոր Պայտներ», «De Profundis» եւ «Սիրոյ Առաւելին Տակ» քերթումներու հատորները, ինչպէս նաեւ Եւրիպիտէի ողբերգութիւններէն «Մեսէա»ի եւ «Ելեկտրա»ի քարգմանութիւնները: 1937-ին, այս հատորի քարգմանչին հետ ծանօթանալով, անոր գործակցութեամբ հագելին նուիրուեցաւ հայ բանաստեղծներու զործերէն հաշմանքներու քարգմանութեան զորս 1938-ին ի լոյս ընծայեց «Արմենիփի Մուսայ» (Արմենական Մուսայ), անուն հատորով, որ մէկ քանի ամիս յետոյ արժանացաւ Ռ. Տալաղութեան ու հեյլէն գրողասներու գրեթէ միահամուռ ներքողին:

Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Ամէն ինչ գեղեցիկ էր. շրջի՞ր աւելի.
Աւելի՞ էր ազուր որ այգաստողին լոյսն անպակ.
(Կը յիշեմ, նրոնենուոյ ծանրաբեռն ճիւղ մ'հիմակ,
Որ բոյրով կը լեցնէր մեր տրնակը համակ)
Ամէն ինչ գեղեցիկ էր, շրջի՞ր աւելի:

Ամէն բան ազուր էր եւ ազուր ալ մընաց,
(Մեր տունը, նրոնենին եւ ծովը կապտագոյն
Ա՛, ծովը մերթ ճիշտ լեռ. մերթ մետա՞քս ծրփծրփուն)
Ամէն ինչ ազուր էր եւ մընաց միեւնոյն
Ա՛հ, լոկ ես տարբեր եմ, միայն ե՛ս եմ փոխուած:

Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Այս ժամուն հրբ կ'անծրեւէ, մա'յր, կը խորհիմ ես քեզի
 եւ կըսկիծէս կը հոսի
 Կիզող արցունքը իմին.
 Ես չեմ կըրնար հաւատալ — այսրան ապրած ըլլալով —
 Թէ պիտ' չըզանք իրար բով՝
 Ա'լ այս երկրի երեսին:

Կարծես զքեզ կը տեսնեմ: Շրջազգեստով պա՛րզ, երկայն,
 Ձոր կը պատէր միմիայն
 Բանուած երիզ մը խոնարհ.
 Անսեթեւեթ շապիկով, եւ սրճագոյն լաջակով
 Եւ անոր տակ՝ կապտածով
 Գու աչուրները պայծառ:

Անգէ՛տ, անփորձ պատանի մ'էի դեռ ես, ապաշնո՛րհ,
 Անպիտան հո՞ղը երբոր
 Ըզքեզ խըլեց յանկարծոյն.
 Եւ, որբութիւնը չէ՛ի գիտեր, մայրիկ սիրական,
 Թէ հոմանիշ էր դաժան
 Փոթորիկի մըշտագոյն:

Բայց ա՛րդ: Աւա՛ղ, դառն ունիմ փորձառութիւնը երբոր,
 Եւ յափրացած եմ բոլոր
 Սին տենչերէն ալ կեանքին՝
 Կ'ըմբըռնեմ թէ շուքիդ տակ ապրիլն ինծի ի՞նչ կ'արժէր
 Թէ՛ ինծ համար սիրող ի՞նչ էր,
 Ի՞նչ տաքուկ լանջը քուկին:

Որովհետեւ, աւելի ո՞վ պիտ' հրրճուի ինձ համար
 Երբ կեանքին մէջ, հոյաւիառ
 Ծաղկի բան մը գեղեցիկ.
 Եւ տակաւին, թէ չարիք մ'ելլէ յանկարծ իմ դիմաց
 Ո՞վ ցաւակցի պիտ' սրբոտանց
 Քեզի չափ ինձ, ո՞վ մայրիկ:

Այս ժամուն երբ կ'անծոնէ, մայր, կը խորհիմ ես քեզի
 Եւ կըսկիծէս կը հոսի
 Կիզող արցունքը իմին,
 Ես չեմ կարող հաւատալ — ա'յսքան ապրած ըլլայով՝
 Թէ՛ պիտ' չըզա՞նք իրար քով
 Երբեք երկրէ երեսին:

ՅՈՒՋՈՒՄ՝ ԿԵԴՐՈՆԻ ՄԸ ՄԷՋ

Դէ՛մս են նըստած. մօտի՞կ: Ոտքերն՝ կուշտ-կուշտի:
 Աւելի նէ կը խօսի, ան՝ կը ժըպտի:

Բայց, հրբ լուռ իսկ են շրթունքներն երկուքին՝
 Կը զգաս անոնց սէրն ու գորովը, կըրկին:

Փո՞քր, աննըշա'ն բաներ անշուշտ. եւ սակայն,
 Կ'արցունքոտին իմ աչուրներն, երբ միայն

Անոնց ձեռքերն ես կը տեսնեմ ազուցուած,
 Այսպիսի սէր մ'ես սեպէի պէտի զա՞նձ...:

Պ Ա Ն Դ ՈՒԽՏ ԻԷՐ

Էկո՛ւր կրրկին, պանդըխտացած ո՛վ իմ սէր.
Քե՛զ կ'ողբայ տունն ամբողջ կ'ըլլայ երբ իրկուն.
Բակի աղբիւրն ու պատըշգա՛մը լըբուն,
Ծաղկանօթի գիրգ շուշաննե՛րն ու վարդեր:

Քե՛զ կ'որոնեն՝ մեր նաւակին ղեկն անտէր,
Սիւքն, ալիքներն ալ ծովափին ծրփծրփուն.
Քեզի՛ համար կու լայ սոխակն, օրն ի բուն,
Քեզի՛ համար կը հեծեծէ սիրտն իմ դեռ:

Մերթ ալ, — վա՛յ ինձ — երբոր գիշեր ժամանակ
Կ'անծրեւէ դուրսն ու հովերը կը սուլեն՝
Կ'ըսեմ «կու գայ, ահա՛, անոր քայլերն են...»

Եւ կ'ելլեմ դուրս: Սակայն դուն չե՛ս: Մոլորանքն
Ա՛լ կը պատէ զիս թեւերով իր դաժան
Եւ կ'ուշանայ լոյսն ալ՝ որբա՛ն, ա՛հ, որբա՛ն...

Մ Ա Ր Տ

Մա՛րտ է, Ծիլե՛ր ծաղկեցան
Գերեզմանիդ հողին վրան.
Եւ կը շողայ ոսկեպառ՝
Արեւն երկնին մէջ պայծառ
Ելի՛ր, հրեշտա՛կ սիրական,
Գերեզմանիդ հողին վրան՝
Մարգարիտնե՛ր ծաղկեցան,

ԿԸ ՆԸՆՁԵՍ ՔՈՎԱ ՔԱՂՑՐՕՐԷՆ...

Կը նընջեա քովս քաղցրօրէն...: Շուշանի պէս դաշտային՝
Մարմինդ անո՞յշ կը բուրէ, սաւանին վրայ լեզակի:
Վաղուց է որ դայլայլանքդ դադրեցաւ սոխակին,
Ու գիշերին մէջ անդորր, միայն հե՛ւքըդ կը չոսուի:

Մէկ թեւդ մե՛րկ, վարդաթոյր կուրծքիդ ձրգած յուլօրէն,
Միւսն՝ անխըռով երկարած բարձին վրայ ձինսավառ.
Ինձ ցոյց կուտան քանդակեալ՝ վարանու՛մերդ համօրէն,
Որ տենչարիս դ'մ՝ անոյշ նս.հանջեցի՞ն յամրաբար:

Հիացիկ քե՛զ կը դիտեմ եւ չե՛մ եւ չե՛մ յագեցնար:
Նըման ես պերճ արծանի մը լոյսին տակ յուսնակին.
Որ, սողալով լայնարաց պատուհանէն, քաղցրաբար
Կը պարուրէ հրմայքովը քեզ աղուո՞ր պմառին:

Մըտքէս իսկ չէ՛ր անցներ — Տէ՛ր — երջանկութիւն մ'այսբան խոր
Երբ ուռիին տակ, այնտեղ, կը նայէի քեզ ծածուկ.
Եւ յետոյ, երբ անցնելով ծառուղիէն մըշկաթոր՝
Եկար քովիկըս նըստիլ երկիւղանքո՞վ, կամացուկ:

Կեռասի պէս գեղեցիկ, բոսոր շըրթունքըդ պրրկուած.
Կը դողդըղար յուզումէդ ու մեղմօրէն թըրջած էր,
Քըրտինքէն՝ որ դէմքիդ վրայ յանկառօժակի էր պըտողած՝
Ջերթ ադամանդ, ու հոգւոյդ թաքուն յո՛յր կը մատնէր:

Կը նընջե՞ս քովս, ո՞վ շուշան, եւ քաղցրօրէն պիտ' զարթնուս
Բայց, խուսափի՞ պիտի այս աղուոր վայրկեանը յոյգին.
Ու մեզ մընան պիտի լոկ յուշեր անմիտ ու անոյշ
Գիշերէն՝ զոր այնքան բո՛ւռնի ապրեցանք միասին:

L I B I D O

Եւ խորհուրդիդ մէջ ամենէն պայծառ,
Ու թախծիդ մէջ ամենէն խորունկ՝
Հառաչի՜ հեղեղ, կու գայ տենչը վառ,
Բարձրացրնելու հոգիդ ի շըրթունք:

Ու դո՛ւրս կը նետուիս, ո'եւէ ձեւով,
Խեղդելու հրրայրքն այս հոգեքաղիչ.
Կ'ելլես՝ ո'ր ժամուն ըլլայ, ուզելով՝
Ա'յս, միմիայն այս, եւ ուրիշ ոչինչ:

Կ'ելլես ցերեկին, զիշերներն անգամ,
Եռեւեփին մէջ քաղքին, կ'օրօրուիս,
Կ'ը խօսիս հազար բանի շուրջ, սակայն,
Քեզ ա'յս կը տանջէ եւ ոչինչ ուրիշ:

Ու տուն կը դառնաս, երբոր վերջապէս
Ա'լ պաղած է քեզ մըրկող տենչը վառ.
Մարմինդ՝ թեթե՛ւ թրուունի մը պէս,
Այլ սիրտըդ սակայն, ծա'նր՝ ինչպէս կապար...:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Ձմեռ էր: Ծո'վը մեր բով գիշերտան մէջ կը լողար,
Ու կը հըպէր ձեռքերուդ՝ ձեռքս յուլօրէն, դողահար:

Ձէ՛ր խօսեր: Ո'չ ալ ես: Բայց, հրնօրեայ հէքեաթն էր
Որ նրկուքիս ալ կուրծքին տակ յամբօրէն կը հիւսուէր:

Ո՞ւր ես արպեօր: Ո՞ր ձեռքերն կը վարեն կեա'նքդ հիմա.
Քե՛զ կը խորհիմ եւ աչքերս՝ կ'արցունքոտի՜ն ակտմայ:

Ա Շ ՈՒ Ն

Կը ծեծէ ճիւղերը դո՛ղ մը ցրտոնն •
(Որքա՛ն գօս տերեւ խորունկն իմ սըրտինն)

Կ'երթան թրոչուններն շուքերու հանգոյնն
(Անցա՛ծ տարիներ, յուշե՛ր քաղցրագոյնն)

Մութ ու ծանր ամպերն Կ'անծրեւէ՛ յուշիկն
(Ա'հ, կանա՛նչ օրեր, դուք ե՛տ դառնայիք)

Կը ծեծէ ճիւղերը դո՛ղ մը դաժանն
(Սըրտիս մէջ ո՛րքան գօս տերեւ աչնանն)

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒՆ

(Ուպէս նախաբան «Արմենիֆի Մուսա»-ի)

Արարատի կատարէն — ո'վ արծիւներ —
Ուր հանգչեցաւ օր մը տապա՛նը Նոյեան,
Ահաւասիկ մեր մէջ էք դուք — եղբայրնե՛ր
Ճակատագրի, տառապանքի՛, դառնութեանն

Ո'րքան ջերմին է գերրնտիր ծայրը Ձեր:—
Թէ կը կանչես մեզ ոլորտներդ լուսաման,
Մո'գ եղիշէ 'Իտրեան, կամ 'Իո'ւն, կարեմէր
Կը զառանցես տորտմաթախիծ ո'վ Տէրեան,—

Մեզ կը կարթէր, կ'արբեցընէր էովին,
Մեզ կը տանիք դէպ' աշխարհներ հոգեհմայ.
Աստուածայի՛ն Վարուժան, ո'վ Գաթիպա.

Եւ դեռ այնքան եղանակներ, նո՛ր եւ հին:
Խորախորհո՛ւրդ Ձեր նըւագէն երանի՛
Թէ սակաւի՛կ մ'այստեղ տըւած ըլլայի...

ՆԻՔԻՖՈՐՈՍ ՎՐԵԹԱՔՈՍ

Ծնած է Լակոնիոյ մէջ: Հասարակած է «Մարդուն նամածը-
նութիւններ», «Կարուպին Նամակ», «Հրեշտակապետին ճամբարդութիւ-
նը», «Կրակին Գաղտնիացումը», «Պաղկեհներ Վերջալոյսէն» եւ այլ բազ-
մաթիւ բանաստեղծական հասոյթներ ինչպէս նաեւ «Մերկ Տղան», «Գաղա-
նը» արձակներ:

Վրեթաքոս իր հայրենակցին Քուլիս Ալեքիսի նման եղած է ջերմ եւ
անճանախնդիր հայասեր մը եւ ամէն առթիւ ապացոյցը տուած իր հայա-
սիրական զգացումներուն:

Հեռագայ Ներքուսմը՝ գրուած 1938-ին, ձօնուած է այս գրքի քարգմա-
նիչին:

ՀԱՅ ԳԱՂՈՒԹ

Դո՛ւք՝ հրեշտակներ անտէ՛ր ու թըշուառ,
Որ օր մ'երկիրէքէն եկաք դէպի վար:

Եւ Արարատի լանջէն իջնելով
Մինչեւ հոս հասաք փոշեպատ ուրբով:

Կը շողան՝ դէմքերն ձեր փոթորկակէզ,
Երբ կորագրուէի կ'անցնիր առջեւէս՝

Քարշ տալով ձեր վի՛շտք, ազնիւ ու հին,
Քառեակ անկիւնները այս աշխարհին:

Ի՛նչպէս ալ խորհիմ, ի՛նչ որ ալ ընեմ՝

Դադտնիք մը կայ, զոր պէտք է որ ըսեմ:

Կուրծքիս տակ բո՛ց մը, ցա՛ւ մը կը շարժի

Զի դեռ ժամանակն անդունդ կը վիժի:

Եւ ոչ մէկ տեղէ՛ դեռ չի՛ երեւիր

Հրաշափառ աւօ՛տը խաղաղալիր:

Համամարդկային, քրիստոնէական,

Զերեւաց դեռ լոյսն ալ կախարդական:

Երբ համբաներէն ցեխոտ ու մըթին
 Կ'անցնիմ ես յաճախ ձեր հին կայանին՝
 Դարձնելով աչքերս դէպ՝ երկինքն անհուն՝
 Հարց կու տամ ինձի — ո՞վ երջանկութիւնն
 Արեւուն կրրնայ մէկուն զըլանալ.
 Միթէ եղբայրներ չե՞նք մենք ամէնքս ալ,
 Միթէ հաւասար չե՞նք Ոչինչին եւ
 Այս յաւերժական շրնութեան առջեւ:

Ինչպէ՛ս ալ խորհիմ, ի՛նչ որ ալ ընեմ՝
 Գաղտնիք մը կայ զոր պէտք է որ ըսեմ.
 Որքան մեր՝ ծե՛րն է երկինքն այս նոյնքան.
 Լեռներն արիւնոտ, երկինքն անսահման,
 Զի՛ ազատութեան եւ սիրոյ համար.
 Ով մարտ կը մըղէ եւ ով անդադար
 Կը բանայ այերն ա՛լ աւելի լայն՝
 Ի խրնդիւր օրուա՛նը յաւերժական,
 Ո՛վ հորիզոններն անդուլ կը պեղէ՝
 Հայրենիք ո՛ւր որ ըլլայ՝ կը գըտնէ:
 Զի՛ արեւուն պէս, մարդն ալ կը ծընի
 Առանց խրտրութեան, առա՛նց սահմանի
 Լուսաւորելու աշխա՛րհն ամենայն:

Ինչպէ՛ս ալ խորհիմ, ի՛նչ որ ալ ընեմ՝
 Գաղտնիք մը կայ զոր՝ պէ՛տք է որ ըսեմ.
 Բաժակներն առէք ազնիւ թախիժով
 Դէմքերն արեւելք դարձուցէք յոյզով,
 Եւ խումբն ամէնքս, ամէնքս այս իրկուն՝
 Գաղթականի բախտագուրկներուն
 Եւ ողջ աշխարհի անտէր ու թրշուառ
 Մեր եղբայրներուն կենացը համար:

ԼՈՒՍԱԲԱՅ՝ ՍՈՒՆԻՈՅԻ ՄԷՁ

Համադրորո՞յթ մըն եմ օտա՛ր մեծութեան.
 Ինչ որ իմ մէջ կը տեսնես դուն, օտա՛ր են,
 Բան մը՝ քեզմէ՛, արեգակէ՛ն ու ծովէն.
 Բան մ'անտառէն ու տարերքէն գիշերուան:

Ծրբ ես մեռնիմ՝ պիտի իր տա՛րրն ե՛տ առնէ
 Լո՛յսը, ծո՛վը եւ անտառն ու լուսընկան.
 Ու տեղս պիտի մընայ լրոտ՞յթը միայն.
 Իսկ այս հոգին՝ զոր կուրծքիս տակ կը կըրեմ

Անկէ ի վեր, որ երկինքէն հոս ինկայ՝
 Երգերուս մէջ պիտի ցըրուի՛ երկրի վրայ:

R E Q U I E M

Տըրտում ողջոյնս յետնագոյն, ընդունէ՛, ո՛վ իմ արեւ,
 Ու մի՛ փրշրեր լոյսդ այլեւս կոպերուս վրայ ամրափակ.
 Հիր ճաճանչներդ կապէ մագերուս շուրջ զերթ պսակ
 Որ ես երթամ գիշերին՝ պըճնեալ գառնո՛ւկ մը իբրեւ:

Ոսկորներուս ու սառած ծուծերուս մէջ. տակաւին
 Լըսէ՛, առուակըդ ինչպէ՛ս կը գըլգըլայ հեշտօրէն.
 Ո՛վ արեգակ, դուն շողա՛յ միւս տըղայոց վրայ նորէն
 Գերեզմանիս հողին շուրջ երբոր խաղան հըրճուագին:



ՆԻՔՈՍ ՀԱՅԷՐ-ՊՈՒՖԻՏԻՍ

Իմանալ է մթէն: Կրթութիւնը ստացած է Գահիրէի Ֆրանսական Լիսէին մէջ: Հրոստատակած է «Երգեր Աշդիական Եղանակներով», «Աւդիական» «Ներ Մանիֆէստ» եւ այլ բանաստեղծական հասօրներ: Վարած է ռաճ մը ճարտարաբերքերու խմբագրութիւնը:

ԱՂԵՐՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ՝ ՓՈՔՐԻԿ ԿՈՒՋԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Չերեւեցաւ, իրա՛ւ... (գիշեր է արդէն)
— Պատըզգամին մէջ, իրիկունան այս պահուս՝
Կը յայտնըւէր ինչպէս ամէն օր դէմէն —
Պըզտիկ տըղան՝ որ հիւանդկախ է եւ կուզ...:

Պատուհաններն իր լուսաւո՛ր են սակայն.
Եւ փեղկերուն ետին, փակուա՛ծ ամբողջն,
Կ'երթեւեկեն շուքեր խըռով ու տարտամ,
— Ա՛հ, Տէ՛ր ըրէ՛ որ արտասուք չըթափեն...:

Ա՛յնքան է հեզ, ո՛վ Տէր, այնքան, պարզունակ
Եւ իր հոգին՝ այնքա՛ն, ա՛յնքան վըշտահար.
Պատըզգամին մէջ կը կենայ միայնակ
Երբոր գիշերն իջնէ լըռին ու խաւար:

Միջօրէին՝ ան ժամերով կը կենայ
Փակ փեղկերուն ետին, եւ ո՛րքան ուշով,
Կը հետեւի միւս տըղայոց, ճամբուն վրայ,
Երբ կը խաղան ուրախ ու սո՛ւր ճիչերով...

Ան չի խաղար եւ նոյնիսկ չի՛ յանդրգնիր
 Փողոց իջնել ու վազվրզել հըրճուագին.
 Սր մ'երբ վազեց՝ միւս տրդաներն հեզնալիր
 Փախան յանկարծ զինք ձրգելով առանձին:

Մօր հարցումին՝ թէ ինչո՞ւ ի'նք ալ չերթար
 Խաղալ ինչպէս միւս տրդաները ամէն.
 «Զեմ ախորժիր» կ'ըսէ ծայնով դողահար,
 Ու զինքը շա՛տ տառօրինակ կը կարծեն:

Ապա՛ դասերն իր կը սերտէ, առանց որ
 Ոեւէ մէկն օգնէ իրեն, բարձրածա՛յն...
 Զայնն իր կարծեա Մահուան կոչունքն է, երբոր
 Կ'արծազանգէ խաւարին մէջ տրրումական:

Հագիւ մրթնած՝ կը բարձրանայ պատրշգամ,
 Կ'ընդերշմարուի ոչ իսկ մութին մէջ անհուն:
 Կաւէ ճրնճդուկ մ'է խաղայիքն իր միայն,
 Որ, կը սուլէ նոյն եղանակն անդադրում:

Բայց, այս իրկուն չերեցա՛ւ ան: Եւ փակուած՝
 Իր սենեակին մէջ, կը դողա՛ն շուքերն յար...
 Օ՛, կը վախնամ, ես կը վախնա՛մ, ո՛վ Աստուած
 Խէ պատահած ըլլայ անոր րա՛ն մը չար...

Տրրումու թիւնո՛վ է մեշտ հոգին համակուած...
 Եւ հիւանդիախ, կո՛ւզ է փոքրիկ հէք տրդան...
 Դէթ բրէ՛, Տէ՛ր, որ իր հոգին ցաւատանջ՝
 Ըլլայ խաղա՛ղ, ըլլայ հանգի՛ստ յաւիտեան...

Ու, թէ մեռնի պիտի՛ թող այդ չոգիտնա՛յ..
 Տեսիլքի մը մէջ բաղցրանոյշ ու անմեղ՝
 Թող տեսնէ թէ՛ իր թաղին մէջ կը խաղայ
 Ի'նք ալ ահա՛, միւս տրդայոց հետ մէկտեղ....

ԲԱՎԼՈՍ ՔՐԻՆԵՈՍ

Բռն անունով հար. Միխայիլիսիս: Նրանք է կիպրոս 1903-ին: Նախնական կրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ յետոյ եկած է Աթէնք եւ հետեւած ռամալուստանի փիլիսոփայական ճիւղին: Գրած է բազմաթիւ բանաստեղծութիւններ որոնք ցուած կը մնան քերթերու եւ պարբերականներու մէջ: Տարիներէ ի վեր մարզական շաքաթաքերթի մը խմբագրութիւնը կը վարէ:

Ս Ղ Ե Ր Ս Ա Պ Ր Ի Լ Ի Ն

Ապրի'լ, դուն որ տըւիր բոյր նո'յնիսկ ձիու մրսուրին,
Եւ քարերն ու խիճերն ալ դալարիքով պրճնեցիր.
Որ, պարգեւած ես անշարժ ջուրերուն իսկ ճահիճին՝
Փայլիայանքներդ անուշակ եւ համբոյրնե՛րդ արփալիր.

Ապրի'լ, դուն որ գօսացած եւ անծրեւէն ծերացած՝
Ճիւղերո՛ւն վրայ իսկ ռացիո՛ գեղածիծա՛ղ կոկոններ,
Որ, եթերն՝ ուր քամիները կ'ոռնային մոլեգնած՝
Դայլայլանքով ու լոյսի հեղեղով եւս ողողեր,

Դեղձան Ապրի'լ գեղեցիկ, չեկար միայն իմ սըրտի՛ն՝
Որ քեզ վաղուց կը սպասէր, անձկակարօտ, յուսալով՝
Թէ ծաղիկ մ'ալ կը բերես իրեն, հոգ չէ', դաշտային
Շուշան մը պարզ, մանիշակ եւ կամ յասմի՛կ մ'արփաթով:

ՄԻՆԱՅԻԼ ՍՓԱՍԻՆՈՐՈՒԼՈՍ

Ծնած է Գալստաթա 1903-ին: Աթենքի համալսարանի իրաւաբանական ճիւղը աւարտելէ յետոյ պատճօն ստանձնած է Պեթական խորհուրդին մէջ, աւել կը գտնուի ցարդ: Աշխատակցած է գրական շատ մը հանդէսներու, ինքնագիր բանաստեղծութիւններով: Իւր քերթուածներուն մէկ մասը հրատարակած է փոքրիկ պարտիզ մը:

Ա Ջ Կ Ա Պ Ո Ւ Կ

Թաշկինակով մը ճերմակ
Աչուրներըդ կապեցին,
Ու ծըգեցին, աղջընա՛կ,
Որ փընտոռես բախտդ առանծին:

Թա՛ք-Թա՛ք, բեզի՛ հըրաւէր
Կ'ուղղեն մայթերը երկու,
Ու կը փընտոռես՝ չե՛ս զըտներ,
Պըզտի՛կ աղջիկ, բա՛խտը քու.

Ամբողջ իրկունը, Թաք-Թաք,
Կը խարխափես, փո՛քը աղջիկ,
Կը շողայ շուրջդ արեգակ՝
Դուն՝ մութին մէջ անոքիկ:

Թաշկինակով մը ճերմակ
Կապեցին մեր աչուրներ,
Ու թողուցին մեզ մինակ՝
Փընտրոռելու բախտը մեր

Թաք-թաք, կ'ելլէ արեգակ,
 Կը կանչեն մեզ ամէն դի,
 Խարխալեցող ման կուզանք
 Լոյսերու մէջ ու մութի:

Ու մինչեւ որ աչքերէդ
 Այդ թաշկինակը քակեն,
 Պըզտիկ աղջիկ, տըրտմաւէտ
 Պիտի գայ մութը արդէն:

Մինչեւ որ մեր աչքերէն
 Քակեն հանեն թաշկինակն՝
 Մեր օրն անցած, եւ արդէն՝
 Բախտն ալ գըտա՞ծ պիտ' ըլլանք:



ԱՐՈՍՔՈՒՆՍ ՄԱՆԿԱՆԱՐԻՍ

Ծնած է Զմիւռնիա, 1904 ին: Աւարտած է տեղւոյն Աւետարանական վարժարանը եւ մեկնած Գերմանիա՝ բարձրագոյն կրթութեան համար: Աւարտած է նաեւ Աթէնքի համալսարանի իրաւաբանական ճիւղը: Իւ առաջին բանաստեղծութիւնները հրատարակած է ծննդավայրին մէջ, 1920-ին: Աթէնքի մէջ հրատարակած է «Ճամբորդութիւնը», «Առաջին Հանգրուանին» եւ «Միւս Ճամբան» բանաստեղծական հատորները եւ պատմութեամբ եւ հաւաքածայ մը: Գրած է նաեւ «Սեւ Թռչուններ» անուանով թատերական միաբար գործ մը: Ունի բազմաթիւ թարգմանութիւններ եւ գրադասական յօդածներ պարբերականներու մէջ:

Ա Ղ Ո Ւ Ո Ր Ա Շ Խ Ա Ր Հ

Ի՞նչ աղուոր է, Տէր, աշխարհդ արդարեւ,
Այժմ որ կը կրքին ծառերն անտերեւ,
Ու կը ծորեն վի՛շտն իրենց մեր վերեւ:

Բռն մը աստղերը մեր ճամբուն վըրայ
Կը հեղուն իրենց լոյսերն արծաթեայ
Եւ հոսանքին մէջ կը խաղան ահա՛:

Կ'ըսես կուլ տամ ես իմ փակուած ափով
Ամէն մէկ կաթիլ անձրեւին քու զով
Կը բերէ զոր հովն անոյշ բոյրերով:

Մերթ ընդ մերթ ալ, Տէ՛ր, լոկ ծաղկով մը մեզ
Կը խաբէ աշունն ու առաջունն պէս՝
Կը ծրփայ դարձեալ զարո՞ւնը կարծես:

ՆԻՔՈԼԱՍՍ ՔԱՎԱՏԻԱՍ

Նա առաջի-բանաստեղծ: Հրատարակած է «Մարտիպո» եւ «Բուսի» խորագրերով բանաստեղծութեանց հատորներ: Կ'աշխատակցի գրական կա-
րենուր համագէտներու:

Կ' Ո Ւ Զ Է Ի

Ես կ'ուզէի մընալ միշտ փոքրիկ. անմեղ այն տղան՝
Որ, սենեակէն իր ցրտին երբեք, երբեք դուրս չելլեր.
Որ, գրչխահակ կը թերթէ անվերջ գիրքեր այլազան,
Մինչ՝ դէմք գինք կը դիտեն կարգով կեցած հրտպիտներ:

Որ, ունի սիրտ մը խաղաղ, երկչոտ՝ փոքրիկ թըռչոյ պէս.
Որ, մայրիկէն զատ ուրիշ եւ ոչ մէկ կին կը մանչնայ.
Որ, ժամերով կը մընայ անխօս, անկիւն մը, այնպէս,
Իր սիրական պուպրիկը սեղմած ամուր կուրծքին վրայ:

Որ, ցրտաշունչ ու մրուայլ իրիկուններն աշնային
Պատուհանին քով նըստած, մամբաները դիտելով,
Ճամբորդութիւն, անծանօթ կ'ըզոյս փփեր հոգիւին,
Որոնց մասին կարդացած, երազած է օրերով:

Եւ իրիկուն մ'ալ ծրմրան, երբ ամէն ինչ ըսքողած
է դուրսը ծիւնն, իր մըռայլ սենեակին մէջ կը մեռնի՜.
Եւ Մահը, զայն տանելու, տպէս հրտպիտ է եկած
Ու դէմք գինք կը դիտեն՝ խեղկատակներն՝ երբեմնի:

ՄԱՐԻԱ ԲՈԼԻՏՈՒՐԻ

Ծնած է Գալամաթա 1905 ին: Հրասարակած է «Խաղաճապներ Ուկր Մարին» եւ «Արձագանգ Քառսին Մէջ» քանասեղծութիւններու հասօրները, գրուելով հեղին քանասեղծութեան մէջ իր արժանաւօրսեղը՝ իբրեւ վօսի եւ սիրոյ լաւագոյն երգչուհիներէն մէկը: Բալիսուրի մեռաւ հիւծախտէ՝ 1930-ին:

Ք Ո Ւ Մ Օ Տ

*Քու մօտ՝ չե՛ն ոռնար հողմերը վայրի,
Քու մօտ՝ անդորրանք ու լոյս է բարի.
Ոսկեայ կարժառին վըրայ մեր մըտքին՝
Վաղագոյն խոկեր լոկ կը փաթթըին:*

*Քու մօտ՝ լըռոյթն է ժըպիտին նըման,
Զոր կը ցոլացնեն աչքեր դիւթական,
Եւ մերթ, երբ զրուցենք՝ բերկրանքը յանկարծ՝
Տեղ մը կը թօթուէ թեւերը թըմրած:*

*Քու մօտ՝ կը փըթթի թախիծն որպէս վարդ,
Ու կը թափանցէ կեանքին մէջ հանդարտ.
Քու մօտ՝ ամէն ինչ քընքո՛ւշ է այնքա՛ն,
Գըզուանքին, ցօղին ու հեւքի՛ն նըման....:*

Օ՛, ԻՄ ԼԱԼՈՒՍ ԴՈՒՔ ՄԻ՛ ՆԱՅԻՔ...

Օ՛, իմ լալուս դուք մի՛ նայիք,
Հոգիիս մէջ թախիծ չըկա՛յ:
Ունէի ի՛նչ որ գեղեցիկ՝
Գընա՛ց, մինա՛կ եմ ես հիմա:

Շընորհ չունի՛ ալիւերս կեանքս,
Չունի՛ բերկրանք, չունի՛ եւ վիշտ.
Ու չեն խըլած եթէ նայուածքս՝
Բացակա՛յ է իմ միտքը միշտ:

Շուքերուն հետ կը շըրջիմ յար.
Ջիս պատած է առանձնութիւնն,
Սլիւեւս վայրերը չե՛մ ճանչնար,
Կը զգամ թէ թանձր կը տեղայ ձիւն:

Կը կախարդէ զիս հոս ոչի՛նչ,
Այնտեղ՝ ոչի՛նչ զիս կը տանի.
Կը սեղմուի խոհրտ քիչ-քիչ,
Մինչ սիրտս անդուլ վա՛ր կը հակի:

Օ՛, մի՛ նայիք լալուս: Թերեւս՝
Սովորութի՛ւն մ'է հընամեայ.
Գաղտնիքներս ո՛ղջ կ'ըսեմ ալիւս,
Չեն արբեցներ երբ զիս հիմա:



ՔՈՍՅԱՍ ԷԼԼԻՆԱՍ

Բուն անունով Քոսյաս Տարինկոյ: Ծնած է Արէնք 1906 ին: Գերմանիոյ մէջ ուսած է Բիմիսդիստիլին: Աւելցած է բազմաթիւ գրական պարբերականներու: Հրատարակած է «Միջօրէ» խորագրով ֆերբուածներու համար մը: Գրած է հաւե պատմութիւններ եւ քատերական գործեր: Թարգմանութիւններ կատարած է Գերման գրականութենէն: Նեկայիս կը խմբագրէ «Մեր Գարը» գրական-գեղարուեստական ամսագիրը:

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵՆԷՆ ՅԵՏՈՅ

Սիրոյ պատմութիւնը նաւագի մը՝ որ գինեմով դարձաւ՝ շատ խմելէն: Ան՝ այս պատմութիւնը ինծի պատմեց իրիկուն մը, ծովափնեայ գաւառից գիւնեան մը մէջ:

Ճամբորդութենէս երբ վերադարձայ՝
Միասին շա՛տ քիչ զուարճացանք մենք:
— Ման եկանք ոտքով՝
Ու պտտտեցանք մերթ ալ սոնքալով՝
Թաքսիով, կառքով:
Մինչեւ որ, օր մ'ալ, վերադարձիս տուն.
Իմացայ՝ որ դուն
Ա՛լ մեռած էիր:
Քանի որ մեռար՝ թաղեցի՛ր թղի:
Դուն ինծի այնքա՛ն, ա՛յնքան սուղ նստար՝
Որ, այդ դրամով, ճիշտ երեք ամիս.
Պիտի կրնայի ես զուարճանալ:

Երկու օր անցաւ — եւ ես յիշեցի
 Յանկարծ, որ քեզի՝ համբուրած չէի:
 Եկա՛յ գիշերանց, եւ քեզի, հողէն,
 — Պահակը վըռնտա՛ծ էր զիս ցերեկին —
 Ես դո՛ւրս հանեցի: Բիչ մ'էի՛ր կանաչ
 Մէկ ոտքըդ, արդէն, հալի՛ւ էր սկսած:
 — Ա՛յ ձիւնին նըման ըսպիտակ չէր ան —
 Եւ կանա՛չ, վարնո՛ց՝
 Ապակիին պէս էր մորթըդ ամբողջ.
 Եւ կակո՛ւղ, խոնա՛ւ, դալարին նման...:
 Եւ հրը համբուրել ըսկրոսայ քեզի՝
 — Վերջին բարիքը զոր քեզի՛ ըրի —
 Մոռցայ պահ մը զիս — եւ յանկարծ խածի՝ շրթունքըդ վարի.
 — Ով դառնութիւն — ի՞նչ հալուէ:

Գիշեր երբ ըլլար՝ կը հանէի քեզ.
 Եւ առտուն՝ դա՛րձեալ կը թաղէի ես.
 Եւ կ'համբուրէի՛, կը սիրէի՛ քեզ:
 Բայց, վեցերորդ օրն — թազմանդ ու թերորդն —
 — Ո՛վ աշխարհ, գըթա՛ —
 Դեզ՝ միայն, միա՛յն մէ՛կ համբոյր տրւի.
 Ա՛յ չէի՛ կրնար, ա՛յ չէի՛ կրնար.
 Շա՛տ կը հոտէիր. .:



ՍՈՖԻԱ ՄԱԿՐՈՒՏԻ-ԲԱԲԱՏԱՔԻ

Ծնած է Կրեթէ: Կանուխէն հաստատուած է Աթէնք ուր սկսած է աշխատակցիլ գրական հանդէսներուն՝ ինքնագիր բանաստեղծութիւններով, զորս հետագային ամփոփած է «Սիրոյ Պահեր» խորագրով հատորին մէջ: Ազատագրուէն յետոյ ի լոյս բնծայեց բանաստեղծութեանց երկուորդ հատոր մըն ալ, ներշնչուած գրական քաջանի կեանքէն ու բռնակալներու դէմ մղուած պայքարէն: Տիկին Բաբատսափիս թարգմանած է Էլիզապէթ-Պաուլսոնիկի «Բարբուկալեան Հնչեակներ»ը եւ մէկ քանի վեպեր անգլ. գրականութենէն:

Ո Ի Ս Ո Ի Ց Չ Ո Ի Հ Ի Ն

Քանի՜ անգամ կ'առանձնանայ,
Կ'երթայ հեռու տրդաներէն,
Ու զինք տանջող հոգերուն վրայ
Կը մըտմըտայ ան դառնօրէն:
Օ՜, ոսկեղէն կեանքն անցնալի.
Երազներով ո՞րքան էր լի:

Յաջողութիւն, թողակ մ'ահա,
Փոփոխութիւն մը գէթ բախտի.
Երեք տարի մը պաշտօնեայ,
Ապա՛ պարման մը ծաղկատի՛
Որ պիտի զար ու զինք ընէր
Իր տրնտկին ու սրբտին տէր:

Բայց, չըքաւոր էր տունն իրեն,
Ու, կերակրել, աւաղ, պէտք էր.
Ծրնողք, քոյրեր իր թողակէն,
Ու վրճարել հին-հին պարտքեր.
Թողակն ալ, փոքր էր, չէր բաւեր.
Ու, միշտ կանխատ զայն կը գանձէր:

Մարա՛ծ է ալ, դէմքին վըրայ,
 Ամէն նըշան պարմանութեան,
 Հիմա, ո՛չ իսկ կը հաւատայ
 Իր ուսուցած բաներուն ան.
 Եւ օրէ օր, հէք վարժուհին
 Կը դառնայ ծեր ու ջըղային:

Ամուսնացա՛ն շատերն արդէն,
 Փոքրերն՝ հղան աղջիկներ մեծ,
 Զընջըւեցա՛ն մըտքին մէջէն
 Թէ ինք քանի՞ սերունդ կըրթեց:
 Անոնց վըրթ թող գարունին մէջ
 Կը համրէ ան օրերն իր շէջ:

Բայց, ամպիտին վըրայ կանգուն՝
 Անխոնջ, անդուլ կը քարոզէ
 Արդարութիւն, Ազատութի՛ւն,
 Ճաթած ձայնով մ'որ կը հընչէ
 Միշտ աւելի խրոպոտ ու ցած՝
 Հազազախտէն իր հընացած:



ԿԵՍԱՐ ԷՄՄԱՆՈՒԷԼ

Բանասեղծ ու քարգլանիչ: Հրասարակած է «Տարածայն Սրինգ» խորագրով հերթաւածներու հասօրը եւ գրական պարբերականներու մէջ քաղմաքիւ քարգլանաւորիւններ անգլիացի եւ ֆրանսացի բանասեղծներէ եւ մասնաւորաբար Բոլ Վալերիէն:

ԵՐԿՈՒ ՍՐՏԵՐ ԵԼԵԿՏՐՈՅԱԾ՝ ՇՈԳԵԿԱՌՔԻ ՄԸ ՄԷՋ

Շոգեկառքին մէջ, ձեր դիմաց, առաւօտուն,
Միշտ միեւնոյն կը գրաւեմ երբոր իմ տեղ,
Ինձ կը բաշխէք ձեր զլխիկը, պա՛րզ ու սիրուն,
Որպէս պըտո՛ւղ՝ պտղամանի մը մէջ քիւրեղ:

Կը դառնամ ձեր առջեւ. պարզո՛ւկ ես պատանի
Մ'որ լուսայորդ ցուցափեղկի մը դէմ կանգուն՝
Կը զգայ սրտին իր շղթայուիլն, յա՛մր ու զաղտնի՝
Խաղալիքի մը հետ աղուո՛ր ու կապտագոյն...:

Կը ճամբորդենք, տարիներ, նո՛յն շոգեկառքով.
Օրօրելէն երազանքնն'րը մեր տարտամ.
Ճամբորդութեան մէջ այս վարա՛ն, սիրագորով՝
Օ՛, թող օտա՛ր մընանք երկո՛ւքս ալ յաւիտեան...:

Մ Ե Լ Ի Ս Ա Ն Ք Ի

Քուն անուհով՝ Իվի Գուլիա-Սֆասալաֆը: Ծնած եւ ռուսւմը ստացած է Աթենքի մէջ: Գրել սկսած է շատ փոքր սարիքէն: Բանաստեղծութեանց իր առաջին հասօրը հրատարակած է Ճրանցական Ակադեմիի ուսանողուհի եղած միջոցին. (1930) եւ արժանացած՝ Բնագրասներու միահամալու զովեսին: Յայտոյ՝ սարին հրատարակած է իր երկրորդ հասօրը. «Մարգարէութիւններ» խորագրով, որ արժանացած է Ակադեմիի զրական մրցանակին: 1935ին հրատարակած է «Բոցավառ Մորենի» հասօր: Իր վերջին գործը՝ «Անտուակին Դարձը» (1935) որ Ակադեմիի գնահատանքին արժանացաւ, երկրորդ չպագրութեամբ լոյս տեսաւ 1938 ին:

Հ Օ Ր Ս Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Երբ կը նայի՛մ փոքրիկ տղոց նստմէն օր,
Առաւօտուն, դրպրոցական պայուսակով,
Մի՛շտ կը տեսնեմ պարզուկ հագած աղջնակ մ'աղուոր,
Պայուսակովն իր հրնամաշ, հայրիկին ըով:

Գորովագին կը բռնէ՛ փո՛քր անոր ձեռքէն,
Երջանի՛կ են, այդ միջոցին, երկուքն այնքան:
Ո՛րքան անմեղ լըրջութիւնով կը զըրուցեն:
Աղջնակն, հարցում կ'ընէ անվերջ, ամէ՛ն վայրկեան,

Լո՛ւրջ կը խօսի ան ալ, անո՞ր կը բացատրէ...
Ինչքա՞ն գիտուն է հայրն: Որքա՞ն գիտէ բաներ:
Մեծ ափին մէջ անոր՝ ո՛րքան ապահով է:
Թէ՛ զայն բռնէ՛ ա՛լ զինք ոչի՞նչ չի՛ վախճըններ:

Յանկարծ, անոր կ'ըսէ փոքրիկն, « — երբոր մեծնամ... »
« — Ես խեղճ ծիրուկ մ'ըլլամ պիտի այն ժամանակ,
Ու քեզ վերցնել ձեռքերուս մէջ, պիտ' չըկըրնամ.
Ինծի ըսես պիտի, հայրի՛կ, կըրթնէ երթանք:

«Երբ օտարները զան ու քեզ առնեն տանին՝
 Մոռթ անկիւնիս մէջ ես մընամ պիտի մինակ.
 « — Ամէն օր քեզ պիտի տանիմ կառքովս իմին »
 Կ'ըսէ, պատրաստ լալու՝ փոքրիկը տըրտմունակ:

Կը զգայ այնպէս զինք անհամբեր, ազդուած այնպէս.
 Կ'ուզէ իսկոյն մեծնալ, շուտով մեծնալ կ'ուզէ,
 Թէ կարելի է այդ պահուն, անմիջապէս,
 Որպէսզի՝ սէրն իր անսահման անոր փաստէ՛:

Ու մինչ փոքրիկ ձեռքովն ուժգին կը սեղմէ զայն,
 Ծերուկն յոգնած՝ կը զգայ այնքա՛ն վրստահութիւն,
 Որ փոքրիկն ինք կ'ըլլայ, կարօտ պաշտպանութեան,
 Ու փոքրիկն ալ՝ պահապան հա՛յրը մըշտորթուն:

Ե Ր Գ Ա Ր Է Ի Ո Ի Ն

Հոյսիդ մէջ անոյշ՝ թըռչո՛ւն կը դառնամ,
 Եւ, խայտիտին պէս, կ'երգե՛մ օրն ի բուն.
 Թիթեռի թեթեւ թեւե՛ր կը ստանամ,
 Ձիւնաթոյր, նր՛ման՝ թա՛րմ շուշաններուն:

Կը փակեմ կոպերս՝ լո՛յս է ներսս ահա՛,
 Կը բանամ՝ լո՛յս է ամէն դի կըրկին.
 Եւ կ'ըսեմ, Արե՛ւ, այս ի՛նչ շրջեզ մահ՝
 Լուսահեղեղըն մէջ աստուածային:

ՈՒՅԱ ՊՈՒՄԻ-ԲԱՐԱ

Ծնած է Սիրա կղզին: Բարձրագույն կրթութիւնը ստացած է Խալիա: Հասարակած է՝ «Սիրոյ երգեր», «Լուսաբանն Զարկերը» եւ «Նոր Դալարի» ֆերագագրերը: Խմբագրած է «Կիկլասներ» պարբերականը: Ունի բազմաթիւ քաղցմանութիւններ իսպաղցի բանաստեղծներէ: Կողակիցն է բանաստեղծ Նիխո Բաբասի:

Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ե Ր

*Համբոյրներս ինչպէ՛ս փրթթեցան կըրկին,
մէ երաշտ շըրթներս ծաղկաստան դարձան,
Ու թըմրած կուրծքիս տակ խըլըրտացին՝
Մոռցըլած զարկեր, հի՛ն, վաղընջական:*

*Յարեա՛ւ, ո՛վ Աստուած, տենչանքը սէրին,
Որ մահացած էր վիշտէն բաժանման,
Այս զիշեր, խորունկն իմ հիւանդ սըրտին՝
Ուրկէ ցաւն ու վիշտն են միշտ անբաժան,*

*Ցաւերս՝ ծաղիկնե՛ր եղան հոգեհմայ,
Եւ կը ժրպտի մեղմ, բերանս ամրափակ,
Կարծելով թէ սէրն ա՛յլ կը մօտենայ...*

*Կը տըրտիէ սիրտս՝ աւելի՛ արագ
Խորհուրդէն՝ որ մէջս հազիւ հազ ծընած՝
Ամպի մը նըման անցա՛ւ ու գընաց...*

ՕՐԷՍՔԻՍ ԼԱՍՔՈՍ

Ծնած է Էլեւսինա 1907-ին: Հրատարակած է «Կեանքի Ֆիլմը» եւ «Վայրի Սագեր» բանաստեղծական հատորներ: Ասեմէ մը ի վեր նախընտրած է շաւրժանկարի արուեստին՝ իբրեւ սենսորիօ գրպ ու բեմադրիչ:

Ձ Ը Մ Ր Ա Ն Գ Ի Շ Ե Ր

Օ՛, իսկապէս չըկայ հեշտանք մ'աւելի խոր՝
Քան ծրմեռուան գիշեր մը ցուրտ, ինչպէս հիմակ,
Դաւառի մը մէջ զըռնըւիլ, խո՛ր, հեռաւոր,
Եւ օճախի մը քով գեղջուկ՝ ըլլալ մինա՛կ:

Ունելիով, աննըպատակ ու յամրագին,
Ժամեր անվերջ, այնտեղ կըրա՛կը խառնակել.
Տարտամ հայեացքդ յառած անշարժ հիւր կըրակին,
Եւ անընդհատ... նոյն եղանակը սուսըլել:

Եւ հոն, այսպէս, այս դիրքին մէջ, հանգիստ-հանգիստ
— Առանց թախծի՝ նաեւ առա՛նց երանութեան —
Անցեալըդ որ անցաւ զնաց այլեւս ընդմիշտ՝
Մըտաբերել ամբողջ անցեա՛լըդ լրոնելեան:

Ու տակաւին, իմաստութեամբ մը պարզունակ,
Ունայնութիւնը այս կեանքին փերհաստատել.
Պայքարներուդ ըզգա՛լ ըլլալն աննըպատակ,
Եւ անխըռով՝ իղծերդ ամէն մահացընել:

— Եւ օ՛, չըկայ աւելի խոր հեշտանք մը այլ,
Քան՝ այդ գիշերն — երբ ի վերջոյ ալ յոգնած ես.
Փակել աչքերդը քաղցրօրէն ու քնանալ
Ու կարելի եթէ ըլլայ՝ մեռնի՛լ այսպէս:

ՄԻՍԱՅԻԼ ԲԵՐԱՆՔԻՍ

Բուն անունով Միխայիլ Բաբասորալու: Հրատարակած է բանաստեղծութեանց երկու հատրմեր, «Առաջին երգեր» եւ «Երեկոտնական Պարսէզին Մէջ» խորագրերով, ինչպէս նաեւ վէպ մ. եւ գրական ընդարձակ ուսումնասիրութիւն մը:

Կր զբաղի հրապարակագրութեամբ: Անկեղծ հայասեր մըն է:

ԱՆՏԱՌՆ ԱՄՐԱՆ

Կ'արծազանգէ տըրտմազին, հիմա, անտա՛ռը ամրան,
Երբ՝ հոն այլեւս չեն հընչեր քայլերը քու սիրական:
Ջըգած հետքերդ՝ անծրենե՛րն ամէն սըրբեր տարե՛ր են,
Եւ սըրտիս մէջ թախիժը, եկեր թառեր է նորէն:

Սիւքի նըման կուգայիր զաւարուտին վրայէն:
Կը դողային ծաղիկներն քու զարնային հագուստէն,
Եւ երբ աւիտով, ինձ փո՛ւնջ-փո՛ւնջ կը ղըրկէիր դուն համբոյր՝
Դալը մինչեւ, կը լըսուէր, զերթ թրոջնոյ ձայն աղուալուր:
Կ'անցընէիր մազերուս մէջ մատուրներդ, մե՛ղմ այնպէս,
Որ առաջին լըռութեանս կը հըպէիր դուն կարծես:
Ու գորովանքն, աչքերէդ կը ծորէր խո՛րն իմ սըրտին՝
Երդիքներէն ձիւնն ինչպէս կը կաթկըթի Ծընունդին:
Ծաղիկներով առլըցուն ճիւղերը վա՛ր քաշելով
Դըլուխներուն վըրայ մեր, կ'երգէիր քա՛ղցրը ձայնով:
Եւ, կ'անցնէր ամպ մ'երբ ցածէն, անոր շուքին ետեւէն
Կը վազէիր, գետնին վրայ մանկան նըման խընդալէն:
Տեսանք ճերմակ թրոհքներ, բաց, որ՝ անցան, գնացին,
Դոյնե՛ր, պէսպէս խնփոյրներ՝ զորս չրտեսնեմ պիտ' կըրկին:
Լըսեցինք մեղմ շըրշիւններ՝ մետաքսին պէս աղջիկին՝
Որ կը հանուի զաղտնօրէն, պահուած ետե՛ւը ծառին:

Իրիկունէն՝ որ ոսկի թարթիչներով կը մարէ՛ր՝
 Մինչեւ ծագիլն անապակ արշալոյսին ոսկեհեր,
 Երկինքը մեր խօսքերուն կը լըսէր կէ՛սը միայն,
 Աստղ արցունքներ թափելով երկրի վրայ, լըռելեայն:
 Վերջապէս, ա՛նցքը իրենց ծիծեռնակներն օրրեցին՝
 Յետմիջօրեայ երկընթին, այերի՛ն մէջ զո՛ւլ, ջընջին:
 Իմաստն անոնց պահուեցաւ մեր աչքերուն մէջ ահով,
 Կ՛ոգեմարէր մինչ հովտին ծայրը ամա՛ռն հոգեթով:
 Մայրամուտին մէջ արեան գոյնով վարդեր կային դեռ.
 Բայց, քեզ իմ քով պահելու այլեւս յոյս չէ՛ր մրնացեր:

Օ՛, չըկայ ո՛չ մէկ ճամբայ արդ աւելի՛ տրխրամած՝
 Քան այն ճամբան՝ հեռացաւ ուրկէ էա՛կը սիրուած:



ԵՈՐԿՈՍ ՄԻԼՈՆՈՒԱՆԻՍ

Հրատարակած է «Դէպի Լոյս» եւ «Տօնէն Յետ» ֆերբուածներու հասօրները: Պարբերաբերբերու մէջ ունի բազմաթիւ գրադասական յօդուածներ ու քաղաքականութիւններ ժամանակի բանաստեղծներէ:

Ա Ն Է Ծ Ք

Անէ՛ծք ձեզի, ո՛վ գիրեր, հազար անէ՛ծք ալ ձեզի՝
Իմաստութեամբ լի գիրքեր, գիտութիւններ՝ պերճաւոյս,
Հազար անգամ զրդջացի՝ ըզձեզ սորված ըլլալուս
Ընէ՛ղք օրերուս՝ զորս ի զուր ձեզի համար վատնեցի:

Առանց ձեզի՝ ըլլայի պիտի հովիւ մը զրւարթ
Հայրենական գիւղիս մէջ, հոն, ծովուն դէմը, հեռուն,
Աչքերս՝ անամպ ըլլային պիտի, երեսըս՝ խընդուն,
Արտասուքներըս անգամ՝ պիտի՝ ըլլային աղամանդ:

Բոլորովին աներկիւղ պիտի՝ նայէի երկընթին,
Հոգիիս մէջ ո՛չ մէկ յոյզ ունենայի պիտի ես.
Հաւատայի պիտի դեռ ամէն ինչի, եւ այսպէս
Թերեւս օր մ'ալ հասնէի հրջանկութեան բաժակին...

ԵԱՆԻՍ ԽՈՆՏՐՈՒԵԱՆԻՍ

Ծնած է Լակոնիա: Աթէնքի համալսարանի իրաւաբանական ճիւղը աւարտելէ վերջ, երկար տարիներ եղած է դատախազ, զանազան բաղաճնե-
րու մէջ: Հրատարակած է քննադատական երկու հատորներ եւ աշխատակցած
երկստասորդ գրողներու պարբերաբերթերուն:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Եկա՛ր, Գարո՛ւն հրմայիչ: Դու աւետիսն առաջին՝
ես ըզգացի իմ սրբոտին խորքերուն մէջ լիանդորր:
Եկա՛ր, Գարո՛ւն հրմայիչ, եւ սրբոնցիւր քու չորս դին,
Ու սրբոնցիւր ամէն դի՛ սէր ու բերկրա՛նք անպղտոր:

Եկա՛ր, քեզ ո՞վ չի ցանկար, ո՞վ չըսպասեր քու դարծին.
Գալուդ մասին ինձ լսին՝ ծիւերն, ջուրե՛րը բոլոր,
Ինձ խօսեցան թրոչուններն ալ այն դալա՛ր անտառին,
Թափհարելով խօլաբար իրենց թեւերը աղուոր:

Եկա՛ր: Եւ դուն ամէն կողմ զըրեցիւր թէ պիտի գա՛ս.
Այերին մէջ ու երկնին, երկրի վըրան ու ծովուն
Արդ, ամէն կողմ կանաչով ու կապոյտով ես նաշխած,

Ու վարդերով ալ պըճնած՝ գունն աղբիւրի՛ն զըլզըլուն:
Զքեզ, Գարո՛ւն, ես այսօր ըզգացի երբ ծաղկալիւր
Մեր պարտէզին մէջ նըստայ՝ տըրտմութիւնո՞վ մը անծիր...:

ԵՐՐԿԻՈՍ ԴԱԼԱՄԱՅԻԱՆՈՍ

Մնած է Լակոնիա: Հրասարակած է «Երգեր եւ Եղերեգներ» եւ «Երգներ ու Վիւսեր» բանաստեղծական հասորներ՝ ինչպէս նաեւ գրական աւ գրողական մէկ քանի գործեր: Իբրեւ դաստիարակ-ուսուցիչ՝ գրած է նաեւ մանկավարժական այլեւայլ յօդուածներ:

Խ Ե Ն Յ Ը

Ճակատագրի խորթ զաւակն ես: Եւ աշխարհ՝
Անգըթօրէն ծաղրուծանակ քեզ ըրաւ:
Անոր համար խենթ մըն ես դուն, բայց, պայծառ
Նոր արշալոյս մը քեզ համար ծագեցաւ:

Հիմա, քու մէջ արեւ մը նոր կը շողայ.
Միտքըդ այլեւս ազատօրէն կը ճախրէ
Դէպ ուրոտներ կապուտագեղ (օ', հիմա՝
Դահդ ի՞նչ ցուքեր եւ ի՞նչ ցինծեր կը սրփոէ):

Իշխանուհի՜ մ'է սիրելիդ, ոսկեմա՛ղ.
Արքայական՝ ունիս սէրեր, գա՛նձ ու փառք,
Վառ ծիրանի է հագուստըդ պատըռուած
Եւ մընացորդն հին գըլխարկիդ՝ ոսկի թագ:

Հէ՛ք բարեկամ, գըրկէ պատրանքը աղուդր,
Որ քաղցրացնէ լեզի թոյները մարդոց:
Տէր, այս շընորհն րոէ տնոր, մինչեւ որ՝
Առտու մը քովդ կանչես հոգին բազմախոց:

ԵՈՐԿԻՈՍ ԳՈՃԻՈՒԼԱՍ

Բանաստեղծ ու բարգմանիչ: Հրատարակած է բերթուածներու երեք հատրներ: Պարբերականներու մէջ ունի բազմաթիւ գրական ուսումնասիրութիւններ եւ քարգմանութիւններ՝ մասնաւորաբար հելլէն հին գրականութեան:

ԲՆԱՊԱՆՏՈՒԹԻՒՆ

Այսօր, անհուն՝ կ'ըմբռնեն
 Խաղաղութիւնը աշխան.
 Խորհուրդս՝ առաւ վարդի գոյն,
 Իսկ բնութիւնը՝ դեղծա՛ն:

Մէգի շղարշին տակ աշխարհն
 Արդ կը տեսնեմ բերկրաւէտ.
 Կարենայի՜ այս պահուս՝
 Վե՛ր սըլանալ ծուխին հետ:

Ծանօթ ժայռին վրայ հին,
 Մինչ երկարած կ'երագեմ՝
 Սիւքը կ'ըլլայ փափուկ ձեռք,
 Ու կը շոյէ իմ մազերն:

Անդին՝ ծովուն վրայ լայն,
 Ճերմակ նաւակը բացուած,
 Կարծես ըլլար իմ հոգին՝
 Այս աշխարհէն հեռացած:

Ձեռքերըս վեր վերցուցած՝
 Կ'օրհնեմ օրը՝ երբ ծրնայ:
 Եթերին մէջ ջինջ, ծաւի,
 Կ'որսամ թիթե՛ռ մը հիմա:

ԱՔԵՖԱՆՈՍ ՊՈԼԵՑԻՍ

Հրատարակած է «Երեկոյեան Լոյսեր» անունով ֆերբուածներու հա
սօր մը: Կ'աշխատակցի գրական տարեգիրքերու եւ հանդէսներու՝ ինքնագիր
բանաստեղծութիւններով:

Կ Ն Ճ Ի Ռ Ն Ե Ր

Կը տեսնե՞ս զիծն այս խորունկ,
Շա՛տ հին մէկ մա'հըս է ան:
Մահ՝ նընջեցեալը որուն
Կը կըրեմ մէջս յարածամ:

Շըրթներուս մօտ,
Իմ անժըպիտ բերնին քով,
Գըծուած որպէս
Թէ շիկացած զըրիչով,
Կընճի՞ր մըն ալ:
Կնիք լըռութեան,
Ճակատագրէն զարնըւած....

Ծըրագիրնե՛ր, երազնե՛ր, իղծե՛ր, յոյսե՛ր ռսկեման՝
Կընճի՞ր ամէնը դարձան:
Գարնան վարդի մը փուշն է այս հոս թողած,
Այն ատեն, սիրտս՝ ո՛րքան անոյշ էր լացած...

Ահաւասիկ հա՛տ մըն ալ
Ահա՛, ուրիշ մ'ալ այստեղ.
Ասոր մասին պատմութիւն մը պիտ' ըսեմ:
Ա՛հ, ապրէի՞ զայն նորէն:
Ծըրագիրնե՛ր, երազնե՛ր, իղծե՛ր, յոյսե՛ր աղուական՝
Կընճի՞ր ամէնը դարձան:

ՆԻՔՈՍ ՍՖԻՐՈՒՐԱՍ

Ծնած է Նախաս կղզին: Հրահարակած է «Հրքիռներ» խորագրով քանասեղծական հասոր մը: Կ'աշխատակցի զանազան հանդէսներու ինքնագիր քանասեղծութիւններով եւ գրական այլ գործերով:

ԵՐԳԵՐ՝ ԳԻՒՂԻՍ ՀԱՄԱՐ

Ճակատագիրըս ոխերիմ՝ այսպէս, անտէր ուրբի նըման,
Զիս կը քըշէ հեռո՛ւ քեզմէ.
Սակայն, երբեք չի՛ ելլեր երգ մը շըրթներէն իմ տըրտմական՝
Որ, ո՛վ ըլլալըս չըյայտնէ:

Եւ, ուրիշներ եթէ երբեք տալու անուկըդ կ'ամըչնա՛ն
Ու կը ծածկեն ծագունն իրենց՝
Ես՝ աւելի՛ այնքան, քեզի՛ մօտիկ կուգամ, զո՛վ իմ շուշան,
Մըրրիկի՛ թէ անդորրի մէջ:



Չո՛ր հող, անծա՛ռ ըլլուրներ, դադրած ջախջա՛խ ջաղացներ,
Արեւագուրկ քարանձաւներ խորախոր,
Որոնց մէջ կեանքը բարակ պատրոյզէ մըն է կախուեր,
Ահաւասի՛կ գեղեցկութիւնըդ բոլոր:

Բայց, թէ քնութիւնը եղաւ ժըլատ մօրո՛ւ քեզ համար,
Եւ հոխ գանձները իր այլո՛ւր շըռայլեց,
Դուն դադրն կեանքդ անցրնիլ գիտես երգով՝ ուր պայծառ
Սմբողջ սի՛րտըդ պարպեր ես:



ՏՊԱԴՐ. «ԱԶԱՏ ՕՐ» — ԱԹԷՆՔ